10175

Дарственная надпись библиотеке

Т-1928

ЗКСМ
Т-78

5267

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

Ա. ԾՈԽԻՆ

240

ՀԱՄԼԿՅԵՄ
ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՅԿՍՄԼ
Ց-78

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ № 922
ՅԵՐԵՎԱՆ—1929

15 JUL 2013

ՅԿՄԻ
Շ-78

24 SEP 2006


ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

7 DEC 2009

Ա. ՇՈՒՅԻՆ

ՀԱՄԼԿՅԵՄ

ՀԱՄԱՌՈՏ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ





(0267)

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ № 922
ՅԵՐԵՎԱՆ—1929

22970.59

Թիֆլիս
Պոլիգրաֆտրեստի 6-րդ տպ.
Գրառեպվար № 118:
Տիրաժ 5000. Պատվեր № 731.

Հայկական ԽՍՀ Գոս. Գրադարան
ՀՍՍՌ-Ամ.ՍՍՀ
Ա. Մյասնիկյանի անվան

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

ԻՆՉ Է ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ

§ 1 ԻՆՉՈՒ ՀԵՐԿԱՎՈՐ Է ԻՄԱՆԱԼ ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆԴՅԱԼԸ

Ուսումնասիրելով իր կազմակերպության անցյալը՝ կոմյերիտականը մոտենում է մեր հեղափոխության ուսումնասիրությանը։ Կոմյերիտմիության պատմությունը սերտորեն կապված է մեր պրոլետարական հեղափոխության և կոմունիստական կուսակցության պատմության հետ։

Ուսումնասիրելով այդ անցյալը՝ կոմյերիտականն ուսումնասիրում է բանվոր և գյուղացի յերիտասարդության դերը հեղափոխության մեջ, ուսումնասիրում է այն ժանդակությունը, որը ցույց և տվել ամող սերունդը նոր կյանքի կառուցման գործին, ուսումնասիրում է յերիտասարդության նվաճումները հեղափոխության մեջ։

Ուսումնասիրելով իր կազմակերպության պատմությունը՝ կոմյերիտականը այս պատմությունից տեսնում է, թե ինչպես եր զարգանում նրա աշխատանքը, ինչ հարցեր եյին ծագում և ինչպիսի լուծում ստանում։

Անցյալի ուսումնասիրությունը դաստիարակում է մարդուն, ընդլայնում է նրա աշխարհայացքը, հարստացնում նրան գիտելիքներով։ Այս գիտելիքները ոգնում են նրան նոր կյանքի կառուցման ընթացիկ աշխատանքներում, հնարավորություն են տալիս խուսափելու այն սխալներից, որը յեղել են անցյալում։

Ակտիվ կոմյերիտականը, որը լավ գիտե իր կազմակերպության անցյալը, իր գիտությանը մասնակից կանի բանվոր և գյուղացի յերիտասարդությանը և դրանով հենց կուժեղացնի կոմսոմոլի կազմակերպության ազդեցությունը յերիտասարդու-

թյան վրա։ Իսկ այդ կերպ բանվոր և գյուղացի յերիտասարդությունն ավելի կսիրի և կհարգի իր կազմակերպությունը։

Հատկապես այդ կարևոր և այժմ, յերբ աճում են նոր կադրեր, աճում են կոմյերիտմիության մեջ մտնող բանվոր և գյուղացի յերիտասարդության նոր շերտերը։

Առավելապես նրանք պետք է գիտենան մեր կազմակերպության անցյալը, այդ անցյալով դաստիարակվեն և սովորեն։ Կոմսոմոլն այժմ դարձել է մի հսկա կազմակերպություն։ Նա կրում է Լենինի անունը։ Լենինյան այն կոմյերիտականը, վորը չգիտե իր կազմակերպության անցյալը՝ վատ կոմյերիտական է։

§ 2 ԻՆՉ Է ՅԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Կոմյերիտմիության շարժումը մեր յերկրում վոչ այլ ինչ է, քան յեթե կոմմունիստական յերիտասարդական շարժում։ Իսկ ինչ է յերիտասարդական շարժումը։ Դա հասարակական շարժման մի ձև է, կամ հասարակական կազմակերպությունների տեսակներից մեկը։

Յերիտասարդական շարժումը կարող է լինել՝ պրոլետարական, բուրժուական, մանր-բուրժուական, նայած թե ինչ դասակարգ է ծնել նրան, ինչ դասակարգի հետ է սերտորեն կապված։ «Ապաքաղաքական» յերիտասարդական շարժում չկա և չի էլ կարող լինել, քանի վոր հասարակության մեջ չկա վոչ մի կազմակերպություն, վորը կապված չլինի վորևե դասակարգի հետ։ Յերիտասարդություն, պատանեկություն «առհասարակ» չկա։ Կա յերիտասարդություն, իրը այս կամ այն դասակարգի և կամ միջդասակարգային միջնախավի աճող մաս։ Միայն ջահելությունն է, վոր ընդհանուր է յերիտասարդության համար։ Իսկ նրա պահանջները, խնդիրները և նպատակները հասարակության մեջ տարբեր են։ Պատահում են յերիտասարդական կազմակերպություններ, վորոնք թագցնում են իրենց դասակարգային նյությունը։ Նրանք թագնվում են անկուսակցական ցուցանակի տակ, վորպեսզի աշխատավոր դասակարգի յերիտասարդությանը ավելի հեշտությամբ մոլորեցնեն։ Իսկ իրականում այդ կազմակերպությունները անցկացնում և պաշտպանում են վորոշ դասակարգի—բուրժուազիայի շահերը։

Կոմմունիստական յերիտասարդական շարժումը հենց պրոլետարիատի աճող սերնդի շարժումն է։ Պրոլետարական յերիտասարդական շարժումն առաջ է գալիս բանվոր դասակարգի զարգացման վորոշ աստիճանում, իբրև ընդհանուր բանվորական շարժման մի մասնիկ, աստիճանաբար զարգանալով բանվորական դասակարգի զարգացման հետ։ Պրոլետարական յերիտասարդական շարժումը զարգանում է այն չափով, ինչ չափով վոր արտադրության մեջ ավելի և ավելի ներգրավվում է մանկական և պատանեկական աշխատանքը, վորը կապիտալիզմի կողմից յենթարկվում է չափազանց խիստ, դաժան շահագործման։

Բուրժուազիան, իբրև տերող դասակարգ, դպրոցի, յեկեղեցու, բանակի և այլ միջոցներով հոգեվորապես խնամակալում և ստրկացնում է աճող սերունդը։ Աճող սերունդը կապիտալիստական ֆաբրիկայի ավելի ծանր ճնշման տակ է, քան նույնիսկ հասակավոր բանվորը։ Կապիտալիզմի զարգացման հետ միասին, դպրոցի, բանակի միջոցով աճում և արտաֆաբրիկային ճնշումը։

Յեվ հենց պրոլետարական յերիտասարդական շարժումն է, վոր հանդիսանում է բողոք այդ ճնշման դեմ և հետևանք պրոլետարիատի և բուրժուազիայի միջև յեղած հիմնական հակասությունների։ Պրոլետարական յերիտասարդական շարժման զարգացման գործում հսկայական դեր է խաղում ընդհանուր բանվորական շարժման կազմակերպվածության աստիճանը և նրա հեղափոխականությունը։ Ինչքա՜ն պրոլետարական յերիտասարդական շարժումը ջոկվում է ընդհանուր պրոլետարական շարժումից, ինչպես նրա մի մասը։ Վորովհետև բանվոր յերիտասարդության դրությունը արտադրության մեջ ունի մի շարք առանձնահատկություններ։ Վորովհետև յերիտասարդության տարիքի առանձնահատկությունները (մեծ շարժունակությունը հայրն) դժվարացնում են միասեռի աշխատանքը հասակավորների հետ։ Պրոլետարական դաստիարակությունը, պրոլետարական կուլտուրան պահանջում և ինքնագործունեության մեծ զարգացում։ Ինչ տեղ կազմակերպություններում աշխատեն անչափահասները և յերիտասարդները հասակավորների հետ միասին, այնտեղ զգալի չափով նրանց ինքնագործունեությունը կճնշվեր հասակավորների կողմից։ Ունենալով իր կազմակերպությունը՝ պրոլետարական յերիտասարդությունը ընդգրկում և աճող սերնդի լայն շերտերը և մասնակից և անում նրանց պրոլետարիատի ընդհանուր պայքարին։ Այսպիսով պրոլետարիատը յեվ նրա կուսակցությունը ստիպված են պրոլետարական յերիտասարդական շարժման զարգացումով

Ցարական Ռուսաստանում մենք չունեյինք պրոլետարական յերիտասարդական մասսայական շարժում։ Թե ինչ՞ու—այդ մասին մենք կխոսենք հետագայում։

Կոմյերիտական շարժումը Ա. Մ. Հ. Մ.-ում, բառի իսկական իմաստով, 1917 թվի Հոկտեմբերյան Մեծ հեղափոխության գավակն է։

Ա. Մ. Հ. Մ.-ի կոմյերիմիությունը միյակ կազմակերպությունն է պրոլետարական յերիտասարդության շարժման շարքերում, վորը զարգանում է ազատ պայմաններում, մի յերկրում, վորտեղ իշխանությունը պատկանում է պրոլետարիատին, և վորտեղ պրոլետարիատի գլխավորությամբ առաջ է գնում սոցիալիստական տնտեսության շինարարությունը։

Կապիտալիզմի որով պրոլետարական յերիտասարդական շարժման խնդիրն է՝ կապիտալիստական պետության խորտակումը յերիտասարդության ճնշման և շահագործման հետ միասին։ Իսկ պրոլետարիատի դիկտատուրայի որով, ընդհակառակը, նպաստել բանվորական պետությանը, վորը աճող սերնդի կոմմունիստական դաստիարակության համար չտեսնված հնարավորություններ և բաց անում։

Միայն պրոլետարիատի դիկտատուրայի որով կոմմունիստական յերիտասարդական շարժումը հակայական թափ և առաջնում, քանի վոր նրա զարգացման բոլոր արգելքները, ինչպես՝ բուրժուական դպրոցները, բանակը, յեկեղեցին և այլն՝ վոչնչացնում են։

Հիմնական և գլխավոր հարցը, վորը, իրոք, պրոլետարական յերիտասարդական շարժման տեսություն է, այն հարցն է; թե ինչ տեղ պետք է գրավի այդ շարժումը պրոլետարիատի-կազմակերպությունների սիստեմի մեջ, թե կապիտալիզմի որով և թե իշխանությունը պրոլետարիատի ձեռքով նվաճվելուց հետո։ Այդ հարցը միաժամանակ պրոլետարական յերիտասարդական շարժման խնդիրների հարցն է։

Կարճ և արդյոք յերիտասարդության կազմակերպությունը լինել յերիտասարդության քաղաքական կուսակցություն։ Պարզ է, վոր՝ վոչ, քանի վոր յերիտասարդությունը դասակարգ չէ։ Պրոլետարական յերիտասարդությունը դասակարգի կազմի մեջ մտնում է ինչպես նրա մի մասը։ Բանվորական դասակարգի կուսակցությունը-կոմմունիստական կուսակցությունը վողջ դասակարգի կուսակցությունն է։ Հետևաբար, աշխատավոր յերիտասարդության ուղեղը, շտաբը, քաղաքական ղեկավարը հանդիսանում է կոմմունիստական կուսակցությունը։

Ցեգրակացությունն այն է, վոր պրոլետարական յերիտասարդության կազմակերպությունը յերիտասարդ բանվորների կուսակցությունը չէ։

Պրոլետարական յերիտասարդական շարժումն իրեն նպատակ է դնում՝ պաշտպանել յերիտասարդության տնտեսական շահերը,—մի դուրս դա յերիտասարդ բանվորների արհեստակցական միությունն է։ Կրկին՝ վոչ։ Արհեստակցական միությունները իրենց շարքերում ընդգրկում են թե՛ յերիտասարդ և թե՛ հասակավոր բանվորներին, առանց տարիքի խտրության։ Արհմիությունները իրենց նպատակ են դնում՝ իրենց բոլոր անդամների—թե՛ ծերերի և թե՛ յերեխաների շահերի պաշտպանության և դասակարգայնորեն դաստիարակել նրանց։

Այսեղից յերկրորդ յեզրակացությունը՝ պրոլետարական յերիտասարդության կազմակերպությունը յերիտասարդ բանվորների արհմիությունն չէ։

Ուրեմն ի՞նչ բան է յերիտասարդության կազմակերպությունը։ Կոմյերիտական կազմակերպությունը, պրոլետարիատի կուսակցության ծրագիրն ու տակտիկան անվերապահորեն ընդունելով, նրան հարող մի հատուկ կազմակերպություն է, վոր ղեկավարվում է պրոլետարիատի կուսակցության կողմից։ Ընդունելով կոմմունիստական կուսակցության կողմից ծրագիրը և տակտիկան, կոմյերիտական կազմակերպությունը կուսակցության հետ միասին պայքարում է ծրագրի իրականացման համար, ուստի և հանդիսանում է քաղաքական կազմակերպություն։

Պրոլետարիատի կուսակցությունը—պրոլետարիատի կազմակերպության ամենաբարձր ձևն է, նա ղեկավարում է պրոլետարիատի ամեն տեսակի կազմակերպությունները, վորոնց թվում և կոմյերիտական կազմակերպությունը։ Կոմյերիտական կազմակերպությունն իրեն նպատակ է դնում՝ կոմմունիստական վոգով դաստիարակել աճող սերունդը, սերտ կապելով այդ պրոլետարիատի ամբողջ կյանքի և պայքարի հետ։

Աճող սերունդը կոմմունիզմի վոգով դաստիարակելու խնդիրը լուծելով՝ կոմյերիտական կազմակերպությունը զբաղվում է յերիտասարդության հետաքրքրող բոլոր հարցերով, հայտնաբերում է բանվորական յերիտասարդության պահանջները և կարիքները և դրանք մտցնում է վողջ բանվորական դասակարգի

պահանջների մեջ։ Այսպիսով արհմիությունների աշխատանքի տարրերը (ելեմենտ) կոմկերիտական կազմակերպության մեջ կան, բայց բանն այն է, որ կոմկերիտական կազմակերպությունը կերիտասարդության շահերի պաշտպանության գործնական աշխատանքն անց է կացնում արհեստակցական կազմակերպությունների և կամ պրոլետարական պետության մարմինների միջոցով։

Ամեն սերնդի մասսաներն ընդգրկելու տեսակետից կոմկերիտմիությունն ավելի լայն կազմակերպություն է, քան կուսակցությունը, և ավելի նեղ, քան արհեստակցական կազմակերպությունը։

Այսպիսով, կոմկերիտական կազմակերպությունը հանդիսանում է կուսակցության օժանդակ կազմակերպություն, որն իրեն շարքերում կուսակցության կադրեր է պատրաստում կուսակցության հետ միասին յեվ նրա ղեկավարությամբ պայքարում է նրա ծրագրի իրականացման համար յեվ տարածում է կոմմունիստական ազդեցությունը յերիտասարդության ամենալայն մասսաների մեջ։

Կոմկերիտական շարժման հիմնական բազան հանդիսանում է բանվորական յերիտասարդությունը, որին կոմկերիտմիությունը աշխատում է 100%-ով ներգրավել կազմակերպության շարքերը։

Բայց կոմկերիտմիությունը չի կարող և չպետք է սահմանափակվի միայն բանվորական յերիտասարդության վրա ազդեցություն ունենալով։ Կոմկերիտմիությունն իրեն նպատակ է դնում և պետք է նպատակ դնի՝ իրեն կոմմունիստական ազդեցությանը յենթարկել աշխատավոր յերիտասարդության բոլոր հիմնական խմբերը։

Պրոլետարական դիկտատուրայի պայմաններում, կոմկերիտմիությունը դառնում է Ա. Ս. Հ. Մ.-ի յերիտասարդության միակ մասսայական կազմակերպությունը և իր վրա յե վերցնում պատմականորեն կարևոր մի խնդիր,—մաքսիմալ չափով ժամանակին դպրոցական յերիտասարդ սերնդի վերակերտմանը։

Բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը, որը հիմնավորվել դեռ Հոկտեմբերյան հեղաշրջման որերին և ամրապնդվել և զեռևս քաղաքացիական կռիվների տարիներին, ներկա պայմաններում կյանքի նոր ձևերի՝ սոցիալիստական ձևերի կառուցման դաշինք է։ Կոմկերիտմիությունը, իր գործնեությամբ գյուղացիական յերիտասարդության կազմակերպման խնդրում առաջին կարևորություն ունեցող աշխատանք է կատարում՝ գյուղացիության գյուղը նոր հիմունքներով վերաշինող կադրեր պատրաստելու գործում։

Ղեկավար և ուղեցույց դերը կոմկերիտմիության մեջ տանում է և պետք է տանի բանվոր յերիտասարդությունը։ Բայց կլինեն «համքարություն» (цеховщина), վոչ կոմմունիստական, յեթե կոմկերիտմիությունն իր գործնեության ասպարեզը սահմանափակեր բանվորական յերիտասարդությամբ։ Սոցիալիստական տնտեսության շուտափույթ կառուցման շահերի տեսակետից, կոմկերիտմիությունը պետք է միացնե իր շարքերում այն բոլոր լավը, ինչ կա նույնպես վոչ բանվոր յերիտասարդության շարքերում։ Կոմկերիտմիությունն իր կազմով բանվորա-գյուղացիական կազմակերպություն է, իսկ նպատակներով, վոգով, հիմնական խնդիրներով՝ պրոլետարական կազմակերպություն։

§ 3. Ի՞ՆՉ Է ԿՈՄԿԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ

Կոմկերիտմիությունը ՄՍՀՄ-ում պրոլետարական յերիտասարդական շարժում է։ Այն, ինչ վոր մենք վերևում ասել ենք պրոլետարական յերիտասարդական շարժման մասին, հավասարապես վերաբերում է և կոմկերիտմիությանը։

Միայն պետք է վորոշ վերապահում անել այն մասին, վոր վերոհիշյալ խոսքերը վերաբերում են պրոլետարական յերիտասարդական շարժման, ինչպես կապիտալիզմի որով, այնպես էլ սոցիալիզմի կառուցման շրջանում։

Կոմկերիտմիությունը պրոլետարական յերիտասարդական շարժման շարքերում միակ կազմակերպությունն է, վորը զարգանում է ազատ պայմաններում, մի յերկրում, վորտեղ իշխանությունը պատկանում է պրոլետարիատին և վորտեղ պրոլետարիատի դեկավարության ներքո սոցիալիստական շինարարություն է կատարվում։

Յերբ պրոլետարիատը պատրաստվում եր իշխանությունն իր ձեռքը վերցնելու, պրոլետարական յերիտասարդական շարժումն ոգնում եր կուսակցությանն այդ գործում։

Իշխանության գրավման պայքարի շրջանում, պրոլետարական յերիտասարդական շարժումը բարբիկադներումն եր, ճակատում, առաջավոր դիրքերում։

Լավագույն դաստիարակությունը գործողության մեջ ստացվողն է։

Շինարարության շրջանում պրոլետարական յերիտասարդական շարժումը միշտ կուսակցության ոգնականն և, միշտ կուսակցության ղեկավարության ներքո և դրա համար իշխանությունը պրոլետարիատի ձեռքն անցնելուց հետո՝ նրա վերաբերմունքը դեպի պետական իշխանությունը միանգամայն փոխվում է։ Յեթե կապիտալիզմի որով պետական իշխանությունը բուրժուազիայի գործիք հանդիսանալով ճնշում և սարկայնում է բանվոր յերիտասարդությունը, ապա պրոլետարական դիկտատուրայի որով յերիտասարդությունն ստանում է բոլոր հնարավորությունները, վորպեսզի պետական շինարարությունը դարձնի իրեն հարազատ գործ։

Կապիտալիզմի որով պրոլետարական յերիտասարդական շարժումը նպատակ ուներ խորտակել յերիտասարդությունը ճնշող և շահագործող կապիտալիստական պետությունը. պրոլետարական դիկտատուրայի որով, ընդհակառակը,—նպաստել պետությանը, վորը լայն հնարավորություն և տալիս աճող սերնդի կոմմունիստական դաստիարակության համար։

Յեթե կապիտալիզմի որով թույլ չեն տալիս բանվոր յերիտասարդությանը մոտենալ պետական ապպարատին,—պրոլետարիատի դիկտատուրայի որով կոմյերիմիության ներկայացուցիչները մասնակցում են պետական բոլոր կարևորագույն որգանների աշխատանքներին, նամանավանդ այն որգաններին, վորոնց աշխատանքը սերտորեն կապված է յերիտասարդության շահերի հետ։

Միայն պրոլետարիատի դիկտատուրայի որով, պրոլետարական յերիտասարդական շարժումը հնարավորություն ստացավ ամրանալ և զարգանալ։

Կապիտալիզմի որով պրոլետարական յերիտասարդական շարժման մասսայական զարգացման ճանապարհին կանգնած են ծանր պատնեշներ, ինչպես՝ բուրժուազիայի ճնշումը դպրոցի, կեղեցու, բանակի միջոցով, բուրժուական յերիտասարդական շարժումը, և չհոսանք մի շարք յերկրներում կոմմունիստական յերիտասարդական շարժման արգելված լինելու մասին, և չհոսանք բրիջազգային մենշևիկների դավաճանական դերի մասին։

Յեթե մենք վերցնենք լինենք մեր յեղբայր կոմյերիմիությունների բանակը և համեմատենք աշխատավոր յերիտասարդության թվի հետ, կստանանք հետևյալ պատկերը.

№№ ըստ կարգի	ՅԵՐԿՐՆԵՐ	Յերիտասարդ բանվորության քանակը	Կոմյերիտականների քանակը	%%-ով
1	Գերմանիա	3.500.000	մոտ 20.000	0,57
2	Ֆրանսիա	1.400.000	» 13.800	0,98
3	Իտալիա	700.000	» 12.000	1,7
4	Չեխո-Սլովակիա . . .	650.000	» 10.000	1,5
5	Անգլիա	3.000.000	» 1.000	0,03
6	Հյուսիսային Ամերիկա .	6.000.000	» 4.500	0,07

Իսկ մեզ մոտ ՄՍՀՄ-ում կոմկուսակցության համամիութենական XV համագումարին (1927 թվ. դեկտեմբեր) կազմակերպության շարքերում արդյունաբերության մեջ զբաղված բանվոր յերիտասարդության թիվը եր մոտ 50%։

Մեր յերկրում, սոցիալիզմի կառուցման շրջանում կոմյերիմիությունը դառնում է շինարարության հզոր ֆակտորներից մեկը։

Պրոլետարիատի ձեռքումն են մեր յերկրի սոցիալիզմի հազթական կառուցման բոլոր նախադրյալները, և նման մի նախադրյալ հանդիսանում է կոմյերիմիության կազմակերպության աշխատանքը, աճումը և զարգացումը։

Յերիտասարդությունն իր կոմմունիստական դաստիարակության աշխատանքներով, սոցիալիստական տնտեսության կառուցողների և մարտիկների նոր կադրեր պատրաստելով, պրոլետարիատի դիկտատուրայի կազմակերպության սիստեմում գրավել է արժանավոր տեղ։

Կուսակցությունը, ինչպես ղեկավարող շտաբ և պրոլետարիատի բարձրագույն կազմակերպություն, արհմիությունները, ինչպես բանվոր դասակարգի մասսայական կազմակերպություններ, խորհուրդները, ինչպես պրոլետարական դիկտատուրայի որգան, կոոպերացիան, իրրև գյուղացիության համախմբում և ուղեցույց ճանապարհ դեպի սոցիալիզմը, յերիտասարդների միությունը, իրրև կոմմունիստական կուսակցության ռեզերվ և շարժարը փակ—ահա պրոլետարիատի հիմնական կազմակերպությունները սոցիալիստական տնտեսության կառուցման շրջանում։

Մենք տեսանք, որ կուսակցության նկատմամբ կոմյերիտմիության բանվորա-գյուղացիական յերիտասարդության ոժանդակող մասսայական կազմակերպություն է, որը անց է կացնում յերիտասարդության մեջ կոմմունիստական ազդեցությունը, ներգրավելով յերիտասարդությունը սոցիալիզմի կառուցման գործի մեջ։

Կոմյերիտմիությունը գիտակցորեն ընդունում է իր վրա կոմմունիստական կուսակցության ղեկավարության, ընդունում է կուսակցության ծրագիրը և տակտիկան։ Կոմյերիտմիությունը աշխատանք տանելով բանվորա-գյուղացիական յերիտասարդության մեջ, հրապարակ հանելով յերիտասարդ սերնդի պահանջները և կարիքները, իրեն հիմնական ղեկավարող կանոն է դնում յերիտասարդության և ողջ պրոլետարիատի շահերի համաձայնեցումը։ Առաջնորդվելով այս կանոնով, կոմյերիտմիությունն ուշնեցել է զգալի հաջողություններ կյանքի պայմանների և մեր յերկրներում աճող սերնդի կենցաղի փոփոխման գործում։

Այս աշխատանքները կոմյերիտմիությունը տանում է արհմիությունների և պետական որգանների միջոցով, այլ վոչ թե ինքը նրանց փոխարինելով։ Արհմիությունների նկատմամբ կոմյերիտմիությունը չի հանդիսանում նրան զուգահեռ ինչ-վոր կազմակերպություն, այլ յերիտասարդության դրությունը բարելավելու գործում հանդիսանում է արհմիություններում աշխատող ընկերական կազմակերպություն։ Կոմյերիտմիության ներկայացուցիչները մտնում են արհեստակցական միությունների որգանները և այնտեղ սիստեմատիկ աշխատանք տանում յերիտասարդական աշխատանքի դրության հաշվառքի, նրա դրության բարելավման գործում, այդ գործնեության մեջ ներգրավելով բանվոր յերիտասարդության լայն մասսաները։

Պետական որգանների նկատմամբ կոմյերիտմիությունը հանդիսանում է խթանը այն հարցերում, վորոնց իրականացնումն անհրաժեշտ է յերիտասարդության շահերի և ընդհանուր առմամբ բոլոր բանվորների շահերի տեսակետից։ Առավել ակտիվ և լայն չափով զարգացած է կոմյերիտմիության աշխատանքը պետական այն հիմնարկներում, վորոնք ամենից ավելի շատ կապված են յերիտասարդության անմիջական կարիքների հետ։ Աշխժողկոմատ, Լուսժողկոմատ, Առժողկոմատ՝ ահա որգաններ, վորտեղ ավելի լայն չափով են դրված կոմյերիտմիության աշխատանքները։

Պրոլետարական դիկտատուրայի ամբողջ ապարատի նկատմամբ, կոմյերիտմիությունը հանդիսանում է նրա ակտիվ շինարարը և ապարատի բարելավման ու ամրապնդման գործում կուսակցության ոգնականը։

Այսպիսով մենք տեսնում ենք, որ պրոլետարիատի կազմակերպության սիստեմում կոմյերիտմիության շարժման դերը բնորոշվում է իբրև կոմմունիզմի մարտական դպրոց, վորը կուսակցության համար պատրաստում է նոր կադրեր, տարածում է կոմմունիզմի ազդեցությունը աճող սերնդի լայն մասսաների մեջ և յերիտասարդությունը սոցիալիստական շինարարության մեջ։

Կոմյերիտմիության շարժման զարգացման պատմության մեջ ՍՍՀՄ-ում կարելի է հետևյալ հինգ շրջանները նշել։

Առաջին — (1917 և 1918) նախակոմյերիտմիության շրջանի տարիներ.

Յերկրորդ — (1918-ի վերջ, 1919, 1920) քաղաքացիական կռիվների՝ այսպես կոչված՝ ռազմական կոմմունիզմի շրջանի տարիներ.

Յերրորդ — (1921, 1922) անտեսական նոր քաղաքականության առաջին շրջանի տարիներ։

Չորրորդ — (1923, 1924, 1925) կոմյերիտմիության շարժման ուժեղ վերելքի և կազմակերպության քաղաքական ակտիվության հսկայական աճման տարիներ։

Հինգերորդ — կոմյերիտմիության շարժման ընթացիկ շրջան, վորի սկիզբը կարելի է համարել կոմմունիստական կուսակցության XIV-րդ համագումարը, վորը տեղի ունեցավ 1925 թ. դեկտեմբերին։

Իսկ յերբ կոմյերիտմիության նախապատմության պետք է ընդունենք հեղափոխական հսկայական այն աշխատանքը, վորը կատարեցին — ճորտատիրության և բուրժուազիայի տիրապետության դեմ — բանվոր և գյուղացի յերիտասարդությունն է կատարել, այն աշխատանքը, վորը կատարվել էր գլխավորապես մեր յերկրի հեղափոխական բանվորական շարժման ընդհանուր շրջանակներում։

ՅԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ՆԱԽՈՐԴՆԵՐԸ

§ 4 ԻՆՉՊԵՍ ԵՐ ԸՊՐՈՒՄ ՅԵՐԻՏՄԵՐԴ ԲԸՆՎՈՐՆ ՈՒ ԴՅՈՒՂԱՑԻՆ ՅԵՐԻՋԱՐԻ ՈՐՈՎ

Ինչպես ցույց է տալիս 1897 թվի համառուսական մարդահամարը, ցարական հին Ռուսաստանի տերբիտորիայի վրա բոլոր վարձու աշխատավորների թիվը հասնում էր 9.194.000-ի։

Սրանից անչափահաս 12 տ. և ավելի փոքր 238.000 հ. կամ 2,6%
» » 13-14 տ. » » 363.000 հ. » 4 »
» » 15-16 տ. » » 644.000 հ. » 7,2 »
» » 17-19 տ. » » 1.181.000 հ. » 12,9 »
Իսկ ընդամենը 12-19 տ. . . . . 2.426.000 հ. » 26,7 »

Այլ կերպ ասած՝ ամեն մի հազար վարձու աշխատավորից 267 հոգին անչափահասներ, պատանիներ եյին՝ մինչ 20 տարեկաններ։

Գյուղացիական յերիտասարդության թվի մասին տեղեկություններ չունենք, բայց առանց մեծ սխալներ անելու, կարելի յե յենթադրել, որ այդ թիվը վոչ մի դեպքում 15.000.000-ից պակաս չեր։

Ինչպես եր ապրում յերիտասարդ գյուղացիների և բանվորների գլեթե քսան միլիոնանոց այդ բանակը ցարական Ռուսաստանում։

Շատ հեռու անցյալները չգնանք։

Մենք ցույց կտանք բանվոր և գյուղացի յերիտասարդության կյանքը ցարական Ռուսաստանի վերջին կապիտալիստական տարիներում։

Ձորտական աշխատանքի պայմանները մենք ցույց չենք տա, կասենք միայն, որ դա ամբողջությամբ առած ստրկական աշխատանք եր։

50 տարի սրանից առաջ Մոսկվայի նահանգում 100-ից 10 ֆաբրիկայում միայն փոքրահասակների և անչափահասների բանվորական որը 12 ժամից քիչ եր։

Իսկ մյուսներում գործն այնպես եր դրված, վոր բանվորական որը 13 ժամից ավել եր գալիս։

Իվանովո-Վոզնեսենսկում մինչև իսկ նախապատերազմական տարիներում (1901—1915 թ. թ.) փոքրահասակների բանվորական որը միջին թվով 9 ժամ եր, ըստ վորում աշխատանքը կատարվում եր.

I հերթափոխին—առավոտյան ժամը 4-ից մինչև առավոտյան $8^1/_2$ և ցերեկվա ժամը 1-ից մինչև յերեկոյան ժամը $5^1/_2$.

II հերթափոխին—առավոտյան $8^1/_2$-ից մինչև ցերեկվա ժամը 1-ը և յերեկոյան ժամը $5^1/_2$-ից մինչև 10-ը։

Բանվորական հուզմունքների ազդեցությամբ ցարական կառավարությունն ստիպված եր բանվոր յերիտասարդության աշխատանքի մասին հրատարակել մի շարք որենքներ։

Այսպես, դեռ 1845 թվին ցարական կառավարությունը վորոշում հրատարակեց, վորով կարգադրվում եր 12 տարեկանից փոքրերին չնշանակել գիշերային հերթափոխի աշխատանքների կես գիշերից մինչև առավոտյան ժամը 6-ը։ Բայց շատով մոռացան այդ որենքը և կյանքում չերականացրին։

Յերկրորդ որենքը, վորը հրատարակվել է 1882 թ. հունիսի 1-ին, 12—15 տարեկան յերեխաների համար սահմանում եր 8 ժամյա բանվորական որ։ Բայց ինքը՝ որենքը իրավունք եր տալիս չհաշվել այդ բանը 2 տարի շարունակ և բացառություն անել ֆինանսների մինիստրի կարգադրությամբ։ Այնպես վոր այդ որենքն էլ միայն թղթի վրա։

1885 թ. որենքն արգելում եր մինչ 17 տարեկան անչափահասների գիշերային աշխատանքը բամբակա-գործվածքային և բրշկեղենի արտադրության մեջ։ Որենքը պետք է վոր ուժի մեջ մտներ լոկ փորձի համար՝ 3 տարով։ 1890 թվ. շրջաբերականով նահանգապետներին իրավունք եր տրվում այդ որենքից շեղումներ կատարել։

Ահա անչափահասների աշխատանքի ցարական ամբողջ «կարգավորումը»։ Այլ բան չեր էլ կարելի սպասել։

Այժմ տեսնենք, թե վորքան եր վճարում անչափահասներին կապիտալիստական ֆաբրիկան այդպիսի ծանր աշխատանքի համար։

կբերենք թվեր հանրդականութեյան կարգով։

«1890 թ. Որենբուրգի նահանգում իշխանուհի Բելոսելսկայի գործարաններում և հանքահորերում 12 տարեկանից փոքր յերեխաներին թույլ էին տալիս հանքերում աշխատելու օրական 20 կոպեկ աշխատավարձով։ Սակայն նրանք պարտավորվում էին 150 փթից վոչ պակաս հանք կրել ձեռնասայլակներով։ Իսկ յեթե մեկը թեկուզ մեկ ձեռնասայլակ պակաս տանելու լիներ՝ կըզրկվեր ամբողջ որվա աշխատավարձից։ Այդ 20 կոպեկից դուրս էին գալիս 5 կոպեկ ճաշի (առանց մսի) և հացի համար։ Իսկ յեթե մեկը ճաշին մի հս եր վերցնում, նրա աշխատավարձից նույնպես վոչինչ չեր մնում»։

19-րդ դարի 70-ական թվականներին միջին աշխատավարձը առանձին արտադրութեյուններում կազմում եր.

Արտադրութեյուններ	Տղամարդիկ		Անչափահասներ	
	Ռուբ.	Կոպ.	Ռուբ.	Կոպ.
1. Մեխի գործարաններ	30	25	10	50
2. Մեքենագործարաններ	29	—	8	—
3. Ապակեգործարաններ	24	—	5	50
4. Մետաքսագործարաններ . . .	20	—	3	50
5. Բամբակաման ֆաբրիկաներ . .	16	—	7	—
6. Մանուզի ֆաբրիկաներ	15	—	6	25

«1870 թվականին կրենդոլմի մանուֆակտուրայում (Նարվայում) աշխատում էին դաստիարակչական տնից վերցրած մոտ 200 աղջիկներ և տղաներ։ Դեռ չխոսենք ընդհանրապես աշխատանքի և կյանքի ծանր պայմանների մասին, պետք է միայն նշել, վոր ամսական աշխատելով 3—8 ռուբլի, նրանք մինչ չափահաս դառնալը այդ փողերը չեյին ստանում, իսկ չափահաս լինելուց հետո էլ նրանց շատ քիչ եր հասնում, քանի վոր այդ գումարներից դուրս էին գալիս՝ սնունդի, վոտնամանի, հագուստի, բնակարանի, տուգանքներ և այլն։

Իսկ 1883 թ. Շույսկի գավառի չթի ֆաբրիկաների անչափահասների ամսական աշխատավարձի մասին կան հետևյալ թվական տվյալները.

Անչափահասների աշխատանքի տեսակը	Անչափահասների միջին աշխատավարձը		Միջահասակների միջին աշխատավարձը
	Ռուբ.	Կոպ.	Ռուբ. Կոպ.
Ներկարարներ	7	75	11 39
Տպիչ մեքենայի վրա	7	—	12 61
Սպիտակացման բաժնում . .	6	54	10 67
Յեփի բաժնում	5	25	10 08
Շոգետուն »	7	—	10 35
Հրատ կարելու բաժնում . . .	5	52	8 50
Փայլատուն բաժնում	6	25	11 98

Թե մեծահասակների և թե յերիտասարդութեյան աշխատավարձն այնքան չնչին եր, վոր մինչև իսկ Իվանովո-Վոզնեսենսկի գործարանատեր Յա. Պ. Գարելինը ստիպված եր ասելու՝ «հնարավոր է արդյոք այդ պայմաններում գոնե մալդավարի ապրել»։ Պետք է գիտենալ, վոր 1858 թ. մինչև 1880 թ. ժամանակաշրջանում աշխատավարձը միջին հաշվով բարձրացել է 15%-ով, իսկ հաճարի ալյուրի արժեքը՝ 100%-ով։

Կապիտալիստական հասարակութեյան մեջ աշխատավարձի աճումը միշտ հետ է մնում ամենաանհրաժեշտ առարկաների գների աճումից, և այդպիսով կենսական մթերքների գների աճման հետ մեկտեղ ավելի և ավելի վատթարանում է բանվորի դրութեյունը։ Բայց տեսնենք, ինչպես եր դրված գործը անչափահասների և փոքրահասակների աշխատավարձի նկատմամբ հետագայում։

1901 թ. Պետերբուրգի գործարաններում աշակերտների աշխատավարձը հավասար եր— Բալտիական և Պետերբուրգի մետաղագործարաններում օրական 40 կոպ., Ֆրանս-Ռուսական և Նեվայի նավաշինարարական գործարանում՝ 30 կոպ. և Պուտիլովսկի գործարանում՝ 25 կոպեկ։

Հետևաբար, աշակերտն ամսական աշխատում եր 6—9 ռուբլի։

Մոտավորապես նման աշխատավարձ գոյութեյուն ուներ մինչ 1914 թ. պատերազմը։

Պատերազմի ժամանակ աշխատավարձը մի քիչ բարձրանում է, բայց, այսուամենայնիվ, նա հետ է մնում թանգութեյան աճումից։ Պետրոգրադի շրջանում պատերազմի առաջին $1^1/_2$ տարվա ընթացքում աշխատավարձն ավելացել է 41,4%-ով, իսկ գները բարձրացել են 150%-ով։ Բանվորների և բանվորական յերիտասարդութեյան դրութեյունն ավելի վատթարանում եր։

2270-37

Այսպիսով տեսնում ենք, որ ցարիզմի ամբողջ դոյութեյան ընթացքում բանվոր յերիտասարդութեյունն առանում եր իրեն աշխատանքի համար աննշան կոպեկներ։ Ծանր, մաշող աշխատանքը, չնչին աշխատավարձը, բնակարանային վատթարագույն պայմանները խեղանդամ եյին դարձնում յերիտասարդութեյանը։ Յեթե համեմատելու լինենք հասակավոր բանվորի աշխատանքի արդյունքը անչափահասի աշխատանքի արդյունքի հետ, նմանապես և նրանց ստացած աշխատավարձը, կտեսնենք, որ անչափահասը իր արտադրածի դիմաց շատ ու շատ քիչ եր ստանում։ Ֆաբրիկանտ կապիտալիստը յերիտասարդի աշխատանքից ավելի ե ոգուտ քաղում, քան հասակավոր բանվորի աշխատանքից։ Կապիտալիստական հասարակութեյան մեջ յերեխաների և պատանիների աշխատանքը այնտեղ, ուրտեղ տեխնիկական պայմանները նրա կիրառումը թույլ են տալիս, ավելի եժան և ձեռնտու ե ֆաբրիկանտների և գործարանատերերի համար։

Արտադրութեյան մի շարք ճյուղեր կային, ուրտեղ փոքրահասակների թիվը ահագին եր։

Այսպես, որինակ՝ լուցկու արդյունաբերութեյան մեջ, որ ամենաճյուսակարն և յերիտասարդ բանվորութեյան առողջութեյան համար, ամեն մի 1.000 հոգուց 332 հոգին փոքրահասակ, այսինքն յերեխաներ եյին։

Ապակու արտադրութեյան դործում, որ նմանապես շատ ճնասակար և, և աշխատանքը իրոք որ տաժանակիր, ամեն մի 1000 բանվորից 248-ը փոքրահասակներ եյին։

Գործարաններում և ֆաբրիկաներում «արհեստի» ուսուցումը դրված եր չափից դուրս վատ։

Կապիտալիստի համար ձեռնտու յեր չկազմակերպված ուսուցման ճանապարհը, այսպես կոչված՝ անհատական աշակերտութեյունը։

Անչափահասը և նույնիսկ յերեխան ընդունվում եր ֆաբրիկա և անցնում եր աշխատանքի, որ առանձնապես մեծ վարժութեյուն չեր պահանջվում։ Անչափահասը նայելով հասակավոր բանվորի աշխատանքին, ինքն էլ եր փորձում կատարել նույն աշխատանքը և այսպես «նայելով» և «փսեելով» հետագայում դառնում եր ինքնուրույն բանվոր։

Ահա թե ինչպես և նկարագրում մի ճարտարապետ վորակավոր բանվորներ պատրաստելն ապակու արտադրութեյան մեջ։

«Ապակու արտադրութեյան մեջ նախքան բարձր վորակի բանվոր դառնալը (փչող-ուռցնող վարպետներ, կպցնողներ, վորդորկողներ, մամլողներ, բացողներ և այլն) անչափահասները առհասարակ շատ վաղ հասակից հենց գործարանում անցնում եյին գործնական աշխատանքի դաժան դպրոցը։ Տվյալ գործարանի բանվոր ապակեգործի ընտանիքի 10—12 տարեկան տղան, (յերբեմն և ավելի փոքրահասակ՝ խիստ աղքատութեյան, վորբութեյան դեպքում) մանում եր գործարան իբրև ապակեղեններ հեռացնող, բացողների մոտ գլանապակի բերողներ, կաղապար բացողներ, խողովակներ տաքացնող և այլն։ Համարյա միաժամանակ և համեմատաբար դեպս 12—14 տարեկան փոքրահասակը սկսում եր իր միջի այլոց (հոր կամ մեծերի դեկավարութեյամբ) սովորել ապակյա շինվածքների փչելը, այնպես վոր 15—16 տարեկանից կարողանա աշխատել իբրև բանուչնիկ, այսինքն՝ վարպետի ոգնական։ Իբրև բանուչնիկ 5 տարի (յերբեմն և ավելի) աշխատելով և բոլոր ժամանակ վարժվելով, յերիտասարդ աշխատավորը, նայած նրա պատրաստականութեյան և ազատ տեղ լինելուն, դառնում եր վարպետ (փչող-ուռցնող, կպցնող)։ Նույն հետևողական եվոլյուցիան եյին ունենում այլ պրոֆեսիաների վորակավոր բանվոր-ապակագործները—վորդորկողները, բաց անողները և այլն։

Մինչև հասալը, որինակ՝ բաց անողների համար հանդիսանում է, այսպես կոչված՝ բացող վարպետների «ծառան» (վարդապետաբար, ղրկող)։ պատահում են այնպիսի դեպքեր, վոր փչող-ուռցնող վարպետը կամ նրա ոգնականը առողջութեյան թուլութեյան և թոքերը լարել չկարողանալու պատճառով, սկսում են սովորել գլանապակի բանալ վոր չնայած խիստ պատասխանատու աշխատանք է, բայց պակաս ճնասակար և ավելի թեթև, քան ապակե շինվածքների փչումը (մանավանդ գլանապակիներին)։ Այդպիսի փոխադրումը առավել բնորոշ է լուսամուտի ապակի կտրողների և տեսակավորողների համար, վորոնք դրեթե միշտ ընդունվում են վաստառողջ փչող վարպետներից և բացանողներից, վորոնց առողջութեյունը չի ներում աշխատելու բարձրաստիճանի ջերմութեյան մեջ։ Նմանապես, յեթե գործարան ընդունվող մի յերեխա վաստառողջ եր լինում՝ ծնողները միջոցներ եյին ձեռք առնում, վոր նա հենց սկզբից մտնի հեշտ արհեստի»։

Ահա թե ինչպիսի յեր ուսուցման և վորակավոր բանվորների պատրաստման ձևը։ Վորակավոր բանվոր դառնալու համար

հարկավոր եր անցնել աշակերտության դաժան ճանապարհը, սովորեցնող վարպետի մի հայացքից նրա միտքը գուշակել։

Բացի անհատական ճանապարհով վորակավոր բանվորներ պատրաստելուց, գործարանից դուրս գոյություն ունեյին արհեստագիտական և պրոֆ-տեխնիկական դպրոցներ։

Նման դպրոցներ ավարտողների մի մասը ընդունվում եր գործարանները, բայց այդ բանվոր յերիտասարդության հիմնական մասսան գնում եր մանր և տնայնագործական արդյունաբերության մեջ աշխատելու։

Միայն պատերազմի նախորյակին և իմպերիալիստական պատերազմի ժամանակ ամենախոշոր ձեռնարկություններն սկսեցին գործարաններում ստեղծել պրոֆ-տեխնիկական դպրոցներ և սկսեցին ավելի կազմակերպված ձևերով տանել ֆաբրիկա-գործարանային աշակերտության ուսուցումը։

Ցարական կառավարության որենսդրությունը անչափահասների և փոքրահասակների աշխատանքի նկատմամբ, ի հարկե, ինչպես տեսնում ենք, անբավարար եր, այն տեսակետից, վոր հնարավորություն չեր տալիս ստեղծելու յերիտասարդ բանվորական ուժերի կիրառման վորևե սկզբունքը։

Ցարիզմը ուներ մեկ սկզբունք, այն է, մաքսիմալ չափով շահագործել բանվոր դասակարգին, սրանց թվում և բանվոր յերիտասարդությանը։ Այն որենքները, վորոնք ուղված եյին անչափահասների աշխատավորական որվա սահմանափակման, արգյունք եյին բանվորական շարժումների և գործադուլների, բանվորական պայքարի մի կողմից և մյուս կողմից իրենք՝ արդյունաբերողները պահանջում եյին, վոր բոլոր ձեռնարկություններում լինի վորոշակի բանվորական որ, վորպեսզի հավասարեցնեն նրբերողները պահանջում եյին, վոր բոլոր ձեռնարկություններում լինի վորոշակի բանվորական որ, վորպեսզի հավասարեցնեն մրցության և իրենց մեջ յեղած պայքարի պայմանները...

Բանվոր յերիտասարդության քայքայող աշխատանքը արտացոլվում եր վոչ միայն առողջության վրա։

Կապիտալիզմը յերիտասարդ բանվորներին ոգետ և խաղ եր թողնում։

Գոյություն ունեցող դպրոցները վոչ մի չափով չեյին կարող բավարարել բանվոր յերիտասարդության լուսավորության պահանջները. իսկ յերբ յերիտասարդ բանվորը մանում եր գործարան, ավելորդ եր արդեն մտածել դպրոց հաճախելու մասին։

Նախապատերազմյան տարիներում բանվոր յերիտասարդության անգրագիտության պատկերը կարելի յե վորոշել հետևյալ թվերից։

Մոսկվայի նահանգում յերիտասարդ բանվորներից գրագետ և կիսագրագետ եյին 55%, Պետերբուրգի նահանգում յերիտասարդ բանվորներից գրագետ և կիսագրագետ եյին 54%, Խարկովի նահանգում յերիտասարդ բանվորներից գրագետ և կիսագրագետ եյին 19,4%։

Աճող սերնդի դաստիարակության ցարական սիստեմը պահպանվում եր ստոծո, թագավորի և հնազանդության վրա։ Կարևոր և ոգտակար դիտություններ դպրոցը քիչ եր տալիս։

Նա տալիս եր միայն գրագիտություն. գրագետ բանվոր եր հարկավոր կապիտալիզմին։ Սակայն ցարական կառավարությունը նույնիսկ տարրական կրթության զարգացման մասին կապիտալիստների պահանջներին ել դժվարությամբ եր ընդառաջում։

Յերիտասարդ բանվորության կյանքի կենցաղային կողմը սոսկալի յեր։

Բանվոր յերտասարդությունը լույսի մի շող չեր նկատում։

Իսկ գյուղացի յերիտասարդության դրությունը ցարիզմի որով ավելի վատ եր։

Գյուղացի յերիտասարդության աղքատ խավերը, հողի կարիքից («հավի արածելու տեղ ել չկար») ստիպված եյին թողնել գյուղը և մեկնել աշխատանքի։ Անգրագիտությունը, մթությունը, բռիությունը գյուղացի յերիտասարդության մեջ սարսափելի յեր։ Քաղաք ընկնելով գյուղից յեկածները լինչ աշխատանքի ասես գնում եյին, միայն թե սովից չմեռնեն։ Նրանք ընկնում եյին շահագործման ճանկերի մեջ, և նրանց աշխատանքով ստեղծվում եր ուրիշների հարստությունը։

Գյուղից յերիտասարդությունը գործի մեկնում եր վոչ միայն քաղաք, այլ և դեպի հարավ և հացառատ վայրերը գյուղատնտեսական աշխատանքների համար։ Աշխատանքը կալվածատերերի ագարակներում դժվարին եր, մաշող, իսկ վարձատրությունը չնչին։

Սակայն ամենքին ել չեր հաջողվում դուրս պրծնել գյուղից և գնալ այդ ծանր և դաժան աշխատանքին։ Գյուղական յերիտասարդության աննշան տոկոսը միայն կարողանում եր ընկնել քաղաք աշխատանքի և կամ տեղավորվել կալվածատիրոջ մոտ սեզոնային աշխատանքների համար։

Գյուղական յերիտասարդության հակայական մեծամասնությունը խեղդվում եր կարիքից և ցարական ծանր հարկերից։

Յեթե մինչև իսկ այժմ մեր գյուղում հողը լավ չի մշակվում, յեթե բնությունը դեռևս հրամայում է գյուղացիությանը, յեթե դեռ մինչև այժմ էլ խորհրդային գյուղում շատ ապիտություն կա, ապա առաջ ինչ պետք է լիներ։ Աշխատանքը իսկապես վոր տաժանակիր եր։

Ինչպե՞ս եր ապրում իրոք գյուղացի յերիտասարդությունը։ Անլուսա ու խավար։

Ծանր աշխատանքը մի կտոր հողի վրա, կալվածատիրոջ ու ցարական հարկերի համար մեջք ծռելով, ապիտություն, խավար, ծանր կյանքը ցարական ողու մեջ մոռանալու բոպեները։ Այնուհետև գյուղացի յերիտասարդին տանում եյին զինվոր։ Նրա գլուխն ածելում եյին և ստիպում ծառայել «հավատի, ցարի և հայրենիքի» համար։ Բավական չի, վոր ցարիզմը խլում եր գյուղացի յերիտասարդության աշխատանքի արդյունքը, ցարիզմը խլում եր նաև նրա կյանքը։ Գյուղացի յերիտասարդությունը թնդանոթի միս եր, վորը ցարիզմը ծախսում եր նույն կալվածատիրական միապետության շահերի համար։

Դեպի լավ կյանք տանող ճանապարհը գյուղացի յերիտասարդության համար բոլորովին փակ եր։

Ցարական դպրոցների ուսուցումը մի կողմից իրեն նպատակ եր դնում ժողովրդի մեջ «զարգացնել և ամրապնդել հավատարիմ հպատակության զգացումներ, վորի համար աշակերտներին արված խրատները այն ուղղությամբ եյին, թե իշխանությունը կարգված է աստծո կողմից, վոր պետք է հնազանդվել Թագավորին և նրա կողմից նշանակված իշխանավորներին»։ Մյուս կողմից ամբողջ ուսուցումը սահմանափակվում եր հատարակ գրագիտության չափով։ Դպրոցը չեր տալիս այնպիսի գիտելիքներ, վորոնք անհրաժեշտ եյին կյանքը լավ հիմունքներին վրա դնելու համար։

Դպրոցը սովորեցնում եր գյուղացի պատանուն, վոր լավ կյանքի նա կարժանանա միայն «են կյանքում»։ Յեվ այնտեղ էլ «են կյանքում» լավ կյանք կարող է լինել միայն այն ժամանակ, յերբ հնազանդվում էս Թագավորի կամքին, ապրում Թագավորի կյանքի համար, և չես սրտնջում քո ծանր կյանքի պայմանների։ Այդպես եյին սովորեցնում գյուղական յերիտասարդությանը «հոգևոր հայրերը», ցարիզմի քաղղեկները՝ գյուղական տևրտերները։ Սակայն հենց այս տիպի ցարական տարրական դպրոցներն էլ մատչելի չեյին գյուղական յերեխաների մեծամասնության համար, վորովհետև քիչ եյին, աննշան քիչ՝ ցարական դպրոցները։

Գյուղացի յերիտասարդության կյանքի մակարդակը շատ ցածր եր։ Կարիքը և կրկին անգամ կարիքը թագավորում եր գյուղական ընտանիքում։ Մեկնելով «զինվորության»՝ գյուղական յերիտասարդը ընկնում եր ավելի վատ անազատ կյանքի մեջ։ Զինվորական ծառայության ժամանակ, առաջի հերթին, աշխատում եյին յերիտասարդ գյուղացու ուղեղը այնպես վերափոխել, վորպեսզի նա լինի ցարիզմի պահապան շուն։ Զինվորական ծառայության մեջ գյուղացի յերիտասարդին սովորեցնում եյին՝ թե նրանք, վորոնք կհամարձակվեն գոյություն ունեցող իրավակարգի դեմ գնալ, նրանք հանդիսանում են կառավարության կատաղի թշնամին, և նրան հարկավոր է գնդակահարել։ Զինվոր դաստիարակման սիստեմը գյուղական յերիտասարդին այնպես եր դարձնում, վոր նա ընդունակ եր գնդակահարելու իր յեղբայրակից գյուղացուն, վորը կապստամբի Թագավորի և կալվածատերի լծի դեմ։

Ծառայությունից իրեն հարազատ գյուղը վերադառնալով, գյուղացին լծվում եր աշխատանքի և մեջք եր ծռում նրանց համար, վորոնք «թե կուշտ թե հարբած» եյին և ով վոր ուրիշի միջոցով ձեռք բերած աշխատանքն եր վայելում։ Բացառիկ մարդկանց միայն հաջողվում եր խուսափել այս ճանապարհից։ Սրանք գլխավորապես այն յերիտասարդ գյուղացիներն եյին, վորոնք ընկնում եյին գործարան կամ յերկաթուղի, բայց և այդտեղ նրանց կյանքը դառն եր լինում։

Գյուղական յերիտասարդությունից հատ ու կենտ անհատներին, գլխավորապես ունևոր ընտանիքներից, հաջողվում եր քաղաքում կրթություն ստանալ, նրանք դառնում եյին ցարական կառավարության չինովնիկներ և գյուղացիության վրա շատ բարձրից եյին նայում։

Իսկ հակայական մեծամասնությունը անքում եր կարիքների մեջ, ճնշված եր կալվածատերերի և ցարական հարկերի տակ, տրտնջում իր աստծուց իր ծանր կյանքի համար, բողոքում եր այդպիսի կյանքի դեմ, գնդակահարվում եր իր յեղբայրակից գյուղացիների կողմից յերիտասարդ կալվածատերերի հրամանով, ձեռվում եր հարկեր չվճարելու համար։ Գյուղական յերիտա-

սարդության կյանքի բարելավման համար, իհարկե, ցարական կառավարությունը վոչ մի փորձ չեր անում։

Ժամանակակից բանվոր և գյուղացի յերիտասարդության սերունդը, վորը զարգանում է խորհրդային պայմաններում, պրոլետարիատի դիկտատուրայի որով, չի կարող յերեվակայել, թե ինչպիսի անտեսական և քաղաքական ճնշում եր կրում յերիտասարդությունը ցարիզմի որով։

Բայց անհրաժեշտ է հասկանալ, վոր բանվոր և գյուղացի յերիտասարդությունը գանվում եր տնտեսական և հոգեկան սարկության մեջ։ Կապիտալիստ—ֆաբրիկանտը մի կողմից, կալվածատեր—ճորտատերը՝ մյուս կողմից, և ցարական իշխանությունն ամբողջապես, ահա թե ովքեր եյին աշխատանքի արդյունքը իրենց գրպանները գնում։ Կապիտալիստն ու կալվածատերը յերիտասարդությունից վերցնում եյին վոչ միայն նրա աշխատանքը, այլ և նրա կյանքը։ Բանվոր և գյուղացի յերիտասարդությունը միևնույն ժամանակ և թնդանոթի միս եր ցարական ինքնակալության համար։

Ցարական դպրոցը, բանակը և յեկեղեցին այնպես եր դրված, վոր նրանք յերիտասարդությունից կարողանան հնազանդ ըստրուկներ դաստիարակել, վորոնց հնարավոր լիներ անվերջ շահագործել։

Բայց կյանքը մի տեղում չի մնում։ Այդպիսի դրությունը անվերջ շարունակվել չեր կարող։ Ցարիզմի և աշխատավորության, սրանց թվում և յերիտասարդության շահերի միջև կային արմատական հակասություններ։ Յեվ ցարական Ռուսաստանի պատմությունը սերող դասակարգի կալվածատերերի և բուրժուազիայի և աշխատավոր դասակարգի-պրոլետարիատի և գյուղացիության պայքարի պատմությունն և։

Այս պայքարում յերիտասարդությունը ցույց և տվել ամենաակտիվ մասնակցություն։ Յերիտասարդության դրությունը ցարիզմի որով հրահրում եր նրան դեպի հեղափոխական պայքար, դեպի կռիվ իրենց դրության բարելավման համար։ Այս պայքարը յերիտասարդությունը չեր տանում հասակավորներից անկախ։ Յերիտասարդությունը հասակավորների հետ միասին խփում եյին իրենց ընդհանուր թշնամուն՝ կապիտալիստին և կալվածատերին։

§ 5 ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԸՆԹԱՑՔԸ ՅԱՐԻԶՄԻ ՈՐՈՎ

Հոկտեմբերյան Մեծ հեղափոխության համար նախապատրաստում և յեղել ցարական Ռուսաստանի հեղափոխական բանվորական շարժման վողջ պատմությունը։ Ցարիզմի ճնշումը բանվորական կազմակերպությունների հեղափոխական աշխատանքը ընդհատակյա յեր դարձնում։ Բանվոր դասակարգի կուսակցությունը—սոցիալ-դեմոկրատները (բայլշևիկները) մեր կոմմունիստական կուսակցության նախկին անունը, մտել եր շատ խորը հատակի տակ և խլուրդի պես փորում եր ինքնակալության հիմքերը։ Այն ամենը, ինչ ազնիվ, հեղափոխական, խիզախ յեվ կայուն եր բանվոր յերիտասարդության մեջ, այդ ամենը բանվորական կուսակցության մեջ եր։ Գործարանային և ֆաբրիկային կուսակցական խմբակները զգալի չափով բանվոր յերիտասարդությունից եր կազմված։ Կուսակցության անլեգալ կազմակերպության մեջ մտնելու համար՝ անհրաժեշտ եր առմիշտ հրաժարվել հանգիստ կյանքից, պետք եր միշտ աչքի առաջ ունենալ բանտը, աքսորը, տաժանագիր աշխատանքը և գնդակահարումը։ Բանվոր յերիտասարդությունը ավելի քիչ եր կաշկանդված ընտանիքով, բայց և այնպես գործարանատերերի, կալվածատերերի, ցարիզմի ճնշումն իր վրա ավելի շատ եր կրում։ Հեղափոխական բանվորական շարժման մեջ, ցարիզմի որով, յերիտասարդության խաղացած հսկայական դերի փաստը կարելի յե հաստատել ցարական վոստիկանների դեկավար՝ իշխան Սվյատոպոլկ-Միրսկու խոսքերից։ Ահա թե ինչ եր գրում նա 1903 թվականին.

«Իրենց վերջնական նպատակ դնելով՝ ստեղծել բանվորներից կազմակերպված մասսաներ՝ իրենց գաղափարներն իրականացնելու համար կառավարության դեմ պայքարելու, ագիտատորները, զժբախտաբար, զգալի հաջողություն ունեցան դրանում։ Վերջին 3—4 տարիների ընթացքում պարզապես ոուս յերիտասարդից առաջ յեկավ կիսագրագետ ինտելլիգենտի յուրահատուկ մի տիպ, վորը իր պարտքն է համարում բացատել ընտանիքը և հավատը և արհամարհել որենքը, չվենթարկվել իշխանությանը և ծիծաղել նրա վրա։ Այդպիսի յերիտասարդությունն գործարաններում, բարեբախտաբար, դեռ քիչ կա, բայց այդ մի բուռը, աննշան յերիտասարդությունը տերրորիստորեն ղեկավարում է բանվորական ճնացած մասսային»։

Պահնորդական բաժինը ճիշտ եր դուշակում, վոր սոցիալ-դեմոկրատիայի հեղափոխական պայքարի հենարանը գլխավորապես հանդիսանում եր խոշոր գործարանների բանվոր յերիտասարդությունը։ Ինչ վերաբերում է կիսագրագետ ինտելլիգենտի պարզասրտության և բանվորների նկատմամբ կատարված սերբորին, պահնորդական բաժինը, ի հարկե, զրպարտում եր բանվորներին։ Այդ «կիսագրագետ ինտելլիգենտները» դարձել են Ա. Ս. Ճ-ի պրոլետարիատի զեկավարները և մեկը չե, վոր այժմ նստած է խորհրդային կառավարության մեջ։ Աշխատավոր յերիտասարդության լավագույն մասը հասկացավ, վոր բուրժուական հասարակության պայմաններում նրա խնդիրն է՝ պայքար հասակավոր բանվորների հետ միասին հեղափոխության միջոցով հասարակությունը փոխելու և կապիտալիստական կարգերը տապալելու համար։

Սոցիալ-դեմոկրատ մենշևիկները-բանվոր դասակարգի մեջ բուրժուազիայի այդ ներկայացուցիչները—լաց եյին լինում, վոր բայշևիկների մեջ «բոլորը ջահել-ջուհուլ են»։ Վլադիմիր Իլյիչ Լենինը մենշևիկների ազմուկին պատասխանում եր Ենգելսի խոսքերով. «Ինչո՞ւ ես արդյոք, վոր մեզ մոտ, հեղափոխության կուսակցության մեջ զերակշռում է յերիտասարդությունը։ Մենք ապագայի կուսակցություն ենք, իսկ ապագան պատկանում է յերիտասարդությանը։ Մենք նորույթ մուծողների կուսակցություն ենք, իսկ այդպիսիների յեռից ավելի սիրով է գնում յերիտասարդությունը։ Մենք հին փտածության դեմ անձնուրաց պայքարի կուսակցություն ենք, իսկ անձնուրաց պայքարին միշտ յերիտասարդությունը առաջինը կըգնա։

Բանվոր դասակարգը և գյուղացիությունը 1905 թ. հեղափոխության ժամանակ ցարիզմին հասցրին առաջին խորտակիչ հարվածը։ Ցարիզմը չընկավ, բայց հիմքից տատանվեց։ Բանվոր-գյուղացիական հեղափոխությունը ճնշված եր։ Պրոլետարիատի և գյուղացիության առաջին կռվում մենք տեսնում ենք բանվոր և գյուղացի յերիտասարդությունն իրրև բարրիկադների վրա գործոն մի ուժ։ Յերիտասարդության հեղափոխական ուժը, վոր 1905 թ. հեղափոխությունից՝ Հոկտեմբերի այդ գլխավոր փորձից դեռ շատ առաջ կուտակվում եր, դուրս ժայթքեց 1905 թվականի հեղափոխության ժամանակ։

Գործադուլային շարժումներին, մանիֆեստացիաներին, կալվածատերերի դեմ մղված գյուղացիական շարժումների ժամանակ,

զինված յելույթների և ապստամբությունների ժամանակ բանվոր և գյուղացի յերիտասարդությունը հասակավոր բանվորների առաջավոր ջոկատների հետ եր։

1905 թ. ապրիլին Լոկնիտսկոյե և Դուբասովկի գյուղերում (Զերնիգովի գավառ) գյուղացի յերիտասարդությունը ցույց կազմակերպեց։ Նրանք անտեռության այգում հավաքվեցին մակույկների վրա և կարմիր դրոշակ պարզեցին։ Այդ գյուղերում տրամադրությունը այն աստիճան բարձր եր, վոր վոստիկանապետը ապատում եր, վոր անկարգություններ տեղի կունենան։ Նա պահանջում եր ուժեղացնել պահակախումբը։

1905 թ. ամառը Տվերի նահանգի Ֆելդևո գյուղում «զբոսանքի որ եր—տոն, այսպես կոչված «Յարիլո»։ Յերիտասարդությունը, թվով 200 հոգի, հավաքվեց և մեծ խմբով գնում եր փողոցով. շուռով սկսեցին յերգել՝ «Կորչի պատերազմը, կորչի ցարը, կորչի բռնակալ դահիճը...»։ Ամբոխի գնալուց հետո Թռուցիկներ յերևացին։ Շատերը լիքը ատրճանակներ ունեյին, վորոնցից կրակում եյին»։

Նույն ժամանակները, 1905 թ. ամառը Յարոսլավի նահանգի Սմոլենսկոյե գյուղում յերիտասարդների ցույց տեղի ունեցավ։ Ցուցարարները տանում եյին կարմիր դրոշակ՝ վրան գրված՝ «Կորչի ինքնակալությունը»։

Յարոսլավի նահանգի վոլոստներից մեկում,—Կոպրինսկի—ագիտացիա անողների թվում դատախազը գյուղացի յերիտասարդության մի խմբակի անունն և տալիս։ Գյուղացի յերիտասարդության այդպիսի խմբակներ կային նաև այլ նահանգներում։

Դիզդոհոբությունը գոյություն ունեցող կարգերի դեմ, հրահրում եր յերիտասարդությանն ավելի վճռական յելույթների։

«1905 թ. հունիսի 9-ի գիշերը,—հաղորդում է Սարատովի շրջանային դատարանի դատախազը արտարադատության մինիստրին,—Նովո-Զերկիժ գյուղում (Պետրովսկի գավ.) տեղի յե ունեցել հարձակում յերիտասարդ ամբոխի կողմից վոստիկանության հնձելամբի վրա, վոր 3 ուրյադնիկի և 3 ստրաժնիկի կազմով ուղարկված եր վոստիկանապետի կողմից՝ գյուղացիների վարքին հսկելու համար։ Վոստիկաններն անմիջապես դիմելով փախուստի, բոլորն էլ կարողանում են փախչել և չեն տուժել»։

Վոստիկանության նկատմամբ նաև անհատական տերրորի դեպքեր եյին տեղի ունենում։ Այսպես, որինակ՝ 1906 թ. փետրվարի 6-ի գիշերը Յեկատերինոսլավկի գավառի Կամենսկոյե

գյուղում պրիստավի բակը և վոստիկանների բնակարանը 2 ռումբ են նետում։ Ջերբակալվածը 17 տարեկան կազակ եր, ազգանունը Դոցենկո, Պոլտավայի նահանգից։ Այդ մահափորձի համար անչափահաս Դոցենկոյին կախեցին 1906 թ. նոյեմբերի 1-ին։

Սամարայի նահանգի կինել-Չերկասսը գյուղում 1906 թ. 200 հոգուց և գլխաւորապես յերիտասարդությունից բաղկացած մի մարտական գունդ կազմակերպվեց։ Մարտական գունդի և գյուղում գտնվող զինվորների ու սարաժնիկների միջև 1906 թ. ոգոստոսի 2-ին տեղի ունեցավ մի իսկական ճակատամարտ։ Կռիվը տևեց մոտ 1 ժամ։ Ապստամբները զինվորների և սարաժնիկների շղթան պատռելով նահանջեցին և անհետացան»։

Ինքըսաինքյան հասկանալի յե, վոր գյուղացի յերիտասարդությունն ամբողջությամբ չեր մասնակցում հեղափոխական շարժումներին։ Փոքրամասնությունն եր միայն, վոր ակտիվ դուրս եր գալիս և գիտակցորեն կռվում ցարիզմի և կալվածատերերի դեմ։ Բայց միանգամայն անվիճելի կերպով պիտք է ընդունել, վոր գյուղացի հակայական մասսաների մտածելակերպը և սպասելիքները ուղղված եյին հեղափոխության համար պայքարողների կողմը։

Ավելի ուժեղ և ավելի կազմակերպված և յեղել բանվոր յերիտասարդության մասնակցությունը հեղափոխական պայքարին։

Գործադուլային շարժումներին մասնակցում եր համարյա վողջ աշխատավոր յերիտասարդությունը։

Որինակ՝ համաձայն ֆաբրիկային տեսչության թվական տվյալների, Իվանովո-Վոզնեսենսկի 12 ձեռնարկություններում 3.549 անչափահասներից գործադուլին մասնակցել եյին 3.164 հոգի. 552 փոքրահասակներից գործադուլին մասնակցել են 505 հոգի։

Կարելի յե մի ամբողջ կույտ փաստեր բերել, վոր բանվոր յերիտասարդությունը յեղել է գործադուլների առաջամարտիկը։ Բայց այդ մենք չենք անի։ Ավելի հետաքրքրական կլինի, յեթե բերենք փաստեր, վորոնք խոսում են ինքնակալության դեմ մղած պայքարին բանվոր դասակարգի աճող սերնդի ցույց տված զենքը ձեռքին մասնակցության մասին։

Ամենից առաջ՝ Ոդեսայի ապստամբության մասին (1905 թ. հունիս). «Ամսի 13-ից հայտարարված եր ընդհանուր գործադուլ։ Յերկու որ մենք խմբերով շրջում եյինք փողոցները և ամենուրեք աշխատանքից հանում անդիտակից բանվորներին։ Լինում եյին փոքր ընդհարումներ վոստիկանության հետ, բայց մենք հաղթող եյինք դուրս գալիս։ Կազակների կատաղի շայկանները անողոք ծեծում ու մորթում եյին անխտիր՝ կանանց, յերեխաներին, ծերերին։

Յերրորդ որը ձերբակալվում են 25 հոգի (մեր կողմից ղբրկված պատգամավորները)։ Այս բանը հուզեց վողջ մասսային. սկսվեցին յերթեր փողոցում, վորտեղ և սկսեցին բարբրիկադներ շինել։ Յես յերբեք չեմ մոռանա մեկ տեսարան, վոր կատարվել է իմ աչքերի առաջ։ Յերեսակայեցեք մի խումբ յերեխաներ (11—14 տարեկան), վորոնք վոգևորված, քրտինքը ճակատներին, իրենց փոքրիկ ձեռքերով գերաններ, քարեր եյին կրում դիրքերի համար։ Նրանք այնպես կլանված են իրենց աշխատանքով, վոր վոչ մի բանի ուշադրություն չեն դարձնում, չեն լսում վոչ կազակների ձիյերի վոտքերի ղոփյունը և վոչ էլ նրանց մարակների շառաչը։ Անգործ, բերանբաց հասարակությունը, մենք բոլորս էլ սոսկում ենք, տեսնելով նրանց կատաղի վազքը...

Դարձյալ մի մոմենտ, ելի մի թռիչք և դուցե թռչեն այս անմեղ գլխիկները, դադարեն բաբախելուց այս դեռ մաքուր մանկական սրտերը... Համազարկ տրվեց և մի քանի րոպե կարծես ամեն ինչ ծածկվեց մշուշով։ Ողը արյուն պատեց։ Յերբ մշուշը ցրվեց, մենք տեսանք արյունից կարմրած սալահատակի վրա մի քանի սպանված և վիրավորված ընկերների, սրանց թվում և մի չեռատի աղջկա»։

Մեկ ուրիշ ականատես և ակտիվ մասնակցող Ոդեսայի աշխատավոր յերիտասարդության մասին գրում է հետևյալը.

«Հետաքրքրական է նշել պրոլետար յերեխաների դերը Ոդեսայի ապստամբության մեջ։ Հունիսի 14, 15, 16-ի անցքերի ժամանակ փողոցներում իրրև ճառախոս դուրս եյին գալիս անչափահաս յերեխաներ։ Մեկ ճառախոս 13—14 տարեկան, ասաց մոտավորապես հետևյալը. «Շատերը ասում են, վոր շարժմանը մասնակցություն են ցույց տալիս շատ յերեխաներ և անչափահասներ, թող այդպես լինի,—մի՞թե վատ է, վոր մենք պրոլետարների զավակներս դուրս ենք յեկել կռվի։ Արդյոք մենք՝ պրոլետարների զավակներս չենք կրել նույն չքավորությունը, ինչ վոր մեր հայրերն ու մայրերն են կրել։ Արդյոք մենք նույն իրավազուրկները և ճնշվածները չե՞նք, ինչ վոր նրանք։ Արդյոք մեզ նույնպես չի՞ սպասում քաղցած կյանքը, արդյոք մեզ չե՞ն շպրտի փողոց, յերբ կծծեն մեր վերջին հյութը։ Մեզ՝ յերեխաներիս ավելի շատ են ճնշում, վորովհետև մենք ավելի անպաշտպան ենք։ Մեզ

ընդունում են ֆաբրիկաներում, վորովհետև մեզ կարելի չե ավելի պակաս վճարել, քան մեծահասակներին, իսկ այդ նույն ժամանակ մեր մեծահասակ ծնողները նատած են անգործ։ Յեվ յերբ մեր հայրերը դուրս են գալիս փողոց և մեռնում, մենք նույնպես պետք է պայքարենք։ Ուրեմն պայքարենք, չենայենք մեր կյանքը և մենք ձեռք կբերենք քաղաքական ազատություն, վորը կազատի մեզ իրավազուրկ լինելուց»։

Ճառախոսին շրջապատող հասակավոր բանվորներն և կանայք արցունքն աչքերին համբուրում եյին յերեխային։ Մինչև իսկ այդտեղ գտնվող բուրժուաները լաց յեղան։

Առհասարակ յերեխաները շատ կենդանի մասնակցություն են ցույց տվել. նրանցից շատերն սպանվել են և վիրավորվել։ Առանձնապես նրանք չերմ մասնակցություն են ունեցել դիքերի կառուցման, արամվայների վագոնները շուռ տալու և խանութների ու կրպակների փակման գործում։ Նրանք ամբողջ խմբերով փոխադրվում եյին անկյունից-անկյուն, վազում եյին փողոցներով և կռվող մասսայի մեջ մեծ աշխուժություն մտցնում»։

Կան շատ պերճախոս փաստաթղթեր, վորոնցով կարելի չե վոչ միայն Ողեսայի, այլ և ամբողջ ցարական Ռուսաստանի բանվոր յերիտասարդության մասին դատել։

Մոսկովիլիխինի գործարանում (Պերմ) զինված ապստամբության համար պատասխանատվության յենթարկված 92 հոգուց՝ 39-ը 13—14 տարեկան հասակում եյին, դրանցից յերկուսը՝ 14—15, տասնչորսը՝ 16—18, տասնմեկը՝ 19—20 և տասներկուսը՝ 21—23 տարեկաններ։

Յեվ կամ դեկտեմբերյան նշանավոր ապստամբությունը Մոսկվայում։ Ո՞վ եր կռվում Կրեսնյայում 1905 թ.։ Զգալի մասը բանվոր յերիտասարդության և բանվոր պատանեկության կազրերն եյին։ Անարդարացի կլիներ, յեթե մենք չընշեյինք, վոր բուրժուական միջավայրից և ինտելլիգենցիայից առանձին անհատներ 1905 թվի հեղափոխության ժամանակ կըռվում եյին բանվորների և գյուղացիների շարքերում։ Աշակերտական յերիտասարդության լավագույն ներկայացուցիչները ոգտնում եյին բանվորական կազմակերպություններին, ցույց տալով նրանց ամենաակտիվ մասնակցություն։ Կարելի չե բերել մի շարք փաստեր, յերբ ֆաբրիկանտների, վաճառականների, ազատ պրոֆեսիայի տեր անձանց յերեխաները բացարձակապես և ազատորեն անցնում եյին հեղափոխության կողմը, կազմակերպում եյին

բանվորներին և ցարական կառավարության կողմից դատապարտվում գնդակահարման։

Բանվորների և գյուղացիների ընդհանուր հեղափոխական պայքարում բացի բանվոր և գյուղացի յերիտասարդության մասնակցությունից, կային և առանձին խմբակներ և կազմակերպություններ, վորոնք ցարիզմի ժամանակ անլեգալ աշխատում եյին։ Բայց դրանք հատ ու կենտ կազմակերպություններ եյին, վորոնք կազմակերպվելուց և աննշան աշխատանք տանելուց հետո՝ սովորաբար մտնում եյին կուսակցության շարքերը։ Նման կազմակերպությունների շարքը պետք է դասել աշակերտ և բանվոր յերիտասարդության այն խմբակները, վորոնք առաջ եյին յեկել մինչ 1905 թ. հեղափոխությունը և մի հենց հեղափոխության ժամանակ և նրանից հետո։ Այդ կազմակերպությունների մեջ պետք է նշել՝ «Աշակերտական Յերիտասարդության Հյուսիսային Միությունը»-ը, վորը առաջ եր յեկել 1903 թ. և գոյություն ունեցավ մինչ 1905 թ. հեղափոխությունը։ «Սեմինարիստների միությունը», վորը 1904 թ. վարոնեժում գումարեց աշակերտության այդ խմբակի հեղափոխական մասի ներկայացուցիչների անլեգալ համագումարը, «Աշակերտության Հարավ-ռուսական միությունը», վորը վորոշակի կանգնեց սոցիալ-դեմոկրատական, բոլշևիկական տեսակետի վրա և վորը կոմմունիստական կուսակցության համար պատրաստեց բավականաչափ աշխատավորներ։

Բանվոր յերիտասարդության կազմակերպություններից անհրաժեշտ է նշել «Յուգենդ-Բունդ»—բանվոր յերիտասարդության միությունը, վորը առաջ յեկավ 1905 թ. հրեական սոցիալ-դեմոկրատական կուսակցության կից Ռուսաստանի արևմտյան մասում (Լեհաստան, Բելոռուսիա, Արևմտյան Ուկրաինա). «Ապագա»—յերիտասարդ բանվորների կազմակերպություն, վորը առաջ եր յեկել ցարական Լեհաստանում։

Բայց չկար մասսայական յերիտասարդ պրոլետարական շարժում ինչպես այդպիսին։ Չկար, վորովհետև բանվոր յերիտասարդության լավագույն ուժերը մասնակցում եյին կուսակցական խմբակներում։ Ընդհատակյա ծանր աշխատանքի պայմանները պահանջում եյին շարժման միասնականություն, բայց այնքան էլ շատ չեյին դրանք։ Հարկավոր եր աշխատանքը զգույշ տանել, ուժերը խնայել անհաջողություններից։

Մասսայական պրոլետարական յերիտասարդական շարժումը ծավալվեց մեր յերկրում ցարիզմի տապալումից հետո միայն։

Վորպեսզի որինակներով ցույց տանք, թե ինչու յերիտասարդության առաջ յեկող կազմակերպությունները վորոշ ժամանակաշրջանից հետո միանում եյին հին կուսակցության հետ, մի քիչ մանրամասն կանգ կառնենք «Հարավ-ռուսական աշակերտական միության» աշխատանքի վրա։

Աշակերտության խմբակները Հարավային Ռուսաստանում մինչ 1905 թ. հեղափոխությունը բավականին տարածված եյին։

Այդպիսի խմբակներ կային Ռոստովում (Դոնի վրա), Տագանրոգում, Բերդյանսկում, Նովոչերկասկում, Յեկատերինոսլավում, Արմավիրում, Խարկովում։ Շարժման կենտրոնը Ռոստովն եր։

1902 թ. դումարվեց Հարավային Ռուսաստանի հեղափոխական աշակերտության առաջին համագումարը, վորը կազմակերպեց «Հարավ-ռուսական աշակերտական միությունն» և ընտրեց կենտրոնական կոմիտե։ Առաջին համագումարում ընդունվեց մի բանաձև, վորով միությունը ձևակերպվում եր իբրև սոցիալիստական։

Բանաձևում ասված եր.

«Համագումարն անհնարին և համարում միջնակարգ դպրոցի արմատական բարեփոխումը առանց Ռուսաստանի վողջ սոցիալ-քաղաքական կազմի փոփոխման։ Համագումարը գտնում է, վոր Ռուսաստանի ինտելլիգենցիայի վրա պարտականություն է ընկնում աշխատավոր դասակարգերի մեջ տարածել սոցիալիստական սկզբունքները»։

Այս միության յերկրորդ համագումարը, վորը կայացավ 1903 թ., հայտարարեց՝

«Ընդունելով, վոր անհրաժեշտ է ռուսական աշակերտական յերիտասարդությունը պատրաստել՝ գիտակցորեն պայքար մղելու պրոլետարիատին քաղաքական և տնտեսական տարկությունից կապանքներից ազատելու համար. ընդունելով, վոր պրոլետարիատի լիակատար ազատագրումն անհնարին է առանց բուրժուական իրավակարգի տապալման և սոցիալական հեղափոխության. ընդունելով, վոր անհրաժեշտ է ռուսական աշակերտական յերիտասարդությունը հեռու պահել բուրժուական սահմանադրական իղեալներից, դենը չգնացող ռուսական լիբերալիզմի գաղափարներից և նույնպես սոցիալիստ-հեղափոխականների կուսակցության ազդակալի քարոզներով հրապուրվելուց, վորոնք մթագնում են ռուսական պրոլետարիատի դասակարգային գիտակցությունը և քայքայիչ կերպով ազդում նրա ազատագրական շարժման զարգացման վրա, համագումարն անհրաժեշտ է համարում յերիտասարդության մեջ պրոպագանդա մղել հանուն պրոլետարական սոցիալիզմի այն սկզբունքների, վորոնց միակ կրողը հանդիսանում է Ռ. Ս.-Դ. Բ. Կ.։ Համագումարը հայտնում է իր լիակատար համերաշխությունը Ռ. Ս. Դ.-Բ. Կ. ծրագրին»։

Այս բանաձևը ցույց է տալիս, վոր նոր կազմակերպությունը վոչ միայն բառերով, այլ և գործով դառնում է սոցիալ-դեմոկրատական։

Կուսակցությունը և մասնավորապես Վ. Ի. Լենինը հետաքրքրվում եյին աշակերտական շարժումով և աշխատում եյին դնել նրան բոլշևիկական հունի մեջ։

Ռ. Ս.-Դ. Բ. Կ. յերկրորդ համագումարը 1903 թվականին ընդունեց Լենինի առաջարկությամբ և նրա խմբագրած մի հատուկ բանաձև հետևյալ բովանդակությամբ.

«Ռ. Ս.-Դ. Բ. Կ. յերկրորդ համագումարը վողջունում է աշակերտական յերիտասարդության հեղափոխական ինքնագործունեության աշխուժացումը, առաջարկում է կուսակցության բոլոր կազմակերպություններին ցույց տալ ամեն տեսակի աջակցություն այդ յերիտասարդության կազմակերպվելու ձգտումներին և աշակերտական բոլոր խմբակներին խորհուրդ է տալիս նախ՝ իրենց գործունեության մեջ առաջնություն տալ իրենց անդամների ամբողջական ու հետևողական սոցիալիստական աշխարհայացքի մշակմանն, լուրջ ծանոթանալով, մեկ կողմից մարքսիզմին, մյուս կողմից՝ ռուսական նարոդնիկության ու Արևմտյան Յեվրոպայի ոպպորտունիզմին, վորպես ժամանակակից մարտնչող առաջավոր ուղղությունների մեջ յեղած գլխավոր հոսանքներին (յերկրորդ՝ զգուշանալ յերիտասարդության այն անկեղծ բարեկամներից, վորոնք հեղափոխական կամ իդեալիստական դատարկ ֆրազեոլոգիայով և ֆիլիստերական արտոնություններով հեղափոխական ոպպոզիցիոն հոսանքների միջև, կարուկ բանակովի ճնշաստակության ու անհարկավորության մասին, հեռացնում են նրան հեղափոխական լուրջ դաստիարակությունից, վորովհետև այդ կեղծ բարեկամները գործնականում անկզբունքության և դեպի հեղափոխական աշխատանքը թեթևամիտ վերաբերմունք են միայն

տարածում*). Երրորդ՝ Ջանալ գործնական աշխատանքի անցնելու ժամանակ առաջուց կապեր հաստատել սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների հետ՝ ոգտվելու համար նրանց ցուցմունքներից և գործի սկզբնավորության ժամանակ ըստ հնարավորության խոշոր սխալներից խուսափելու համար»։

Հեղափոխական նպատակահարմարության շահերի տեսակետից՝ Հարավ-ռուսական աշակերտական միությունն սոխալված չեղավ իրենց կազմակերպությունը հայտարարել ցրված և կազմակերպչականորեն մտնել կուսակցության շարքերը, միանալ նրա հետ։

Բացի «Յուգենդ-Բունդ»-ի և «Ապագա»-ից բանվորական երիտասարդության կազմակերպությունների թվում պետք է նշել 1906 թ. Փինլանդիայում և Լատվիայում կազմակերպված բանվոր երիտասարդության սոցիալ-դեմոկրատական միությունները, որոնք գոյություն ունեցան մինչև 1917 թ. փետրվարյան հեղափոխությունը։ Դժբախտաբար, մենք վոչինչ չգիտենք այդ կազմակերպությունների աշխատանքների մասին, բացի հատ ու կենտ հիշողություններից։

Առանձին ձեռնարկություններում, ցարիզմի ժամանակ, երիտասարդությանը ընդհանուր կուսակցության խմբակները ներդրավելուց զատ, երիտասարդությունից առանձին խմբակներ էին ստեղծվում (Լենինգրադ, Նիկոլայև և այլն), բայց և նրանք էլ իրրև պատանեկական կազմակերպություններ չծավալվեցին։

Իրրև հանրագումար ինչ կարելի է ասել ցարիզմի որոք երիտասարդական շարժման մասին։

Կարելի է ասել, որ անցյալում աճող սերունդն ունեցել է հեղափոխականություն, առանձնապես բանվոր դասակարգի աճող սերունդը։

Այդ հեղափոխականությունը արտահայտվում է գլխավորապես ընդհանուր բանվորական շարժմանը մասնակցելով։ Մի շարք պատճառներով այդ հեղափոխականությունը չկարողացավ զարգանալ լայն, անկեղծ երիտասարդական շարժում։ Այդ պատճառների թվում պետք է ընդունել, առաջինը՝ այն փաստը, որ ցարիզմի ժամանակ Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատիայի կուսակցական կազմակերպությունները ֆաբրիկաներում և գործարան-

*) Փակագծի մեջ եղածը համագումարը չի ընդունել։ Այստեղ երևան է եկել երիտասարդության նկատմամբ երկու հայացք—բոլշևիկական և մենշևիկական։

ներում զգալի չափով կազմված էին բանվոր երիտասարդությունից։

Ցերկրորդը՝ ընդհատակյա աշխատանքների ծանր պայմանները թելադրում էին գործողությունների միասնականության խիստ անհրաժեշտությունը։ Այս պատճառով մենք տեսնում ենք, որ հեղափոխական երիտասարդությունը մտնում էր վոչ թե երիտասարդության առանձին կազմակերպությունների մեջ, այլ ուղղակի անցնում էր կուսակցական աշխատանքի։

Բայց այս փաստից չի կարելի եզրակացնել, որ մասսայական երիտասարդական շարժումը կարող է գոյություն ունենալ միայն լեգալ պայմաններում, այսինքն՝ թույլատրված կապիտալիստական հասարակության որենքով։

§ 6. ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՑԵՎ ԲԱՆՎՈՐ ՑԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Ճգմելով 1905 թվի հեղափոխությունը, ցարիզմը չկարողացավ լուծել դասակարգերի միջև եղած հիմնական հակասությունները։ Ուստի պարզ է, որ ցարիզմի ուրախությունը ժամանակավոր եր, մինչև հեղափոխական ալիքի հաջորդ վերելքը։

Նման վերելք բանվորական շարժման մեջ սկսվեց 1912 թվականից։ Այս վերելքը անկասկած կվերջանար հեղափոխության հաղթանակով, եթե միայն, ինքը՝ հեղափոխությունը մի քիչ չհետաձգվեր ժողովուրդների մեծ սպանդանոց—1914 թվականին սկսված իմպերիալիստական պատերազմի շնորհիվ։ 1914 թվականի պատերազմը սկզբնական շրջանում ամրապնդեց ցարիզմը, բայց, մյուս կողմից, հետագայում, բանվորներին և գյուղացիներին ավելի ևս, և ավելի սուր կերպով հայտնաբերեց դասակարգային հակասությունները յերկրում և անխուսափելիորեն տանում եր դեպի հեղափոխություն։

Բոլշևիկ-կոմմունիստների համար իմպերիալիստական պատերազմի այսպիսի վախճանը պարզ եր հենց պատերազմի սկզբից։

Վորպեսզի հասկանալ բանվոր և գյուղացի երիտասարդության դերը ցարիզմի տապալման գործում, պետք է ուշադրության առնել մի քանի փաստեր։

Առաջինը՝ պատերազմի տարիներին ֆաբրիկաներում և գործարաններում երիտասարդության ավելանալը—պատերազմը պահանջեց գործարանների, ֆաբրիկաների լայնացումը, այն ի-

բերի արտադրության համար, վորոնցով մարդիկ պիտի իրար վոչնչացնեյին ի հաճույս կապիտալի։

Նռնակներ և արկեր հղկող գործարաններըը ընդարձակվող կորպուսները համալրվում եյին յերիտասարդներով և կանայքով, քանի վոր հասակավոր ազատ բնակչություն չկար—նրանք հրացանի տակ եյին։ Աշխատանքի շուկայում իրենց ծառայությունը առաջարկում եյին 17 տարեկանից ցած և 40-ից բարձր հասակ ունեցողներըը։

Այս բանը յերևում է աշխատանքի մեկ բորսայի հետևյալ տվյալներից՝

Իրենց բանվորական ուժը ծախող բանվորների կազմն ըստ հասակի	%-ային հարաբերություն բորսայում ցուցակագրված բանվորների ընդհանուր թվի նկատմամբ		
	1914 թ.	1915 թ.	1916 թ.
Մինչև 17 տար.	7,3	13,2	21,0
18-ից—25 տ.	38,1	33,6	20,9
25-ից—40 տ.	43,2	36,5	23,0
40-ից —50 տ.	9,6	13,6	20,0
50-ից բարձր	1,8	3,1	5,6

Այդ, վերջապես, նկատելի յե Լենինգրադի (այն ժամանակ Պետրոգրադի) արդյունաբերության տվյալներից, վորտեղ, որի՛նակ, «Նովըյ Պարվիանեն» գործարանում մինչև 1914 թ. անչափահասների թիվը հասնում եր 300 հ., իսկ 1915 թ. վերջերին 8000 բանվորներից 2876-ը անչափահասներ եյին։

Պետրոգրադի ամբողջ արդյունաբերության մեջ անչափահասների թիվը 1913 թ. 7%-ից 1914 թ. վերջին հասավ 9,2%-ի։ Այդ միայն անչափահասներն եյին։ Պետք է ի նկատի ունենալ, վոր գործարաններում կային նաև զգալի չափով պատանեկության կազրեր, վորոնք աշխատում եյին «պաշտպանության» գործում։

Ուրիշ ձեռնարկություններում, վորտեղ աշխատանքն իր հեշտությամբ ավելի մատչելի յեր, անչափահասների թիվը հասնում եր ահռելի չափերի։ Այսպես, որինակ, նախկին Նեվկայի գործարանում (Պետրոգրադ) անչափահաս աղջիկները 1914 թվականին կազմում եյին բոլոր աշխատավորների 45%-ը։ Ծխախոտի «Գավաններա» գործարանում անչափահասների թիվը 1914 թ. կազմում եր ընդհանուր բանվորական թվի 31%-ը։

Յերկրորդը՝ պետք է ուշադրության առնել, վոր 18-ից մինչև 23 տարեկան հասակ ունեցող բանվոր և գյուղացի յերիտասարդության հսկայական մասսաներին հաղցրել եյին գրշ շինել-ներ և սպանդանոց ուղարկել ի հաճույս կալվածատերերի և բուրժուազիայի։ Թնդանոթային միսը առնվում եր յերիտասարդությունից. ցարական բանակի համար անժամանակ զինակոչով տանում եյին բանվոր և գյուղացի յերիտասարդության ծաղիկներին։

Յերրորդը՝ պետք է ի նկատի առնել, վոր գործարաններում մնացած բանվոր յերիտասարդության ընդհանուր դրությունը և տնտեսական ճնշվածությունը վատանում եր պատերազմի տարիներում։ Մենք վերևում արդեն նշեցինք, վոր աշխատավարձը պատերազմի տարիներում զգալի կերպով հետ եր մնում ապրուստի գներից, ընդ վորում աշխատավարձի և թանգության աճման միջև յեղած տարբերությունը ավելի և ավելի մեծանում եր։ Համեմատած հասակավորների հետ՝ բանվոր յերիտասարդության աշխատավարձի տարբերությունը ավելի մեծ եր։

Այս հիման վրա յել աճում և գործադուլային լայն ալիքը։ Նայենք թվերին.

1914 թ. յեղել է	50	գործադուլ	3.432	մասնակցողներով
1915 »	» 650	»	268.086	»
1916 »	» 987	»	620.212	»

Շատ բնորոշ է Կոստրոմայի ֆաբրիկաներում 1915 թ. տեղի ունեցած և արյունալի հաշվեհարդարով վերջացած գործադուլի նկարագիրը։

«Կոստրոմայի նահանգի ֆաբրիկաներում հունիս ամսում (1915) սկսված գործադուլը, վորին ամենաակտիվ կերպով մասնակցում եյին աշխատող անչափահասները, վողբերգական վախճան ունեցավ։ Գործադուլն սկսվեց «Կոստրոմայի վուշի մեծ մանուֆակտուրայի ընկերության» ֆաբրիկայում, վորի բանվորները, թվով 660 հոգի պահանջում եյին կյանքի թանգության պատճառով տալ նրանց բնակարանի փող՝ մեծերին—2 ռ., անչափահասներին—1 ռ. և փոքրահասակներին—75 կ. ամսականն։ Գործադուլը ընկերության տարբեր ֆաբրիկաներում տևեց 4—5 որ և վերջացավ հոգուստ բանվորների»—այսպես եր գրված «բանվորական գործադուլների դեմ պայքարելու միջոցներ» գաղտնի գործի պաշտոնական տեղեկանքում։

Այն ինչ, սոցիալ-դեմոկրատական ֆրակցիայի կողմից Պետ. Դումային առաջադրած և 1915 թ. ապրիլի 8-ի նիստում լսված հարցապնդումը նկարագրում է այդ գործադուլը բոլորովին այլ կերպ: Պատգամավոր Խատսոովը, վորը ուղարկված եր սոցիալ-դեմոկրատական ֆրակցիայի կողմից Կոստրոմա՝ տեղում քննելու արյունալից դեպքը, պարզեց, վոր Ռուսական կայսրության շատ ռայոններում տարվա սկզբին տարածված գործադուլային ալիքը մայիս ամսում հասավ և Կոստրոմայի նահանգը: Հունիսի սկզբներին գործադուլ բռնկվեց Մեծ մանուֆակտուրայում: Բանվորների վերոհիշյալ պահանջները բնակարանային գումարների ավելացման մասին՝ ադմինիստրացիայի կողմից մերժված եյին: Այն ժամանակ՝ հունիսի 5-ին 800 բանվորներ, հավաքվելով փողոցում, դիմեցին դեպի ուրիշ գործարաններ: Հեծյալ վոստիկանությունը խուժում է բանվորական ամբոխի մեջ, վորի մի մասը փախչելով թագնվում է Զոտովի ֆաբրիկայում: Վոստիկանությունը ձերբակալում և այդ բանվորներին—թվով 9 հոգու, վորոնք բոլորն էլ անչափահասներ են լինում՝ 16-ից մինչև 19 տարեկան: Մնացած բանվորներն սկսեցին պահանջել իրենց ձերբակալված ընկերների ազատումը, և վոստիկանությունից մերժում ստանալուց հետո հայտարարեցին, վոր չեն հեռանա, մինչև վոր նրանց խնդիրը չբավարարվի:

Ի պատասխան դրան, վոստիկանությունը առանց վորևե նախազգուշացումի կրակ է բաց անում բանվորների վրա, վորի հետևանքով, համաձայն պաշտոնական տեղեկությունների, տեղն ու տեղը մնացել եյին 4 սպանված և 9 վիրավոր, վորոնց թվում կային 10 և 15 տարեկան տղաներ: Սպանված եյին՝ Իվան Կորոլինին—18 տ., Մարիյա Բլոխինա—18 տ., Միխայիլ Կորոլյով—10 տ., Ալեքսանդր Յերմոլայև—37 տ.: Վիրավորված եյին՝ Ալեքսանդրա Իվանովա—20 տ., Ալեքսանդրա Ռյաբիշկինա—16 տ., Իվան Սմըսլով—17 տ., Յեկատերինա Իվանովա—17 տ., Դմիտրիյ Ոսիպով—15 տ., Աննա Յաբլոկովա—18 տ., Իվան Սորոկին—19 տ., Իվան Պրոկոֆյև—30 տ., Ավդոտյա Խոխլովա—28 տ.:

Հենց այս ցուցակից յերևում է, վոր անչափահասները և յերեխաները ամենաակտիվ կերպով մասնակցում եյին կոստրոմայի անցքերին:

Իսկ այս անցքերին մասնակցողների վկայության համաձայն, այդ հաշվենարդարի արդյունքն այն է լինում, վոր սպան-

վում են 12 հոգի և վիրավորվում 15-ը, վորոնց մեծ մասը կազմում եյին անչափահասները:

Պրոլետարիատի ընդհանուր յելույթների ժամանակ բանվոր յերիտասարդության ցույց տված նման ակտիվություն կարիլի յե նկատել համարյա բոլոր գործադուլներում և վոչ միայն կոստրոմայի դեպքում:

Իզուր չէ, վոր ցարական կառավարությունը Պետրոգրադում 1916 թ. հուլիս ամսում, այն բանից հետո, յերբ այնտեղ տարածվեց գործադուլային ալիքը, ձեռք առավ բոլոր միջոցները գործարանները և փաբրիկանները յերիտասարդությունից «թեթևացնելու»: Այդ նպատակի համար հայտարարված մինչգինակոչային պրաժոդովով 18—19 տարեկան հասակ ունեցող հազարավոր յերիտասարդներ վերցվեցին գործարաններից: Բայց այս բանից ցարական կառավարությունը վոչինչ չշահեց: Յերիտասարդության այդ կադրերը առաջինն եյին, վորոնք գնդակի փոխարեն ձեռները պարզեցին մայրաքաղաքի ապստամբված բանվոր ժողովրդին և բանվորների հետ միասին տապալեցին ցարիզմը:

Յեթե վերցնենք փետրվարյան հեղափոխության ժամանակ բանվորների հետ միացած առաջին գնդերի կազմը հասակի տեսակետից, նրանց մեջ կտեսնենք բանվոր և գյուղացի յերիտասարդներին: 20—21 տարեկան պատանիները—ահա ովքեր եյին կազմում առաջին անգամ հեղափոխության կարմիր դրոշը բարձրացնող Վոլընսկի և Լիտովսկի գնդերի հիմնական մասսան: Իսկ փետրվարի 23-ին հին տոմարով (մարտի 8-ին նոր տոմարով) Պետրոգրադում (Լենինգրադում) «հաց և հաշտություն» լոզունգի տակ տեղի ունեցած ցույցերը ումից եյին պլխավորապես կազմված—կանանցից և անչափահաս բանվորներից: Ահա թե ինչպես է նկարագրում մեկ կենդանի վկա և անչափահաս մասնակցող՝ յերիտասարդության դերը Պետրոգրադում փետրվարյան օրերին:

«Վբրորգսկայա ստարանա» քաղաքամասում, բանվորական շրջանում փետրվարի 25-ից մինչև 27-ի յերեկվա ժամը 2-ը մեռելային լռություն եր տիրում: Առավոտյան բոլոր գործարաններում և ֆաբրիկաններում տեղի ունեցած ժողովներում խորհուրդ եյին տալիս դուրս չգալ փողոց, և առաջարկվում եր սպասել թե ինչ կանեն կայազորը:

Բայց բավական եր, վոր վալընցիները բեռնատար ավտոմոբիլներով կարմիր դրոշակներով անցնեին փողոցներով,

վոր մեռած թվացող ռայոնը կարծես կենդանացավ, և վողջ բանվոր բնակչությունը դուրս եկավ փողոց։

Քաղաքի զանազան ծայրերը թռան բանվոր յերիտասարդության կամավոր սուրհանդակները պատահածի մասին հաղորդելու։

Այդ կամավոր սուրհանդակները մասնակցում եին բոլոր կարևոր դեպքերին և գնդերի զինաթափումներին. վոչ վոք այդ աստիճանի խիզախությամբ չեր կարող նետվել, դուցե և անծանոթ մահվան գիրկը, ինչպես դա անում եին սուրհանդակները։ Ամենից առաջ զինվելով հրացաններով, վորոնցից կրակել վոմանք նույնիսկ չգիտեյին, նրանք կրակում եին Մոսկվայի գնդի սպաների ակումբի վրա, մինչև վոր զինվորները դուրս պրծան զորանոցներից և միացան ապստամբներին։

Յերեկոյան այդ անկազմակերպ, բայց հեղափոխության հավատարիմ պիոներները, սիրով և կամովին հետևում եին, թե վորտեղ են թագնվել վոստիկանները, դուրս եին բերում նրանց տանիքներից և քաշ եին տալիս նրանց դեպի ռայոններում կազմակերպված հեղափոխական կոմիտեները...

Մինչև իսկ Տավրիկյան պալատի պահակների 50% սկզբնական որերին կազմում եր բանվոր յերիտասարդությունը։

Յերբ գործարաններում և ֆաբրիկաներում սկսեց կազմակերպվել կարմիր գվարդիան, զենք կրելու ընդունակ վողջ բանվոր յերիտասարդությունը լցվեց կովողների այդ կարմիր շարքերը։

Յեթե հետագայում քաղաքային դումայի միջոցով կազմակերպված քաղաքային միլիցիան կազմված եր գիմնազիստներից և ուսանողներից, վորոնք հպարտ ման եյին գալիս, կրելով ձախ թևերի վրա սպիտակ կտոր „Г. М.“ տառերով (քաղաքային միլիցիա կամ քաղաքային աշխարհակեր, ինչպես հանաքով նրանց անվանում եյին կարմիր գվարդիականները), զենք կրելու ընդունակ բանվոր յերիտասարդությունը կրում եր կարմիր կտոր, վրան գրված «Կարմիր գվարդիա»...

Հեղափոխության առաջին որերին վողջ բանվոր յերիտասարդությունը կարմիր կտորները թևերին անցկացրած, ուրախությամբ ընդունում եր կարանը նետած փարատնի կռվի կոչը և ջարդ ու փշուր եր անում նրանց ամեն մի անկյունում։ Վողջ հետախուզական մասը ակամա անցավ բանվոր յերիտասարդության ձեռքը, վորը վազվզելով քաղաքում հոտ եր քաշում—վորտեղ են թագնված փարատնները, վորտեղ կա զենք, պարեն և ապստամբված բանվորությանը անհրաժեշտ ռազմամթերք և սննդանյութեր։

Քաղաքի փողոցներով անց եյին կենում մարզատար և բեռնակիր ավտոմոբիլները, վորոնց վրա պահակած եր իր առաջնորթուն դիտող, զինված յերիտասարդությունը։

Գիշերները բանվորական ռայոնների փողոցներում հսկող պահակը մեծ մասով կազմված եր բանվոր յերիտասարդությունից, վորը որթուն հսկում եր իրեն վստահացած պահեստները և այլն։

Հեղափոխության որերին առաջ յեկած քրեագործ բանդիտիզմի ժամանակ, բանվոր յերիտասարդությունը ուրախությամբ մասնակցեց նրա ճնշման գործին. շրջանային խորհուրդներին կից պատժիչ խմբերի կազմում մեծ մասը բանվոր յերիտասարդությունից եր։

Մյուս քաղաքներում փետրվարյան հեղաշրջումը անցավ համարյա թե առանց արյունահեղությունների։ Վոստիկանական կայանները քար ու քանդ անելիս, քաղաքական բանտարկյալներին ցարական զնդաններից ազատելու գործում և այլ և այլն, յերիտասարդությունը այդ տեղերում գտնվում եր առաջի շարքերում։

Հեղափոխության գլխավոր և հիմնական ուժ կազմող գորշ շինելավոր բանվորների և գյուղացիների հզոր հարձակման շնորհիվ, տապալվեց ցարիզմը։ Արյունոտուշտ Նիկոլայի գահընկեցման բուրժուազիան «չեր հակառակում», քանի վոր ցարիզմը խանգարում եր բուրժուազիային իր ուզածին պես վարել պատերազմը։ Բուրժուազիան ցանկանում եր Նիկոլայի փոխարեն նստեցնել Միխայիլ Ռոմանովին, բայց այդ բանը չանցավ։ Բանվոր և գյուղացի մասսաները զղվել եյին միապետությունից, դրա համար էլ բուրժուազիան սիրտ չարավ բացահայտ դասակարգային կռիվ սկսել պրոլետարիատի հետ։ Բայց բանվորների և գյուղացիների կազմակերպվածություն դեռ բավական չեր, վորպեսզի ցարին տապալելուց հետո, կարողանային իշխանությունը իրենց ձեռքը վերցնել բանվոր և գյուղացի մասսաների մեջ, դեռևս ուժեղ եր եսերների և մենշևիկների ազդեցությունը, վորոնք դավաճանել եյին բանվորների և գյուղացիների գործին, բայց իրենց դաշինքը բուրժուազիայի հետ քողարկում եյին հեղափոխական ֆրազներով։

Սկզբնական շրջանում յերկրում յերկիշխանություն ստեղծվեց։ Մեկ կողմից՝ ժամանակավոր կառավարությունը, Ռուսաստանի բուրժուազիայի կառավարությունը, մյուս կողմից՝ բանվորների, զինվորների պատգամավորների Խորհուրդները, վորոնք հեղափոխության հետագա զարգացման ընթացքում իրենց փաստորեն լուծարքի յեին յենթարկել լինելով մենշևիկների և եսերների ղեկավարության տակ։ Խորհուրդները վերսին դառան իշխանության համար պայքարող որգաններ, հենց վոր նրանցում կոմմունիստները մեծամասնություն կազմեցին։

Փետրվարյան հեղափոխությունը յերկրի վողջ քաղաքական կյանքի մեծ ոգահանն եր։ Ցարը իր ժանդարմներով տապալված եր։ Բայց գլխավորը՝ կապիտալիզմի տապալումը դեռ մնում եր։ Փետրվարյան հեղափոխությունը, այնուամենայնիվ, հնարավորություն տվավ բանվոր և գյուղացի յերիտասարդական մասսային դուրս գալու հասարակական կյանքի լայն ասպարեզ։ Փետրվարյան հեղափոխությունը բոլշևիկական կուսակցության շուրջը խմբավորված յերիտասարդ բանվորների կադրերին հնարավորություն ավեց դուրս գալու ընդհատակյա աշխատանքից և սկսելու աշխատանքը բանվոր յերիտասարդության լայն մասսաների մեջ։ Փետրվարյան հեղափոխությունը արթնացրեց բանվոր և գյուղացի յերիտասարդությանը։ Յերեխաների և պատանիների աշխատանքների անողոք շահագործման, ուսման, վորակավորման և լուսավորության բացակայության դեմ բողոքը դուրս պոռթկաց բանվոր յերիտասարդության ամենալայն մասսաներից։

Յերիտասարդությունը ավելի ուժեղ և մեծ չափերով քաշվում եր դասակարգային պայքարի մեջ։

Փետրվարից հետո Պետերբուրգի շատ գործարաններում և ֆաբրիկաներում առաջ են գալիս բանվոր յերիտասարդության կոլեկտիվներ։

Այդ կոլեկտիվները իրենց նպատակ են դնում՝ ինքնազարգացման գործը առաջ տանել և բանվոր յերիտասարդության անմիջական շահերը պաշտպանել։

Կոլեկտիվներում համախմբված բանվոր յերիտասարդությունը անխուսափելիորեն պետք է ընտրեր այս կամ այն քաղաքական ուղին։ Բայց այդ քաղաքական ուղին նոր կյանքի համար արթնացող բանվոր յերիտասարդության վողջ մասսան միանգամից չգտավ։

Կարևոր է նշել այն փաստը, վոր մենշևիկները և եսերները, վորոնք Փետրվարյան հեղափոխության առաջին որերին աղդեցություն ունեյին բանվորական կազմակերպությունների վրա, հակառակ եյին բանվոր յերիտասարդության կազմակերպմանը, խանգարում եյին ժողովների հրավիրմանը, հնարավորություն չեյին տալիս կազմակերպվելու։ Նրանք զգում եյին, վոր բանվոր յերիտասարդությունը նրանց հետ չի գնա։

Յերիտասարդությունը պատրաստվում եր կանգնել և կանգնեց բոլշևիկական ճանապարհի վրա։

Փետրվարյան հեղափոխությունից անմիջապես հետո՝ Պետերգոֆսկու ռայոնում հաջողվեց ստեղծել «Բանվոր յերիտասարդության սոցիալիստական միություն»։ Յերիտասարդական պրոլետարական շարժման ակունքները, սկիզբը պետք է փնտրել Պետերբուրգում, հեղափոխական պայքարի այդ կենտրոնում։

1917 թ. մայիսի 1-ին Լենինգրադի բանվոր յերիտասարդությունը առաջին անգամն եր, վոր ցուցադրում եր իր ուժերը։ Նա յուր յերիտասարդական լոզունգներով գնում եր առանձին խմբերով։ «Նոր Լեռներ» գործարանի յերիտասարդությունը առանում եր մի պրոշակ, վորի վրա գրված եր «Կեցցե 6-ժամյա բանվորական որը։ Յերեխաների աշխատանքի պաշտպանություն»։ «Ռազենկրանց» գործարանի անչափահասները մի կերպ իրենց համար պրոշակ եյին շինել՝ «Կորչեն շահագործողները։ Կեցցե յերեխաների սոցիալիզմը» լոզունգներով։

Մայիսմեկյան դեմոնստրացիայի ժամանակ Լենինգրադի փողոցները դուրս յեկան մոտ 100.000 բանվոր յերիտասարդություն։

Մայիսմեկյան կոնֆերանսից հետո շուտով Վյբորգի ռայոնում գումարվեց յերիտասարդության գործարանային կոմիտեների կոնֆերանս, վորտեղ՝ լիբերալ-կադետորեն տրամաղրված Շեգովին հաջողվեց ժամանակավորապես շարժումն ուղղել դուստ կուլտուրական աշխատանքների կողմը։

Կազմակերպիչների սակավ փորձառու լինելը, դիտության, կուլտուրայի և ուսման ծարավը դայթակղեցրին պատգամավորներին, և հիմնադրվեց «Աշխատանք և Լուսավորություն» կազմակերպությունը։ «Անկուսակցականություն», «Ինքնակրթություն», «Քաղաքական անմասնակցություն»—ահա Շեգովի այն լոզունգները, վոր նրան հաջողվեց անցկացնել առաջին կոնֆերանսում։ Ահա թե սկզբնական շրջանում Շեգովը ինչով հրապուրեց Պե-

տերի բանվոր յերիտասարդությանը և նրան մի կողմ քաշեց քաղաքականությունից.

1) Վորքան կարելի յե մեծ քանակությամբ «Գրագիտության դպրոցների» հիմնում.

2) «Պրոլետարական պատանեկության ազատ համալսարանի» ստեղծում.

3) «Պրոլետարական պատանեկության աշխատանքի և ինքնապաշտպանության տան» հիմնում.

4) Ամեն տեսակի մասնագիտության մեջ կատարելագործվելու համար «Պրոլետարական պատանեկության պոլիտեխնիկական և արհեստա-արդյունաբերական ակադեմիայի» հիմնում.

5) Կազմակերպում «Գյուղատնտեսական գիտելիքների դպրոց-համայնքի» (ամառային հանգստավայր), բնակարանի մաքրության, առողջության և յերեխաներին կանոնավոր հետևելու համար—«Բժշկա-սանիտարական գիտելիքների դպրոցի», «Ծնային տնտեսության, տնավարության դպրոցի» (աղջիկների համար) և «Պրոլետար աղջիկների համար արհեստա-արհեստակցական դպրոցի»:

6) «Պրոլետարական պատանեկության գրականական տան» հիմնում, հետը պետք է լիներ սարքավորված տպարան հետևյալ սեփական պարբերական որգաններ հրատարակելու համար՝ «Յերիտասարդ պրոլետարիատի ձայն» թերթը, «Աշխատանք և Լուսավորություն» ամսագիրը, և պրոլետարական պատանեկության շրջանում ըստ հնարավորության շատ գիտական և գրական-գեղարվեստական բովանդակության եժանագին գրքեր և բրոշյուրներ տարածելու համար:

7) «Պրոլետարական պատանեկության գեղարվեստական դպրոցի» հիմնում, զարգացնելու համար նրանց մեջ գեղեցկի ըզգացմունք—սեր դեպի այն ամենը, ինչ վոր չքնաղ է, և ձգտում դեպի բարձրորակ հաճույքները:

8) Հիմնում սեփական «Յերիտասարդ պրոլետարական թատրոնի՝ միտինգի և համերգի դահլիճով»:

9) Հիմնում «Ցամաքի և ջրի վրա սպորտային և մարմնամարզական մրցությունների ակմբի»:

10) Քաղաքից դուրս և արտասահման եքսկուրսիաների կազմակերպում»:

Մեր բերած քաղվածքը «Աշխատանք և Լույս» կազմակերպության 1917 թվի հունիսի 16-ին հայտարարված մանիֆեստի

մի հատվածն է: «Աշխատանք և Լույս»-ը համախմբում եր մոտ 50.000 անդամ, գլխավորապես ֆաբրիկանների և գործարանների յերիտասարդության:

Բայց դասակարգային հոտառությունը թույլ չտվեց խաբելու բանվորական յերիտասարդությունը, և նա շուտով հասկացավ, թե վոր կողմն է ուղղելու իր ուժերը: Յերկրի դասակարգային բորբոքվող պայքարի ազդեցության տակ (Փետրվարյան հեղափոխությունը դասակարգերի պայքարի հիմնական հարցերը առաջադրեց, սրեց, բայց լուծում չտվավ) սկսում է բորբոքվել պայքարը «Աշխատանք և Լույս» կազմակերպության ներսում:

Բանվորական յերիտասարդության մեջ բայշևիկները տանում են լայն կամպանիա, հրավիրում վճռական պայքարի 18 տարեկաններին ձայնի իրավունք տալու ոգտին:

Փետրվարից Հոկտեմբեր հեղափոխության ուղին բնորոշվում է նախ և առաջ՝ բայշևիկների կատաղի պայքարով ընդդեմ մենշևիկների, բանվոր դասակարգի մեջ ազդեցություն ունենալու և ընդդեմ եսերների՝ գյուղացիության մեջ ազդեցություն ունենալու համար: Բանվոր յերիտասարդությունը չեր կարող անտարբեր մնալ: «Աշխատանք և Լույս» կազմակերպության ներսում, ընկերների մի մասը վճռական պայքար սկսեց:

Յերիտասարդության իրավունքների պաշտպանության համար բայշևիկների սկսած կամպանիայի հիման վրա ստեղծվեց «Բանվոր յերիտասարդության սոցիալիստական միությունը», վորը կանգնած եր ճշմարիտ բայշևիկական տեսակետի վրա: Կոմիտեյի ղեկավարությունը պատկանում եր բայշևիկական կուսակցության անդամներին:

«Աշխատանք և Լույս-ի» մի քանի շրջանային կազմակերպությունները (Նևայի և Նարվայի) անմիջապես հարեցին նոր կազմակերպված միությանը:

1917 թ. ոգոստոսի $^{18}/_{31}$-ին հրավիրվեց բանվոր յերիտասարդության նոր կազմակերպության համաքաղաքային կոնֆերանս, վորն անցավ մեծ աշխուժությամբ: Կոնֆերանսը հայտարարեց, վոր «Աշխատանք և Լույս» կազմակերպությունը լուծված է, կազմակերպված է համաքաղաքային «Բանվոր յերիտասարդության սոցիալիստական միություն»: Վերջին կազմակերպությունը Հոկտեմբերյան հեղաշրջման նախորյակին իրեն շարքերում ուներ մոտ 20.000 անդամ: Բոլոր խոշոր ձեռնարկություններում գոյություն ուներ բջիջներ, և շարժումը մասսայական բնույթ եր

կրում։ Այդ շարժումը պրոլետարական էր, որը ընդունել էր բանվոր դասակարգի կուսակցության—բայշևիկների ղեկավարությունը։

Մինչ Հոկտեմբերյան հեղափոխությունը, բանվոր յերիտասարդության միությունները միայն Պիտերում չէ, որ ձևակեպվել էին։

Մոսկվա, Յեկատերինբուրգ (այժմ Սվերդլովսկ), Իվանովո-Վազնեսենսկ, Վլադիմիր, Նիժնիյ-Նովգորոդ, Տուլա, Պերմ, Վարոնեժ, Վիատկա, Կիև, Ոդեսսա, Խարկով, Ռոստով—ահա Փետրվարյան հեղափոխությունից հետո պրոլետարական յերիտասարդական շարժման ոջախները։ Ուրալում, արդեն 1917 թ. նոյեմբերի 25-ին կայացել էր յերիտասարդական միությունների մարզային համագումար։

Բոլոր միությունները, բացի Մոսկվայից, հենց սկզբից կրում էին մասսայական բնույթ և սոցիալիստական դեմք ունեյին։

Մոսկվայում յերիտասարդության առաջին կազմակերպությունը (1917 թ. հունիս) հիմնվել էր բայշևիկյան կուսակցության Մոսկվայի կոմիտեին կից։ Նա մասսայական բնույթ չուներ, և ընդգրկում էր մոտ 200 հոգի յերիտասարդ աշակերտներ և բանվորներ, վորոնք կամ կուսակցության մեջ եյին և կամ նրան հարող։

1917 թ. ոգոստոսին հիմնվեց նաև բանվոր յերիտասարդության մասսայական կազմակերպությունը—«III-րդ Ինտերնացիոնալի բանվոր յերիտասարդության միությունը»(Զամանկվարեչյե)։

Հոկտեմբերի սկզբին յերկու կազմակերպություններն էլ համաձուլվեցին և 1917 թ. հոկտեմբերի 8-ին կայացավ առաջին համամոսկվյան կոնֆերանսը, վորն արդեն 4000 անդամի ներկայացուցչություն ուներ։

Բանվոր յերիտասարդության Մոսկվայի կազմակերպությունը 1917 թ. հոկտեմբերի 15-ին քաղաքական ցույց կազմակերպեց, ցույց տալով, թե ինչպիսի մեծ ազդեցություն ունի կազմակերպությունը մասսաների վրա։

Սկոբելևի հրապարակի վրա (այժմ Խորհրդային) ընդունվեց բանաձև՝ «Խորհուրդների Համառուսական Համագումարից պահանջում ենք՝ իշխանությունն անհապաղ վերցնել իր ձեռքը և միջոցներ ձեռք առնել՝ բոլոր ֆրոնտներում անհապաղ զինադադար հայտարարելու և ընդհանուր դեմոկրատական հաշտություն կնքելու»։

Ինչով եյին զբաղվում բանվոր յերիտասարդության միությունները մինչ Հոկտեմբերյան հեղափոխությունը։

Ընկեր Ռիվկինը—Պիտերի միության կազմակերպիչներից մեկը և կուսակցական աշխատավոր յերիտասարդական շարժման գործում—իր հիշողություններում այս կերպ է բնորոշում աշխատանքը։

«Միությունները նախ և առաջ համախմբեցին իրենց շուրջը բանվոր յերիտասարդության ամենայեռանդուն մասը, նրան հեղափոխական դասակարգային պայքարի մեջ առան։ Մենք ճշգրիտ վիճակագրություն չունենք, բայց մեր փորձից գիտենք, վոր 1917 թվականին բանվոր յերիտասարդության միություններում ակտիվ մասնակցություն ցույց տված յերիտասարդ բնընկերների 90%-ը մեր կուսակցության ամենաակտիվ մարտիկները դարձան։ Միությունները պայքարում եյին բանվոր յերիտասարդության անհետաձգելի պահանջների համար, անչափահասների համար 6-ժամյա բանվորական որ եյին անց կացնում, խորհուրդների և գործարկոմների մեջ անց եյին կացնում իրենց ներկայացուցիչներին։ Այսպես, որինակ, Գուս-Խրուստալի շրջանում (Վլադիմիրի նահանգում) չնայած աշ եսերական խորհրդի ընդդիմադրությանը, միությունը անչափահասների համար անց եր կացրել 7-ժամյա բանվորական որ. արհեստավոր աշակերտների շահերի պաշտպանության համար մեծ աշխատանք եր տանում Վիտեբսկի միությունը. Պետրոգրադի մի քանի գործարաններում միության շնորհիվ անց եր կացված 6-ժամյա բանվորական որ, մասամբ ինքնագործարար (явочным порядком)։ Բացի այս՝ միությունները զբաղվում եյին կուլտուր-կրթական աշխատանքներով և քաղաքական ագիտացիայով։ Վերջինիս մեջ մտնում եր նաև խորհուրդների, դումաների և այլ ընտրությունների ժամանակ կուսակցությանը ակտիվ աջակցություն ցույց տալը (որինակ՝ քաղաքային դումայի ընտրությունների ժամանակ, Մոսկվայի միությունը ոգնել է ագիտացիա տանելով, աֆիշաներ կպցնելով և այլն)։ Աշխատանքն ստիպված եյին տանել համարյա թե առանց միջոցների և շենքեր ունենալու։ Վարոնեժի միությունը աշխատանքի սկզբնական շրջանում ղրամարկղում ուներ միայն 17 ռուբլի. Պիտերի միությունը գոյություն եր պահպանում ֆաբրիկաներից և գործարաններից միջոցներ հավաքելով, և յերբեմն էլ խորհուրդների հատկացումներով (ղրամի բացակայությունը հնարավորություն չտվեց մինչև հոկտեմբեր ունենալու

իրենց որգանը, չնայած վոր կարիքը խիստ մեծ եր)։ Ավագ բանվորների վերաբերմունքը դեպի կազմակերպությունը միշտ էլ լավ չեր. մասամբ միությունների վրա նայում էին անբարյացակամ, իբրև ավելորդ, վոչ պետքական կազմակերպություններ։

Բնորոշ է, վոր այդ ժամանակաշրջանում, յերբ բացարձակ աշխատում էին բոլոր «սոցիալիստական» կուսակցությունները, մենք չենք նկատում վոչ մայրաքաղաքներում և վոչ էլ գավառներում բանվոր յերիտասարդության քիչ թե շատ աչքի ընկնող մենշևիկական կամ եսերական կազմակերպություններ։ Վորտեղ վոր այդպիսիները կային, նրանք գլխավորապես ընդդիմում էին աշակերտ յերիտասարդությանը և ամուր կապ չունեին բանվոր յերիտասարդության մասսաների շրջանում։ Վերջիններս համարյա թե բացառապես բոլշևիկյան լոզունգների տակ էին գնում. այդ լոզունգները լիովին բավարարում էին բանվոր յերիտասարդության հեղափոխական ղգացմունքներին, բնավորությանը, վորոնց խորթ եր համաձայնողական վոգին։ Այդ ժամանակաշրջանում, բացի բոլշևիկներից, վորոշ համակրանք վայելում էին միայն անիշխանականները (анархисты), բայց ձևակերպված անիշխանական շարժում բանվոր յերիտասարդության մեջ չկար։

Հետագայում, 1919 և 1920 թվականներին ստեղծված բոլոր «յերիտասարդության ս.-դ. միությունները» և «անարխիստ յերիտասարդության ֆեդերացիան» նույնանման մեծ կազմակերպությունների արհեստական կերպով ստեղծածն էին, վորը և նրանք ապացուցեցին իրենց անպետք գործությամբ և անփառունակ վախճաններով։ Բանվոր յերիտասարդության մասսայական լայն շարժումը դեռ Հոկտեմբերյան հեղաշրջումից շատ վաղ, ընթացավ մեր կուսակցության հետ, գտնելով նրա մեջ իր գաղափարական արտահայտչին և ղեկավարին»։

Ահա միակ ճշգրիտ պատասխանը վերևում դրված հարցին։

Խոսելով բանվոր յերիտասարդության նախահոկտեմբերյան շրջանի շարժման մասին, չի կարելի աչքաթող անել բոլշևիկյան կուսակցության դերը, պրոլետարական յերիտասարդական շարժման ձևակերպման խնդրում։

Կուսակցության ականավոր գործիչները, սրանց թվում և ընկ. Լենինը հետաքրքրվում էին շարժումով։ Լենինը մինչև իսկ դիրեկտիվներ եր տալիս բանվոր յերիտասարդության ներկայացուցչին, թե ինչպես կազմակերպել «Աշխատանք և Լույս» կազմակերպությունը։

1917 թ. ոգոստոս ամսում կայացած բոլշևիկների կուսակցության VI-րդ համագումարն ուշադրությամբ քննեց բանվոր յերիտասարդության շարժման խնդիրը։ Ընդունված բանաձևը, վոր մենք մեջ ենք բերում ամբողջապես, պատասխանում է յերիտասարդական կազմակերպությունների առաջ ծառացած հիմնական հարցերին։

Ռ. Ս.-Դ. Բ. Կ. (Բոլշեվիկների) VI համագումարի բանաձևերը յերիտասարդական միությունների մասին

«Հեղափոխության առաջին որերից Ռուսաստանի մի շարք քաղաքներում, և նամանավանդ Լենինգրադում, սկսվեց բանվոր յերիտասարդության և բանվոր պատանեկության լայն շարժումը յերիտասարդ բանվորների և բանվորուհիների ինքնուրույն պրոլետարական կազմակերպություններ ստեղծելու նպատակով։

Ռուս բուրժուազիան, ինչպես և արևմտա-յեվրոպականը, հրաշալի հասկանալով, թե ինչ անագին նշանակություն ունի բանվոր դասակարգի աճող սերունդը դասակարգային պայքարի վողջ ընթացքի և զարգացման վրա, կփորձի,—և մասամբ այդպիսի փորձեր արդեն արված են,—ոգտագործել այդ կազմակերպությունները յերիտասարդ պրոլետարներին իրեն բուրժուական իդեոլոգիային յենթարկելու, նրանց գլուխները «հասարակության», «ազգասիրության» և այլ գաղափարներ մտցնելու նպատակով, հետ մղելով բանվոր յերիտասարդությանը, թեկուզ ժամանակավորապես, բանվոր դասակարգի անմեսական և քաղաքական պայքարին ակտիվ մասնակցելուց։ Պրոլետարիատի կուսակցությունը, իր հերթին, իրեն հաշիվ է տալիս, թե ինչ հրապկայական նշանակություն ունի բանվոր յերիտասարդությունը ընդհանուր բանվորական շարժման համար. ուստի և համագումարը անհրաժեշտ է համարում, վոր կուսակցական կազմակերպությունները տեղերում լուրջ ուշադրություն դարձնեն յերիտասարդության կազմակերպման գործի վրա։ Կուսակցության միջամտությունը բանվոր յերիտասարդության կազմակերպչական շինարարության խնամակալության բնույթ չպետք է կրի։

Հաշվի առնելով Արևմտյան Յեվրոպայի փորձը, վորտեղ սոցիալիստական բանվոր յերիտասարդության ինքնուրույն կազ-

մակերպութիւնները, տարբերվելով պաշտոնական կուսակցութիւնների խնամակալութեան տակ գտնվող կազմակերպութիւններից, ամեն տեղ նեցուկ են հանդիսանում բանվորական շարժման ձախ ինտերնացիոնալիստական թևին,—մեր կուսակցութիւնը պետք է Ռուսաստանում ևս ձգտի, վոր բանվոր յերիտասարդութիւնն ստեղծի ինքնուրույն կազմակերպութիւններ, վորոնք կազմակերպչորեն չենթակա չլինելով կուսակցութեանը, միայն հոգեպես կապված լինեն նրա հետ։

Բայց միևնույն ժամանակ կուսակցութիւնը ցանկանում է, վոր այդ կազմակերպութիւնները հենց իրենց ծագման որից ստանան սոցիալիստական բնույթ, վոր Ռուսաստանի բանվոր յերիտասարդութեան սոցիալիստական ապագա միութիւնը հենց իր սկզբնավորութիւնից հարե յերիտասարդութեան Ինտերնացիոնալին, վոր տեղական բոլոր սեկցիաները գլխավորապես նպատակ դնեն զարգացնել պրոլետար յերիտասարդութեան դասակարգային ինքնագիտակցութիւնը սոցիալիստական գաղափարների պրոպագանդայի, շովինիզմի և միլիտարիզմի դեմ մղվող յեռանդուն պայքարի ու միաժամանակ անչափահաս բանվորների ու բանվորուհիների տնտեսական ու քաղաքական իրավական շահերի պաշտպանութեան միջոցով։

Այժմս, յերբ բանվոր դասակարգի պայքարն անցնում է սոցիալիզմի համար մղվող անմիջական պայքարի ֆազան, համազումարը գտնում է, վոր բանվոր յերիտասարդութեան դասակարգային սոցիալիստական կազմակերպութիւնների ստեղծմանը նպատակը մոտենալ ամենաանհետաձգելի խնդիրներից մեկն է և պարտավորեցնում է կուսակցական կազմակերպութիւններին այս աշխատանքին նվիրել հնարավորին չափ մեծ ուշադրութիւն»։

Այդ կուսակցական համագումարի առաջին բանաձևն էլ բանվոր յերիտասարդութեան մեջ աշխատանք տանելու մասին՝ Ռ.Ս.-Դ.Բ.կ. II-րդ համագումարի բանաձևը՝ գրված Լենինի կողմից, աշակերտ յերիտասարդութեան շարժման մասին էր։

Բանաձևից բղխում էր՝

1) Վոր կուսակցութիւնը ընդունում է պրոլետարական յերիտասարդական շարժման անհրաժեշտութիւնը։

2) Վոր շարժումը պետք է լինի քաղաքականապես ակտիվ սոցիալիստական։

3) Վոր շարժումը պետք է լինի մասսայական և պետք է ընդգրկի բանվոր յերիտասարդութեան խորքերը։

4) Վոր շարժումը պետք է լինի կազմակերպչականորեն ինքնուրույն։

5) Վոր կուսակցութիւնն ամեն միջոցներով և բոլոր ուժերով պետք է ոգնի նոր շարժմանը ամրապնդվելու, զարգանալուս։

6) Վոր առանձնապես կարևոր է յերիտասարդական պրոլետարական շարժումը լայն ծավալել այժմ, պրոլետարիատի սոցիալիստական հեղափոխութեան նախորյակին։

Կուսակցութեան VI համագումարի բանաձևը կլասսիկ (ընտիր) որինակ է Լենինյան կուսակցութեան վերաբերմունքի դեպի յերիտասարդութեան կազմակերպութեան հարցերը և հանդիսանում է յերիտասարդական պրոլետարական շարժման թեորիայի հիմնական դոկումենտներից մեկը։

Այժմ տեսնենք, թե ինչ է կատարվում գյուղում Փետրվարյան հեղափոխութիւնից մինչև Հոկտեմբերյանը։

Կարևոր է նշել, վոր գյուղացի յերիտասարդութիւնը Փետրվարյան հեղափոխութեան ազդեցութեան տակ սկսեց ինքն իրեն կազմակերպվել։ Այս կազմակերպութիւնը գնում էր տարերային թափով կուլտուր-կրթական խմբակների ստեղծման գծով, վորոնք չունեին վորոշակի քաղաքական դեմք և վորոնք իրենց նպատակ էին դնում—գտնել գյուղացի յերիտասարդութեան կուլտուրական մակարդակի բարձրացման ձևը։

Այս խմբակները միայն քաղաքի ղեկավարութեան ներքո հետագայում սկսեցին ձեռք բերել քաղաքական գունավորում։

Խմբակները առաջ էին գալիս յերկու ճանապարհով։

Առաջին ճանապարհը—իրենց յերիտասարդութեան նախաձեռնութեամբ խմբակներ ստեղծելն է, յերկրորդը — տեղական գյուղական ինտելլիգենցիայի խմբակներ ստեղծելը։ Առաջին ձևի խմբակները հետագայում դարձան բաղա կոմյերիտմիութեան շարժման համար։

Խմբակները զբաղվում էին ներկայացումներ կազմակերպելով, բարվոքում էին կուլտուր-կրթական աշխատանքը և զգում էին, վոր առանց քաղաքի, հետագայում աշխատանք տանել անհնար է։ Առանձնապես հեղափոխական դեր կատարում էին գյուղում բանակից և քաղաքից վերադարձած զինվորները և նա-

վաստիները, որոնք գյուղում Հոկտեմբերյան հեղաշրջման հետևանքն էին պատրաստում։

Մի քանի նահանգներում և մարզերում կապ էր ստեղծվում գյուղացի յերիտասարդության խմբակների և բանվոր յերիտասարդության սոցիալիստական միությունների միջև։ Այնպես որ համարձակ կարելի յե ասել, որ բանվոր և գյուղացի յերիտասարդության միջև կոմյերիտմիության I համառուսական համագումարում կնքված դաշինքը նախապատրաստվում էր Ռուսաստանի յերիտասարդական մասսայական շարժման առաջին որերից։

Բացի բանվոր և գյուղացի յերիտասարդության շարժումից՝ լայն աշխատանք ծավալվեց նաև միջնակարգ դպրոցներում։ Այնտեղ շարժումը չէր կրում պարզ արտահայտված քաղաքական բնույթ, այլ արտահայտվում էր թեթև կադետական հոտ փչող «պատանեկության տների» շինարարության մեջ, որտեղ տարվում էր կուլտուրական աշխատանք։ Բայց վաղ թե ուշ աշակերտական կազմակերպությունները ևս պետք է որ կանգնեյին բարբիկադների այս կամ այն կողմը։

Մոտենում էր Հոկտեմբերյան փոթորիկը. բանվոր դասակարգը գնում էր դեպի իշխանություն։

§ 7. ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՅԵՐԻՏՄԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ

Հոկտեմբերյան հեղափոխության նախապատրաստման աշխատանքներում, ինչպես տեսանք, կազմակերպված բանվոր յերիտասարդությունը ամենաջերմ մասնակցությունն էր ցույց տալիս կարմիր գվարդիայի կազրերը գլխավորապես բանվոր պատանեկությունից էին կազմակերպվում։

Ռուսաստանի յերիտասարդական շարժումն ուսումնասիրող Լենինգրադի հանձնաժողովի նյութերի մեջ մնացել է մեկ փաստաթուղթ, որը ցույց է տալիս որ բանվոր յերիտասարդությունը յերբեմն յեղել է կարմիր գվարդիայի ջոկատների կազմակերպիչը։ Փաստաթուղթը հետևյալն է.

Վիբորգի շրջանի
պատանիների
Գործադիր հանձնաժողով
№ 614
17 օգոստոսի 1917 թ.

Վկայական

Տրվում է սույնը Բուրմիստրով Պավելին և Յեգորով Սերգեյին, Լեսներ, Սորոք Եքվայլ, Պուզիրյով գործարաններում կարմիր գվարդիա կազմակերպելու համար։

Կրուպսկայայի հրահանգով՝ ամեն բանի մասին հաղորդել Գործադիր Կոմիտեյի Նախագահությանը։

Նախագահ՝ Կուզնեցով

Վ. Ի. Լենինը բոլշևիկյան կենտրոնական կոմիտեյին Հոկտեմբերյան հեղաշրջումից առաջ ուղղված նամակում ցուցմունքներ տալով, թե ինչպես կազմակերպել ապստամբության տեխնիկան, գրում էր. «Մեր հարվածալինների ամենավճռական surrերից ու բանվոր յերիտասարդությունից (ընդգծումը ընկ. Լենինինն է), ինչպես և լավագույն նավաստիներից փոքրիկ ջոկատներ կազմել բոլոր կարևոր կետերի գրավման և ամեն տեղ, բոլոր կարևոր գործողություններում մասնակցելու համար»։

Արդարացրեց արդյոք բանվոր յերիտասարդությունը Վլադիմիր Իլիչի հույսերը։

Անկասկած, արդարացրեց պատվով։

Հոկտեմբերյան հեղաշրջման կենդանի վկաների և մասնակցողների հիշողություններից հայտնի յե, որ բանվոր յերիտասարդությունը կարմիր գվարդիայի ջոկատների համար պահեստներից հրացաններ էր ճարում, հետախուզական վողջ աշխատանքը յերիտասարդության վրին էր ընկած։ Նա (յերիտասարդությունը) սողոսկում էր թշնամիների շարքերը, յունկերների և բուրժուազիայի հարվածայինների մոտ։ Բանվոր յերիտասարդությունը գրոհում էր Ձմեռային պալատը Լենինգրադում, և հեղափոխական նավաստիների և հասակավոր բանվորների հետ միասին դուրս էր քշում այնտեղ ապաստանած յունկերներին։

Պետրոգրադում (Լենինգրադում) նոյեմբերի 7-ի գիշերը (հոկտեմբերի 25-ին) ամենակարևոր կետերը գրավող բանվորական կարմիր գվարդիայի ջոկատների զգալի մասը բանվոր պատանեկությունն էր կազմում։

Մոսկվայում նույնպես բանվոր յերիտասարդությունը ցույց տվեց իր հեղափոխականությունը գործնականում։

Հոկտեմբերյան որերին յերիտասարդության Մոսկվայի միությունը ինչպես և Պետրոգրադինը (Լենինգրադի)՝ ամբողջովին

մտել եր Կարմիր գվարդիայի խմբերը։ Իսկ աղյխինները, համարյա թե բոլորը, յերիտասարդական միության կազմակերպած սանիտարական խմբերումն եյին։ Կապը Կարմիր գվարդիայի ջոկատների, մարտիկների և շտաբի միջև նույնպես յերիտասարդներն եյին պաշտպանում։ Յունկերների դեմ, բանվոր յերիտասարդությունը կռվի առաջին շարքերումն եր։ Բանվոր յերիտասարդությունը ագիտացիա յե անում Սպասսկի զորանոցների զինվորության մեջ, վորոնց մասնակցությամբ, հետագայում գրավվել եր գլխավոր փոստհեռագրատունը, և վորոնք մասնակցել եյին Կրեմլի գրավմանը։

Նովինսկի պուրակի կատաղի կռիվներում բանվոր յերիտասարդությունը գտնվում եր առաջին պիրքերում։

Շատ յերիտասարդ և վառ սրտեր մարեցին։

Շատ բանվոր յերիտասարդներ իրենց կյանքերը զոհ բերին հանուն Հոկտեմբերի։

Միայն Պետրոգրադում (Լենինգրադում) և Մոսկվայում չե բանվոր յերիտասարդությունը հայտնաբերել իր հեղափոխական հերոսությունը։ Արդյունաբերական այլ կենտրոններում, վորտեղ կային բանվոր յերիտասարդության աչքի ընկնող կադրերը մենք տեսնում ենք միևնույն պատկերը։ Բանվոր յերիտասարդության միություններ՝ Փետրվարյան հեղափոխությունից անմիջապես հետո՝ սկսում են հիմնվել արդյունաբերական բոլոր քաղաքներում և կենտրոններում։ Այս միությունները, մեծ մասամբ հենց իրենց կազմակերպման որից, բոլշևիկական բնույթ են կրում։ Այս կազմակերպությունները ընդգրկում են արտադրության մեջ զբաղված բանվոր յերիտասարդության լավագույններին։ Բանվոր յերիտասարդության այս միությունները իրրև կանոն, ամբողջությամբ միաձուլվում եյին բանվորական Կարմիր գվարդիայի ջոկատների հետ և այնտեղ, վորտեղ պահանջում եյին հանգամանքները, զենքը ձեռքերին կռվում եյին հանուն աշխատավորության շահերի։

Նույնը տեսնում ենք նաև իմպերիալիստական պատերազմի ճակատներում կռվող բանակների շարքերում։

Բանվոր և գյուղացի յերիտասարդությունը, զինվորական շինելներ հագած, ամենից ավելի արձագանքում եր բոլոր անցքերին և առաջինն եր, վոր գնաց բոլշևիկյան լոզունգների հետևից։

Բոլշևիկյան ազդեցությունը առաջին հերթին վարակեց այն զինվորական մասերը, վորտեղ զինվորների մեծամասնությունը գործարաններից և ֆաբրիկաներից վերցված բանվորներն եյին և այն զինվորական մասերը, վորտեղ մեծամասնությունը գյուղական ավելի չնահել յերիտասարդություն եր։ Զինվորական լայն մասսաների համար պատերազմն ավելի ու ավելի ատելի յեր դառնում։ Ցեվ յերեք մասսաների որգաններ՝ Խորհուրդները յերկար ժամանակ աջակցում եյին պատերազմին, մինչև վոր բոլշևիկները Խորհուրդներում մեծամասնություն շահեցին, այդ տեղի յեր ունենում վոչ այն բանի համար, վոր մասսաները կողմնակից եյին պատերազմին։ Փետրվարյան հեղափոխության հենց սկզբից, յերբ դեռ աշխատավորներից շատերի համար կուսակցությունների ծրագրերում ամեն ինչ պարզ չեր, և գլխավորը, յերբ դեռ կուսակցությունները չեյին կարող գործով ցույց տալ իրենց, Խորհուրդների մեջ մտնում եյին իբրև բանվորների, զինվորների և գյուղացիների ներկայացուցիչներ «առհասարակ հեղափոխականները»—ճոռոմաբաններ, վորոնք աշխատավորների հետ վոչ մի առնչություն չունեյին։ Այն, վոր բոլշևիկյան կուսակցությունը, կոմմունիստների կուսակցությունը նախ առաջին հերթին իրեն կողմը գրավեց հենց տարիքով ավելի յերիտասարդ հասակ ունեցող զինվորական մասսաները, յերևում է թեկուզ այն բանից, վոր ամեն մի յերիտասարդ զինվոր բանակից գյուղ վերադառնալով, բոլշևիկական գաղափարների յուրացող եր լինում։

Ցեվ այդ պետք է վոր հասկանալի լինի, քանի վոր բանակ վերցված չնահել գյուղացին, անցնելով ցարական ծառայության դաժան դպրոցը, ցարի տապալումից հետո ագահությամբ աշխատում եր հասկանալ՝ ինչը ինչից է, իմաստավորել իր կյանքը, նա, անշուշտ գալիս եր այն յեզրակացության, ինչ յեզրակացություն անում եր բոլշևիկ-կոմմունիստների կուսակցությունը։ Այդ յերիտասարդությունը հասկանալով, վոր իր կյանքը դեռ առջևն է, վոր այդ կյանքում իրեն վիճակված է լինել գլխավոր ուժերից մեկը՝ արագորեն բարձրանում եր իր ինքնագիտակցության մեջ։ Հոկտեմբերյան որերին կոմմունիստների-բոլշևիկների կուսակցությունը հաղթեց հատկապես նրա համար, վոր նրա լոզունգները պրոլետարիատի և առհասարակ վողջ աշխատավորության կենսական լոզունգներն եյին։ «Խաղաղություն խրճիթներին, կռիվ պալատներին», հաց սոված պրոլետարին, կալվածատերերի հողերը աշխատավոր գյուղացիության,—ահա այն մարտական լո-

դունդները, վորոնց հետևից գնում եր վողջ աշխատավոր մասսան և այս լոզունգներով մոտեցավ խորհուրդների իշխանության։

Գյուղական յերիտասարդության, վորին ցարիզմը դեռ ժամանակ չեր ունեցել զենքի կանչելու, այն որերին, յերբ վճռվում եր իշխանությունն աշխատավորության ձեռքն անցնելու հարցը, մեծ եր, ավելի շուտ վորպես ակնառու խոշոր անցքերի։ Փետրվարյան հեղաշրջումից հետո, յերբ տապալվում եր կապիտալիստների իշխանությունը կալվածատիրական հողերի գրավումով ակտիվ մասնակցելով Հոկտեմբերյան հեղափոխության նախապատրաստմանը, գյուղում գտնվող գյուղական յերիտասարդական մասսաները, միայն համակրություն եյին ցույց տալիս հոկտեմբերյան հեղաշրջմանը։

Այս կերպ պետք է փաստել, նախ և առաջ, վոր Փետրվարից մինչև Հոկտեմբեր ժամանակաշրջանում և դասակարգային սրված պայքարի ժամանակաշրջանում յերկրի աճող սերունդն ամբողջապես ամենաակտիվ մասնակցություն և ցույց տվել դասակարգային կռվում։ Մի կողմից բանվոր և գյուղացի յերիտասարդության հսկայական մեծամասնությունն եր՝ իշխանության համար պայքարող պրոլետարիատին կողմնակից, մյուս կողմից՝ բուրժուաների, կալվածատերերի և նրանց պնակալեզների դավկները։ Յերիտասարդության այս յերկու խմբերի աչքի ընկնող բաժանումը պահպանվել և մինչև այժմ էլ։ Միջինը չկար և չի էլ կարող լինել։

Յերկրորդ՝ կարելի յե փաստել, վոր բանվոր յերիտասարդությունը Հոկտեմբերյան հեղաշրջման նախապատրաստման հենց սկզբից պրոլետարիատի շարքերում ամենաակտիվ մարտական միավորն եր, վոր նա անվերապահորեն նվիրված եր պրոլետարիատի շահերին։

Յերրորդ՝ գյուղացի ջահելը խորհուրդների իշխանության հաստատման ժամանակ պրոլետարիատի ամենահավատարիմ և մոտիկ դաշնակիցներ, վորը բղխում և ինչպես գյուղական յերիտասարդության դրության առանձնահատկություններից, նույնպես և այն փաստից, վոր հակայական քանակությամբ գյուղական յերիտասարդություն հավաքել եյին ցարական բանակի համար։

Չորրորդ՝ վոր ամենագլխավորը և հիմնականն և, բանվորա-գյուղացիական յերիտասարդությունն իր համակրանքն ամբողջովին և լիովին նվիրել և պրոլետարական կուսակցությանը—բոլշեվիկ-կոմմունիստների կուսակցությանը։

Պրոլետարական յերիտասարդական շարժումը հենց սկզբից մտնում և միակ ճիշտ ճանապարհը, այն ճանապարհը, վորն ընդունում և բոլշևիկյան կուսակցության ծրագիրը և տակտիկան։ Յեվ դա պատահական չեր։ Նման յերևույթ կարելի յե բացատրել նրանով, վոր առաջինը՝ բանվոր յերիտասարդության աշխատանքի խնդիրը կարող եր լուծում ստանալ միմիայն բուրժուազիայի իշխանության տապալման ժամանակ*), իսկ մնացած բոլոր կուսակցությունները դեմ եյին բուրժուազիայի տիրապետության տապալման. յերկրորդը՝ միայն բոլշևիկ կոմմունիստների կուսակցության կողմից կար ճիշտ մոտեցում դեպի յերիտասարդությունը, միայն նա՝ պրոլետարական կուսակցությունն եր կողմնակից բանվոր յերիտասարդության ինքնագործունեության մաքսիմալ զարգացման, իսկ մնացած բոլոր կուսակցությունները այդ ինքնագործունեությունից վախենում եյին, վորովհետև տեսնում եյին վոր յերիտասարդությունը այդ կուսակցությունների դեմ եր արամադրված։

Բոլոր կուսակցությունները—թե մենշևիկները, թե եսերները փորձում եյին աշխատանք տանել յերիտասարդության մեջ, ստեղծում եյին իրենց յերիտասարդական միությունները, բայց դրանք առանձին անհատների համախմբումներ եյին, վորոնք մասսայի հետ վոչ մի կապ և աճող սերնդի մասսաների վրա ազդեցություն չունեյին։

---

*) Վորպեսզի ցույց տանք՝ **ինչպես** և **ինչպիսի** պահանջներ եր առաջ երում բանվոր յերիտասարդությունը իրեն դրության բարելավելու համար՝ բերում ենք յերիտասարդության Սոցյալիստական Մեծության Պետրոգրադի (Լենինգրադ) կազմակերպության վորոշումը։ Վորոշման մեջ ասված եր՝

«§ 1. Մինչ 21 տարեկան բանվոր յերիտասարդության առանձնահատուկ շահերի պաշտպանության, ադմինիստրացիայի առաջ նրանց շահերի ներկայացուցչության և գործարանների ու ֆաբրիկանների բանվոր յերիտասարդության շրջանում դեպի կուլտ-կրթական գործունեության զարգացումն ուղղված ամեն տեսակ ձեռնարկություններ ինքնակազմակերպված ձևով կենսագործելու համար հիմնվում են յերիտասարդական կոմիտեներ։

§ 2. Կոմիտեները ընտրվում են՝ 30 մինչև 50 հոգի կոմիտեի մեջ ընտրում են 3 ընկեր, 50 մինչև 70—4, 70 մինչև 100—5, 100 մինչև 150—7, 150 մինչև 230—8, 230 մինչև 350—9, 350-ից հետո ամեն մի 100 հոգին ընտրում է մեկ ընկեր։ Յերիտասարդական կոմիտեից մեկ ներկայացուցիչ վճռական ձայնի իրավունքով մտնում է հասակավոր բանվորների ֆաբրիկա-գործարանային կոմիտեի մեջ։ Իսկ այնտեղ, վորտեղ աշխատող յերիտասարդների թիվը 30-ից

Հոկտեմբերյան հեղաշրջման հենց հետևյալ որը պրոլետարական յերիտասարդության կազմակերպություններն սահիպված եյին իշխանության որգաններին, կուսակցական աշխատանքի, նվաճումների պաշտպանության և ամրապնդման համար տալ իրենց շարքերում գտնվող լավագույն ուժերը:

Կուլտուր-կրթական և տնտեսական աշխատանքը ժամանակավորապես դադարեց. յերիտասարդության վոչ մի կազմակերպություն չեր կարող դաստիարակչական ներքին աշխատանքներին առաջ խաղացող հակահեղափոխության դեմ լարված պայքարի և գերմանացիների հարձակման որերին իր ուժերը նվիրել:

Առանձնապես ծանր դրության մեջ եր գտնվում Պիտերի կազմակերպությունը, վորտեղ գերմանացիների հարձակման շնորհիվ՝ միության բոլոր լավագույն ուժերը ռազմաճակատ եյին գնացել, քաղաքը պարպվում եր, արդյունաբերությունը կանգ եր առնում: Այնուամենայնիվ, պետք է նշել, վոր գոյություն ունեցող կազմակերպություններում աշխատանքների վորոշ թուլացման կից առաջ եյին գալիս մի շարք նոր կազմակերպություններ—բանվոր յերիտասարդության սոցիալիստական միություններ: Հոկտեմբերից հետո շարժումը ավելի լայնանում է:

Կարևոր է նշել այն փաստը, վոր ընթացիկ մոմենտի նկատմամբ բոլշևիկյան կուսակցության մեջ յեղած տարաձայնությունների ժամանակ (Բրեստի հաշտության հարցի մասին) յերիտասարդության կազմակերպությունների զգալի մասը արտահայտվեց հոգուտ Լենինի դիրքի (կնքել հաշտություն):

Անհրաժեշտ է նշել Հոկտեմբերյան հեղաշրջումից անմիջապես հետո Պիտերում միության մեջ պառակտում առաջ բերելու փորձը:

Ահա թե 1918 հունվարին ինչ եր գրում յերիտասարդության առաջին տպագիր որգաններից մեկը՝ „Листок юного пролетария“. «Մեր միությունը ծայրահեղ ծանր որեր եր ապրում. մասսայական գործազրկություն, ակտիվ աշխատավորների բացակայություն—ահա մեր դժվարության գլխավոր պատճառները»: Ավելացրեք սրա վրա՝ աշխատանքի փորձառության բացակայությունը, նոր կառավարության կազմակերպմամբ զբաղված կուսակցության թույլ ուժանդակությունը, կազմակերպությունների մեծ քանակը և այլն: Այն ժամանակ Միության աշխատողներից աննշան մի խմբակ (5—7 հոգի) անջատվեց, վորոնք առաջարկեցին՝ Միությունը, իբրև բանվոր յերիտասարդության մասսայական կազմակերպություն, լուծարքի յենթարկել և ստեղծել ակտիվ աշխատող անհատներից կազմված նոր կազմակերպություն «Բանվոր Յերիտասարդության Կոմմունիստական Միություն» անվան տակ: Այս խմբակի լոզունգներն եյին՝

1) «Ակտիվ աշխատողների համար արգելակ և հանդիսանում 16 հազարը»:

2) «Ղեկավարող որգանները չպետք է ընդհանուր քվեարկությամբ ընտրել, այլ նման ընկերներին ընտրել անձնական ծանոթության հիման վրա»:

3) «Հեղափոխական կարող են լինել միայն խորհողները (мыслители)»:

պակաս է, նրանք ընտրում են ֆաբրիկա-գործարանային կոմիտե իրենց ներկայացուցչին խորհրդակցական ձայնի իրավունքով:

§ 3. Յերիտասարդական կոմիտեներին վերապահվում է աշխատավարձի, աշխատանքի ժամանակի, յերիտասարդների ընդունելության և հեռացման հարցերում ադմինիստրացիայի և յերիտասարդության միջև փոխհարաբերությունների կազմակերպված կանոնավորումը:

§ 4. Յերիտասարդական կոմիտեների պարտականությունների մեջ մտնում է՝

Ա. 1. Հոգ տանել մանկական և յերիտասարդական աշխատանքի պաշտպանության մասին.

2. Միջամտել յերիտասարդների նկատմամբ ադմինիստրացիայի կողմից թույլ տված ապօրինի գործողությունների ժամանակ:

3. Թույլ չտալ բանվոր յերիտասարդության արտաժամյա աշխատանքները կատարելու:

4. Թույլ չտալ աշխատել կիրակի որերին:

5. Թույլ չտալ մինչ 18 տարեկան պատանիներին գիշերային աշխատանքներ կատարելու:

6. Թույլ չտալ մինչ 18 տարեկան պատանիներին առողջության համար վնասակար և վտանգավոր աշխատանքներ կատարելու:

7. Զգալի վորպեսզի վատառողջ պատանիներին տրվի ավելի հեշտ աշխատանք:

8. Պահանջել, մինչ 18 տարեկան պատանիներին աշխատանքի ամեն մի 3 ժամից հետո տրվի 20 րոպե ընդմիջում:

9. Թույլ չտալ մինչ 16 տարեկան պատանիներին աշխատանքի ընդունել:

10. Թույլ չտալ պատանիներին ընդունել և հեռացնել առանց կոմիտեյի գիտության:

11. Թույլ չտալ աշխատանքի ընդունել վոչ մեր միության և արհեստակցական միությունների անդամներին, ընդունել միշտ այն պայմանով, յեթե նոր ընդունվածը կդրվի միության անդամ:

12. Պահանջել, վորպեսզի աշակերտներին և անչափահասներին հաշվեդրքույկներ տրվեն:

4) «Ստեղծեցեք գիտակից, փակ ազատ կոմմունաներ»։

Պառակտման փորձը սթափեցրեց կազմակերպութ յունը։ Այդ խմբակի ակտիվը՝ բացարձակ անարխիստական թեքումով Միութ յունից հեռացավ, վոչ համակրանք գտնելով բանվոր յերիտասարդութ յան մասսաներում և վոչ աջակցութ յուն կազմակերպութ յան ակտիվի կողմից։ Այս խմբակի լոզունգներն անհրաժեշտ և հիշել, քանի վոր դա պրոլետարական յերիտասարդական շարժումը շիտակ ճանապարհից շեղելու առաջին փորձն եր։

Գերմանացիների հետ կնքած հաշտութ յունը, խորհրդային իշխանութ յան դեմ բացարձակ յելույթներ չլինելը, հնարավորութ յուն ավին 1918 թ. ամառը ամրապնդելու յերիտասարդական շարժումը։ Վերականգնվում և աշխատանքը Պիտերում, աշխուժանում և և զարգանում աշխատանքը Մոսկվայի շրջաններում, շարժումը ծավալված և նաև գավառներում։ Հաստատվում և կապ Պիտերի, Մոսկվայի և գավառների միջև։ Վարոնեժ, Վլադիմիրը, Ն. Նովգորոդ, Ուֆա, Ռիբինսկ, Յեկատերինադար, Սարատով, Կուրսկ, Կալուգա, Տամբով և այլն գրում են, վոր շարժումը աճում և տարածվում և։

Բանվոր յերիտասարդութ յան Պիտերի կազմակերպութ յունը 1918 թ, հունիս ամսում Միութ յան I-ին կոնֆերանսում ընտրվող կոմիտեյի աշխատանքի ծրագրի մեջ մտցնում և Համառուսական համագումարի հրավիրումը։

Համառուսական կազմակերպութ յան հիմնելու համար պայմանները հաջող են դասավորվում, տեղական կազմակերպութ յունները սպասում են,—և վերջապես Մոսկվան և Պիտերը հիմնում են Բանվոր և Գյուղացի Յերիտասարդութ յան Միութ յունների Համառուսական Համագումարի հրավիրման բյուրո։

Համագումարի նպատակն եր՝ ձևակերպել շարժումը, տալ աշխատանքի միասնական սկզբունքներ, պրոլետարական կազմակերպութ յունների ցանցում վորոշել պրոլետարական յերիտասարդական շարժման տեղը։

---

13. Պահանջել վորպեսզի վարչութ յունը մի առանձին մասյանի մեջ մտցնի մինչ 18 տարեկաններին։

14. Պահանջել ձեռնարկատերերից վորպեսզի յերիտասարդութ յանն լրացուցիչ տրվի հաճախել դպրոցներ և կուրսեր բանվորական ժամերի հաշվին, հանուրդներ չանելով աշխատավարձից։

15. Պահանջել ձեռնարկատերերից գործարաններին կից դպրոցներ բացանել և կամ ոժանդակութ յուն ցույց տալ այդ գործում շրջանային դումաներին...»։

Թեպետ և այս վորոշումն ընդունված եր 1917 թ. հոկտեմբերի 21-ին (8)։ այսինքն՝ Հոկտեմբերյան հեղաշրջումից քիչ առաջ, այսուամենայնիվ նա արտահայտում և իրեն՝ բանվոր յերիտասարդութ յան կողմից նախորոք ձևակերպված պահանջները։ Հիմնական պահանջներից—բանվորական որվա կրճատում, վորքրահատակներին աշխատանքի չթողնելը, կրթութ յունը և վորակավորումը—և վոչ մեկը չեր կարող իրականանալ բուրժուազիայի տիրապետութ յան ժամանակ։

ՅԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԿՈՄՍՈՄՈԼԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՌՎԻ ԾՐՋԱՆՈՒՄ

§ 8. ԿՈՄՍՈՄՈԼԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՒ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Բանվոր և Գյուղացի Ներիտասարդության Միության Համառուսական Համագումարը կայացավ Մոսկվայում 1918 թ. հոկտեմբերի 29—նոյեմբերի 4-ին։ Այնտեղ հավաքվեցին 176 պատգամավոր, որոնք կազմակերպված բանվոր և գյուղացի յերիտասարդության 22.100 հոգու կողմից ներկայացուցիչներ էին։

Վճռական ձայնի իրավունքով մասնակցողներից միայն 88 հոգին կոմմունիստական կուսակցության անդամներ էին, 38 հոգի համակրող էին, 45 անկուսակցական, 1 ձախ սոցիալիստ-հեղափոխական, 1 անարխիստ և 3 սոցիալ-դեմոկրատ-ինտերնացիոնալիստ։

Համագումարի հիմնական նպատակն էր՝ ստեղծել համառուսական կազմակերպություն։ Համագումարը անցնում էր մեծ խանդավառությամբ և վոգևորությամբ։ Համագումարի որակորգի հարցերն էին՝

1) Զեկուցումներ տեղերից։
2) Ընթացիկ մոմենտը։
3) Միության ծրագիրը։
4) Կանոնադրությունը։
5) Կազմակերպչական խնդիրը։
6) Ֆինանսական խնդիրը։
7) Միության կուլտ-կրթական աշխատանքը։
8) Յերիտասարդության տնտեսական շահերի պաշտպանությունը։
9) Յերիտասարդության շարժումը Արևմուտքում։

10) Կենտրոնական Կոմիտեյի ընտրություններ։

11) Զեկուցումներ ընկ. ընկ. Բոգդանովի—«Դիտությունը և պրոլետարիատը», Պոլյանսկու—«Պրոլետարական ստեղծագործության մասին», Ռիյանների—«Յորհրդային սահմանադրության մասին», Կալինինի *)—«Աշխատանքը ակումբում», Սմիդյանի—«Աշխատանքը ակումբում», Սմիդյանի—«Աշխատանքը թատերական խմբակում»։

Համագումարի աշխատանքների ընթացքում որակարգը բավականին փոփոխության յենթարկվեց, բայց բերում ենք համագումարի ընդունած նախնական ձևով, ցույց տալու համար, թե ինչպես էին մոտենում համագումարի աշխատանքների հարցերին։

Ընթացիկ մոմենտի մասին ընկ. Յարոսլավսկու տված զեկուցման առթիվ միաձայն ընդունված բանաձևը, պարզորոշ ցույց էր տալիս համագումարի քաղաքական դեմքը.

«Ռուսաստանի հեղափոխական յերիտասարդության առաջին համագումարը լսելով զեկուցում ընթացիկ մոմենտի մասին, հայտնում է, բանվորա-գյուղացիական իշխանության իր լիակատար համերաշխությունը կոմմունիզմի համար նրա մղած պայքարում։ Հարավում հատունացող հակահեղափոխությունը մեր շրջաններում բավականին ուժեղ դիմադրություն կգտնի։ Վողջ մեր հեղափոխական ավյունը, վողջ մեր յերիտասարդ ուժերը մենք կնվիրենք նրա դեմ մղված պայքարին։ Մեր ձայնը տարածվում և ամբողջ յերկրում՝ կոչելով իր դրոշի տակ ամբողջ աշխարհի հեղափոխական յերիտասարդությանը։ Մոտենում է վերջին վճռական մարտը։ Դեպի հետ վոչ մի քայլ։

Կեցցե գալիք հեղափոխությունը.

Կեցցե Յերրորդ Ինտերնացիոնալը.

Կեցցե Յորհրդային իշխանությունը»։

Զեկուցումները տեղերից ընդհանուր առմամբ միևնույն պատկերն էին գծում։

Այդ պատկերը հանգում էր հետևյալին.

1) Զարգանում և աճում բանվոր և գյուղացի յերիտասարդության հետաքրքրությունը դեպի իրեն Միության կազմակերպությունը։

2) Կազմակերպությունները տեղերում ամեն րոպե պատ-

*) Ֆեոդոր Կալինինն է—լուսավորության ասպարեզի աշխատավոր և վոչ թե Մ. Ի. Կալինինը։

բաստ են տալու իրենց կյանքը, Հոկտեմբերյան հեղափոխության նվաճումների պաշտպանության համար։

3) Մշտական սիստեմատիկ աշխատանք տանելու համար պակասում են ակտիվ ուժերը։

4) Թույլ է կուսակցության ոժանդակությունը յերիտասարդության կազմակերպություններին։

5) Ֆինանսական կողմը թույլ է. աշխատանք տանելու համար միջոցներ չկան։

6) Անհրաժեշտ է, համառուսական մասշտաբով միասնական կազմակերպություն—կենտրոնական կոմիտե, վորը ոգներ տեղական կազմակերպություններին։

Վողջ համագումարն անցավ Միության կազմակերպման, նրա խնդիրների և աշխատանքի ձևերի վորոշման լոզունգի տակ։

Այն մասին, թե անհրաժեշտ է համառուսական միասնական Միություն՝ տարաձայնություններ չկային։ Կային միայն վեճեր, թե ինչպիսին պետք է լինի Միությունը։ Վիճաբանությունները յերեք տեսակետ յերևան բերին։

Առաջինը — կազմակերպությունը անվանել՝ «Յերիտասարդության Ռուսաստանի Կոմմունիստական Միություն»։

Յերկրորդ—անվանել՝ «Բանվոր Յերիտասարդության Սոցիալիստական Միություն—III Ինտերնացիոնալ»։ Յերրորդ—ուղղակի «Սոցիալիստական Միություն»։

Յերրորդ տեսակետը դուրս հանվեց, քանի վոր «Սոցիալիստական Միության» անվան տակ կարող եյին թագնվել պրոլետարիատի դիկտատուրան և խորհրդային իշխանությունը չնդունողները։ Վիճաբանում եյին, միայն այն մասին՝ անվանել արդյոք Միությունը «Կոմմունիստական»։ Ընկերներից վոմանք առարկում եյին և պատճառաբանում, վոր «Կոմմունիստական» բառը կխրտնեցնի բանվոր և նամանավանդ գյուղացի յերիտասարդության լայն մասսաներին, վոր Միությունը չի դառնա մասսայական կազմակերպություն։

Ի վերջո, Միության «Կոմմունիստական» անվանումն ընդունվեց բոլորի ձայներով ընդդեմ 6-ի և 17-ի ձեռնպահության։

Միությունը «Կոմմունիստական» անվանելուց բացի, համագումարը յերկու կետ ևս ընդունեց, վորոնք պետք է կազմեյին Միության ծրագրի հիմքը։

1) Միությունը համերաշխ է Ռ.Կ(բ)Կ։ Միությունն իրեն նպատակ է դնում՝ տարածել կոմմունիզմի գաղափարը և բանվոր ու գյուղացի յերիտասարդության մասնակից անել Խորհրդային Ռուսաստանի ակտիվ շինարարության (ընդունված է միաձայն, յերկուսի ձեռնպահության)։

2) Միությունը անկախ կազմակերպություն է (ընդունված է միաձայն)։

Վոչ մի կերպ, իհարկե, չի կարելի ասել, թե համագումարի ընդունած ծրագրի այս հիմնական յերեք թեզիսներով հարցն սպառվում եր։

Միության, նրա նպատակների և խնդիրների ձևակերպման արմատական աշխատանքն անցավ համառուսական I և II համագումարների միջև յեղած ժամանակաշրջանում։ Բացի այդ՝ կազմակերպչական մի շարք հիմնական խնդիրներ իրենց լուծումն ստացան միայն II համագումարում։

Այդ իսկ պատճառով ամեն հիմք կա՝ընդունելու, վոր կազմակերպչական շրջանը շարունակվեց մինչև II համագումարը. միայն նրանից հետո Միությունը վերջնական ձևակերպում ստացավ։

Սրանով մենք բնավ չենք ցանկանում նսեմացնել համառուսական I համագումարի նշանակությունը։ Ընդհակառակը, մենք միշտ ասել ենք, վոր նրա նշանակությունը հսկայական է։

Համառուսական ՌԿՅԵՄ-ի I համագումարի նշանակությունը և նրա դերը կոմսոմոլի պատմության մեջ (ծրագրի հիմնական թեզիսներն ընդունելուց հետո վորոշված եր Բանվոր և Գյուղացի Յերիտասարդության Միությունների համագումարը համարել ՌԿՅԵՄ-ի I համագումար) բնորոշվում է նրանով, վոր՝

Միությունը, նախ՝ անվերապահորեն արտահայտեց իր համերաշխությունը բոլշևիկների—կոմմունիստների կուսակցության հետ, հայտարարելով, թե կուսակցության ծրագիրն ու տակտիկան՝ Միության ծրագիրն ու տակտիկան է։

Յերկրորդ՝ թե պրոլետարական յերիտասարդական շարժումը կազմակերպչականորեն պետք է ինքնուրույն լինի։

Յերրորդ՝ թե կազմակերպվող Միությունը միջազգային յերիտասարդական շարժման առաջավոր ջոկատն է։ Կապը Արևմուտքի հետ և Յերիտասարդության Կոմմունիստական Ինտերնացիոնալի կազմակերպումը դրված եյին իբրև շարժման հիմնական խնդիր։

Չորրորդ՝ Միությունն անվերապահորեն ամրապնդեց բանվոր և գյուղացի յերիտասարդության միասնականությունը կոմսոմոլի շարժման մեջ։

Հինգերորդ՝ Միությունը վորոշակի պարզից իր կազմը ըստ հասակի, վորոշելով, վոր իրեն շարքերում միավորում է մինչև 23 տարեկան հասակ ունեցող բանվոր և գյուղացի յերիտասարդությունը։

Վեցերորդ՝ I համագումարը միաձուլեց բոլոր կազմակերպությունները, ստեղծելով համառուսական կենտրոնական միասնական Միություն, և նշեց ընդհանուր գծերով Միության կազմակերպության կառուցվածքը։

Յոթերորդ՝ համագումարը տեղական կազմակերպությունների առաջ դրեց ներքին աշխատանքի հիմնական խնդիրները։

Ութերորդ՝ համագումարը վորոշակի հայտարարեց, թե Միության եյական գործնեությունը լինելու է խորհրդային իշխանությունը աջակցելը և պաշտպանելը։

Իններորդ՝ համագումարն ընտրեց շարժման դեկավար մարմին՝ Միության կենտրոնական Կոմիտե։

Համագումարից հետո աշխուժացավ կազմակերպությունների վերակազմության աշխատանքը տեղերում։

Մինչև կոմսոմոլի II համառուսական համագումարը, վորը կայացավ մեկ տարուց հետո (1919 թ. հոկտեմբերի 5—8) կազմակերպությունները վերակազմված եյին։ Այս ժամանակամիջոցում կայացան նահանգական համագումարներ և կոնֆերանսներ, ստեղծվեց աշխատանքի ապպարատ։

Միությունն աճում էր։ II համագումարին արդեն Միության շարքերում մոտ 96.000 հոգի եյին միավորված։

I և II համագումարների միջանկյալ ժամանակաշրջանում պրոլետարական յերիտասարդական շարժման առաջ ծառացան արդեն պրակտիկ աշխատանքի բոլոր հիմնական խնդիրները։

Ծագած և լուծում ստացած հիմնական խնդիրները հետևյալներն եյին.

1) Միջազգային կոմմունիստական յերիտասարդության ստեղծումը։

2) Միության վերաբերմունքը դեպի կուսակցությունը։

3) Միության վերաբերմունքը դեպի բանվոր յերիտասարդությունը,

4) Միության վերաբերմունքը դեպի պետությունը։

5) Միության վերաբերմունքը դեպի գյուղացի յերիտասարդության մասսաները։

6) Միության վերաբերմունքը ինտելլիգենտ յերիտասարդության նկատմամբ։

7) Միության՝ առանձին ազգությունների կազմակերպությունների փոխհարաբերությունը։

8) Յերիտասարդական և մանկական աշխատանքի, ամեն սերընդի կրթության և դաստիարակության վերաբերմանբ կոմսոմոլի աշխատանքի պրակտիկ խնդիրները։

Հենց այս հիմնական խնդիրների լուծմամբ զբաղված եր I համագումարում ընտրված կոմսոմոլի կենտրոնական կոմիտեն։

Թե քաղաքում և թե գյուղում նոր բջիջներ կազմակերպելու գործում Միության ունեցած ամենօրյա գործունեությանը զուգընթաց եր ընթանում այս աշխատանքը։

Հերթով քննենք այս հիմնական խնդիրները։

Յերիտասարդության կոմմունիստական Ինտերնացիոնալի ստեղծման վերաբերմամբ կոմսոմոլի դերը հսկայական եր։

Շնորհիվ կենտրոնական կոմիտեյի ջանքերի՝ կոմսոմոլի և Յեվրոպայի յերիտասարդության հեղափոխական կազմակերպությունների միջև կանոնավոր կապ հաստատվեց։ Կոմմունիստական Ինտերնացիոնալի կազմակերպվելուց հետո Յերիտասարդության Կոմմունիստական Ինտերնացիոնալ (КИМ) ստեղծելու գործը հեշտացավ։

Կենտրոնական կոմիտեյի ներկայացուցիչ ընկ. Շացկինը գործուղվեց արտասահման, վորտեղ КИМ-ի ստեղծման գործում նա հսկայական աշխատանք տարավ։ Յերիտասարդության Կոմմունիստական Ինտերնացիոնալի գործունեության ծրագիրը, հիմնական սկզբունքները գրել եյին Ռ. կ. Յե. Մ.-ի կկ-ի ընկերները։

Յերկրորդ հարցը—կուսակցության և Միության փոխհարաբերությունների մասին, գործնականորեն առաջ յեկավ համառուսական I համագումարից հետո հենց առաջին որը։ Ծրագրային թեզիսների ձևակերպումը բավարար լինելուց շատ հեռու յեր։ կկ-ն սկսեց մշակել այդ հարցը։ Միությանը հաջողվեց յերիտասարդության մեջ տարվող աշխատանքների մասին հատուկ հարց դնել կուսակցության VIII համագումարում*), վորի բանաձևը հենց այս փոխհարաբերությունների յելակետը դարձավ։

Ի նկատի ունենալով այս բանաձևի բացառիկ նշանակությունը, մենք բերում ամբողջապես։

*) Կուսակցության VIII համագումարը կայացավ 1919 թ. մարտ ամսին։

«1. Պրոլետարական հեղափոխությունը պահանջում է մի շարք նոր և նոր պատասխանատու աշխատողներ և գիտակից մարտիկներ։ Բանվոր յերիտասարդության և չքավորագույն գյուղացիության յերիտասարդ սերնդին բաժին է ընկնում հեղափոխական շինարարության գործում ավելի և ավելի մասնակցություն ցույց տալ և պատրաստվել հեղափոխությունը շարունակելու և խորացնելու։

2. Կոմմունիստական կուսակցական աշխատանքը գյուղացի և բանվոր յերիտասարդության շրջանում ներկայումս հսկայական նշանակություն է ստանում։ Կուսակցությունը իր հետևից պետք է ունենա լավ պատրաստված ռեզերվներ, վորոնցից նա կարողանա դուրս բերել հեղափոխական ենտուզիազմով լցված աշխատավորներ։

3. Կոմմունիստական աշխատանքները յերիտասարդության շրջանում կարող են հաջող գնալ միայն կոմմունիզմի դրոշի տակ ընթացող ինքնուրույն կազմակերպությունների միջոցով, վորոնցում յերիտասարդությունը հնարավորություն կունենար հայրենաբերելու իր կոմմունիստական դաստիարակության համար անվիճելիորեն անհրաժեշտ մաքսիմալ ինքնագործունեություն։ Այդպիսի կազմակերպություն է Ռուսաստանի Յերիտասարդության Կոմմունիստական Միությունը, վորը հսկայական աշխատանք է տանում յերիտասարդության կազմակերպման և նրա կոմմունիստական դաստիարակության գործում, կոչելով պրոլետարական յերիտասարդությունը կոմմունիստական հասարակության անմիջական շինարարության և Աորհրդային Հանրապետության պաշտպանության։

4. ՌԿԿ VIII համագումարն անհրաժեշտ է գտնում Ռուսաստանի Յերիտասարդության Կոմմունիստական Միության հետագա գոյությունը և նրա զարգացումը։ Ռուսաստանի Յերիտասարդության Կոմմունիստական Միության ամենայեռանդուն գաղափարական և տնտեսական ուժանդակություն պետք է ցույց տա»։

Այս բանաձևից յերևում է, վոր կուսակցությունը աճող սերնդի մեջ կոմմունիստական աշխատանք տանելը կոմսոմոլին է հանձնում, իրեն վերապահելով քաղաքական ղեկավարությունը և աշխատանքի վերահսկողությունը։

Այս բանաձևի հիման վրա մշակված եր ՌԿՅԵՄ-ի և ՌԿ(բ)Կ-ի փոխհարաբերությունների մասին հատուկ հրահանգ։

Այս հրահանգը մինչև որս էլ պահում է իր ուժը։

Ահա թե ինչ է ասված այդ հրահանգում.

«1. Ռուսաստանի Յերիտասարդության Կոմմունիստական Միությունը ընդունում է ՌԿԿ-ի ծրագիրն ու տակտիկան, հանդիսանում է ավտոնոմ կազմակերպություն, ունի իր կանոնադրությունը և աշխատում է կենտրոնի և կուսակցական տեղական կոմիտեների հսկողության տակ։

2) ՌԿԿ կազմակերպությունները ՌԿՅԵՄ-ի կազմակերպություններին ցույց են տալիս ամեն տեսակի գաղափարական և նյութական ուժանդակություն (տալիս են դաստիարակության և ագիտացիայի համար ուժեր, միության համաձայնությամբ նրան կազմակերպիչներ են ուղարկում, ոգնում են քաղաքական և ակմբային աշխատանքներում, ուժանդակում են միջոցներ և շենքեր գտնելուն և այլն)։

3. ՌԿԿ բոլոր անդամները մինչև 20 տարեկան ներառյալ պարտավոր են մտնել Ռուսաստանի Կոմմունիստական Յերիտասարդական Միության մեջ։

4. Այն տեղերում, վորտեղ ՌԿՅԵՄ կազմակերպություն չկա, ՌԿԿ տեղական կազմակերպությունները և բջիջները (քաղաքային, շրջանային, գյուղական, ֆաբրիկա-գործարանային և այլն) ստեղծում են ՌԿՅԵՄ կազմակերպություն, ղեկավարվելով նրա կանոնադրությամբ և ՌԿՅԵՄ ԿԿ-ի հրահանգներով։ Կուսակցական կազմակերպությունները միության կազմակերպման համար հենց յերիտասարդությունից և կամ կուսակցության մինչև 20 տարեկան անդամներից զատում են առանձին ընկերների և կամ նախաձեռնող խմբակներ, վորոնք կազմում են ՌԿՅԵՄ ապագա կազմակերպության ակտիվ կորիզը։

5. ՌԿՅԵՄ կազմակերպությունները պետք է ամեն տեսակի ուժանդակություն ցույց տան կուսակցական կազմակերպություններին (ագիտացիա տանել զորահավաքի ժամանակ, կազմակերպել ցույցեր խորհուրդների և այլ հիմնարկների ընտրության ժամանակ և այլն)։

6. ՌԿՅԵՄ ԿԿ անմիջականորեն կենթարկվում է ՌԿԿԿ-ին։ Իսկ ՌԿՅԵՄ տեղական կազմակերպություններն աշխատում են ՌԿԿ տեղական կոմիտեների հսկողության տակ։

7. Տեղերում, կուսակցության հսկողությունը Միության նկատմամբ կատարվում է փոխադարձ ներկայացուցչության միջոցով։

Ծանոթություն. — Միության ներկայացուցիչները կուսակցական կազմակերպություններում միության գործերին վերաբերող հարցերի քննության դեպքում վճռական ձայն ունեն։

8. ՌԿԿ տեղական կազմակերպություններին հանձնարարվում է ՌԿՅԵՄ կազմակերպություններին կից ունենալ ֆրակցիա միայն այն դեպքում, եթե վերջիններս տանում են վոչ կոմմունիստական գիծ, երբ քաղաքական թույլ աշխատանք է տարվում, եթե կազմակերպություններում գտնվում են կուլակային, մանրբուրժուական տարրեր և եթե ղեկավարող որգաններում չկան կուսակցության անդամներ։

9. ՌԿՅԵՄ կազմակերպություններին կից ՌԿԿ ֆրակցիաները, որոնք նպատակ ունեն կազմակերպության վողջ աշխատանքներին կոմմունիստական վոգով ուղղություն տալ, աշխատում են կանոնադրության շրջանակներում և իրավունք չունեն ցրել կազմակերպությունը և նրա ղեկավար որգանները։

10. Ռուսաստանի Կոմմունիստական Յերիտասարդության Միությունը կազմակերպության ինքնագործունեությունը նրա աշխատանքների հիմքն է և գոյության անհրաժեշտ պայմանը։ Ուստի կուսակցության վերահսկողությունը Միության նկատմամբ չպետք է կրե խնամակալության, Միության կազմակերպչական, ագիտացիոն, կուլտուր-լուսավորական և այլ աշխատանքների մանր բաներում միջամտելու բնույթ, և պետք է անցկացվի միայն Միության կանոնադրության և ՌԿՅԵՄԿԿ հրահանգների շրջանակներում։ Տեղական կուսակցական կազմակերպությունները իրավունք չունեն արձակելու Միության կազմակերպությունները։ Տեղական կուսակցական կազմակերպությունների և Միության միջև տեղի ունեցող բոլոր թյուրիմացությունները հանձնվում են կուսակցության և Միության վերադաս մարմինների քննության»։

Կենտրոնական կոմիտեի վորոշումները և ԿԿ զեկուցման առթիվ կուսակցության և Միության հրատարակած հրահանգը II համառուսական համագումարի կողմից հաստատված եր։ Հարցը մինչև վերջ ճիշտ եր վճռված։

Յեվ յեթե հետագայում կուսակցության և Միության փոխհարաբերությունների խնդիրը և բարձրացել այդ յեղել և պատճառական սինդիկալիզմի դեմ մղվող պայքարի և ինքնագեկավարվող կոմյերիտական շարժումը լուծարքի յենթարկելու փորձերի դեմ։

Յերրորդ հարցի վերաբերմամբ — կոմյերիտմիության կազմակերպության և բանվոր յերիտասարդության փոխհարաբերությունների մասին — դեռևս համառուսական I համագումարում Ուրալի պատգամավորներից մի խումբ փորձեց յերիտասարդական շարժումը շեղել ուղիղ ճանապարհից։

Ուրալցիները առաջարկեցին՝ կոմյերիտմիության կազմակերպությունների հետ մեկտեղ կազմակերպել հատուկ «պրոլետարական յերիտասարդության տուն», վորտեղ կարողանար միանալ ամբողջ բանվոր յերիտասարդությունը։ Համագումարն այդ առաջարկությունը մերժեց, իբրև կոմյերիտմիության մասսայական կազմակերպության զարգացման արգելակ։

I և II համագումարների միջև յեղած ժամանակաշրջանում այդ հարցը վերստին յերևան յեկավ։

Նա ծագեց Մոսկվայում։ Շնորհիվ յերկրի ծանր դրության և բանվոր յերիտասարդության տնտեսական վատ պայմանների, Միությունը կամաց-կամաց վերածվում եր մասսայական կազմակերպության։

Այդ բանից մի քանի ընկերներ յեզրակացնում եյին, վոր կոմյերիտմիության կազմակերպությունը չի կարող մասսայական լինել, իսկ յեթե չի կարող, պետք ել չե, վոր լինի։ Այդ տեսակետ ունեցող ընկերների գլխավորն եր Մոսկվայի կազմակերպության աշխատավոր Վլադիմիր Դունայևսկին։ Մասսաների հետ կապ ստեղծելու և կոմյերիտմիության շուրջը մասսաներին համախմբելու խնդիրների լուծումն ընկերները տեսնում եյին՝ արմիությունների կից յերիտասարդության սեկցիաների և բանվոր Յերիտասարդության Խորհուրդների ստեղծման մեջ։

Միության կենտրոնական կոմիտեն այդ առաջարկությունների կարականապես հակառակ արտահայտվեց, քանի վոր այդ կերպ աղավաղվում եր կոմյերիտմիության կազմակերպության գոյությունը։

Յեթե կոմյերիտմիության կազմակերպությունը չի հանդիսանում մասսայական — նա այդպիսին կլինի։ Պետք չե միայն ստեղծել այնպիսի կազմակերպություններ, վորոնք կոմյերիտ-

միությունը զրկում են մասսայական լինելու հնարավորությունից և խառնաշփոթություն են մտցնում յերիտասարդական շարժման մեջ։

Կոմյերիմիությունը պետք է դառնա բանվոր յերիտասարդության միակ մասսայական կազմակերպությունը։

Չի կարելի խախտել կոմյերիմիության աշխատանքների տնտեսական և քաղաքական միասնականությունը։

Արհմիություններում բանվոր յերիտասարդության շահերը պետք է ներկայացնեն կոմյերիմիությունը, յեթե նա ցանկանում է լինել մասսայական կազմակերպություն։

Սրանք եյին կենտրոնական Կոմիտեյի առաջ բերած պատճառաբանությունները Բանվոր Յերիտասարդության Խորհուրդների և արհմիություններին կից սեկցիաների դեմ։ Համառոսական II համագումարը սրա հետ համաձայն չեղ միաձայն համաձայնվեց։

Զորրորդ հարցի վերաբերմամբ—պետական որգաննների հետ փոխհարաբերությունների մասին—Միությունը կանգնեց պետական որգաննների և առանձնապես այն որգաննների հետ գործնական աշխատակցության տեսակետի վրա, վորոնց աշխատանքները սերտորեն կապված են յերիտասարդության շահերի հետ։

Ինչպես անցյալում, նմանապես և այժմ այդպիսիներն են —աշխատանքի, լուսավորության և առողջապահության ժողովրդական կոմիսարիատները։

Այնտեղ կոմյերիմիությունն ուղարկում եր իր ներկայացուցիչներին։ Բանվոր յերիտասարդության աշխատանքի և կրթության մասի խորհրդային կառավարության որենսդրությունը այնքան խորն եր և վճռական, վոր հարցը վոչ միայն բանվոր յերիտասարդության պահանջներին եր վերաբերում, այլ խորհրդային որենսդրությունը գործնականում կիրառելուն և նրան բանվոր յերիտասարդության կարիքների և պահանջների հետ համաձայնեցնելուն։

Միությունը վոչ մի դեպքում չպետք է իր վրա վերցնի պետական որգաննների ֆունկցիաները,—նա պետք է լինի պետական որգաննների ոգնականը բանվոր և գյուղացի յերիտասարդության կարիքների սպասարկման գործում։ Փոխհարաբերությունների այս գիծը մինչև հիմա էլ պահպանվում է։

Գյուղական յերիտասարդության նկատմամբ ևս հայտնաբերվեց Միության գիծը։

Խնդիրը եր դրված՝ աշխատանքը ծավալել գյուղում։ Գյուղում՝ ինչպես վերևում ասացինք՝ տարածվել եր կուլտուր-կրթական խմբակների ցանցը և առաջ եր գալիս այն հարցը, թե ինչ գիծ պետք է ընդունի Միությունը գյուղական յերիտասարդական կրթական խմբակների նկատմամբ։ Այս հարցում Միությունը այն տեսակետն ուներ, վոր կոմյերիմիությունը գյուղում ևս պետք է լինի միակ մասսայական կազմակերպությունը, բայց այս մասսայականության համար հարկավոր է նմանորեն պայքարել։

Միությունն արտահայտվեց կուլտուր-լուսավորական խմբակները ցրելու, վարչական ճնշման դեմ և կոոպտակից տեսական ու սիստեմատիկ աշխատանքով դրանք կոմյերիտական կազմակերպություններ դարձնելու։

Կոմյերիտմիությունը նոր խմբակներ չպետք է ստեղծի, այլ գյուղական յերիտասարդության ձեռներեցությամբ առաջ յեկած խմբակները պետք է վերցնի իր ղեկավարության տակ և վերածի նրանց կոմյերիմիությենական կազմակերպություններ։

Կոմյերիմիությենական բջիջների ցանցը գյուղում աճում եր ինչպես կուլտուր-կրթական խմբակները կոմյերիմիության բջիջների վերածվելու հաշվին, այնպես էլ կոմյերիմիությենական բջիջներ անմիջականորեն կազմակերպելու հաշվին։

Գյուղում աշխատանք տանելու հարցը առաջին անգամ դրվեց համառուսական II համագումարում։ Առանձնապես ուշադրություն եր դարձված բատրակների և չքավոր յերիտասարդության կազմակերպման խնդրի վրա։

Միության վերաբերմունքը դեպի ինտելլիգենտ յերիտասարդությանը Միության ձևավորման ամբողջ շրջանում դուրս չեր հանված ինչպես կա, այնպես էլ տեղական կազմակերպությունների աշխատանքի որակարգից։ Բանն այն է, վոր դեռ 1918 թ. վերջում, Ռուսաստանի զանազան վայրերում առաջ յեկան աշակերտության կոմմունիստական կազմակերպություններ և կամ խորհրդային իշխանության պլատֆորմի վրա կանգնած միություններ։

Միության գիծը միշտ էլ յեղել է շարժման միասնականության կողմը։ Միությունը դանում եր, վոր աշակերտական յերիտասարդական շարքերում դանվող բոլոր լավ և հեղափոխական ուժերը բոլորն էլ պետք է լինեն կոմյերիմիության շարքերում։

Մի շարք տեղերում աշակերտությունը պահանջում եր, որ իրենց կազմակերպությունները ինքնուրույն լինեն։

1919 թ. սկզբին հրավիրված եր կոմմունիստ աշակերտության համառուսական կոնֆերանս, որը հիմնեց կոմմունիստ աշակերտության Կենտրոնական Բյուրո։

ԿԿ և տեղական կազմակերպությունների աշխատանքի արդյունքը յեղավ այն, որ կուսակցության ԿԿ աջակցությամբ հաջողվեց գլուխ բերել աշակերտական կազմակերպությունները ցրելու և ՌԿՅԵՄ շարքերը փոխադրելու հարցը։ Կոմյերիտմիության մեջ կազմակերպությունների անդամների ընդունելությունը անհատական ձևով եր տարվում, որը հնարավորություն տվեց ազատվել աշակերտական միությունները ընկած անհարազատ տարրերից։

Կոմյերիտմիությունը վերցրեց իր վրա 2-ր աստիճանի դպրոցներում աշխատանք տանելու պարտականությունը, չմոռանալով, որ հիմնականը բանվոր յերիտասարդությունը կազմակերպելու խնդիրն է։

Մոշոր հարց եր ՌԿՅԵՄ-ի իբրև համառուսական կազմակերպության նաև կազմակերպչական ձևավորման հարցը։ Ազգային հարցում կոմմունիստական կուսակցության ունեցած լոզունգը—նախկին Ռուսական կայսրության ժողովուրդների ինքնորոշում—առաջ եր բերում կոմմունիստական շարժման միասնականության և միաձուլության անհրաժեշտությունը։ Այլ կերպ մենք չեյինք հասնի Մորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության։

Հայտնի յե, որ ազգային ինքնուրույն հանրապետություններն ունեն իրենց կոմյերիտմիությունները, որոնք մտնում են միասնական ՌԿՅԵՄ մեջ իբրև նրա մի մասնիկը։ Վոչ մի ֆեդերացիա, վոչ մի «ազատ» համախմբում, այլ շարժման միասնականություն—ահա թե ինչ եր պահանջում գործի հաջողությունը և ինչ եր ամրապնդում ծայրամասերում գտնվող կոմյերիտմիությունը։

Հիմնված եյին՝ Ուկրայնայի բանվոր յերիտասարդության Կոմմունիստական Միությունը, ՌԿՅԵՄ կազմի մեջ մտնող և ՌԿՅԵՄ-ի ԿԿ ղեկավարված Լիտվայի և Բելոռուսիայի ԿՅԵՄ։

Չնայած շարժման դեռահաս լինելուն, I և II համագումարների մեջ և յեղած ժամանակամիջոցում, ԿԿ կողմից դրված եյին

կոմյերիտմիության գործնական աշխատանքի բոլոր հիմնական պրոբլեմները։

IIհամագումարին ուղղած բանվոր յերիտասարդության սոցիալիստական դաստիարակության մասին ընկ. Ռիվկինի թեզիսներն՝ ընդունված համագումարի կողմից, մինչև հիմա ել Միության կրթական աշխատանքների չուկեան են։

Բանվոր յերիտասարդության սոցիալիստական դաստիարակության մասին II համագումարի ընդունած վորոշումների եյությունն այն է, վոր միությունն առաջին անգամ արտահայտվեց ճող սերնդի կրթությունը և դաստիարակությունը արտադրող աշխատանքի հետ վճռականապես միացնելու անհրաժեշտության մասին։

Միության հետագա ամբողջ աշխատանքը բանվոր յերիտասարդության և ֆաբրիկա-գործարանային աշակերտության դպրոց—ակումբների կազմակերպության գործում հենվում եր II համագումարի վորոշումների վրա։

Ամեն մի կոմյերիտական, վորը կցանկանա ավելի խորը հասկանալ կոմյերիտմիության դպրոցական քաղաքականությունը, առաջի հերթին պետք է ուսումնասիրի II համագումարի վորոշումները։

Կուլտուր-կրթական դաստիարակության խնդիրները կոմյերիտմիության մեջ նույնպես դրվում եյին որակարգում։

Կոմյերիտմիության համառուսական II համագումարը չնայած իր կարճատև աշխատանքներին, ընդունեց կարևոր վորոշումներ։ Վերոհիշյալ բոլոր խնդիրների նկատմամբ հանեց հավանության բանաձև։

Կոմյերիտմիության II համագումարի աշխատանքները լիովին գնահատելու համար անհրաժեշտ է հիշել, թե այդ համագումարը ինչ պայմաններում կայացավ։ Հարավային Ռուսաստանում հակահեղափոխությունն իր գլուխն եր բարձրացրել։ Դենիկինը մոտենում եր հենց Տուլային, խորհրդային յերկրում մրթի-ցողորտը շրխկացել եր, բոլոր ուշադրությունն ուղղված եր դեպի ֆրոնտ։

Դրա համար ել II համագումարի պատգամավորների գլխավոր ուշադրությունը գամված եր ընթացիկ մոմենտին։ Համագումարն ընթացիկ մոմենտի մասին միաձայն ընդունեց այսպիսի գործնական առաջարկներ.

«Կարմիր թիկունքի և ճակատի ուժերի մաքսիմալ լարումով, Դենիկինին, ինչպես և բոլոր հակահեղափոխականներին կըտրվի վերջին և խորտակիչ հարվածը։ Հաշվի առնելով Խորհրդային հանրապետության ներկա դրությունը՝ ՌԿՅԵՄ II համագումարը վորոշեց՝

1. Հանրապետության պաշտպանության և կարմիր բանակի ճակատի ու թիկունքի սպասարկման համար զորահավաքի յենթարկել Միության անդամներին սկսած 16 տարեկանից։

2. Զորահավաքը անց և կացվում հետևյալ չափերով՝

ա) այն կազմակերպությունները, վորոնք գտնվում են հարավային ճակատի սեկտորում, Որյոլի, Տուլայի, Վորոնեժի, Տամբովի, Ռյազանի, Կալուգայի և Մոսկվայի նահանգներում, անում են ընդհանուր զորահավաք.

բ) մյուս կազմակերպությունները զորահավաքի յեն յենթարկում իրենց Միության անդամների 30%-ը, սկսած 16 տարեկանից։

Ծանոթություն 1.—Մոսկվայի կազմակերպությունն ամրանձնացվում է ամբացված ռայոնից և 30%-ի զորահավաք է կատարում։

Ծանոթություն 2.— Աչքի առաջ ունենալով Պետրոգրադի ճակատի կարևորությունը և Պետրի ընդհանուր դրությունը, Պետրոգրադի կազմակերպությունը զորահավաք չի կատարում։

3. Զորահավաքի համար ՌԿՅԵՄ տեղական կոմիտեներին անհապաղ կազմում են զորահավաքման յեռյակներ, վորոնք հրավիրում են կուսակցական կոմիտեների և պինվորական կոմիտեների ներկայացուցիչներին։ Զորահավաքը կատարվում է մեկ շաբաթվա ընթացքում, հաշված յեռյակ կազմվելու որից։

4. Բոլոր զորահավաքվածները հանձնվում են տեղական հեղկոմների և կամ կուսակցական կոմիտեների տնօրինության, վերջիններս ոգտագործում են զորահավաքվածներին ամենանպատակահարմար կերպով։

5. Միության աշխատանքների շարունակման համար այն կազմակերպություններում, վորտեղ անց և կացվում ընդհանուր զորահավաք, պետք է թողնվեն յերեքական ակտիվ աշխատակից։ Մնացած կազմակերպություններում զորահավաքի ժամանակ անհրաժեշտ է հիշել Միության աշխատանքների շարունակության անհրաժեշտության մասին»։

Պատգամավորները մեկնեցին իրենց տեղերը ընդունված վորոշումները կատարելու. այդ վորոշումներից գլխավորը և հիմնականը զորահավաք անցկացնելու խնդիրն եր։

Այս կերպ մենք տեսնում ենք, վոր կոմյերիտմիության շարժումը միասնական ձևավորում ստանալուց հենց անմիջապես հետո՝ նրա առաջ ծառանում է հիմնական և արմատական աշխատանք՝ բանվորա-գյուղացիական յերկրի ռազմունակությունն ուժեղացնել և հոկտեմբերյան նվաճումներն ամեն կողմից ճնշող համաշխարհային կապիտալիզմի հրոսակներից պաշտպանել։ Այժմ ավելի խարհային կապիտալիզմի հրոսակներից պաշտպանել։ Այժմ ավելի մանրամասն դիտենք կոմյերիտմիության այդ մարտական աշխատանքը։

§ 9. ՀՐԱՑՐՆԴ ԶԵՌԻՆ

Հանուն իշխանության իրավունքի պրոլետարիատի և գյուղացիության մղած հերոսական պայքարի շրջանում կոմյերիտմիության կազմակերպությունը բոլոր ճակատներին իրեն անդամներից տասնյակ հազարներով մարդիկ տվեց։

Կոմյերիտմիությունական վոչ մի կազմակերպություն չկար, վորն իր լավագույն անդամներին ղրկած չլիներ ճակատ, հրամկազմի կուրսերը, Զեկայի որգաններում և պարենավորման ջոկատներում մարտական աշխատանքների համար։ Քաղաքացիական կռիվների շրջանի կոմյերիտմիությունը—դիրքերում կանգնած գինված կոմյերիտմիություն և։

Այդ ժամանակները կոմյերիտական լինել նշանակում եր ամեն րոպե պատրաստ լինել կազմակերպության կոմիտեի հրամանով հրացանը ձեռքին ճակատ մեկնելու հեղափոխության պաշտպանության համար։ Կոմյերիտական լինելը դժվար եր։ Կոմյերիտմիությունն իր շարքերում մխալորում եր կռվի պատրաստ յերիտասարդությունը։

Հեղափոխական կռվի ընթացքում կոմյերիտմիությունը ճակատների համար անց և կացրել իր անդամների յերեք համառուսական զորահավաք։

Առաջին՝ 1919 թվի ապրիլին, արևելքի ճակատ, Կոլչակի դեմ։

Յերկրորդ՝ 1919 թվի հոկտեմբերին, հարավային ճակատ, Դենիկինի դեմ։

Յերրորդ՝ 1920 թվի ամառը, Լեհաստանի ճակատ։

Ավելացրեք սրան ճակատին կից շերտի (իսկ ճակատները կային Խորհրդային Ռուսաստանի բոլոր տեղերում) կոմյերիտա-

կան կազմակերպությունների զորահավաքը (ընդհանուր) և թվերն ավելի կմեծանան։

Իսկ սրան պետք է ավելացնել տեղական կազմակերպությունների կողմից անցկացված անընդհատ զորահավաքներ կարմիր հրամանատարների կուրսերի համար։

Մեզ մոտ չի եղել և այժմ էլ դեռ չկան հրամկազմի կուրսեր, որտեղ կոմկերիտականները չկազմեն կուրսանտների հիմնական կորիզը։

Իսկ կուրսանտների և կարմիր հրամանատարների դերը քաղաքացիական կռիվներում ամենքին հայտնի է։

Բայց այս դեռ բոլորը չէ։ Պետք է ավելացնել դրան կոմկերիտական լայն մասսաների և կոմկերիտմիության ակտիվի կարմիր բանակի շարքերը կամավոր մտնելը, պարենավորման և դասալքության դեմ պայքարող ջոկատներին հարյուրավոր կոմկերիտականներ տրամադրելը։

Սպիտակ-գվարդիականների գրաված մարզերում կոմկերիտականներն աշխատում էին անլեգալ պայմաններում։ Ուկրայնան, Կովկասը, Հյուսիսային Կովկասը սպիտակ-գվարդիայի տիրապետության ժամանակ ունեին կոմկերիտմիության կազմակերպություններ, որոնք խորը ընդհատակյա գործունեությամբ հակահեղափոխական նշանակություն ունեցող աշխատանք տարան։

Անլեգալ աշխատող կոմկերիտականների հերոսական քայլերի մի շարք փաստեր ունենք մենք։

Հարյուրավոր կերիտասարդ բանվորներ, գյուղացիներ, աշակերտներ սպիտակ դահիճների կողմից հրապարակով կախվել են և գնդակահարվել լոկ այն բանի համար, որ նրանք կոմկերիտականներ են։ Սպիտակ-գվարդիականները կոմկերիտմիության մասին գիտեին և կոմկերիտականները, ինչպես և կոմմունիստները, սպիտակներից բացի մահից ոչ մի բան չէին կարող սպասել։

Բանդիտիզմի դեմ կռվելու գործում կոմկերիտմիությունական կազմակերպությունները ցույց են տվել մեծ աջակցություն։

Կորիդային իշխանության պաշտպանության և ճակատի համար կոմկերիտականների կարերը տալիս եր թե քաղաքը և թե գյուղը։ Ինքնըստինքյան հասկանալի է, որ քաղաքը առաջին տեղն եր բռնում։ Ֆաբրիկա-գործարանային կերիտասարդությունը գյուղը տանում եր իր հետևից։

Կային արդյոք դասալիքներ կոմկերիտական ճակատում։ Այո, կային։

Կոմկերիտմիության կազմակերպությունները տղպիսինեին պատժում էին իրենց շարքերից դուրս շպրտելով։ Բայց ղեռանք հազարից մեկն եր լինում։ Գործարանային կերիտասարդության մեջ դասալքության և կամ ճակատ գնալուց հրաժարվելու դեպքեր համարյա չեն եղել։

Գյուղում այդ պատահում եր։ Վորևե նոր զորակոչի ազդեցության տակ կոմկերիտմիության դեռ ամբապես վոտքի չկանգնած բջիջները քայքայվում էին կամ վերածվում կուլտ-կրթական խմբակների։ Բայց և այնպես դրանք բացառություններ էին և վոչ թե մասսայական յերևույթ։

Հենց կոմկերիտմիության մեջ ընդունվելն արդեն կանխորոշում եր յերթե վոչ այսոր, գոնե վաղը ճակատ գնալու հնարավորությունը։

Ճակատից ստացված տեղեկությունները, կովում մասնակցողների պատմածներն ապացուցում են կոմկերիտմիության մասսայի ունեցած բացառիկ կացությունը բանակում։

Բանակում կոմկերիտականները, կոմմունիստների հետ միասին, տեղ հանդիսանում էին այն կարծր շաղախը, վորն ամրապնդում եր բանվորա-գյուղացիական կարմիր բանակը, վոգևորում բանվորներին ու գյուղացիներին հեղափոխական պայքարի համար։

Համաձայն վոչ լրիվ տեղեկությունների հայտնի է, վոր կոմկերիտական կազմակերպությունը քաղաքացիական կռիվների ընթացքում բանակին տվել է՝

1. Համառուսական առաջին զորահավաքը արևմտյան ճակատի համար (1919 թ. մայիսին)	3.000 հ.
2. Գյուղական հեղկոմների և գնկոմների գրագրների պաշտոնները կատարելու համար 10-րդ բանակի քաղաքական տրամադրության տակ զրվող կոմկերիտականների համար (1919 թ. մայիս)	355 հ.
տուկ գինակոչ (1919 թ. մայիս)	1.000 հ.
3. Կազմվող արտոնյալ մասերի համար	
4. Կոմկերիտականների յեկրորդ համառուսական զորահավաք հարավային ճակատի համար (1919 թ. հոկտեմբեր)	10.000 հ.
5. Կոմկերիտականների զորահավաք Պետրոգրադը Ծուդենիչից պաշտպանելու համար (1919 թ. հոկտեմբեր)	1.500 հ.
6. Կոմկերիտականների համառուսական յերրորդ զորակոչ լեհական ճակատի համար (1920 թ. մարտ)	3.012 հ.
7. Ուկրայնայի կոմկերիտականների զորահաք վրանգելյան ճակատի համար (1920 թ. ոգոստոս)	2.000 հ.
8. Կոմկերիտականների առաջին զորահավաք հրամկուրսերի համար. համառուսական մասշտաբով (1920 թ. ամառը)	2.000 հ.
9. Կոմկերիտականների յերկրորդ զորահավաք հրամկուրսերի համար (1921 թ. ամառը)	2.000 հ.
Ընդամենը	24.847 հ.

Պետք է աչքի առաջ ունենալ, որ վերևում հիշված բոլոր զորահավաքների թվերը բոլորովին լրիվ չեն. ամենահամեստ չեն-թադրություններով պետք է որ այս թիվը ավելանա մինչև 30.000 հոգի։

Բացի այդ՝ պետք է աչքի առաջ ունենալ նաև, որ այս թվերի մեջ չեն մտել զորահավաքների մեջև չեղած ժամանակա-միջոցում ճակատ մեկնող կամավորները, ամբողջ ջոկատներ և կոմկերիտական վաշտեր (Կիևի կոմկերիտականների 120 հոգուց բաղկացած վաշտը, որ կորավ Տրիպոլյեյի մոտ, Նովգորոդի վաշ-տը, Ուկրաինայի զորահավաքները և այլն), նմանապես այն զո-րահավաքները, որոնք տեղի են ունենում առանձին մարզերի և նահանգների սահմաններում և համառուսական բնույթ չեն կրում։ Ներքին ճակատներում բանդիտիզմի, կուլակային ապըս-տամբության դեմ կռվող կոմկերիտականների թվի մասին տըվ-յալներ բոլորովին չունենք։ Նմանապես չունենք թվական տվյալ-ներ սպիտակների թիկունքում պարտիզանական ջոկատներում զենքը ձեռքին կռվող կոմկերիտականների մասին։

Զգուշանալով սխալվելուց կարելի է ենթադրել, որ զենքը ձեռքին հեղափոխությունը պաշտպանող կոմկերիտականների թի-վը 50.000—60.000-ից պակաս չեր։

Ոչ մի կոմկերիտմիությենական կազմակերպություն չկար, որ իրեն անդամներին ուղարկած չլիներ ճակատի առաջավոր դիրքերը։

Չնայած հակայական դժվարություններին, սովին և քաղա-քացիական կռիվների պատճառով տնտեսության անկմանը, այ-նուամենայնիվ բանվորա-գյուղացիական կերիտասարդության հեղափոխականությունը չեր պակասում։ Իրեև ապացույց կարող ենք մեջ բերել այն փաստը, որ կոմկերիտմիությենական կազմա-կերպությունը կռվի տարիներում անընդհատ աճում եր։ Ցերեկ I համագումարին (1918 թ. հոկտեմբեր) կար 22.100 անդամ, 1919 թվականին արդեն 100.000 եր, իսկ 1921 թվականի սկզբին— 400.000։ Կոմկերիտմիության շարքերում դանվել՝ նշանակում եր՝ ամեն րոպե պատրաստ լինել կազմակերպության կոմիտեյի կո-չով, հրացանը ձեռքին մեկնել հեղափոխությունը պաշտպանելու։ Չնայած դրան՝ կոմկերիտմիության անդամների թիվն աճում եր, և նա ավելի մասսայական կազմակերպություն եր դառնում։

1919 թ. փետրվար ամսում անց կացրված «կարմիր կերի-տասարդության շաբաթ»-ը տվեց կոմկերիտմիության մի քանի

տասնյակ հազար նոր անդամներ ինչպես քաղաքում, այնպես էլ գյուղում։

Պետք է նշել, որ քաղաքացիական կռվի վերջերում սկսվում է կոմկերիտմիության կազմակերպությունների ավելի արագ ա-ճումը և գյուղում, որը անկասկած մի կողմից բացատրվում է խորհրդային իշխանության ամուր լինելով, սպիտակ-գվարդիա-կանների դեմ տարած մի շարք հաղթություններով, ինչպես և հեղափոխության ազդեցության տակ գյուղացիական կերիտասար-դության պահանջների աճմամբ։

§ 10. ՊՐՅՈՒԸ ՀՅՈՒՍԻ ՀԱՄԱՐ

Ի՞նչ եր կատարվում գյուղում քաղաքացիական կռիվների տարիներին։ Ի՞նչպես եր այնտեղ աճում և զարգանում կոմկերիտ-միությունը։ Ի՞նչն եր նրա աշխատանքների մեջ հիմնականը։ Ահա հարցեր, որոնք առաջին հերթին պետք է հետաքրքրեն մեզ։

Կարճ ասած՝ գյուղում պրոլետարիատի և կարմիր բանակի համար հաց ճարելու պայքար եր տարվում։

Աշխատավոր գյուղացիությունը այն դաշնակիցն եր, առանց որի պրոլետարիատը չեր կարող հաղթել։ Հոկտեմբերյան հեղա-փոխության շնորհիվ, ստանալով կալվածատիրական և արքունա-կան հողերը (իսկ հողային կարիքը գյուղացիության հիմնական կարիքն եր), գյուղացիությունը սպիտակ-գվարդիականության դեմ մղված պայքարում պրոլետարիատի հետևից գնաց։

Պրոլետարիատի և գյուղացիության մեջև չեղած զինվորա-կան դաշինքի հիմքը հողն եր, քանի որ սպիտակ գվարդիայի թիկունքում կանգնած կալվածատերերը և կապիտալիստները գը-նում եյին հենց հողը հետ խլելու։

Բայց պարզ է, որ պրոլետարիատի և գյուղացիության նման բլոկին դեմ եր գյուղական կուլակությունը։ Նա վիժեցնում եր պրոլետարիատի քաղաքականությունը և աշխատում եր թի-կունքում ոգնել սպիտակ բանակին։

Քաղաքացիական կռիվների ժամանակ կերկրի դրությունն այնպես եր, որ գյուղացիության վրա բավականին դժվարու-թյուններ եյին ընկնում և չնայած գյուղացիությունը «տանքում եր», բայց այդ դժվարություններին հանդուրժում եր, քանի որ դրանք անխուսափելի եյին։

Առաջին և հիմնական դժվարությունն այն եր, որ քաղա-քը գրավում եր գյուղի ավելորդ հացը։

Հարկավոր եր կերակրել քաղաքի պրոլետարիատին և ժամանակավորապես բանակին։ Գյուղացիության և նրա կենդանի ինվենտարի համար հացահատիկը նորմայով էլին տալիս։

Ցերկրորդ դժվարությունը—քաղաքը չեր տալիս գյուղացուն այն, ինչ անհրաժեշտ եր նրա տնտեսության, նրա կարիքների համար։

Քայքայված արդյունաբերությունը չեր կարող բավարարել գյուղացիական տնտեսության պահանջները։

Ցերրորդ դժվարությունը—գյուղացիության աշխատանքային և փոխադրական զորքի պարհակները։

Պրոլետարիատը 15—20 միլիոն գյուղական տնտեսությունները միացրել եր հարձակվող Պշնամու դեմ կռվելու համար։ Ամանց սրա Կորնդային Հանրապետությունը չեր կարող հաղթել։

Քանի վոր քաղաքը վերցնում եր բոլոր ավելորդ հացը, արտեսության բարձրացնելու տրամադրություն գյուղացոց մեջ չքանում եր, գյուղական տնտեսությունը տարեց տարի ընկնում եր։

Նման պայմաններում եր ընթանում կոմկերիամիության աշխատանքը գյուղում քաղաքացիական կռիվների շրջանում։

Պարզ և, վոր այդ ժամանակաշրջանում կոմկերիամիության բջիջները գյուղում կրում էին կիսապինվորական բնույթ։ Կոմկերիական բջիջներն ոգնում էին պարենավորման որգաններին պարեն մատնադրությունները հավաքելու գործում, բռնում էին զաղալիքներին և այլն և այլն։

Ներքին դաստիարակչական աշխատանքը շատ թույլ եր և մեծ մասամբ արտահայտվում եր թատերական ներկայացումներով։

Պարզ և, վոր կոմկերիտական բջիջների աճման թափը դանդաղ եր։

Համեմատենք կոմկերիտական քաղաքն ու գյուղը քաղաքական կռիվների շրջանում՝

1918 թ. աշնանը—կոմկերիտականները ընդամենը 22.000 հ., վորից գյուղում 2.000 հոգի.

1919 թ. աշնանը կոմկերիտականները ընդամենը 100.000 հ., վորից գյուղում 10.000 հ.։

Ցեվ միայն 1920 թվականի վերջում, այսինքն՝ երբ վերջանում եր քաղաքացիական կռիվները, բայց դեռ նոր տնտեսական քաղաքականություն չկար, հարաբերությունը այս կերպ եր՝

Ընդամենը կոմկերիտականներ . . . 500.000 հոգի
Գյուղում մոտ . . . . . 100.000 »

Ցեվ չնայած այն բոլոր դժվարություններին, վորոնց մասին վերևում հիշեցինք, քաղաքացիական կռիվների ընթացքում կոմկերիտականների շարժումը գյուղում հանդիսանում և կերիտասարդական շարժման ամենափառահեղ էջերից մեկը։

Գյուղացիական տնտեսության անկման շրջանում կոմկերիտական բջիջները կռվում էին հանուն խորհրդային իշխանության գյուղում և հանդիսանում էին այնտեղ կոմմունիտական կուսակցության հենակետներից մեկը։ Կոմկերիամիության հիմնական և գլխավոր աշխատանքը, բացի ճակատին ոգնելուց, պայքարն եր հացի համար։

Բայց այդ պայքարը միայն գյուղի կոմկերիտականները չէին տանում։ Պայքարը հացի համար, գյուղի կուլակաթափության համար վողջ պրոլետարիատն եր տանում։ Այս աշխատանքներում պրոլետարիատը և կոմմունիտական կուսակցությունը հենվում էին գյուղի չքավոր խավերի վրա։ Ցեվ հասկանալի չե, վոր քաղաքացիական կռվի շրջանում գյուղի կոմկերիտականների հիմնական տարրը կազմում եր չքավոր կերիտասարդության։

Հացի համար մղված պայքարում քաղաքի կոմկերիտականները մանում էին պարենավորման և արգելափակող ջոկատները։ Քաղաքի կոմկերիամիությունը գյուղին ուժեր եր ուղարկում ոգնելու բերքի հավաքման գործում, ուղարկում եր մի շարք հնձող խմբեր, վորոնք գյուղին վորոշ ոգնություն էին ցույց տալիս։ Բացի տնտեսական նշանակությունից, այդ խմբերն ունեին նաև ագիտացիոն-պրոպագանդական մեծ նշանակություն։ Այդ խմբերի աշխատանքը ապացուցում եր գյուղին, վոր քաղաքը կարող է և վոչ միայն գրավել գյուղացու հացը, այլ և ոգնել գյուղական տնտեսությանը, յերբ նրան պակասում է բերքը հավաքելու ուժեր։

Բացի այս՝ հացի պայքարում կոմկերիամիությունը քաղքին մոտ տեղերում մշակում եր հողը և բանջարանոցները սարքում։ Այս գործում ևս կոմկերիամիությունը նախաձեռնող եր հանդիսանում։

Այսպիսով մենք կարող ենք վստահել, վոր կոմկերիամիության հիմնական և գլխավոր աշխատանքը խորհրդային իշխանության համաշխարհային կապիտալիզմի հարվածներից պաշտպանելն եր։ Կոմկերիամիության գյուղական բջիջները ևս, ինչպես և նրանց եր։

քաղաքացիները, տալիս էին ճակատի համար ուժեր և գյուղում հուսահատ պայքար էին մղում հացի համար, բոլոր ուժերով ոգնում էին բանվոր դասակարգին և կոմմունիստական կուսակցությանը։

§ 11. ԿՈՄՑԵՐԻՏՄԻԱՅԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԸՆԹԱՑՔՆԵՐՈՒՄ

Քաղաքացիական կռիվների ժամանակամիջոցում կոմյերիտմիությունը զինվորական և ապիտացիոն աշխատանքների հետ մեկտեղ տանում էր նաև յերիտասարդների շրջանում տնտեսական և կրթական աշխատանք։ Միությունը յերիտասարդության աշխատանքի խնդիրները քննում էր, առաջ տանում նույն իսկ քաղաքացիական կռիվների ամենածանր տարիներում։

Հոկտեմբերյան հեղափոխությունից յերկու որ հետո՝ Խորհրդային կառավարությունը դեկրետ էր հրատարակել, վորով 8 ժամյա բանվորական որ կիրառելու հետ միասին, առաջարկվում էր մինչև 1920 թվի հունվարի 1-ը արդյունաբերություններից հանել 20-ից պակաս տարիք ունեցող վողջ յերիտասարդությունը։ Ցենթադրվում էր դրանց բոլորին տեղավորել դպրոցներում։

Այս դեկրետը կյանքի պայմաններին և յերկրի տնտեսության կացությանը չէր համապատասխանում, և նրա կիրառումը չէր կարող այն ժամանակ դառնալ անմիջական, գործնական խընդիր։

Միության կարծիքով 14 տարեկանից մեծերին անհրաժեշտ էր թույլատրել ֆաբրիկաններում և գործարաններում արտադրական աշխատանք տանելու այն պայմանով, վոր նրանց աշխատանքը կապված լիներ ուսման հետ։

Կոմյերիտմիությունը անցավ անչափահաս բանվորների համար դպրոց-ակումբներ կառուցելու գործին։ Այդ դպրոց-ակումբները ֆաբզործուսի նախորդներն էին։ Նրանք բավականաչափ տարածվեցին։ Դպրոց-ակումբներն իրենց նպատակ դնելով բանվոր յերիտասարդության քաղաքական և կուլտուրական մակարդակը բարձրացնել, միևնույն ժամանակ հիմնականը՝ արտադրական ուսուցման խնդիրը չեյին ընդգրկում, ուստի և չեյին կարող մասսայական տարածման հույս ունենալ։

Բանվոր յերիտասարդության կրթության նկատմամբ կոմյերիտմիությունը ամուր գիծ բռնեց և շարունակ նշում էր Լուսժողկոմատին, վոր հարկավոր է գլխավոր ուշադրությունը դարձնել բանվոր յերիտասարդության դպրոցների վրա։ Դժվար էր ժեկից գտնել յերիտասարդական աշխատանքի վերակազմության կոնկրետ ձևը, բայց հարցի տեսականը հենց այն ժամանակն էլ մանրամասն մշակված էր, որինակ՝ ՌԿՅԵՄ համառուսական II համագումարի ընդունած՝ բանվոր յերիտասարդության սոցիալիստական դաստիարակության մասին թեզիսներում։

Բանվոր յերիտասարդության աշխատանքի պաշտպանության համար կոմյերիտմիությունը հսկայական աշխատանք տարավ։

Որենսդրությունը սահմանում էր յերիտասարդների համար 4 և 6 ժամյա բանվորական որ, արձակուրդներ, բժշկական քննություններ և այլն։

Կոմյերիտմիությունը իրեն նպատակ էր դրել՝ արագացնել խորհրդային լայն որենսդրության կենսագործումը։ Աշխատանքի տեսուչներին ասիստենտներ (ոգնականներ) էին տրված, վորոնք և աշխատանքի կպան։ Ասիստենտներին տալիս էր կոմյերիտմիությունը, վորոշ տեղերում թեկնածուներին անց էր կացնում բանվոր յերիտասարդության անկուսակցական կոնֆերանսների միջոցով, իսկ այլ տեղերում՝ արհեստակցական կազմակերպությունների միջոցով։

Կոմյերիտմիության իրավասնտեսական լայն տարածված աշխատանքը պետական աշխատանքները ներգրավեց բանվոր յերիտասարդության լայն մասսաները։ Առանձնապես լայն տարածում ստացավ պրակտիկանտների ինստիտուտը։ Դա մի քիչ նման էր այժմյան առաջքաշվածներին։ Կոմյերիտմիությունը տասնյակ և հարյուրավոր պրակտիկանտներ տվեց պետական նազան որգաններին, սակայն գլխավորապես այն որգաններին, վորոնց աշխատանքը սերտորեն կապված էր յերիտասարդության կարիքների հետ։ Այս պրակտիկանտներից առաջ յեկավ խորհրդային և արհեստակցական աշխատանքների գնացած աշխատավորների մի կադր։

Յեվ այսպես, քաղաքացիական կռիվների և քայքայման տարիներին յերիտասարդ կոմյերիտական կազմակերպությունը իրեն մեջ ուժեր էր գտնում վոչ միայն պայքարելու ճակատներում, զոհվելու ընդհատակյա աշխատանքներում, կազմակերպելու գյուղացի յերիտասարդությանը, այլ և տանելու տնտեսական և պետական աշխատանք։

Քաղաքացիական կռիվների տարիներին պետական և արհեստակցական որգաններում կոմյերիտմիության աշխատանքը տվեց մի շարք գործնական արդյունքներ։

Այդ արդյունքները նախ և առաջ կայանում են նրանում, որ կոմկերիտմիությունը կարողացավ այդ աշխատանքների ընթացքում պատրաստել իր աշխատավորների մի կադր և դրանով հենց ապահովից խաղաղ պայմաններում անհետևական և կրթական ասպարեզներում իր գործնեությունը ավելի խորը և ավելի լայն ծավալելու հնարավորությունը։

§ 12. ԿՈՄՏԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՑԵՎ ՑԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՈՒՌՍԻՎՆԵՐՈՒՄ

Քաղաքացիական կռիվների շրջանը մեր յերկրում—դասակարգային պայքարի սրման շրջանն է։ Յերիտասարդությունը պարզ բան եր ընտրելու՝ լինել կամ կարմիրների և կամ սպիտակների հետ։ Յեվ յերկրի աճող սերունդը կարուկ բաժանվից յերկու բանակի։ Բանվոր և գյուղացի յերիտասարդությունը և ինտելիգենտ յերիտասարդության լավագույն մասը կարմիրների հետ եր։

Բուրժուազիայի և կալվածատերերի վորդինները—սպիտակների հետ։ Պետք չե թագցնել այն փաստը, վոր սպիտակ գվարդիան իր շարքերը գրավից ինտելիգենտ յերիտասարդությունից։ Գյուղի կուլակ յերիտասարդությունը կռվում եր կարմիրների դեմ։

Քիչ չեն յեղել դեպքեր, վոր դերքերի հակառակ կողմերում կանգնած եին ազգականները և պատահում եին իրար ինչպես վոխերիմ թշնամիներ։

Քաղաքացիական կռվի շրջանում կոմկերիտմիությունը միավորում եր այն ամենը, ինչ ավելի կայուն եր։

Քաղաքում քաղաքացիական կռիվների տարինեերին բանվոր դասակարգի ուժերի փոշիացում եր կատարվում։ Քաղաքի կիսադատարկ դրությունը, արդյունաբերության թուլացումն, սախտում եին բանվորներին գյուղ գնալ, վորտեղ կերակրվելն ավելի հեշտ եր։ Սրան զուգընթաց կատարվում եր նաև բանվոր յերիտասարդության ցրման (փոշիացման) պրոցեսը։

Առաջին հերթին հեռանում եին գյուղի հետ կապ ունեցող բանվորական կադրերը։ Քաղաքում մնում եր այն յերիտասարդությունը, վորը գնալու տեղ չուներ։ Այս այն կադրերն եին, վորոնք ամբողջապես կապված եին գործարանի հետ։ Գործարանների հետ միաձուլված բանվոր յերիտասարդության հենց այս

ամենավճռական կադրերն եին, վոր կազմում եին կոմյերիտմիության հենարանը։ Քաղաքում մնացած բանվոր յերիտասարդության հակայական մեծամասնությունը պրոլետարիատի պայքարին, կոմմունիստական կուսակցության և կոմյերիտմիության կողմն եր։ Բանվոր յերիտասարդությանը գոնե մասամբ իրենց կողմը գրավելու մենշևիկների բոլոր փորձերը վոչ մի հաջողություն չունեցան։ Բանվոր յերիտասարդությունը մինչև վերջը գնում եր կոմյերիտմիության հետևից։ Կոմյերիտմիությունը բանվոր յերիտասարդության կազմակերպողը և նրա առաջնորդն եր։ Կոմյերիտմիության ընդհանուր դրությունը վորոշվում եր յերկրի ընդհանուր դրությամբ, պրոլետարիատի կուսակցության խնդիրներով և բանվոր ու գյուղացի յերիտասարդության պահանջներով։

Բոլոր խնդիրների կենտրոնն եր—խթել սպիտակ-գվարդիականներին, ապահովել Խորհրդային հանրապետության գոյությունը։ Այս կենտրոնական խնդիրն ընթարկվում եր ամեն ինչ։ Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր կոմյերիտականների քաղաքական մակարդակը բարձրացնելու վրա մեծ ուշադրություն դարձնելու հնարավորություն չկար։ Այդ բանի համար վոչ ուժեր կային և վոչ էլ միջոցներ։ Առայժմ կատարվում եր նրանց հեղափոխական տոկունության կոփումն ու ղեկավարը։ Բայց և այնպես չի կարելի ասել թե քաղաքացիական կռիվների շրջանում կոմյերիտմիությունը դասակարակչական աշխատանքի խնդիրը բոլորովին չեր դնում։ Կոմյերիտմիությանական ակումբների աշխատանքն աճում և զարգանում եր։ Ամբակային աշխատանքը կարգի յեր ընկնում, բայց այս բոլորը ռազմական վոգով եր, այդ մենքը պետակում եին, վոր այդ կոմյերիտականների համար դլխավորը չեր։ Քաղաքացիական կռիվների ընթացքում կոմյերիտմիության կապը բանվոր յերիտասարդության մասսաների հետ գլխավորապես անց եր կացվում անկուսակցական բանվոր յերիտասարդության պարբերական կոնֆերանսների միջոցով, վորտեղ զրվում եին յերկրի, կուսակցության և կոմյերիտմիության ընթացիկ կյանքի բոլոր հիմնական խնդիրները։

Քաղաքացիական կռիվների ամբողջ շրջանում կոմյերիտմիությունը և նրա ղեկավարած բանվոր յերիտասարդությունը Հոկտեմբերյան հեղափոխության հավատարիմ պահակն եին և կուսակցության ոգնականը նրա բոլոր աշխատանքներում։

Կուսակցության լայն մասսաները, վորոնք սկզբում թերագնահատեցին կոմյերիտմիության շարժումը, հետագայում, վոր նրանք հանձինս կոմյերիտմիության մի նշանակալի պահեստ ունեն, վորը դեպի ինքը ամենաուշադիր վերաբերմունք և պահանջում։

ՉՈՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ԴԵՊԻ ՀԱՁՏՈՒԹՅՈՒՆ: ՆԵՊԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԸ

§ 13. ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ԴԵՊԻ ՀՂԱՇՈՒԹՅՈՒՆ

Սպիտակ-գվարդիականների ջախջախումը, խորհրդային իշխանության ամրապնդումը,—այս ամենը ազդում էր կոմկերիմիության աճմանը։ Գյուղում կոմկերիմիությունը զգալորեն աճեց։ Կոմկերիմիության համառուսական IV համագումարին (1921 թ. հոկտեմբերի 20) Միությունը իր շարքերում հաշվում էր 415.000 անդամ։ Կոմկերիմիությանը հաջողվեց իր շարքերում համախմբել բանվոր և գյուղացի յերիտասարդության կեսից մի քանակ։

Քաղաքացիական կռիվների վերջավորությունը Միության առաջ դրեց նոր խնդիրներ՝ անհրաժեշտ էր նշել աշխատանքի առանցքը և, յելնելով այդտեղից, կառուցել կոմկերիմիության կազմակերպության վողջ աշխատանքը։ Յեթե առաջ՝ քաղաքացիական կռիվների ընթացքում կոմկերիմիության առաջ կանգնած էր պարզ և հասարակ մի խնդիր—խփել սպիտակ-գվարդիականներին, այժմ դրությունը բարդացած էր։

Յերկրի գյուղացիությունը դադար էր պահանջում։ Սուր քաղաքացիական կռվի ժամանակ կարևոր և անհրաժեշտ ռազմական կոմունիզմը ձգձգվում էր և սպառվում։ Պրոլետարիատի անտեսական քաղաքականության մեջ ուժեղ շրջադարձ էր անհրաժեշտ։ Այս շրջադարձի անհրաժեշտությունը զգում էր նաև յերիտասարդությունը։

Արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը շարունակում էին ընկնել, պրոլետարիատի, ինչպես և բանվոր յերիտասարդության փոշիացումը շարունակվում էր։

Բանվոր յերիտասարդությունը Միության առաջ դնում էր այսպիսի հարցեր՝ ինչպես անել, որ ճիշտ արտադրողականության մեջ, ինչպես ծավալել այդ արտադրողականությունը, ինչպես բարելավել իրենց տնտեսական դրությունը և ինչպես կազմակերպել աշխատանքը և ուսումը։

Կորիզը կազմող գյուղացի յերիտասարդությունը պահանջում էր աշխատանքի դեկավարություն և ավելի մեծ ոգնություն քաղաքի կողմից։

Մինչդեռ կոմկերիմիության ակտիվ աշխատավորների կորիզը վոչ միայն չէր մեծանում, այլ նույնիսկ փոքրանում էր։ Խորհրդային և կուսակցական աշխատանքի գնացողների թիվը ավելացել էր։ Մինչև այդ գլխավորապես յերիտասարդության կազրերից կազմված կոմկերիմիության ակտիվը, այժմ իր մեջ առնում էր նաև ինտելլիգենտ յերիտասարդությունից յելած բուրժուական, վորով ազդվում էր ակտիվի կուսակցականության տոկունությունը։ Ակտիվի շարքերում սկսեցին ապտանուշներ և յերեույթներ նկատվել։ Կ կ ներսում զանազան խնդիրների շուրջը տարաձայնություն բռնկվեցին, տեղի յեր ունենում ֆրակցիոն պայքար։ Ֆրակցիոն խմբավորումներն սկսեցին թափանցել կազմակերպության ակտիվի մեջ։

Այսպիսի պայմաններում գումարվեց կոմկերիմիության համառուսական III համագումարը։

Նրա աշխատանքներին խիստ խանգարում էր կոմկերիմիության ակտիվի ներսում յեղած ֆրակցիոն պայքարը, վորը վերջի վերջո պայմանավորվում էր Միության ընդհանուր դրության։ Այդ ժամանակամիջոցում տեղի ունեցած տարաձայնությունների մասին կխոսենք հետագայում, իսկ այժմ զբաղվենք ընդհանուր հարցերով։

Չենց այն պատճառով, վոր III համագումարը գումարվեց նոր տնտեսական քաղաքականության—նեպ-ին անցնելու նախօրյակին, համագումարն ի վիճակի չէր շարժման առաջ կանգնած խնդիրներին վերջնական լուծում տալու։ Յեվ իսկապես, համագումարը կայացավ 1920 թ. հոկտեմբեր ամսում, իսկ 1921 թ. մարտ ամսում կոմունիստական կուսակցության X համագումարում ընդունվեց նոր տնտեսական քաղաքականությունը։

Նոր տնտեսական քաղաքականությունը պրոլետարիատին և գյուղացիությանը, հետևաբար և կոմկերիմիության առաջ մի շարք նոր խնդիրներ դրեց, վորը և պետք է լուծեր IV համա-

գումարը։ Բայց, չնայած դրան, յերիտասարդական պրոլետարական շարժման պատմության մեջ III համագումարի նշանակությունը հսկայական եր։

Շարժման մեջ նրա ունեցած դերը ընորոշվում է նրանով, որ համագումարը՝

ա) հատուցեց կոմյերիմիությունի ստանձը կոմյերիմիության շնորհիվ սահմանված Յերիտասարդության Կոմմունիստական Ինտերնացիոնալի մեջ.

բ) վորոշեց կոմյերիմիության վողջ աշխատանքի հանրագումարը և Միության ծրագիրը ավեց.

գ) ծրագրեց կոմմունիստական դաստիարակության համար տանելիք աշխատանքը, ինչպես III համագումարում Լենինն եր պահանջել յերիտասարդական միությունների խնդիրների մասին։

դ) ամբողջ լայնքով դրեց բանվոր յերիտասարդության արտադրական աշխատանքի և կրթության ասպարեզներում կոմյերիմիության գործնական աշխատանքների հարցը.

յե) հնարավորություն ավեց կոմմունիստական. կուսակցության ավելի մոտ ծանոթանալու յերիտասարդական շարժման ղեկավարող ակտիվի հետ.

զ) առաջին անգամ դրեց՝ յերեխաների մեջ աշխատանք տանելու խնդիրը։

Ինչ վերաբերում է կոմյերիմիության Յերիտասարդության Կոմմունիստական Ինտերնացիոնալի մեջ մտնելու խնդրին, այդ հարցը փաստորեն լուծվում եր կոմյերիմիության ձևակերպվելուց դեռ շատ առաջ։ Բանվոր յերիտասարդության միությունները ամենուրեք III Ինտերնացիոնալ եյին կոչվում. հենց միայն այս ապացուցում է, վոր բանվոր յերիտասարդության շարժումը իրեն համարում է միջազգայինի մի մասը։

Բայց դեռ վոչ մի անգամ համառուսական համագումարը ղեկուցում չեր դրել ԿԻՄ-ի կազմակերպման մասին, Արևմուտքի կոմմունիստական յերիտասարդական շարժման փաստացի դրության մասին, չնայած վոր կոմյերիտականները արդեն կարող եյին վոչ միայն ճառեր լսել արևմտյան բանվորական յերիտասարդական շարժման մասին, այլ և ունենալ, և «շոշափել» կենդանի պատգամավորներին, վորոնք գալիս եյին համաշխարհային հեղափոխության կենտրոն—Կարմիր Մոսկվան։

1920 թ. ամառը կայացավ Կոմմունիստական Ինտերնացիոնալի II կոնգրեսը, վորին մասնակցում եյին Արևմուտքի կոմյերիտական մի շարք կազմակերպությունների ներկայացուցիչները և տեղի ունեցան ԿԻՄ-ի Գործկոմի նիստերը։ Համագումարը լսեց ընկ. Շացկինի զեկուցումը՝ միջազգային յերիտասարդական շարժման և ԿԻՄ-ի աշխատանքների մասին։

Ընդունված բանաձևում համագումարը հայտարարում է, վոր կոմյերիմիությունն է և կլինի Յերիտասարդական Կոմմունիստական Ինտերնացիոնալի առաջավոր ջոկատը և միջազգային յերիտասարդական շարժմանը ցույց կտա ամեն տեսակի աջակցություն։

Մինչ այդ՝ կոմյերիմիությունը նույնիսկ իր առաջյա աշխատանքների ընթացքում պիտի եր, վոր նա միջազգային յերիտասարդական կոմմունիստական շարժման մի ժամանակն է. կարևոր անցկացնելով միջազգային յերիտասարդական որը մեր յերկրում, կոմյերիմիությունը տարեց տարի ավելի ուժեղ եր ցուցադրում բանվոր և գյուղացի յերիտասարդության ուժերը, վորի գլուխ կոմյերիմիությունն է կանգնած։ Կանոնավորվում եր կապը Արևմուտքի կազմակերպությունների հետ, կոմյերիտմիության օրգիլերում և ամսաթերթում Արևմուտքի յերիտասարդական շարժման կյանքը բավական լրիվ եր լուսաբանվում։ Ձգտում և մասնակցել այն փաստերը, վոր Արևմուտքի կազմակերպությունները առաջ յեկան և զարգացան սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների զավաճանության շրջանում և հանդիսանում եյին պրոլետարիատի մեջ յեղած ամեն լավագույն և հեղափոխական բանի համախմբումը։ Նրանք զգալի չափով կատարում եյին կոմմունիստական կուսակցությունների դերը։ Իսկ կոմմունիստական կուսակցությունների կազմակերպման օրից պրոլետարական յերիտասարդության կազմակերպությունների առաջ իրենք դրել ծագից՝ լինել մասսայական կազմակերպություն—կոմմունիզմի դպրոց։ Կոմյերիմիության ներկայացուցիչները ԿԻՄ-ում միշտ աշխատում եյին արագացնել կոմյերիմիենական կազմակերպությունների դեպի մասսայական աշխատանքների ուղին անցնելու պրոցեսը և այդ անում եյին նրանք միանգամայն իրավացի։ Համագումարը լիովին և ամբողջապես հավանություն տվավ Յերիտասարդության կոմինտերնում միությենական ներկայացուցիչների բռնած այդ գծին։

Համագումարի ընդունած՝ Միության ծրագիրը հանդիսացավ նրա առաջին ծրագիրը՝ համառուսական I համագումարի ընդունած ծրագրային թեզիսները։

Ընդունած ծրագրում հաշվի չեր առնվում կոմչերխոմիութ-
թյան աշխատանքի փորձը բոլոր բնագավառներում: Հետագա ամ-
բողջ ծրագրային բնույթ կրող աշխատանքը առաջ եր գալիս,
անշուշտ, համագումարի ընդունած ծրագրից:

Հիմնական հարցին, թե՝ ինչ բան և բանվոր յերիտասարդու-
թյան կազմակերպությունը, Միության ծրագիրը պատասխանում
եր այսպես.

«5. Յերիտասարդության ինքնագործունեությունը հանդի-
սանում և նրա հեղափոխական դաստիարակության հիմքը: Աշ-
խատավոր յերիտասարդության ինքնուրույն կազմակերպչական
գործունեության, լայն նախաձեռնության և կոմմունիստական
շինարարության բարդ խնդիրների լուծման վարժեցնելու ան-
հրաժեշտությունը, նույնպես և հասակի առանձնահատկություն-
ները և աշխատանքի ու դաստիարակության ասպարիզում առան-
ձին խնդիրների առկայությունը բնորոշում են յերիտասարդա-
կան կազմակերպությունների գոյությունը:

6. Յերիտասարդական միակ և մասսայական կազմակերպու-
թյունը ՌՍՖՍՀ-ում հանդիսանում է՝ Ռուսաստանի Յերիտա-
սարդության Կոմմունիստական Միությունը, վորը համախմբում
և մի յեղբայրական ընտանիքի մեջ բոլոր ազգերի յերիտասարդ-
ներին: Ռուսաստանի Յերիտասարդության Կոմմունիստակ. Միու-
թյունը միաձուլում և իր շրջի տակ յերիտասարդ պրոլետար-
ների և գյուղացիության լայն մասսաները, իր շարքերն ընդու-
նելով լավագույն, կոմմունիզմին ավելի նվիրված ինտելլիգենտ
յերիտասարդության ակտիվ մասը:

7. ՌԿՅԵՄ հիմնական խնդիրը հանդիսանում և աշխատա-
վոր յերիտասարդության կոմմունիստական դաստիարակությունը,
վորտեղ թեորետիկ լուսավորությունը սերտորեն կապված և աշ-
խատավոր մասսաների կյանքին, աշխատանքին, պայքարին և
շինարարությանը ակտիվ մասնակցելու հետ: Սոցիալիստական
տնտեսության համար յեռանդուն և ունակ կառուցողներ, Խոր-
հրդային Հանրապետության պաշտպաններ, և նոր հասարակու-
թյան կազմակերպիչներ նախապատրաստող յերիտասարդության
կոմմունիստական դաստիարակության խնդրին պետք է յենթարկ-
վի ՌԿՅԵՄ-ի վորչ գործնական աշխատանքը բոլոր ասպարեզ-
ներում:

8. Յերիտասարդական շարժումը հանդիսանում է՝ ընդհա-
նուր պրոլետարական կոմմունիստական շարժման մի մասը, վորը

իրեն նպատակ է դնում հին կապիտալիստական աշխարհի վո-
չընչացումը և սոցիալիստական հասարակության կազմակերպումը:

Պրոլետարական հեղափոխության և Խորհրդային Հանրա-
պետության առաջնորդն ու ղեկավարը հանդիսանում է Ռուսաս-
տանի Կոմմունիստական Կուսակցությունը (բոլշևիկների): Ռու-
սաստանի Կոմմունիստական Յերիտասարդական Միությունը ըն-
դունում է ՌԿԿ ծրագիրն ու տակտիկան, և քննելով Խորհրդա-
յին Հանրապետության կյանքի ընդհանուր խնդիրները, յեն-
թարկվում է նրա քաղաքական դիրեկտիվներին և աշխատելով
նրա հսկողության տակ՝ հանդիսանում է ավտոնոմ կազմակեր-
պություն: ՌԿՅԵՄ ԿԿ անմիջական յենթարկվում է ՌԿԿԿ:

ՌԿՅԵՄ ունի ներքևից մինչև վերև կենտրոնացած կազմա-
կերպություն (Միության իսկ կողմից ընտրված ղեկավարող որ-
գանները), ինքնուրույն կերպով վորոշում և իր ապիտացիոն,
պրոպագանդիստական և կազմակերպչական աշխատանքների մե-
թոդները և իր մասնակցության ձևերը յերիտասարդության աշ-
խատանքի և դաստիարակության վերաբերյալ սոցիալիստական
շինարարության ասպարեզում:

10. Խորհրդային Հանրապետության կյանքի համար հսկա-
յական նշանակություն ունեցող յերիտասարդության աշխատան-
քի և կրթության խնդիրների լուծումը, հանդիսանում և վողջ
բանվոր դասակարգի և նրա պրոլետարական պետության գործը:
Խորհրդային իշխանության օրենսդրական միջոցառումները
աշխատավոր յերիտասարդության դրության բարելավման համար,
անց են կացվում պետության տեխնիկական ապպարատի միջո-
ցով: ՌԿՅԵՄ մասնակցում է յերիտասարդությանը վերաբերող
սկզբունքային խնդիրների լուծմանը, առաջարկում և նոր միջոց-
առումներ այս ասպարիզում, հետևում է հրատարակված վորո-
շումների կիրառմանը կյանքում, իր ներկայացուցիչներին ուղար-
կում է պետական որգաններն և ոգնում է նրանց, իր կազմա-
կերպչական ապպարատի ուժերով:

11. Բոլոր յերկրների յերիտասարդության կոմմունիստա-
կան կազմակերպությունները մտնում են Կոմմունիստական Յե-
րիտասարդական Ինտերնացիոնալի մեջ—վորը հանդիսանում և
պրոլետարիատի պայքարը ղեկավարող մարտական շտաբը և III
Կոմմունիստական Ինտերնացիոնալի մի մասնիկը: ՌԿՅԵՄ—պրո-
լետարական դիկտատուրայի առավելագույն բարենպաստ պայ-
մաններում, ակտիվ մասնակցում է ՌԿԿ աշխատանքներին և

պայքարին և ամեն կերպ ոգնում է Արևմուտքի և Արևելքի ճըշ-
ված յեղբայրական կազմակերպություններին»:

Ինչպես տեսնում ենք այս ծրագրային կանոններով հաս-
տատվում էր կուսակցության VIII համագումարի կողմից տրված
հրահանգը միայն (տես այս գրքի 3-րդ գլուխը)՝ կուսակցության
Միության փոխհարաբերությունների մասին: Ընդունված ծրա-
գրում առանձնապես արժեք ունի գործնական մասը, վորտեղ
կոմյերիմիության աշխատանքի վողջ բովանդակությունը տե-
ղավորվում է հատուկ հատվածներում, և այդպիսով Միության
ծրագիրը ձեռնարկ էր դառնում վոչ միայն կազմակերպության
կոմիտեների, այլ և յուրաքանչյուր անդամի համար:

Ընկ. Լենինի զեկուցումը յերիտասարդական միությունների
խնդիրների մասին, կանխորոշեց ամբող սերնդի կոմունիստական
դաստիարակման աշխատանքը յերիտասարդական պրոլետարական
շարժման գոյության վողջ ընթացքում: Լենինի ճառը մինչ այ-
սինն կոմյերիմիության աշխատանքների հիմքը:

Բայց պետք է նշել, վոր համագումարում ներկա յեղող կոմ-
յերիտական ակտիվը չհամակցավ Լենինի ճառը: Լենինը նշեց յե-
րիտասարդական պրոլետարական շարժման զարգացման ուղինե-
րը, բացատրեց՝ ինչպես և ինչ պետք է սովորի յերիտասարդու-
թյունը: Բայց քաղաքացիական կռիվների շրջանից նոր դուրս
յեկող և քաղաքական ցածր մակարդակ ունեցող կոմյերիմիու-
թյան ակտիվը անպատրաստ էր հասկանալու Լենինի յելույթի
ամբողջ նշանակությունը: Հարկավոր էր մոտ յերկու տարի, վոր-
պեսզի Լենինյան ճառը կոմյերիմիության վողջ աշխատանքի
հիմքը դառնա:

Ի զարգացումն կոմյերիմիության համառուսական II հա-
մագումարի վորոշումների բանվոր յերիտասարդության աշխա-
տանքի և կրթության բնագավառում գործնական խնդիրների
դրույթն զգալիորեն տեսական եր, բայց, այնուամենայնիվ, նա
մեծ դեր խաղաց, բանի վոր կոմյերիմիությունը համագումա-
րից հետո, վորոշումների հիման վրա, ագիտացիոն-պրոպագան-
դիստական մեծ աշխատանք եր տարել այս խնդրի շուրջը բանվոր
յերիտասարդության մասսաներում:

Այսպիսով բանվոր յերիտասարդության սոցիալիստական
դաստիարակության մասին կոմյերիմիության III համագումա-
րում դրված խնդիրը մեծ նշանակություն ունեցավ: Նա, վերջա-
պես, հարց եր դնում, վոր գեռատի-բանվորների դպրոց-ակումբ-

ները պետք է կապել յերիտասարդության արտադրողական ու-
սուցման հետ, վոր անհրաժեշտ է ստեղծել մեկ միասնական մար-
մին բանվոր յերիտասարդության կրթության գործը ղեկավա-
րելու համար:

Կոմմունիստական կուսակցությունը հանձինս կենտրոնա-
կան կոմիտեյի սերտորեն մոտեցավ III համագումարի՝ կոմյերի-
միության ղեկավարող ակտիվին: Անհրաժեշտ եր ամենալուրջ
ուշադրություն դարձնել կոմյերիմիության մեջ կուսակցական
կորիզն ուժեղացնելու և կոմյերիմիության ակտիվի կոմմունիս-
տական դաստիարակության վրա: Ակտիվի մի քանի ֆրակցիոն
պայքարը կոմյերիմիության կենտրոնական կոմիտեյի դեմ շատ
հետու գնաց:

Կուսակցության կենտրոնական կոմիտեն համագումարից
առաջ ստիպված եր կոմյերիմիության կկ կազմից մի շարք ա-
ռաջ տարված եր կոմյերիմիության կկ կազմից մի շարք աշ-
խատավորների հանել: Շնորհիվ դասավորված պայմանների, այդ
ընկերները բավականաչափ ազդեցություն ունեին մի շարք տե-
ղական կազմակերպությունների վրա: Այս կազմակերպություն-
ներն անբավական եին ընկերներին հետացվելուց:

Յեվ վորովհետև վողջ շարժումը գտնվում եր բեկման պայ-
մաններում, փնտռում են աշխատանքի նոր ուղիներ և քանի վոր
կոմյերիմիության կենտրոնակ. կոմիտեյի աշխատանքը մի շարք
բնագավառներում իսկապես վոր թույլ եր—այս բոլորը միասին
վերցրած համագումարի աշխատանքներում հիմնադրին մթնո-
լորտ եր ստեղծում:

Իրեն վորոշումները պարզաբանելու համար, կուսակցության
կկ նախքան համագումարի բացումը հրավիրեց կոմմունիստական
ֆրակցիա, վորը կազմում եր համագումարի մեծամասնությունը:
Հենց այստեղ, ընկ. Բուխարինի զեկուցումից հետո՝ կոմյե-
րիմիության կենտրոնական կոմիտեյի ոպպոզիցիան ի հայտ
բերեց շարժման բոլոր հիմնադրին յերևույթները և անբավա-
կանությունը կոմյերիմիության կկ աշխատանքների նկատմամբ,
իսկ մյուս կողմից ցույց ավեց, թե ինչքան հետու յե գնացել նա
կուսակցական գծից:

Իրականում, նախքան համագումարը, բանը այնտեղ հասավ,
վոր տեղական կազմակերպությունները ֆրակցիոն նամակներ
եին տարածում, Հանրապետության զանազան մարզերում նշա-
նակվում եին ոպպոզիցիայի լիազորներ:

Իսկ ոպոզիցիան կենտրոնական կոմիտեի դեմ նախքան համագումարը բավականաչափ պատգամավորներ համախմբեց։

Այստեղ կային՝ ա) «դուշնացիները», որոնք շատ քիչ ձեռք վակերպված սկզբունքային տարաձայնություններ ունեին կկ հետ,

բ) ուկրաինական դասակարգայինները,

գ) բոլոր նրանք, որոնք անբավական եին կենտրոնական կոմիտեի գործնական աշխատանքներից։

Ցեվ կարևոր եր համագումարի ֆրակցիայում սկզբունքային խնդիրները զատել կենտրոնական կոմիտեի գործնական աշխատանքների բացերից։ Կուսակցության կենտրոնական կոմիտեի պարզաբանման աշխատանքը կատարվել եր հենց համագումարի ֆրակցիայում։

Այս բանը առողջ հոսանք մտցրեց համագումարի աշխատանքների մեջ և համագումարն ընթացավ կուսակցական դծով, սկզբունքային հարցերում դատապարտելով կոմյերիտմիության կենտրոնական կոմիտեի ոպոզիցիան։

Համառուսական III համագումարում առաջին անգամ դրվեց յերեխաների մեջ աշխատանք տանելու խնդիրը։ Յերեխաների շարժում առաջ բերելու խնդիրը դեռ վաղ եր, բայց աշխատանքի անհրաժեշտությունը և հատկապես կոմյերիտմիության ուժերով՝ համագումարն ընդունեց։

Բացի քաղաքական նշանակություն ունեցող նման հարցերին լուծում տալուց՝ համագումարը լուծեց մի շարք կազմակերպչական-գործնական բնույթ ունեցող հարցեր, ուր առաջին հերթին պետք և դասել կանոնադրության ընդունելը, աշխատանքը գյուղում, ֆիզկուլտուրան և այլն։

Համագումարը վերջացավ, բայց կոմյերիտմիության աշխատանքների մեջ սկսվեցին ամենադժվարին ժամանակները։

Արդեն մինչև III համագումարը պարզվեց, որ, նախ՝ Միությունը ուռել և, մեծացել և, իսկ ակտիվը փոքրացել. յերկրորդ՝ որ Միության մեջ սպրդել էն մեծ քանակությամբ վոչ պրոլետարական տարրերը, մի բան, որ ակտիվին էլ և վերաբերում. յերրորդ՝ Միության մեջ չկա, կամ համարյա թե չկա ներքին դասակարգային աշխատանք և անդամների ինքնագործունեություն։

Սրան պետք և ավելացնել ակտիվի թուլությունը, ակտիվի մասաներից կտրվելը, իսկ կոմյերիտականների—բանվոր յերիտասարդությունից կտրվելը և նմանապես նոր տնտեսական քաղաքականության ազդեցությունը յերիտասարդության վրա (սկզբնա-

կան շրջանում ազդեցությունը բացասական եր),—սրանք եին այն հակասական դժվարությունները Միության աշխատանքներում մինչև IV համագումարը, որը կայացավ 1921 թ. սեպտեմբեր ամսին։

1921 թ. փետրվար-մարտ ամիսներին անցկացրված Միության անդամների վերահաշվառումն անդամների թիվը կիսով չափ կրճատեց—500.000-ի փոխարեն (թիվը մի քիչ չափազանցրած ե) մնաց 250.000 հոգի։

Ցեվ չնայած վոր կոմյերիտմիության կենտրոնական կոմիտեն III և IV համագումարների միջև յեղած ժամանակամիջոցում լավ եր աշխատում, այնուամենայնիվ Միությունը թուլանում եր։ Բանը, իհարկե, լավ կամ վատ շրջաբերականներում չեր, այլ նրանում, վոր կոմյերիտմիության աշխատանքների բովանդակությունը չեր համապատասխանում բանվոր և գյուղացի յերիտասարդության կարիքներին և պահանջներին։

Միության անկման գլխավոր պատճառն այն տնտեսական քաղաքականությունն եր, վորն ապրում եր յերկիրը։ Նոր տնտեսական քաղաքականությունն սկզբում բացասաբար ազդեց կոմյերիտմիության աշխատանքների վրա։

Ինչում արտահայտվեց նոր տնտեսական քաղաքականության բացասական ազդեցությունը կոմյերիտմիության վրա։

Առաջինը՝ նրանում, վոր նեպը սուր կերպով դրեց յերիտասարդության աշխատանքի խնդիրը։ Բանվոր յերիտասարդության մեծ մասը, իբրև բանվոր դասակարգի ամենից ավելի պակաս տրնթյունը, իբրև բանվոր դասակարգի ամենից ավելի պակաս տրնթյունը, իբրև բանվոր դասակարգի մեծ մասը, սկսվեց դուրս մղվել արտադրության արժեք ունեցող մաս, սկսվեց դուրս մղվել արտադրությունից։

Նոր տնտեսական քաղաքականության կիրառման ժամանակ արդյունաբերությունն ինքնարդարացման ձևի անցնելով՝ կանգնած եր բանվոր յերիտասարդության կրճատման խնդրի առաջ։

Ցերկրորդ՝ նրանում, վոր յերիտասարդությունը չեր կարող արագ կերպով ըմբռնել նոր հասարակության կազմակերպման գործում նեպի ամբողջ նշանակությունը։ Յերիտասարդությունը կորցնում եր հավատը դեպի հեղափոխությունը, նրա մեջ յերևան յեկան տատանումներ, վոր բղխում եր նեպի նշանակությունը չհասկանալուց։

Յերրորդ՝ նրանում, վոր մասնավոր ապրանքաշրջանառության ազատ արձակվելը գյուղացի յերիտասարդությանը դնում

եր գյուղի սեփականատիրական շահերի ճնշման տակ։ Գյուղացի յերիտասարդությունն ավելի շատ եր ընկնում հասակավոր գյուղացիության և ընտանիքի ազդեցության տակ։

Չորրորդ՝ նրանում, վոր յերիտասարդ բանվոր կամ գյուղացի կոմյերիտականի համար ավելի հեշտ եր շեղվել և խեղդվել «նեպի փրփուրներում», քանի վոր նրա դասակարգային գիտակցությունն ավելի թույլ եր ամրապնդված, քան կապիտալիստական ճնշումը կրած հասակավոր բանվորինը։

Այս բոլորը կոմյերիտմիության IV համագումարի առաջ դրեց հիմնական պրոբլեմա—պայքար հանուն յերիտասարդ և առաջին հերթին բանվոր յերիտասարդության, իբրև կոմյերիտմիության հիմնական կադրի։

Հարցի էությունն այն եր, վոր բանվոր յերիտասարդության հիմնական մասսան պահվեր արտադրության մեջ, բանվոր յերիտասարդության սովորեցնելու և նրա վորակը բարձրացնելու համար ակվեր և տարածվեր մեծ սիստեմատիկ աշխատանք, նոր տնտեսական քաղաքականության լինչ լինելու մասին արվեր ճիշտ պարզաբանում և բանվոր յերիտասարդությունը դարձվեր կոմյերիտմիության հիմնական կորիզը. այս բոլորը նշանակում եր առաջին հերթին ամրապնդել կազմակերպության աշխատանքը։

Գյուղի նկատմամբ կանգնած եր՝ անկումից ազատված բջիջների ցանցի պահպանման և ամրապնդման խնդիրը, վորպեսզի այդ բջիջները հետագա աշխատանքների ընթացքում դարձվեյին գյուղացի յերիտասարդության վրա ազդեցություն ունենալու հենակետ և նոր պայմաններում աշխատանքի կոնկրետ ձևեր առաջ բերվեյին*)։

Ինչ վերաբերում է կոմյերիտմիության ներսում տարվելիք աշխատանքներին, այստեղ հիմնական հարցը՝ աշխատանքի աշխուժացումն եր, անդամների ինքնագործունեության զարգացումը, նրանց ներգրավումը կոմյերիտմիությունական կազմակերպության շինարարության վոլջ աշխատանքների մեջ։

Նման խնդիրներ եյին կանգնած Միության առաջ նախքան կոմյերիտմիության IV համագումարը։ Ինչպես նա լուծեց այդ հարցերը, ինչպես եր զարգանում Միությունը հետագայում,—

*) Այս պատճառից կոմյերիտմիությունը հղացավ գյուղական յերիտասարդական պրոցեսների զարգացումը։

մենք այդ կտեսնենք 15-րդ պարագրաֆում, վորտեղ կպարզենք հանուն բանվոր յերիտասարդության պայքարի հարցը։

Իսկ այժմ վերադառնանք կոմյերիտմիության մեջ յեղած վեճերին։

§ 14. ԹԵՔՈՒՄՆԵՐ ՈՒՂԻՂ ԳԾԻՑ

Վերևում մենք արդեն ասացինք, վոր կենտրոնական կոմիտեյի նկատմամբ ոպոզիցիան մինչ III համագումարը կոմյերիտմության մեջ քանակի տեսակետից բավականին խոշոր եր։ Ոպոզիցիան ղեկավարում եյին շորս հիմնական կազմակերպությունների, վոր կարևոր ե նշել, մի շարք արդյունաբերական կազմակերպությունների ներկայացուցիչներն ոպոզիցիայի մեջ եյին։ Ոպոզիցիան, ըստ իրեն կազմի, այլատարը եր, բայց նրան գլուխ կանգնած եյին դունայևցիները (կոմյերիտմիության յերկրորդ համագումարին ընտրված 44 անդամ ընկ. Դունայևսկու*) անունով եյին այդպես կոչված)։

Իրենք՝ Դունայևցիները միավորված եյին միանական պլատֆորմով։ Այդ հոսանքը լրիվ ձևավորված չի կարելի ընդունել, կարելի յե խոսել միայն Դունաևսկու կազմած Միության ծրագրի մասին, վորը նա իբրև նախագիծ կազմել եր համառոտակաև III համագումարից առաջ։

Այդ ծրագրում քաղաքականապես սխալ յերկու կետ կար։ Առաջին կետը խոսում է յերկրի բոլոր քաղաքական հարցերի նկատմամբ կոմյերիտմիության անդամների ազատ, ինքնուրույն կարծիքներն արտահայտելու մասին։ Յերկրորդը՝ այն մասին, վոր կոմյերիտմիության կկ-ն յենթարկվում է կուսակցության կկ քաղաքական պրեկանիզներին, իսկ կազմակերպչական յենթարկման հարցը լուծվում է անցնում։

Դունայևցիների խմբի մեջ մտնում եյին այնպիսի ընկերներ, վորոնք կտրականապես բացասում եյին Դունաևսկու տեսակետը արհմիությունների Յերիտասարդական սեկցիաներ և կամ Բանվոր Յերիտասարդության Կորնուրդներ ստեղծելու հարցի մասին։ Նույնիսկ ինքը՝ Դունաևսկին III համագումարի սկզբին ընդունեց, վոր իր տեսակետը, արհմիությունների աշխատանքների և Բանվոր Յերիտասարդության Կորնուրդների հարցի նկատմամբ—սխալ ե։ Յեթե վերցնենք վերջում հիշված այս յերկու կետերը, ապա Դունայևցիների խմբի մեջ չեյին մնում ոչ մի տարբերություններ մյուս կոմունիստների հետ։

*) Բացի Դունայևսկուց լիդերներ եյին՝ Գոլիցինը, Մոյսեևյան, Շուխինը, Միչկովը և ուրիշները։

կու կետերը և դիտենք նրանց ազդման ողղությունը, կտեսնենք, որ նրանք ազում են պատանեկական սինդիկալիզմի կողմը։

Իսկ պատանեկական սինդիկալիզմի էությունը հենց այն է, որ մոռացվում է, թե բանվոր յերիտասարդությունը դասակարգի մի մասն է, թե միայն մեկ կուսակցությունը կարող է լինել դասակարգը ղեկավարող բարձր կազմակերպություն։

Պատանեկական սինդիկալիզմի արմատները թաղնված են մեկ կողմից՝ նրանում, որ հասակավորներն անուշադիր են մոտենում դեպի յերիտասարդության կարիքները, իսկ մյուս կողմից՝ յերիտասարդության քաղաքական ակտիվությունը հայտնաբերելու ուղիներ չկան։

Կոմյերիտմիության նման սինդիկալիստական թեքման համար իհարկե օբյեկտիվ ավյալներ կային։ Նրանք կայանում էին նրանում, որ պատերազմը վերջանալուց հետո՝ Միությունը քիչ էր քաշվում հիմնական քաղաքական հարցերի քննության, որոնք անհրաժեշտ էր յերիտասարդության դաստիարակման նպատակով։ Յեվ հենց կենտրոնական կոմիտեում կային ընկերներ, որոնք Միության քաղաքական դերի ուժեղացման հարցը դնելուն դեմ էին։ Կոմյերիտմիության կենտրոնական կոմիտեն, սինդիկալիստական թեքման դեմ պայքարելով, ընդհանրապես ուղիղ գիծ էր տանում, բայց բոլորովին որոշակի չարտահայտեց իր վերաբերմունքը քաղաքական հարցերը Միության քննության դնելուն. այս բանը առիթ ավեց տեղական կազմակերպություններին մտածելու, թե կկ դեմ է Միության մեջ քաղաքական հարցեր քննելուն։

Սինդիկալիստական թեքման մյուս պատճառն այն էր, որ կոմյերիտմիությենական ակտիվը քիչ էր քաշված կուսակցական կյանքի մեջ։ Նա իր յուզում տապալվում էր, նրա մեջ արթնանում էր ակտիվությունը, բայց յելք չէր գտնում։

Ողպողիցիոներների յերորդ խմբակը՝ ուկրաինացի «դասակարգայիններն» էին։ կենտրոնական կոմիտեի դեմ մղած պայքարում նրանք բլոկ էին կազմում դունայեցիների հետ, թեպետև վերջիններս դեմ էին «հնասովիկների» (դասակարգայինների) առաջարկներին։

Այդ հոսանքի էությունն այն էր, որ նրանք պահանջում էին՝

ա) Միությունում անհապաղ ստեղծել պրոլետարական մեծամասնություն,

բ) Բանվոր յերիտասարդության մասսաներին համախմբելու նպատակով՝ գործարաններում և ֆաբրիկաներում ստեղծել անկուսակցական բանվոր յերիտասարդության կոլեկտիվներ.

գ) Միության քաղաքական ակտիվությունն։ Այս կետում կլասսովիկներն ամբողջովին և լիովին Դունայեվսկու հետ էին և մինչև իսկ կլասսովիկների ներկայացուցիչները համառուսական IV համագումարում առաջարկություններ էին մտցնում, վորոնք նման որինակ էին Միության ծրագիրը քննելու ժամանակ Դունայեվսկու մտցրած առաջարկներին։

Ուկրաինական կլասսովիկները անտարակույս Միության կուսակցական բանվորական ոպպոզիցիայի արտացոլումն էին։

Կենտրոնական կոմիտեի դեմ ոպպոզիցիոն դիրք բռնած ինքնուրույն կազմակերպություն ը կազանի ներկայացուցիչ ընկ. Հարբերի խմբակը։ Նա ուղղակի, կտրուկ առաջարկում ը Յերիտասարդության կոմմունիստական Միությունը վերածել կոմունիստական Յերիտասարդական Միության, այսինքն՝ կոմյերիտմիությունն իբրև մասսայական կազմակերպություն լուծարելով քի յենթարկել, վերածելով նրան՝ Յերիտասարդ կոմմունիստների խմբակների։

Կոմյերիտմիության համագումարում ոպպոզիցիային հարող ներկայացուցիչների զգալի մասն ուղղակի անբավական ը կենտրոնական կոմիտեի աշխատանքներից։

Այն բացատրական աշխատանքը, վորը կատարել էին կուսակցությունը և կոմյերիտմիության կկ-ն համագումարի ֆրակցիաներում, համագումարի բոլոր հիմնական հարցերի լուծման ժամանակ վճռական մեծամասնություն ապահովեց։

Պետք է նաև այն ասել, վոր Ուկրաինայի կոմյերիտմիության վրա ավելի էին աղդել տարաձայնությունները և դիսկուսիան, քան վորև է այլ կազմակերպության վրա։ Այնտեղ ամբողջ Միությունը բաժանվեց յերկու բանակի՝ կլասսովիկների և մասսովիկների։ կլասսովիկների մասին մենք արդեն խոսեցինք, իսկ մասսովիկները՝ կոմյերիտմիությենական համագումարների և Ռ. կ. Յե. Մ. կկ գծի անցկացնողներն էին։ Պետք է ասել, վոր Ուկրաինայի կոմյերիտմիությենական կազմակերպությունը ճիշտ գծի բերելու գործում վճռական դեր խաղաց ՌԿՅԵՄ կկ ոլնությունը ինչպես աշխատավորներ ուղարկելով, նմանապես և հենց հարցերը մշակելով։

Ուկրաինայի կոմկերիմիության կազմակերպությունը հանդարտվեց միմիայն նախ քան համառուսական IV համագումարը, որից առաջ կայացել էր համառուկրաինական III համագումարը, այսպես կոչված՝ «միասնականության համագումարը»։

§ 15. ՊԵՏՔԸ ԲԱՆՎՈՐ ՑԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1921 թ. հոկտեմբեր ամսին կայացած կոմկերիմիության IV համագումարի հիմնական վորոշումները հետևյալներն էին.

Առաջինը՝ ընդհանուր քաղաքական բնագավառում համագումարը նշեց, վոր անհրաժեշտ և լեհ-ռումինական սպառնանքի հետևանքով ուժեղացնել կարմիր բանակը և կուսակցության X համագումարի ու նրա մայիսյան կոնֆերանսի նշած նոր անտեսական քաղաքականության կիրառման գործում Միության կողմից յեռանդուն մասնակցություն բերել։

Յերկրորդ՝ բանվոր յերիտասարդության դրության հարցերում՝ համագումարը վորոշեց, վոր անհրաժեշտ և արդյունաբերության մեջ անչափահասների վորոշ տոկոս ապահովել, պահպանել Հոկտեմբերյան նվաճումները յերիտասարդության բանվորական որվա և աշխատավարձի նկատմամբ, պայքարել գործազրկության և մանր արդյունաբերության մեջ յեղած շահագործումների դեմ։ Համագումարը նմանապես վորոշեց՝ կոմկերիմիության անտեսական աշխատանքների մի մասը փոխադրել պետորգաններ և արհմիություններ, միաժամանակ ուժեղացնելով ՌԿՅԵՄ մասսայական անտեսական աշխատանքը։

Յերրորդ՝ համագումարը վորոշեց դիմել դեպի Միության պրոլետարական կորիզի ընդլայնումը և ամրապնդումը և նրա անդամների հասակային կազմի բարձրացումը, այսինքն՝ ներգրավել իրեն շարքերը բանվոր պատանեկությունը։

Չորրորդ՝ դաստիարակչական աշխատանքների բնագավառում բավականացավ ընդհանուր ղեկեկտիվներ տալով նրա ուժեղացման և խորացման անհրաժեշտության մասին, կապելով այդ կոմմունիստների դաստիարակության նպատակները և պարագաները փոխող, նոր պայմանների հետ։

Հինգերորդ՝ դյուղում աշխատանք տանելու նկատմամբ՝ համագումարը վորոշեց չընդարձակել Միության գյուղացիական սի թիվը, քաղաքականապես ձևակերպել յեղած գյուղացիական բջիջները, ուժեղացնելով նրանց մասնակցությունը հասարակական գործնեության մեջ, տնտեսական պրոպագանդան և կուլտկրթական աշխատանքը։

Միության աշխատանքների ղեկավարման բնագավառում, համագումարն անհրաժեշտ գտավ, վոր ակտիվ աշխատավորները դեպի յերիտասարդության մասսաները նոր մոտեցում ունենան, իրրև նրանց ինքնագործնեության նոր կազմակերպիչներ։

Սրանք եյին ՌԿՅԵՄ համառուսական IV համագումարի հիմնական վորոշումները։

Այսպիսով մենք տեսնում ենք, վոր IV համագումարը բաց և անում պայքարի մի նոր շրջան, կոմկերիմիության հիմնական կադրերի՝ բանվոր յերիտասարդության համար։

Կոմկերիմիության ջանքերի շնորհիվ հաջողվեց անցկացնել 1922 թ. մայիս ամսում ՀԿԳԿ նախագահության հրատարակած դեկրետը արտադրության մեջ բանվոր յերիտասարդության բրոնյայի մասին։

Կոմկերիմիությունական կազմակերպությունը գլխավոր ուշադրությունը պետք է դարձներ դեկրետը կյանքի մեջ կիրառելուն։ Շնորհիվ դրան, վոչ միայն դադարեցված եր արտադրության մեջ յեղած բանվոր յերիտասարդության նվազումը, այլ և վորոշ լրացում սկսվեց։

Հանուն բանվոր յերիտասարդության մղած պայքարի յերկրորդ հարցը՝ պատանեկական աշխատանքի վերակազմության խնդիրն եր։

Սկսվեց արագ կառուցում ֆաբզործնուսի դպրոցների, վորոնց նպատակն եր՝ արտադրողական ուսումը թեորետիկ գրագիտության բարձրացման հետ կապելու միջոցով, վերակազմել բանվոր յերիտասարդության աշխատանքը։

Ֆաբզործնուսի դպրոցների ամենաուժեղ աճումը վերաբերում է այն ժամանակաշրջանին, յերբ սուր կերպով առաջ յեկավ բանվոր յերիտասարդության անտեսական արժեքի խնդիրը։

Դպրոցների աճումը կատարվում եր այս կերպ՝

Տարի յեվ ամսաթիվ	Դպրոցների թիվը	Նրանցում աշակերտների թիվը
1921 թ. փետրվարի 1-ին	43	2.000
1921 » հոկտեմբերի »	219	29.242
1922 » փետրվարի »	440	44.133
1923 » հունվարի »	657	44.933
1924 » հունվարի »	748	50.207
1925 » հունվարի »	789	59.897
1925 » դեկտեմբերի »	999	72.153
1926 » դեկտեմբերի »	932	96.675
	1.068	107.000

Սրանից յերևում է, որ աճման ամենաուժեղ թափը 1921 թվականի վերջից մինչև 1923 թիվը եր, հենց այն շրջանում, յերբ կոմյերիմիության կազմակերպության հիմնական խնդիրը կայանում եր յերիտասարդության համար մշտ պայքարում։

Ֆաբզործանների զարգացման համար, կոմյերիմիությունը ստիպված յեղավ ուժեղ պայքարել ինչպես լուսավորության որգանների, այնպես էլ անտեսական հիմնարկների հետ։

Համառուսական V համագումարից առաջ, բանվոր յերիտասարդության լուսավորության գործը արդեն ամուր և կայուն հողի վրա յեր։ Ֆաբզործուսը ամենքի կողմից ճանաչված եր, իբրև վորակավոր բանվորներ պատրաստելու լավագույն միջոց. բոլոր որգանների աջակցությունը և ուշադրությունը ապահովված եր։

Ներկայումս ֆաբզործուսի դպրոցը, գլխավորապես շնորհիվ կոմյերիմիության ջանքերի և կուսակցության աջակցության, ցույց ավեց, որ ինքը արդյունաբերության համար վորակյալ բանվորական ուժերի նորմալ պատրաստման ձևն և։

Ցերրորդ հարցը՝ աշխատավարձի խնդիրն եր։ Սրա հետ սերտորեն կապված եր բանվոր յերիտասարդության բանվորական որվա հարցը։

Պատանեկական աշխատանքի վերակազմության համար անհրաժեշտ եր պահպանել յերիտասարդության 4 և 6 ժամյա բանվորական որ։

Այս բանի համար կոմյերիմիությունը աշխատում եր և հաջողացրեց բանվոր յերիտասարդության վարձատրության այնպիսի սկզբունք մտցնել, վոր նա կրճատված բանվորական որվա համար ստանա լրիվ չափ։ Բանվոր յերիտասարդության աշխատավարձի մասին այսպիսի վորոշումը ապահովում եր յերիտասարդության բանվորական կրճատված որը մյուսներին հավասարեցնելը։

Վորպեսզի տեսնենք, թե ինչպես եր փոփոխվում անչափահասների բանվորական որը, վերցնենք Մոսկվայի թվերը, վորտեղ 4 տարվա տվյալները կան։

ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ԹԻՎԸ ՎՈ՞Ր ՏՈԿՈՍՆ Ե ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՒՄԱՐԻ

Բանվորական որվա տեվողությունը	14—15 տարեկան				16—17 տարեկան			
	1918 թ.	1921 թ.	1923 թ.	1924 թ.	1918 թ.	1921 թ.	1923 թ.	1924 թ.
4 ժամ և պակաս .	1,1	35,4	60,8	82,4	1,0	2,9	21,1	35,2
5 » » » .	1,3	9,2	1,5	0,9	2,0	3,0	1,4	1,4
6 » » » .	32,6	36,8	25,5	14,1	22,0	58,8	68,1	59,3
7 » » » .	5,9	2,0	0,4	0,8	4,8	2,0	0,4	1,1
8 » » ավել .	59,1	16,6	11,8	1,8	70,2	33,4	9,4	3,0
Ընդամենը .	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0
Բանվորական որվա միջին տեվողությունը	7,2 ժ.	5,8 ժ.	5 ժ.	4,4 ժ.	7,4 ժ.	6,7 ժ.	5,7 ժ.	5,4 ժ.

Այս թվերը ցույց են տալիս, վոր իզուր չեն կորել բանվոր յերիտասարդության մասսաններում անտեսական աշխատանք ծավալելու համար կոմյերիմիության ջանքերը։

Պատկերը մոտավորապես այս եր խորհրդային ամբողջ յերկրում։

Ինչ վերաբերում է բուն աշխատավարձին,—դրությունը այսպես եր։

Պատերազմի ժամանակ բանվորական ձեռքերի պակասության պատճառով, անչափահասների աշխատանքն ավելի թանգ եր գնահատվում (հասակավոր բանվորի համեմատությամբ)։ Ռազմական կոմմունիզմի ժամանակ, աշխատավարձի հավասարեցման

և նատուրալիզացիայի հետևանքով համարյա թե չքացավ հասարակավոր և անչափահաս բանվորների աշխատավարձի տարբերությունը։

Նեպին անցնելուց հետո՝ սկսվում է հակառակ պրոցեսը — անչափահասների աշխատավարձն սկսում է ավելի և ավելի հետ մնալ հասակավորների աշխատավարձից։ 1923 թվականին արտադրության մեծ մասում, աշխատավարձի հետ մնալը շատ զգալի չեր։ 1924 թվականին, համարյա բոլոր արտադրություններում ավելանում է, նույնը և 1925 թվականին։

Տարի	Անչափահասների աշխատավարձը բոլոր բանվորների միջին աշխատավարձի ո՞ր տոկոսն է
1914 թ.	47,6
1916 »	48,2
1920 »	81,0
1921 »	63,2
1923 »	47,1
1924 »	44,5
1925 »	43,4
1926 »	40,3
1927 »	41,1

Այս արդեն, նոր տնտեսական քաղաքականության անխուսափելի հետևանքն եր, և այստեղ մխրճված եր այս դրության հետ հիմնականում համակերպվել։

Չի կարելի աչքաթող անել կոմյերիտմիության աշխատանքները բանվոր յերիտասարդության առողջությունը բարելավելու ասպարեզում։ Կոմյերիտմիության ամենաակտիվ մասնակցությամբ անցկացված կանոնավոր բժշկական քննությունները, արձակուրդների կամպանիաները, բանվոր յերիտասարդության հանգստյան տների կազմակերպումը—այս բոլորը միասին վերցրած՝ կոմյերիտմիության շուրջը աշխատանքի կոնկրետ հարցերի նկատմամբ հաճախմբում եր բանվոր յերիտասարդության լայն մասսաները։

Կատարված աշխատանքների արդյունքը յեղավ կոմյերիտմիության պրոլետարական կորիզի աճումը և ամրապնդումը։

Պարզ և, վոր առաջին շրջանում տնտեսական աշխատանքը պերակշռում եր բոլոր մյուսների։

Այս ժամանակաշրջանում ուժեղացավ Միության կապը արհեստակցական մարմինների հետ. Միությունը արհմիություններին աշխատավորների կադրեր ավեց, իրրև իր ներկայացուցիչներ։

Այս ներկայացուցիչների նպատակն այն եր, վոր նրանք արհմիությունների առօրյա աշխատանքներում դնեին պատանեկական աշխատանքի և կրթության խնդիրները, վոր տնտեսական մարմինների հետ կնքած կոլեկտիվ պայմանագրերում յերիտասարդության շահերը պաշտպանված լինեին։

Նմանապես ուժեղացավ կոմյերիտմիության ազդեցությունը պետական մարմինների աշխատանքների վրա։

Կոմյերիտականների դաստիարակության խնդիրները լայն կերպով հրապարակ նետվեցին համառուսական V համագումարից առաջ (1922 թ. հոկտ. 11—19-ն եր)։ Այդ ժամանակի մոտերից սկսում են նկատվել նոր տնտեսական քաղաքականության դրական կողմերը։

Սկսում է զարգանալ տնտեսական և կուլտուրական շինարարությունը, զարգանում և պրոլետարի ուժերի փոշիացումը, գյուղից հետ են գալիս գործարաններից և ֆաբրիկաներից հեռացածները, ուստի աճում և գործազրկությունը գլխավորապես գյուղից յեկողների հաշվին։

Կոմյերիտմիության Համառուսական V համագումարը անցավ յերկրի կուլտուրական և տնտեսական շինարարության գործում յերիտասարդությանը ներգրավելու նշանաբանի տակ, հակառակ մանր բուրժուական լիկվիդատորական տրամադրությունների։ Կոմյերիտասարդության կոմմունիստական դաստիարակության պարտքերի նշանաբանի տակ։

V համագումարը հրապարակ նետեց հետևյալ լոզունգը—«առաջնորդվեցեք գիտության գրանիտը»։

Աճող սերնդի կոմմունիստական դաստիարակությունը, աշխատանքը նոր պայմաններին հարմարեցնելուն—ահա թե ինչին եր նվիրված V համագումարը։

Համագումարը ձևակերպեց կոմյերիտմիության աշխատանքը բոլոր ասպարեզներում, սիստեմի վեր ածեց նրան։

Համագումարի մատուցած ծառայությունը արտահայտվում է նաև նրանում, որ նա ամբողջ լայնությամբ դրավ գյուղի աշխատանքների խնդիրը և վերջնականապես ձևակերպեց կոմյերիմիության տեսակետը աճող սերնդի լուսավորության և դաստիարակության սխեմայի նկատմամբ, առաջ մղեց գյուղացի յերիտասարդության դպրոցների զաղափարը, ինչպես և սկիզբ դրեց յերեխաների կոմմունիստական շարժման և բանվորա-գյուղացիական կարմիր նավատորմի շեֆության ընդունեց։

§ 16. ԻՆՉ ԵՐ ԿԵՏՐՎՈՒՄ ԴՅՈՒՂՈՒՄ

Նոր տնտեսական քաղաքականության սկզբին գյուղում գյուղական կազմակերպությունների թիվը կրճատվեց։ IV և V համագումարների միջև յեղած ժամանակամիջոցում կոմյերիմիության ուշադրությունը գյուղի նկատմամբ բավարար չեր։ Այս հասկանալի յե, քանի վոր Միության առաջ հիմնական խնդիրը ծառացավ՝ ամրապնդել Միության հիմքը—պրոլետարական կորիզը։ Միայն Համառուսական V համագումարում գյուղում աշխատանք տանելու խնդիրը դրված եր ամբողջ լայնությամբ։ Այս խնդիրը դուրս չեր գալիս նաև կոմյերիմիության VI և VII համագումարների որակարգից։ Պրոլետարիատի և գյուղացիության զոդման հարցը կարևորագույն նշանակություն ստացավ մեր հեղափոխության մեջ։

Միությունը պետք է այս խնդրի վրա բացառիկ ուշադրություն կենտրոնացներ։ Պրոլետարիատը միայն աշխատավոր գյուղացիության սերտ դաշնակցությամբ կարող եր ամրապնդել յերկիրը, զարգացնել տնտեսությունը։ Նոր տնտեսական քաղաքականությունը հենց առաջ յեկավ իբրև քաղաքի և գյուղի տնտեսական դաշնագրության ձև մեր յերկրում սոցիալիզմի շինարարության համար։

Քաղաքացիական կռիվները լուծարքի յենթարկելուց հետո՝ մեր հեղափոխության խաղաղ շրջանում, գյուղի աշխատանքների նկատմամբ կոմյերիմիության առաջ նոր խնդիրներ ծագեցին։ Հարկավոր եր գտնել գյուղական յերիտասարդության անձնական շահերի բավարարման ձևը և սրա հետ միասին՝ տանել նրան գյուղական տնտեսությունը կուլտուրական սկզբունքներով վերակառուցելու ճանապարհով։

Այժմ ավելի, քան յերբեք այդ ձևերն սկսում են յերևան գալ գյուղում։ Այժմ, մինչձեռնյա տնտեսության վիճելի և գյուղատնտեսական յերիտասարդության միջոցով ընտանիքի տնտեսությունը կուլտուրականացնելու հետ միասին, գյուղացի յերիտասարդության կոոպերատիվ դաստիարակությունը կենսորոշական նշանակություն և ստանում։

Նեպի առաջին տարիներում, գյուղական բջիջների աշխատանքներում ուժեղ եյին դեռ ռազմական կոմմունիզմի սովորությունները։ Հրամայողական վերաբերմունքը դեպի գյուղացի յերիտասարդությունը, սխալ մոտեցումը դեպի նա, դեռ այն ժամանակ յուրահատուկ եյին գյուղական բջիջներից շատերին։ Հենց իրենք գյուղական բջիջները վորակի տեսակետից յերիտասարդների պատկերը եյին ներկայացնում։

Կարելի յե բերել նեպի առաջին շրջանի համար բնորոշ յերեք տեսակի բջիջներ։ Առաջին տիպը—բջիջներ, վորոնք զբաղվում եյին գլխավորապես խորհրդային և վարչական աշխատանքներով։ Այս բջիջներում շատ քիչ աշխատանք եր տարվում իրենց անդամների դաստիարակման համար։ Նման բջիջներ շատ եյին և գերակշռում եյին այն տեղերում, վորտեղ կուսակցական բջիջները քիչ եյին։

Յերկրորդ տիպը—կոմյերիմիության այն բջիջները, վորոնց մեջ ճիշտ հարաբերակցություն կար հասարակական-գործնական աշխատանքների և կոմյերիտականների և գյուղացի յերիտասարդության դաստիարակության միջև։ Այս բջիջները դեպի գյուղական յերիտասարդությունը մերձեցման ճիշտ ուղիներ եյին վորոնում։

Յերրորդ տիպը՝ կոմյերիմիության թույլ բջիջները, վորոնք վերջնականապես չեյին ձևակերպվել, անդամների հատուկազմով, առանց աշխատանքի նեցուկ ակտիվի։ Նման բջիջները շատ քիչ եյին տարբերվում գյուղացի յերիտասարդության կուլտ-կրթական խմբակներից։

Այս ժամանակաշրջանում դեռ շարունակվում եր աշխատանքների մրցությունը մեկ կողմից կոմյերիմիության և մյուս կողմից՝ կուլտ-կրթական խմբակների միջև։

Գյուղում կոմյերիմիության աշխատանքի լայն զարգացումը դեռ առաջիկայում եր։

Այդ զարգացումն սկսվեց կոմյերիմիության V համագումարից հետո։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ՄԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԵԼՔԸ

§ 17. ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԸԹՈՒՍՈՒՄԸ V ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Դեպի այս համագումարը պետք է ուշադրություն վերաբերմունքը, քանի որ նա տեղի էր ունենում մեր երկրի կոմերիտմիութենական շարժման զարգացման մեծ բեկման միջոցին: Համագումարը կայացավ 1922 թվականի հոկտեմբերի 11—19, նոր տնտեսական քաղաքականության երկրորդ տարում: Միության աշխատանքների ամենածանր ժամանակներն արդեն յետևեին մնացել:

Նախ քան V համագումարը՝ պետք է նկատվել արդեն նոր տնտեսական քաղաքականության դրական կողմերը—բարձրանում է երկրի տնտեսությունը, բարելավվում և բանվոր դասակարգի և այս թվում բանվոր երիտասարդության տնտեսական դրությունը: Յեթե համառուսական IV համագումարից (1921 թ. սեպտեմբերը) մինչև 1922 թվականի գարունը յեղած ժամանակաշրջանը կոմերիտմիութենական շարժման զարգացման մեջ ամենածանր ժամանակն էր, յեթե այդ ժամանակ կատարվում էր արտադրության մեջ գտնվող բանվոր երիտասարդության իրրև սակավարժեք աշխատանքի մասսայական կրճատումը, աշխատավարձի անկումը, գործազրկության աճումը, կոմերիտմիության թվական նվազումը քաղաքում և գյուղում, V համագումարից սկսվում և վերևքի շրջանը, աճում և անդամների թիվը ընդարձակվում և բոլոր շրջաններում կոմերիտմիութենական կազմակերպությունների տնտեսադործական գործնեությունը: Յեթե IV համագումարից հետո յեղած ժամանակամիջոցի համար ամենաբնորոշը հանդիսանում էր՝ բանվոր և գյուղացի երիտասարդության քաղաքական ակտիվության զգալի անկումը, ապա

թյան ակտիվության նվազումը, V համագումարից հետո սկսվում է կոմերիտմիութենական կազմակերպությունների քաղաքական ակտիվության աճումը: Շնորհիվ նրան, որ նոր տնտեսական քաղաքականության հիման վրա սկսվում է զարգանալ երկրի ժողովրդական տնտեսությունը և ընդհանուր առմամբ բարելավում է բանվոր դասակարգի դրությունը և նմանապես, միության վերևում հիշված յեռանդուն տնտեսական աշխատանքի շնորհիվ, 1922 թվականի գարնանից սկսվում է բանվոր երիտասարդության ամրապնդման պրոցեսը արտադրության մեջ:

Յեվ քանի որ աճում է բանվոր և գյուղացի երիտասարդության տնտեսական բարեկեցությունը, ուրեմն սկսվում է նաև երիտասարդության մասսաների կուլտուրական պահանջների աճումը:

«Ռազմական կոմմունիզմի» իդեոլոգիայից դեպի նոր տնտեսական քաղաքականությունը անցնելու ժամանակաշրջանում, բանվոր և գյուղացի երիտասարդության մեջ նկատվում եյին ուժեղ հիվանդագին արտադրություններ: Նկատվում եր, որ չեյին հասկացել նոր տնտեսական քաղաքականության եությունը («հանուն ինչի յենք պայքարել»), բայց քանի որ միության գլխավոր նպատակն եր՝ բոլոր ուժերը շպրտել դեպի տնտեսական աշխատանքը, և պահպանել բանվոր երիտասարդության արդյունաբերության մեջ, այս պատճառով միությունը չեր կարող հարկավոր ուշադրություն դարձնել քաղաքական-կրթական աշխատանքներին: Բայց քանի որ բանվոր երիտասարդության տնտեսական դրությունն ամրապնդվեց, V համագումարի սկզբին միության առաջ լայն կերպով կանգնեցին դաստիարակչական կրթական աշխատանքի հարցերը:

Միությունը այս ասպարեզում ավելի քան յերբևիցե պետք է հաշվի առներ յերիտասարդության հոգեբանությունը և նրա պահանջները: Անհրաժեշտ եր փողոցի գայթակղեցուցիչ ազդեցությանը հակադրել յերիտասարդությանը հետաքրքրող աշխատանքի նոր մեթոդներ: Խաղերի և զվարճությունների, նմանապես և տոնակատարությունների խնդիրը քաղաքական-կրթական աշխատանքների մեթոդներում դրավում եր առաջին տեղերից մեկը:

Իրրև նոր տնտեսական քաղաքականության կազմակերպող կողմերի դեմ մի հակակշիռ՝ յերիտասարդության մասսաների մեջ ուղղած կուլտուր-քաղաքական այս աշխատանքի մեջ մի շարք կոմերիտական տեղական կազմակերպությունների մեջ

այսպես կոչված «կուլտուրնիկների թեքում» առաջ չեկավ, որ արտահայտվում էր կոմկերիտական շարժման քաղաքական նյությունը մոռանալով։

Կոմկերիտմիության Համառուսական V համագումարը, յելնելով յերկրի դրության հաշվառումից, բանվոր և գյուղացի յերիտասարդության կարիքներից և պահանջներից, կոմկերիտմիության կազմակերպության, կացությունից, իրրև շարժման գլխավոր և հիմնական նպատակ առաջ քաշեց յերիտասարդության կոմմունիստական դաստիարակության մեջ։

Ն. Ի. Բուխարինի զեկուցման առթիվ համագումարը վորոշեց յերիտասարդության կոմմունիստական դաստիարակության կոնկրետ նպատակները, յերը յերիտասարդությունը ներգրավված է յերկրի տնտեսական և կուլտուրական շինարարության մեջ։ Համագումարը մանրամասն ցուցմունքներ տվեց, թե ինչպես պետք է Միությունում լուրջ մարքսիստական կրթություն տրվի և կուլտ-կրթական աշխատանքներ տարվեն։

Բանվոր յերիտասարդության տնտեսական դրության նկատմամբ V համագումարը ընդունեց, վոր անհրաժեշտ է ավելի ևս ամրապնդել ձեռք բերված արդյունքները՝ բրոնյալի, տարիքի, անչափահասների աշխատանքի պաշտպանության և այլ գործում։ Համագումարն առանձնապես ուշադրություն դարձրեց տնտեսական արդյունաբերության մեջ յեղած յերիտասարդության գործնական արդյունաբերության վրա, քանի վոր այնտեղ կատարվում էր անչափահասների թվական աճումը։

Յերկրի կրթական աշխատանքների և պրոցեսական շինարարության խնդրում V համագումարը վճռականապես արտահայտվեց, վոր անհրաժեշտ է վերանայել գոյություն ունեցող ժողովրդական լուսավորության սիստեմը, վորպեսզի հարմարեցնել նրան բանվոր դասակարգի խնդիրների և սոցիալիստական շինարարության պահանջներին։ Համագումարը մեծ ուշադրություն նվիրեց ֆաբրիկա-գործարանային աշակերտության դպրոցներին, դնելով Միության առաջ դպրոցների գոյություն ունեցող ցանցի ամրապնդման խնդիրը, այդ ցանցի խնամքով ծրագրված զարգացումը և իրրև առաջնակարգ գործ՝ դպրոցին իրրև հիմք 7-ամյակին ընդունել։ Սրա հետ միասին V համագումարն առաջին անգամ առաջ քաշեց գյուղացիության կարիքները և գյուղական տնտեսական սոցիալիստական շինարարության

պահանջներին բավարարող գյուղացի յերիտասարդության մասսայական դպրոցներ ստեղծելու գաղափարը։

Միության կազմը ամրապնդելու խնդրում համագումարը առաջ քաշեց, ինչպես հիմնական և կարևորագույն նպատակ Միության պրոլետարական կորիզի ընդարձակումն ու ամրապնդումը գլխավորապես բանվոր յերիտասարդությունը Միության մեջ ներգրավելու հաշվին։

V համագումարը վորոշեց ուժեղացնել կոմկերիտմիության աշխատանքը գյուղում, ըստ վորում կան կազմակերպությունների աշխատանքը գյուղում, անհրաժեշտ ե գլխավոր ուշադրությունը դարձնել չքավորների և բատրակների մեջ աշխատանք տանելու վրա։ Իր վորոշումներով գյուղի աշխատանքի նկատմամբ, համագումարը բոլոր տեղական կազմակերպությունների ուշադրությունը հրավիրեց՝ գյուղական բջիջների հասարակական քաղաքական ակտիվության ուժեղացնելու, գյուղի կուլտ-կրթական աշխատանքները միասնական կուլտուրական կենտրոնի շուրջը (խրճիթ-ընթերցարան, ժողովուն) համախմբելու վրա։ Համագումարը, գյուղում Միության աճման մեխանիկական դադարեցման դեմ ել, բայց և այնպես տեղական կազմակերպությունների ուշադրությունը հրավիրեց՝ գյուղական բջիջներն զգուշորեն ընդարձակելու անհրաժեշտության վրա։

Յեվ վերջապես համագումարը Միության կազմակերպության գործունեության ամբողջ ընթացքում առաջին անգամ վճռական կերպով առաջ քաշեց, քննեց և վորոշեց Միության ղեկավարության յերեխաների կոմմունիստական շարժումը զարգացնելու հարցը։ Համագումարը մեծ խանդավառությամբ ընդունեց բանվորագյուղացիական ծովային կարմիր Նավատորմի շեֆության, դեպքանով պարտավորվելով ամեն կերպ ամրապնդել յերկրի պաշտպանությունը։

Մեր յերկրի պրոլետարական յերիտասարդական շարժման զարգացման համար չափազանց կարևոր այդ վորոշումների ընդունումով վորոշվում է V համագումարի տեղը կոմկերիտմիության պատմության մեջ։

§ 18. ԻՆՉՊԵՍ ԵՐ ԸՆԹԱՆՈՒՄ ԿՈՄՍԵՐԻՏՄԻՈՒԹԵՆԱԿՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔԸ V ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՑ ՀԵՏՈ

Այժմ տեսնենք, թե ինչպես ել աշխատում կոմկերիմիության կազմակերպությունը այդ ժամանակաշրջանում։ Ի՞նչ

եր կատարվում Միությունում, ինչպիսի հանրագումարներ ստացվեցին այդ դիրեկտիվներից, որոնք տվել եր V համագումարը։

Նախ և առաջ անհրաժեշտ է նշել, որ V համագումարից հետո Միությունը ուժեղացնում է իր քաղաքական ակտիվությունը։ Միության քաղաքական ակտիվության ուժեղացումը դնում եր կուսակցության և խորհրդային իշխանության տարած բոլոր տնտեսական քաղաքական կամպանիաներում Միության կազմակերպությունների ամենորյա մասնակցության գծով։ Միության ակտիվությունը առանձնապես հայտնաբերվեց կարմիր Նավատորմի և կարմիր Բանակի զորահավաքը անցկացնելու ժամանակ՝ այդ բոլոր զորահավաքները անցկացան մեծ խանդավառությամբ։ 1923 թ. Միությունը անցկացրեց «կարմիր նավատորմի շաբաթը», որը մեծ հաջողություն ունեցավ։

1923 թ. կոմյերիմիությունը անցկացրեց «կոմյերիմիության ենական ծնունդ» և «կոմյերիմիությենական զատիկ» իրրև քաղաքական մեծ կանպանիաներ։ Այնպիսի անցքերին, ինչպիսիներն են՝ Ռեզոնի ուլտիմատումը, ընկ. Վարովսկու սպանությունը, կոմյերիմիությունը ամենայեռանդուն վերաբերմունք եր ցույց տալիս, մասնակցություն եր ունենում ընդհանուր ցույցերին, բողոքի միտինգներին, նաև կազմակերպում եր յերիտասարդության առանձին ցույցեր։

Կոմյերիմիության հանուն կոմմունիզմի մարտնչելու պատրաստակամության հատուկ ատուգում եյին 1923 թ. գերմանական անցքերը։

Գերմանիայում պրոլետարական հեղափոխության հասունացումը ցնցեց կոմյերիմիությենական կազմակերպությունը, նրան միանգամայն կռվի պատրաստ գարձնելով, և յերևում եր, որ, չնայած նոր տնտեսական քաղաքականության առորյա պայմաններին, Միության մեջ անդամները դաստիարակվում են մարտական ինտերնացիոնալի վոգով։

Այժմ անցնենք բանվոր յերիտասարդության տնտեսական դրության բնութագրման։ Ինչպես վերևում տեսանք, Միության գլխավոր ուշադրությունն ուղղել եր բանվոր յերիտասարդության կաբիքները սպասարկելու հաժար պետական և արհեստակական մարմինների աշխատանքն ուժեղացնելուն։ Հենց այդ ժամանակաշրջանում տնտեսական մարմիններն անց եյին կացնում արդյունաբերության կոպիտ համակենտրոնացումը, որի շնորհիվ տնտեսավարների մի մասը նորից դրել եր արտադրությունների անչափահաս բանվորներին կրճատելու, աշխատավարձի և աշակերտների աշխատանքի պայմանների փոփոխման և այլ խնդիրներ։

Միության և արհեստակցական կազմակերպությունների ջանքերով հաջողվեց պահպանել որենսդրությունը և աշխատանքի նոր որենսգրքի մեջ (1923 թ. հրատարակություն) մըտցված եյին բանվոր յերիտասարդության հիմնական նվաճումները։

Միությունը առողջապահական որգանների միջոցով անցկացրեց 1923 թ. գարնանը, անչափահաս բանվորների բժշկական քննության մեծ կամպանիան, որը ընդգրկեց զանազան տեսակի արտադրություններում զբաղված 100.000 անչափահաս բանվորներ։ Այդ հետազոտման հիման վրա հայտարերված եր, որ բանվոր յերիտասարդության առողջությունը՝ համեմատած անցյալ տարիների հետ՝ զգալիորեն լավացել եր։

Կոմյերիմիության կազմակերպությանը շատ եր անհանգստացնում այն փաստը, որ անչափահաս բանվորների բրոնյայի տոկոսը աստիճանաբար իջնում է։

Բրոնյայի պատկերը հետևյալն եր՝

ԱՆՁԱՓԱՀԱՍՆԵՐԻ %-Ն ԱՐՇՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹՎԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Միության ճյուղը	Ապր. 1/III 1923 թ.	Ապր. 1/IV	Ապր. 1/VII	Ապր. 1/X	Ապր. 1/I 1924 թ.
Լեռնագործները	9,4	10,5	7,1	5,7	5,2
Մետաղագործները	6,0	6,1	5,6	5,5	5,1
Ջուլհակները	5,4	6,3	5,5	5,8	5,8
Քիմիկոսները	6,4	6,5	6,8	6,7	6,3
Ցերկաթ. գծի աշխատողները	2,8	2,5	3,0	2,9	2,7
Միջինը վոլջ արդյունաբ. մեջ	6,5	6,9	6,0	5,8	5,7

Բրոնյայի այսպիսի պատկերը ստիպեց կոմյերիմիության կենտրոնական կազմակերպությանը Խորհրդային բարձր որգանների առաջ վճռականապես դնել բրոնյայի որենքի կիրառման հարցը։ ՌՍՖՍՀ Խորհուրդների XI Համագումարը Աշխատանքի ժողովրդական կոմիսարիատի զեկուցման հիման վրա հաստատեց բրոնյայի մասին գոյություն ունեցող որենսդրության պահպանման անհրաժեշտությունը և հանձնարարեց Աշխժողկոմատին խստապես հետևել բրոնյայի %-ի կիրառմանը։

Բայց նախապես պետք է ասել, որ բրոնյայի մասին գոյություն ունեցող օրենքը արտադրության պահանջների հետ մի շարք կետերում համաձայնեցված չեր, որի շնորհիվ և գոյություն ունեցող օրինքը 1927 թ. նորից վերանայված եր բրոնյայի անցկացնելու սկզբունքը փոփոխելու և տոկոսը կրճատելու նպատակով։ Բայց պետք է ի նկատի ունենալ, որ չեթե կրճատվում է յերիտասարդության %-ը, դա դեռ չի նշանակում, թե կրճատվում է նրա թիվը արտադրության մեջ։ Բրոնյայի տոկոսի կրճատումը կատարվում եր, որովհետև հասակավոր բանվորների թվի աճման թափը անչափահասների թվի աճման թափից շատ եր առաջ անցնում։

Անհրաժեշտ է առանձնապես նշել այս ժամանակաշրջանում անչափահաս բանվորների աշխատավարձի զգալի աճումը։

Այսպես, օրինակ, չեթե նախ քան կոմյերիմիության V համագումարը միջին աշխատավարձը ապրանքային ռուբլիներով կազմում եր 5 ռ. 84 կ., 1923 թ. հունվար ամսում՝ 7 ռ. 45., իսկ 1923 թ. դեկտեմբեր ամսում՝ 9 ռ. 93 կ. եր, այս կերպ ռեալ աշխատավարձը բարձրացնելով 58,8%։ Արդյունաբերության տարբեր ճյուղերում այդ բարձրացումը կատարվում եր այս կերպ.

	1922 թ. հոկտ.	1923 թ. հունվ.	1923 թ. դեկտ.
	(ապրանքային ռուբլիներով)		
Մետ.-արդյունաբ. . .	5 ռ. 97 կ.	7 ռ. 58 կ.	9 ռ. 20 կ.
Տեկստիլ արդյունաբ. .	5 ռ. 07 կ.	7 ռ. 51 կ.	10 ռ. 22 կ.
Տպագրական	6 ռ. 21 կ.	10 ռ. 74 կ.	12 ռ. 21 կ.

Այսպիսի աճում նկատվում եր արտադրության և մյուս ճյուղերում, ի բացառյալ լեռնային, որտեղ անչափահասների աշխատավարձը 1923 թ. հունվարի 1-ի 7 ռ. 69 կ-ից նույն թվի դեկտեմբեր ամսում իջավ 7 ռ. 01 կ.։

Կոմյերիմիության կկ պատվերով աշխատանքի վիճակագրության տեղական մարմինները 600 անչափահաս բանվորների քյոլչետական հետազոտում անցկացրին։ Մոսկվայի անչափահաս բանվորների աշխատավարձի նկատմամբ 1923 թվականի նոյեմբերին կատարված հետազոտումից հետևյալ պատկերն առացվեց.

Ընտանիքավորների աշխատավարձը նոյեմբեր ամսում կազմում եր 11 ռ. 89 կ. (ապրանքային) և մենակներինը՝ 11 ռ. 96 կ. Ըստ վորում՝ ընտանիքավորների ընդհանուր յեկամուտը—16 ռ. 88 կ. իսկ մենակներինը՝ 14 ռ. 88 կ. եր։ Գլխավոր կողմնակի յեկամուտը ընտանիքի ոգնությունն է, վորը ընտանիքավորների

մոտ կազմում է՝ 3 ռ. 88 կ., իսկ մենակների, ընդամենը՝ 22 կ.։

Անչափահասների աշխատանքի պաշտպանության մասին վերևում մենք բերեցինք հատուկ աղյուսակ (տես 105 յերես)։ Ինչպես եր այս հարցի դրությունը հետագայում։ VI համագումարի սկզբին (1924 թ. հուլիս) հայտնի յեր, վոր 36 նահանգներում անչափահասների և փոքրահասակների 10% աշխատում եր 6 ժամից ավել։ Անչափահասների աշխատանքի պաշտպանության նորման խախտողները և դատի տրվածները, ըստ աշխատանքի տեսչության տվյալների կազմում են՝ 1923 թ. առաջին յեռամսյակում 9,9%, յերկրորդ յեռամսյակում՝ 8,4 % և յերրորդ յեռամսյակում 9,5% բոլոր դատի յենթարկվածների։ Ըստ վորում բոլոր դատի յենթարկվածների 80%-ը մասնավոր ձեռնարկություններն են։ Այստեղից կարելի յե յեզրակացնել, վոր խախտումների մեծ մասն ընկնում է մասնավոր ձեռնարկություններին։

Անհրաժեշտ է հատկապես կանգ առնել անչափահասների գործազրկության վրա, քանի վոր կոմյերիմիության հակայական աճման այս շրջանում, զգալիորեն աճում է գործազրկությունը և ավելանում է մխության տեղական կազմակերպությունների ուշադրությունը այս յերևույթի վրա։

Նախ և առաջ անչափահաս գործազուրկների թվի մասին։ Հետևյալ աղյուսակը պատասխանում է այդ հարցին։

Տարի յեվ ամսաթիվ	Գործազուրկ. վերջում եղած ընդհանուր թիվը	Անչ. գործազրկ.% ընդհանուր թվից մեծ	Անչափահաս գործազուրկների թվի տեսակարար կշիռը %	Արհմիության անչափահաս անդամների% արհմիությունների նույն թվի նկատմամբ	Բոլոր գործազուրկների % արհմիությունների անդամների ընդհանուր թվի նկատ.
Ս.ռ 1/IV 1923 թ.	60.000	7,4	34,8	3,7	12,9
» 1/VII 1923 թ.	76 808	7,3	34,8	3,7	17,0
» 1/X 1923 թ.	88.800	8,0	40,5	3,5	19,8
» 1/I 1924 թ.	106.200	8,6	47,2	3,4	20,2

Այս աղյուսակից կարելի յե մի շարք յեզրակացություններ դուրս բերել։ Նախ և առաջ այն, վոր գործազրկությունը ընդունում է ավելի ու ավելի մնայուն բնույթ։ Պրոֆմիությունների անդամների ընդհանուր մասսայում անչափահասների տոկոսի պակասելու հետ միասին, աճում է, և բավականին անշեղ, ան-

չափահասների տոկոսը բոլոր գործազուրկների թվում։ Իսկ այս հիման վրա աճում է անչափահաս գործազուրկների հարաբերությունը արհմիությունների անչափահաս անդամների ընդհանուր թվին նկատմամբ։ Իսկ ինչ միջոցների դիմեց մուրթյունը անչափահասների գործազրկության դեմ պայքարելու համար։ Նախ և առաջ՝ միջոցներ ձեռք առավ կազմակերպելու դպրոց-արհեստանոցներ (անչափահասների տներ) և արտելներ, որոնք անչափահասներին վաստակ և աշխատանքի վորոշ փորձառություն են տալիս։ Յերկրորդ՝ 7-ամյա դպրոցի, երբև ֆաբգործուսի բազայի, շուտափույթ զարգացումը։ Յերրորդ՝ անչափահասների անայնաարհեստավորական ուսուցման զարգացումը և առաջին հերթին պղտում։ Այնուամենայնիվ այս միջոցները չկարողացան արմատապես լուծել անչափահասների գործազրկության հարցը, և այս խնդիրը մինչև այժմ էլ կանգնած է կոմկերիամիությունական ընթացիկ աշխատանքների ծրագրում։

Այս կերպ մենք տեսնում ենք, վոր բանվոր յերիտասարդության տնտեսական դրության նկատմամբ կոմկերիամիությունական կազմակերպության ուժեղացման տարիներում խոշորագույն նվաճումների շարքում (յերիտասարդության ամրացումը արտադրության մեջ, աշխատավարձի աճումը, առողջության բարելավումը), կար նաև ցավոտ տեղ—անչափահասների գործազրկությունը և նրա հետագա աճումը։

Բանվոր յերիտասարդության տնտեսական դրության հետ միասին անհրաժեշտ է կարճառոտ լուսաբանել բանվոր և գյուղացի յերիտասարդության կրթության դրությունը և ցույց տալ այն միջոցները, վորոնց վրա կենտրոնացված եր կոմկերիամիության ուշադրությունը։ Նախ և առաջ ֆաբգործուսի մասին։ V համագումարի սկզբին ֆաբգործուսի դպրոցներում սովորողների թիվը 48.000 եր։ VI համագումարի սկզբին այս թիվը հասավ մինչև 70.000-ի։ Կուլտ-կրթական ցանցի ընդհանուր կծկումը, վորը նկատվում եր 1922 և 1923 թվականներին, շնորհիվ, գլխավորապես, կոմկերիամիության ջանքերի, ֆաբգործուսին նվիրաբերեց։ Ֆաբգործուսի դպրոցների տարերային աճումը անցյալում, կոմկերիամիությունական կազմակերպությունների առաջ դրեց այս ցանցն արդյունաբերության կարիքներին և պահանջներին համապատասխանեցնելու խնդիրը։ Կոմկերիամիությունական կազմակերպությունների ուշադրությունը դեպի դպրոցների տնտեսական բազան, այս շրջանում բարելավեց դպրոցների դրությունը. ավելի

նրանց շատ թե քիչ կայուն բյուջե։ Առաջվա պես թուլ եր կոմկերիամիությունական կազմակերպությունների մասնակցությունը դպրոցի ներքին կյանքի կազմակերպման գործում։ Դպրոցների զարգացման մեջ սկսեց նոր շրջան։ Յեթե առաջ ստիպված եյին պայքարել դպրոցների համար (այս պայքարին կոմկերիամիությունական կազմակերպությունները հարմարվել եյին), այժմ անհրաժեշտ եր դնել արտադրության ուսուցման խնդիրներ, տեսական դիսցիպլինների դասավանդում, տեսականի և գործնականի միջև շաղկապի սահմանում։ Յեվ այս աշխատանքների նկատմամբ կոմկերիամիությունական կազմակերպությունները բավականաչափ պատրաստված չեյին։ Բացի բանվորների կրթության հետագա բացառիկ կարևոր աշխատանք—ձևակերպեց և մշակեց գյուղացի յերիտասարդության դպրոցի հարցը։

Գյուղը սոցիալիստական սկզբունքներով վերաշինելու նոր մարդկանց կադրեր պատրաստող գյուղացի յերիտասարդության դպրոցը միայն կոմկերիամիության շնորհիվ ստացավ իր իրավական ձևակերպումը Լուսժողկոմատում և ուրիշ բոլոր մարմիններում։ Ժողովրդական լուսավորության նահանգային բաժինների 1923 թ. նոյեմբեր ամսում կայացած համագումարն ամբողջապես ընդունեց կոմկերիամիության առաջարկությունները և խնդիրը փոխվեց գործնական շինարարության։ Գյուղը դեպի գյուղացի յերիտասարդության դպրոցների զաղափարը շատ դրական վերաբերմունք ցույց տվեց։ XIII համագումարի զեկուցողները՝ տեղական կազմակերպությունների կողմից կոմկերիամիության շարժման այս նոր զավակին ամեն կերպ աջակցելու մասին առավել ուժեղ կերպով առաջ տարան այդ գործը։ Կոմկերիամիությանը հաջողվեց Լուսժողկոմատի կուլտֆայի կողմից սկզբունքային համաձայնություն ստանալ գյուղի բոլոր բարձր տիպի դպրոցները գյուղացի յերիտասարդության դպրոցների վերածելու։

Իսկ ինչ վերաբերում է ժողովրդական լուսավորության սիստեմի վերակազմության մասին V համագումարի ընդունած վորոշումները կյանքում կիրառելուն, այս խնդրում կոմկերիամիության հաջողությունների անհնար եյին։ Ձևակերպված եր միայն 7-ամյակը, այն էլ լայն տարածում չստացավ։ Ինչ վերաբերում է քաղաքի II աստիճանի դպրոցներին՝ պետք է ասել, վոր մինչև այդ և դրությունը նույնն է։ Կոմկերիամիության կազմակեր-

պությունները մեծ աշխատանք կատարեցին Բ. Ու. Հ.-երի (ВУЗ) և բանֆակների կոմպլեկտացման խնդրում, բայց բարձրագույն դպրոցի ներքին կյանքի խնդիրներին այս շրջանում կոմյերիտմիութենական կազմակերպությունները չմոտեցան։ Անհրաժեշտ է նշել նաև մեկ փաստ, որ միության հնգամյակի օրը—1923 թ. հոկտ. 29-ին—կոմյերիտմիությունը բաց արեց «իր» ԲՈՒՀ-ը—կարլ Լիբկնեխտի անվան ինդուստրիալ-մանկավարժական ինստիտուտ, որի նպատակն էր՝ պատրաստել ֆաբրիկա-գործարանային դպրոցի աշխատավորներ։

Ցնտեսական և կրթական խնդիրներից այժմ անցնենք քաղաքական-լուսավորական խնդիրներին։

Նախ և առաջ նայենք կոմյերիտականների քաղպատրաստականության։

1923 թ. աշնանը անցկացրած հաժառուսական քաղստուգումը տվեց հետևյալ պատկերը.

ՌԿՅԵՄ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՔԱՂՍՏՈՒԳՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ն ա հ ա ն գ ն ե ր	Առաջին կատեգորիա (քաղանդրագետները) %%-ով	Ցերկրորդ կատեգորիա (քաղկոմպրագետները) %%-ով	Ցերրորդ կատեգորիա (քաղանդրագետներ) %%-ով
Արդյունաբերական շրջան . .	68,2	23,4	8,4
Հողագործական շրջան . .	66,5	25,4	8,1
Սիբիր	65,2	22,4	12,4
Հեռավոր Արևելք . . .	68,0	26,4	5,6
Ամառնամ հանրապետություններ .	52,5	26,5	11,0
Կիրղիզիայի հանրապետություն .	59,5	30,5	10,5
Ընդամենը 24 նահանգակ. և 2 դաշտակ. կազմակերպություններում	66,6	24,6	8,8

Զարմանալի չպետք է թվան այն թվերը, որոնք ցույց են տալիս, որ արդյունաբերական նահանգներում քաղանդրագետներն ավելի շատ են, քան հողագործական շրջաններում, որովհետև արդյունաբերական շրջաններում ամենից ավելի արագ կոմյերիմիության աճումն էր ընթանում, իսկ նորեկները, իրրև որոնք, իրենց պարտականության մակարդակով մոտում էին առաջին կատեգորիայի մեջ։

Քաղստուգումը ամբողջ լայնությամբ դրեց կոմյերիտականների քաղաքական կրթության խնդիրը, ստեղծված էր կոմյերիտմիութենական քաղաքական կրթության սիստեմ—նորեկների մութենական խմբակը—իբրև առաջին աստիճան, քաղխմբակը—իբրև յերկրորդ աստիճան և լենինիզմն ուսումնասիրող խմբակն—իբրև յերրորդ աստիճան։

Կոմյերիտմիութենական ակտիվի վորակը բարձրացնելու խնդրում կոմյերիտմիությունը առաջ տարավ պրոպկոլլեկտիվների գործը։ Պրոպկոլլեկտիվները տարբեր կազմակերպություններում կատարում էին զանազան ֆունկցիաներ՝ նրանք քննում էին բջիջներում տարվող պրոպագանդիստական աշխատանքը, համախմբում էին քաղխմբակների ղեկավարներին, ղեկավարում էին կոմյերիտմիութենական ակտիվի ինքնաղարգացման խմբակը։ Գյուղում, կոմյերիտականական ակտիվի պատրաստման ասպարիզում, մտցված էր մութենական ակտիվի դասընթաց—համագումարների ձևը, որը կիրառվում էր լայն կերպով։

Կուսակցության 25-ամյակին (1923 թ.) Միությունը ամբողջ լայնությամբ դրեց Միության մեջ կուսակցության դասերի ուժեղացնելու անհրաժեշտության խնդիրը։ Ուշադրություն էր դարձվում Միության անդամներին կուսակցության պատմության, նրա տրադիցիաներին, բոլշևիզմի սկզբունքներին ծանոթացնելը։ Սրա հետ մեկտեղ դրված էր նաև Միության անդամների ինտերնացիոնալ դաստիարակության խնդիրը—ուժեղացրած էր Արևմուտքի պատանեկական-կոմյերիտմիութենական շարժմանը ծանոթացնելու աշխատանքը, Միությունն սկսեց արտասահմանյան կազմակերպություններին բջիջներ ամրապնդել։

Մինչ վերաբերում է մասսայական աշխատանքներին, անհրաժեշտ է նշել, որ 1922 թ. «կոմյերիտմիութենական ծննդի» հաջողված «կոմյերիտմիութենական զատկի» միջոցով։ Անուհետև կոմյերիտմիութենական խորքերից առաջ եկավ «բերքի տոնը», իսկ նրանից հետո՝ «անտառի օրը»։ Այս բոլորն ստեղծում էր խորհրդային նոր ծիսակատարություն և յերիտասարդությունը կարում էր կրոնական ծիսակատարություններից։ Ինքնըստինքյան հասկանալի յե, որ կամպանիաների արդյունքը հնարավոր և ամբողջացնել միայն մշտական և սիստեմատիկ աշխատանքով, որը Միությունը տարավ գլխավորապես գյուղատնտեսական և հակակրոնական պրոպագանդաների գծով։

Այդ ժամանակաշրջանում լայն տարածվեց կոմյերիտմիութենական ակումբների շինարարությունը, որտեղ կենտրոնացվում էր հիմնական քաղ-լուսավորական աշխատանքը։ V համագումարն իբրև փորձ ընդունեց ազատ անդամակցության և ներքին ինքնավարության ակումբներ բաց անելու անհրաժեշտությունը։ Այս խնդրում հաջողվեց մի քիչ առաջ շարժվել և 1924 թ. (հուլիս) արդեն կար 5.163 կոմյերիտմիութենական ակումբ 136.944 անդամով, որոնցից Միության անդամները կազմում էին 61,4%։ Ինչ վերաբերում է խմբակների սիստեմատիկ աշխատանքներին և քաղ-լուսավորական աշխատանքի զանազան ճյուղերի տեսակարար կշռին, պատասխանը կտանանք հետևյալ աղյուսակից.

ՋԱՆԱԶԱՆ ՏԵՍԱԿԻ ԽՄԲԱԿՆԵՐԻ ԹԻՎԸ ՈՒՀԵՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Շրջանների անունները	Քաղաքական		Արվեստ		Սպորտ		Ընդամենը	
	Խմբակների թիվը	%%-ով	Խմբակների թիվը	%%-ով	Խմբակների թիվը	%%-ով	Խմբակների թիվը	%%-ով
1. Արդյունաբերական նահանգներ	1345	38,2	1103	31,4	627	17,8	3517	100
2. Հողագործական նահանգներ . .	2663	49,5	1645	28,3	938	16,2	5806	100
3. Ուկրաինա . . .	423	56,5	135	18,0	93	12,4	749	100
4. Հարավ-Արևելք .	586	43,7	480	35,8	139	10,4	1340	100
5. Կովկաս . . .	29	35,8	19	23,5	18	22,2	81	100
6. Ավտն. մարզերը և հանրապետ. .	589	49,0	329	27,4	163	13.6	1201	100
7. Սիբիր	306	36,7	335	40,2	98	11,7	834	100
8. Կիրգիզիայի հանրապետություն.	123	34,7	121	34,1	37	10,4	355	100
Ընդամենը ՄՍՀՄ	6523	43,9	4381	30,0	2177	14,9	14622	100

Այսպիսով մենք տեսնում ենք, որ քաղ-լուսավորական բնագավառում Միության աշխատանքն առաջ է գնացել և Միությունը մշակել է յերիտասարդության իդեոլոգիական պայքարի մի շարք մեթոդներ։

Որ քաղաքական կրթությունը բարելավելու համար կոմյերիմիութենական կազմակերպության ձեռք առած միջոցները վորոշ արդյունք տվին, վկայում է ներքև բերված աղյուսակը,

վորը ցույց է տալիս, թե ինչպես է ընդգրկում կոմյերիտականներին քաղկրթության սիստեմը—թե քաղաքում և թե գյուղում.

Վոր թվին	Ընդամ. ՀՄՄԿԿՑԻՄ անդամների և թեկնածուների թիվը	Սրանցից		Ընդամ. ՀՄՄԿԿՑԻՄ անդամների և թեկնածուների տոկոսը	Սրանցից	
		Ընդամենը վերակրթական խմբակներում	գյուղում		քաղ-լուսավորական խմբակներում	գյուղում
Առ 1/I—24 թ.	300.700	240.560	60.140	200.000	106.000	94.000
(1923—24 թ.)	100,0	80,0	20,0	100,0	53,0	47,0
տոկոսներով .	605.706	525.147	80.559	535.000	358.450	176.550
Առ 1/I—25 թ.	100,0	86,7	13,3	100,0	67,0	33,0
տոկոսներով .	831.519	675.126	159.393	935.000	427.250[1]	607.750
Առ 1/I—26 թ.	100,0	80,9	19,1	100,0	35,0	65,0
տոկոսներով .	939.951	516.734[2]	473.197	1.000.000	563.800[2]	536.800
Առ 1/I—27 թ.	100,0	52,6	47,4	100,0	51,2	48,8
տոկոսներով .						

Մենք տեսնում ենք, որ տարեցտարի աճում և քաղկրթության սիստեմի ընդգրկած կոմյերիտականների թիվը, թեպետ և պետք է ասել, որ կոմյերիտմիութենական քաղկրթության սիստեմի մեջ կատարվում էին մի շարք փոփոխություններ, ճշտումների մեջ կատարվում էին մի շարք փոփոխություններ, ճշտումներ և միայն այժմ նա առանում է քիչ թե շատ վերջնական ձև։

Խոսելով քաղլուսավորական աշխատանքների մասին, չի կարելի աչքաթող անել այն փաստը, որ կոմյերիտմիութենական կազմակերպությունն ամրապնդեց թերթերի և ամսագրերի ցանցը, որ 1925 թվից Միությունն ունի իր օրաթերթը—«Комсомольская Правда»-ն, որ շարժման ղեկավարության մեջ հսկայական դեր է խաղում։

V համագումարից հետո աճում և նաև կոմյերիմիութենական գիրքը։

[1]) Միայն շրջկոմների մեջ ընդգրկողների թիվը։

[2]) Կուսցանցով ընդգրկվածները (184.687 հ. գյուղում և քաղաքում) ապրում են մեծ մասամբ Առ 1-ն հունվարի 27 թվի ընդգրկման ցած տոկոսը գյուղական մեջ չեն մտել։ Առ 1-ն հունվարի 27 թվի ընդգրկման ցած տոկոսը գյուղական մեջ չեն մտել։ Առ 1-ն հունվարի 27 թվի ընդգրկման ցած տոկոսը քաղաքում բացատրվում է նրանով, որ քաղաքի կոմյերիտականների զգալի մասը սովորում է Գլխբաղլուսի և Գլխարհլուսի ցանցում։

Այսպես, որինակ, «Молодая Гвардия» հրատարակչությունը կոմյերիմիությենական գրականության (յերիտասարդական հարցերի նկատմամբ) ավել է՝

1922—23 թ.	102	անուն	439	մամուլ	777.500 տիրաժով
1923—24 »	248	»	1.224	»	2.342.500 »
1924—25 »	560	»	2.878	»	9.814.487 »
1925—26 »	576	»	2.882	»	7.336.127 »

§ 19. ՄԻՈՒԹՅԱՆ ԱՃՈՒՄԸ ՅԵՎ ՆԲԱ ԿԱՆՈՆԸ

Ինչպես վերևում արդեն նշեցինք, յերկրի տնտեսական աճման հետևանքով, աճում և ընդարձակվում եր նաև կոմյերիմիության աշխատանքը։

Յեթե մենք մի ակնարկ գցենք կոմյերիմիության շարժման աճման վրա նրա ամբողջ գոյության ընթացքում, հետևյալը կտեսնենք.

	Անդամներ	Թեկնածուներ
1917 թ. վերջը . . .	15.000	—
1918 թ. հոկտեմբերին .	22.000	—
1919 թ. սեպտեմբերին	96.000	—
1920 թ. հոկտեմբերին	482.000	—
1921 թ. հոկտեմբերին	400.000	—
1922 թ. հոկտեմբերին	260.000	—
1923 թ. հունվարին .	284.545	13.000
1924 թ. հունվարին .	406.660	19.400
1925 թ. հունվարին .	1.020.456	94.040
1926 թ. հունվարին .	1.640.107	120.250
1927 թ. հունվարին .	1.964.319	129.412
1927 թ. հոկտեմբերին	1.912.435	125.000
		99.708

Բերված աղյուսակը այն և ասում, որ միության ամենաբուռն աճումը յեղել և հատկապես համագումարից հետո, 1924 թ. ընթացքում, յերբ Միությունը աճեց 600.000 նոր անդամներով։ Այսպես պատասխանից բանվոր և գյուղացի յերիտասարդությունը փոփոխված պայմաններին լենինի մահվան և այն ստեղծանոր գործական աշխատանքին, որը նա իր կացնում Միությունը։

Տեսնենք այժմ, թե ԽՍՀՄ-ի յերիտասարդությունից ինչքան և ընդգրկված կոմյերիմիությենական կազմակերպության շարքերում։

ԽՍՀՄ ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԸՆԴԳՐԿՈՒՄԸ ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Վո՞ր թվին	Յերիտասարդների թիվը 14—23 տ.	Կոմյերիտականների թիվը	%
Աս 1-ն հոկտ. 1929 թ.	25.000.000	260.000	1,0
Աս 1-ն հունվ. 1924 թ.	25.000.000	406.000	1,6
Աս 1-ն հունվ. 1927 թ.	29.000.000	2.089.951	7,4

Հետևապես մենք տեսնում ենք, վոր նոր տնտեսական քաղաքականության պայմաններում տարած 5 տարվա աշխատանքի ընթացքում, յերիտասարդության ընդգրկումը ավելացավ 7 անգամ։

Այս հսկայական արդյունքը անհրաժեշտ և ամեն կերպ ընդգծել, բայց և ամենայն վճռողականությամբ հայտարարել, վոր գծել շատ անբավարար է։ Տեսնենք այժմ, թե սոցիալական դրության որ խավերից ում եր ընդգրկում և ընդգրկում է այժմ իր շարքերում կոմյերիմիությունը։

Յեթե մեր անալիզի յելակետը ընդունենք V համագումարը վորից հետո միայն իսկապես սկսած, սկսում է կոմյերիմիության նական շարժման քիչ թե շատ ստույգ վիճակագրությունը, 1922 թ. հոկտեմբերի 1-ին ըստ սոցիալական կազմի ստանում ենք հետևյալ պատկերը։

Ճյուղերի անունը	Տոկոսներով				
	Բանվոր	Գյուղացի	Ծառայող	Այլ	Ընդամ.
Արդյունաբերական . .	40,6	29,3	17,5	12,6	100,0
Հողագործական . . .	22,7	50,1	15,2	12,0	100,0
Ուկրայինա	39,1	30,1	20,3	10,6	100,0
Հարավ-Արևել. մետ. .	20,2	67,8	6,7	5,3	100,0
Անդրկովկաս	21,8	56.2	9,5	12,5	100,0
Ավտոն. մարզ. և հանր.	25,4	53,7	12,3	8,6	100,0
Սիբիր	19,5	66,0	6,1	8·4	100,0
Դերգինսկի անվ. . .	25,8	58,8	11,7	3,7	100,0
Հեռավոր Արևելք . .	—	—	—	—	100,0
Մոլին Ասիա	11,8	60,9	10,5	16,8	100,0
Ընդամենը ԽՍՀՄ	28,2	46,7	13,9	11,2	100,0

Հետևապես մենք տեսնում ենք, վոր ԽՍՀՄ-ում մոլին թվով

Բանվորները . . . 28,2% -ն է կին
Գյուղացիները . . . 46,7 »
Ծառայողները . . . 13,9 »
Այլ . . . . . 11,2 »

Յետև գնանք կոմկերիամիութեյան պատմութեյան հետևները, զանազան սոցիալական կատեգորիաների հետևյալ պատկերը կունենանք։

Բանվորներ Միութեյունում (արդյունաբերական յեվ գյուղատնտես.)

1924 թ. հունվարի 1-ին	40,6%
1925 թ. հունվարի 1-ին	42,8 »
1926 թ. հունվարի 1-ին	43,7 »
1927 թ. հունվարի 1-ին	42,6 »

Գյուղացիութեյունը Միութեյան մեջ

1924 թ. հունվարի 1-ին	40,5%
1925 թ. հունվարի 1-ին	45,1 »
1926 թ. հունվարի 1-ին	46,0 »
1927 թ. հունվարի 1-ին	47,5 »

Արհեստավորների յեվ տնայնագործների միութեյան մեջ

1925 թ. հունվարի 1-ին	1,2%
1926 թ. հունվարի 1-ին	1,4 »
1927 թ. հունվարի 1-ին	1,7 »

Այլ Միութեյան մեջ

1924 թ. հունվարի 1-ին	18,2%
1925 թ. հունվարի 1-ին	10,9 »
1926 թ. հունվարի 1-ին	8,9 »
1927 թ. հունվարի 1-ին	8,2 »

Բերված թվերը բավականին համոզեցուցիչ ասում են, վոր Միութեյունն աճում եր բանվոր և գյուղացի յերիտասարդութեյան հաշվին, վոր միութեյան պրոլետարական կորիզը զգալիորեն ամրապնդվեց, իսկ յերիտասարդութեյան տոկոսը կրճատվեց։ Տեսնենք այժմ, թե ինչպես ԽՍՀՄ յերիտասարդութեյան զանազան սոցիալական շերտավորումները ընդգրկված են կոմկերիամիութեյան շարժումով։

Կոմկերիտական հասակ ունեցող գազգյահի բանվոր յերիտասարդութեյունը հաշվում եր 1.400.000 հոգի—կոմկերիամիութեյան մեջ ընդգրկված և միայն 600.000 հոգի, կամ 42,8%։ Կոմ-

կերիտական հասակ ունեցող բատրակներ կային 1.000.000, որանցից միութեյան մեջ առ 1-ն հունվարի 1927 թ. հաշվում եր 154.302 հոգի կամ՝ բատրակների և գյուղատնտեսական բանվորների ընդհանուր թվի 15%-ը։ ԽՍՀՄ չքավոր և միջակ յերիտասարդութեյունը 18.000.000-ից պակաս չե, կոմկերիամիութեյան մեջ են մոտ 1.000.000, կամ 5,5%։ Կոմկերիամիութեյան մեջ ընդգրկված այլ յերիտասարդութեյան տոկոսը 1-ից ցածր և (0,3%)։

Այս կերպ մենք տեսնում ենք, վոր կոմկերիամիութենական շարժումը ունի հսկայական հեռանկարներ, և նախ և առաջ՝ հին խնդրի իրականացումը—պազգյահի բանվոր յերիտասարդութեյունը 100%-ով ընդգրկել միութեյան մեջ։

Այժմ տեսնենք բջիջների թվի աճման շարժումն ինչպես ընդհանուր, այնպես ել առանձին համբերով։ Ներքև բերված աղյուսակը այս կերպ և պատասխանում հարցին.

Տարի յեվ ամսաթիվ	Ընդամենը բջիջ		Ըստ տիպերի					
			Ֆաբր.-գործ. և տրանսպ.		Գյուղական		Մնացածներ	
	Բացարձակ	Տոկոսներով	Բացարձակ	Տոկոսներով	Բացարձակ	Տոկոսներով	Բացարձակ	Տոկոսներով
Առ 1-ն հոկտ.-ի 22թ.	16496	100,0	2475	15,0	11184	67,8	2837	17,2
» 1-ն հունվ. 24 »	23921	100,0	4832	20,2	14065	58,8	5024	21,0
» 1-ն » 25 »	39797	100,0	6860	17,2	26772	67,3	6165	15,3
» 1-ն » 26 »	57137	100,0	7972	14,0	41915	73,3	7250	12,7
» 1-ն » 27 »	65806	100,0	8292	12,6	48828	74,2	8686	13,2

Առ 1-ն հունվարի 1927 թ. յեղած ցենզային ձեռնարկութեյունների ընդհանուր թվից միայն 66,3%-ում կային կոմկերիամիութեյան բջիջներ։

Ինչ վերաբերում է արդյունաբերութեյան առանձին տեսակներին, կոմկերիամիութեյան աշխատանքի հետևանքով այսպիսի պատկեր է առացվում.

Խոշորները (500 և ավել բանվորներով)	ընդգրկված են	100%-ով	
Միջակները (100—500	»)	»	» 95,0 »
Մանրերը (50—100	»)	»	» 75,0 »
» (մինչև 50	»)	»	» 40,0 »

Ինչ վերաբերում է գյուղին, այնտեղ 7 բնակչեհին մի[illegible] թվով 1 բջիջ է գալիս։

1926 թվականի ընթացքում բացարձակապես չերևան չեկավ կոմկերիտմիութեան աճման թափի թուլացում բանվոր չերիտասարդության հաշվին։ Այսպես, որինակ՝ չեթե վերցնելու լինենք 1926 թ. հունվարից մինչև VIII համագումարի ժամանակամիջոցը, Միութիւնը ամբողջութեամբ աճել է 16,6%-ով – արդյունաբերական բանվորների թիվը մեծացավ 11,4%, բատրակներինը՝ 26,9%, գյուղացիներինը՝ 34,0% այլք-ինը՝ 22,2%։ Ինչպես կարելի չե բացատրել, վոր միութիւնը բանվոր չերիտասարդության հաշվին այդպես դանդաղ է աճել։ Մի շարք պատճառներով։

Նախ և առաջ՝ վոր կոմկերիտմիութեան մեջ բանվոր չերիտասարդության ընդգրկումը հետ ե՛ր ճնում արտադրության մեջ չերիտասարդության թվի աճումից։

Յերկրորդ՝ նրանով, վոր Միութեան մասսայական աշխատանքը դեռ հարկ չեղածին չափ չե՛ր հարմարվում և չի հարմարվում բանվոր չերիտասարդության զանազան շերտերի առանձնահատկութիւններին և պահանջներին։

Այժմ դիտենք Միութեան կազմը ըստ սեռի և տեսնենք՝ ինչպիսի փոփոխութիւններ եչին կատարվում կոմկերիտմիութենական շարժման աճման պրոցեսում։

Վիճակագրական տվյալները տալիս են հետևյալ պատկերը։

Միութեան մեջ կար

	Տղա	Աղջիկ
	Տոկոսներով	
1922 թ. հոկտեմբերի 1-ին	81,7	18,3
1924 թ. հունվարի 1-ին	84,3	15,7
1925 թ. հունվարի 1-ին	83,9	16,1
1926 թ. հունվարի 1-ին	80,3	19,7
1927 թ. հունվարի 1-ին	78,7	21,3
1927 թ. ապրիլի 1-ին	78,7	21,3

Աղջիկների թիվը կոմկերիտմիութեան մեջ, չնայած վորոշ առաջադիմութիւններին, պարզապես անբավարար է։ չի կարելի մոռանալ այն փաստը, վոր կոմկերիտական հասակ ունեցող չերիտասարդության ընդհանուր թվում կանանց մասը կազմում է կեսից ավելին։

Վերևում մենք մի քանի անգամ խոսել ենք Միութեան կուսակցական կորիզի նշանակութեան մասին, այն մասին, թե կուսակցական կորիզի միջոցով կուսակցութիւնը դեկավարում է կոմկերիտմիութենական շարժումը։

Ի՞նչ են ասում թվերը Միութեան կուսակցական կորիզի քանակի և նրա տեսակարար կշռի մասին։

Այս հարցի նկատմամբ թվերը տալիս են հետևյալ պատկերը։

Կուսկորիզը Միութեան մեջ (ՀԿԿ-ի անդամների յեվ թեկնածուների թիվը)

Առ 1-ն հոկտեմբերի	1922 թ.	24.463 — 9,9%
» 1-ն հունվարի	1924 թ.	38.380 — 9,4 »
» 1-ն հունվարի	1825 թ.	83.230 — 8,2 »
» 1-ն հունվարի	1926 թ.	140.041 — 8,8 »
» 1-ն հունվարի	1927 թ.	172.189 — 8,8 »
» 1-ն հուլիսի	1927 թ.	178.797 — 8,8 »

Հետևաբար մենք տեսնում ենք, վոր կուսակցական կորիզի աճումը հետ է ճնում կոմկերիտմիութենական շարժման ընդհանուր աճումից, և վոր Միութիւնը դեռ շատ հեռու չե՝ կուսակցական կորիզը Միութեան մեջ մինչև 25% բարձրացնելու մտքից՝ VI համագումարի դիրեկտիվը իրականացնելուց։

Ինչ վերաբերում է Միութեան գյուղական՝ առանձին վերցրած՝ մասին, այստեղ հետևյալ պատկերն է տալիս։

Կոմկերիտմիութեան գյուղական բջիջներում կուսկորիզը կազմում եր՝

Առ 1-ն հունվարի 1925 թ.	4,0%
» 1-ն հունվարի 1926 թ.	4,6 »
» 1-ն հունվարի 1927 թ.	6,2 »

Վոր մենք պետք է շատ անբավարար համարենք։

Վերջապես պետք է տալ կոմկերիտմիութեան շարքերից կուսակցութեան մեջ վոխադրման պատկերը։ Հայտնի է, վոր չերիտասարդական պրոլետարական շարժման գլխավոր նպատակներից մեկն այն է, վոր իր շարքերում պատրաստի վողջ բանվոր[illegible] շարժման շտաբի և քաղաքական դեկավարի՝ կուսակցութեան համար հուսալի հերթափոխ։

Կոմկերիտմիութեան կկ վիճակագրական բաժնի մոտավոր տվյալներով 1918 թ. մինչև 1923 թ. Միութիւնը մեր կուսակցական շարքերը հանձնել է 70.000 հոգի։ Հետագայում Համ. կկ (բ) կկ վիճակագրական տվյալների համաձայն, հանձնման պրոցեսը կատարվել է այս կերպ.

1/I-ից 24թ.—1/VII 24թ.	հանձնվ.	17836	հ.	կամ կուս.	մեջ	ընդգրկվ.	ընդ.	թվի 8,4%
1/VII» 24 » —1/I 25 »	»	17867 »	»	»	»	»	»	» 17,2 »
1/I » 25 » —1/VII 25 »	»	44507 »	»	»	»	»	»	» 23,4 »
1/VII» 25 » —1/I 26 »	»	36907 »	»	»	»	»	»	» 28,1 »
1/I » 26 » - 1/VII 26 »	»	30796 »	»	»	»	»	»	» 32,3 »
1/VII» 26 » —1/I 27 »	»	26006 »	»	»	»	»	»	» 36,2 »
1/I » 27 » —1/VII 27 »	»	22539 »	»	»	»	»	»	» 37,5 »

Մենք տեսնում ենք, որ կոմկերիմիութեան ամբողջ գոյութեան ընթացքում կուսակցութեան մոտ մեկ քառորդ միլիոն նոր անդամներ ավել է կոմկերիմիութիւնը։ Սա վորոշ չափով խոսում է ՄՍՀՄ կոմկերիմիութենական շարժման արդիւնքների մասին ևս, երբ տեսնում ենք, որ կուսակցութեան շարքերը բոլոր ընդունվողների մեկ կերրորդը դուրս են գալիս կոմկերիմիութիւնից։ Ուրեմն, կոմկերիմիութիւնը վոչ թե խոսելով, այլ և գործով հանդիսանում է «կոմմունիզմի դպրոց»։

Մինչև հիմա կոմկերիմիութենական կազմակերպութեան աճման դրական կողմերի մասին եյինք խոսում. այժմ անցնենք Միութեան կազմի պրոբլեմի հետ ևս կապված մի շարք հարցերին, վորոնք, սակայն, խոսում են բացասական կողմերի մասին։

Այս կարգի խնդիրների թվում, առանց վորևե համեմատութեան, առաջի տեղը պետք է դնել կոմկերիմիութենական կազմակերպութիւնների կազմի հոսունութեան պրոբլեմը։ Հոսունութիւնը (անդամների արագ փոփոխումը) ուղեկցում է կոմկերիմիութենական կազմակերպութիւնների աճումն ամբողջ ընթացքում։ Պարզ պատկերացման համար վերցնենք ՄՍՀՄ-ի կոմկերիմիութենական շարժման զարգացումը վերջին 5-ամյակում։

Ահա որինակներ. Վարոնեժի կազմակերպութեան—1923 թ. հունվարի 1-ից մինչև 1924 թ. 1/I-ը առաջ են յեկել 134 բջիջ, կազմալուծվել 102 բջիջ. Սամարայի կազմակերպութիւն—նույն ժամանակամիջոցում առաջ են յեկել 172 բջիջ, կազմալուծվել 72. Ստալինգրադի (Ն. Ցարիցին) կազմակերպութիւն—1923 թ. մարտի 1-ից մինչև 1924 թ. 1/I առաջ են յեկել 53 բջիջ, կազմալուծվել 51 բջիջ. Սարատովի կազմակերպութիւն—1923 թ. սեպտեմբերի 1-ից մինչև 1924 թ. 1/I առաջ են յեկել 74 բջիջ, կազմալուծվել 43։ Այս այն է ցույց տալիս, վոր կոմկերիմիութենական կազմակերպութիւնները դեռ չեն սովորել ամրացնել դեպի Միութիւն գնացող յերիտասարդութիւնը, և վկայում է դասակարգչական աշխատանքների թուլութիւնը։ Վերցնենք այժմ ավելի ուշ ժամանակաշրջան։ VI համագումարից մինչև 1925 թ.

հոկտեմբերի 1-ը ժամանակաշրջանում ամբողջ Միութիւնում առաջ են յեկել 28.645 բջիջ և նույն ժամանակամիջոցում կազմալուծվել 4.378 բջիջ կամ նոր կազմակերպվածների թվի 15,3%։ Ըստ վորում, պետք է նշել, վոր այս ժամանակաշրջանում կազմալուծման թափն աճում է։ Որինակ՝ 1924 թ. հունիս—դեկտեմբեր նա հավասար է 13,7%, 1925 թ. հունվար—հուլիս—15,2% և 1925 թ. հուլիս—սեպտեմբեր—20,7%։ Ըստ վորում կազմալուծվում են, վոչ միայն գյուղացիական բջիջները, երբև ավելի թույլ բջիջներ, այլ և բանվորական բջիջները։ Կազմալուծվածների ամբողջ թվից—գյուղացիական բջիջներ 55% եյին, ֆաբրիկա-գործարանային և տրանսպորտինը՝ 25%, այլք (խորհրդային, դպրոցական և ուրիշ)՝ 20%։

Ինչ վերաբերում է Միութեան անդամների ընդունվելուն և դուրս յելնելուն, կարելի յե նշել, վոր VI (1924 թ. հուլիս) և VII (1926 թ. մարտ) համագումարների միջև յեղած ժամանակաշրջանում Միութեան մեջ ընդունված են՝ 1.106.126 հոգի, իսկ Միութիւնից դուրս են յեկել 201.397 հոգի, կամ ընդունվածների 18%։

Միութիւնից հեռացածները ըստ հիմնական կատեգորիաների բաժանվում են այս կերպ.

ա) Դուրս են յեկել մեխանիկորեն և անձնական ցանկութեամբ 59.654 հոգի—25,5%։

բ) Աշխատանքի գնալու համար հաշվառումից դուրս են յեկել և մյուս կազմակերպութիւններում հաշվի չեն առնվել 34.089 հոգի—17,5%։

գ) Վտարվել են Միութիւնից ծրագրի և կանոնադրության խախտման համար 64.654 հոգի—34%։

դ) Վերահաշվառման ժամանակ հայտնաբերված և «մեռյալ հոգիներ» 40.000 հոգի—20%։

Այս ժամանակաշրջանում Միութիւնից հեռացածների սոցիալական կազմը հետևյալն է՝

	Մեխանիկորեն և անձնական ցանկությամբ հեռացածները	Վտարված են
Բանվորներ	22,0%	23,0%
Բատրակներ	5,0 »	4,0 »
Գյուղացիներ	51,0 »	50,0 »
Այլք	22,0 »	24,0 »

Իսկ ինչ բանի համար են հեռացվել կոմյերիտմիությունից 1 տարի և 9 ամսվա մեջ 67.654 հոգին։

	1924 թ. 1-ին կիսամյակ	1924 թ. հուլիս–սեպտեմբեր
Անկարգապահություն	33,9%	38,1%
Անհարազատ տարրը, բալլաստ	21,9 »	14,5 »
Հարբեցողություն, սրիկայություն (գողություն, քրեական հանցագործություն, անբարոյականություն)	23,0 »	31,1 »
Կրոնակ. ծեսակատարություններ	7,7 »	5,1 »
Այլ պատճառներ	11,7 »	11,2 »

Ինչ վերաբերում է այս ժամանակաշրջանում Միությունից ինքնակամ հեռացողներին, անհրաժեշտ է նշել, որ դրանց մեծ մասն իրենց հեռանալը Միությունից պատճառաբանում էին կոմյերիտմիությունական կազմակերպությունների աշխատանքների մեթոդներից և ձևերից իրենց անբավական լինելովը։

Ցեվ վերջապես վերցնենք ամենավերջին ժամանակաշրջանը— Միության VII և VIII համագումարների միջև (1926 թ. մարտ—1928 թ.)։ Այս ժամանակաշրջանը Միությունից հեռացողների ավելի մեծ աճում է տալիս։

Ահա փաստերը.

ժամանակաշրջան	Ընդամենը հեռացել են Միությունից		Սրանց թվում հեռացել են					
			Անձն. ցանկությամբ		Մեխանիկորեն		Վտարված են	
	բացարձակ թիվը	% հարաբերական կշիռը տարեկան ընդհ. թվի	բացարձակ թիվը	% հարաբերական կշիռը տարեկան ընդհ. թվի	բացարձակ թիվը	% հարաբերական կշիռը տարեկան ընդհ. թվի	բացարձակ թիվը	% հարաբերական կշիռը տարեկան ընդհ. թվի
1925 թ. ամբ. ընթացք.	154.878	11,4	18.741	1,4	78.368	5,8	57.769	4,3
1926 թ. ամբ. ընթացք.	264.444	14,3	11.614	0,6	179.148	9,7	73.682	4,0
1927 թ. 1-ին կիսամ.	156.645	7,8	7.469	0,4	107.237	5,3	41.939	2,0

Իսկ յեթե համեմատելու լինենք Միությունից հեռացումները նրա աճման հետ, հոսունության համեմատական ավելացումը միանգամայն ակնհայտ կլինի։

	Ընդունված է Միութ. մեջ	Հեռացել են Միությունից	Հեռացողն. %-ը ընդուն. նկատմ.
1925 թ. ամբողջ ընթացքում .	817.461	154.878	19,0
1926 թ. » » .	564.292	264.444	46,9
1927 թ. 9 ամսվա » .	297.141	193.538	65,1

Այս ժամանակաշրջանում մեխանիկորեն հեռացածների խումբը կազմված է մեծ մասամբ անձնական ցանկությամբ հեռացողը կազմված է մեծ մասամբ անձնական ցանկությամբ հեռացողներից, առանց այս մասին դիմում տալու (պասսիվ հեռացում)։

Անհրաժեշտ է նշել, որ Միությունից հեռացողների թվում տարեցտարի անշեղորեն աճում է տարիքի անհամապատասխանության (23 տարեկանից մեծ) հեռացվածների թիվը։ Նույն համար (23 տարեկանից մեծ) հեռացվածների թիվը։ Այսպես, 1925 թ. հեռացվել են նման 45.000 հոգի, 1926 թ.— 85.000, իսկ 1927 թ. առաջին կիսամյակում—55.000 հոգի։

Ինչպես տեսնում է ընթերցողը, հոսունության պրոբլեմը մենք պատահական կերպով չենք, որ դրել ենք անմիջապես կոմյերիտականներին կուսակցությանը հանձնելու հարցից հետո։ Յեթե առաջինն ամբողջ լայնությամբ ցույց է տալիս աշխատանքի դրական կողմը, յերկրորդը ցույց է տալիս աշխատանքի բացերը, աշխատանքի մեթոդների թույլ հարմարվածությունը յերիտասարդության զանազան շերտերի նկատմամբ, կոմյերիտմիության ներսում տարվող դասակարգակից աշխատանքի թուլությունը։ Միությունը տակավին վատ է դիմավորում ամեն մի կոմյերիտական նորեկի, վատ է նրան «մշակում»։ Այսպիսի յեզրակացություն անհրաժեշտ է անել այն անալիզից, որով մենք քիչ առաջ զբաղվեցինք։

Յերկրորդ մոմենտը, որի վրա մենք ցանկանում ենք դարձնել ընթերցողի ուշադրությունը, վերաբերում է դյուղում Միության աճմանը։

Յեթե մենք դիտենք կոմյերիտմիության աճումը դյուղում վերջին տարիների ընթացքում, կստանանք հետևյալ պատկերը.

Տարի յեվ ամսաթիվ	Ընդամենը անդամների թիվը գյուղերում	Բաժին	Բաժանոց	Մեջլիս	Կոլխոզ	Ընդամենը
		Բ ա ն ց ի ց				
Ա.ը 1/I—26 թ.	890.000	39.160	97.900	443.220	257.210	52.510
տոկոսներով .	100,0	4,4	11,0	49,8	28,9	5,9
Ա.ը 1/I—27 թ.	1.055.000	39.035	129.765	446.310	349.205	70.685
տոկոսներով .	100,0	3,7	12,3	44,2	33,1	6,7
Ա.ը 1/X—27 թ.	1.015.000	37.555	126.875	425.435	350.995	74.140
տոկոսներով .	100,0	3,7	12,5	41,9	34,6	7,3
Փոփոխ. 1/I—26 թվից մինչև 1/X—27 թ. .	+125.000	—1.605	+28.975	—77.785	+93.785	+21.630
տոկոսներով .	+ 14,0	— 4,1	+ 29,6	— 4,0	+ 36,5	+ 41,2

Բերված թվերի հիման վրա մենք տեսնում ենք, որ 1926 թ. հունվար 1-ից մինչև 1927 թ. հոկտեմբերի 1-ը բացարձակորեն և համեմատաբար գյուղում աճել են յերեք սոցիալական խմբակ— բատրակները, միջակները և ծառայողները:

Միևնույն ժամանակ բանվորների և չքավորների խմբակը պակասեց թե բացարձակորեն և թե համեմատաբար:

Ծառայողների թիվը աճել է 41,2%-ով
Միջակների » » . . . . . 36,5 »
Բատրակների » » . . . . . 29,6 »
Չքավորները պակասել են . . . . . 4,0 »
Բանվորները » » . . . . . 4,1 »

Գյուղին վերաբերող ընդհանուր աճում—125.000 հոգուց միչակներին բաժին է ընկնում 93.785 հոգի կամ ամբողջ աճման 75%: Յեթե Միության կազմը գյուղում բաժանենք յերեք խմբակի՝ ա) բանվորներ, բատրակներ և չքավորներ, բ) միջակներ, գ) ճացածներ, այդ դեպքում հնարավոր է ցույց տալ, որ առաջին խումբը կծկվում է, յերկրորդը՝ ավելանում է, իսկ յերրորդը նույնպես ավելանում է:

Ահա թվերը.

	I խումբ	II խումբ	III խումբ
1926 թ. 1/I	65,2%	28,9%	5,9%
1927 թ. 1/I	66,2 »	33,1 »	6,7 »
1927 թ. 1/X	58,1 »	34,6 »	7,3 »

Մենք տեսնում ենք, որ վերջին տարիների ընթացքում Միությունը գյուղում աճում էր գլխավորապես միջակի հաշվին, վորը կարելի յե բացատրել նրանով, վոր Միությունը գիտակցորեն աշխատում էր իր ազդեցության տակ առնել միջակ յերկրացուների տնտեսությունը:

Բայց, պետք է ուղղակի ասել, վոր Միության տեղական մի շարք կազմակերպություններ, չափի զգացումը կորցրել են և այնպիսի պատկեր էր ստացվում, վոր միջակների լավագույն մասը Միության մեջ ներգրավելով, թույլ են տալիս տանում, իսկ յերբեմն էլ մոռանում են բատրակների և չքավոր յերկտասարդության մեջ աշխատանք տանելը:

Ներկայումս, Միությունն ամուր կուրս է վերցրել ուժեղացնելու աշխատանքը բատրակների և չքավոր յերկտասարդության շրջանում, հիշելով, վոր նա Միության ամենամոտիկ յերկտասարդությունն է և կամ՝ ինչպես ասում են՝ Միության հենարանը գյուղում:

Վերջապես լինչ կարելի յե ասել իբրև արդյունք Միության կազմի և նրա աճման խնդրի մասին:

Նախ և առաջ անհրաժեշտ է նշել Միության պրոլետարական կոլխոզի ամրապնդումը: 1922 թ. 28,2%-ից բանվորական կոլխոզը 1927 թ. բարձրացավ մինչև 42,6%: Այս Միության խոշորագույն նվաճումն է:

Յերկրորդ՝ անհրաժեշտ է նշել, վոր Միությունն առաջ շարժվեց բատրակ յերկտասարդության ներգրավելու գործում, թեպետ այս առաջ գնալը բացարձակորեն անբավարար է:

Յերրորդ՝ Միությունն ունեցել է մեծ նվաճումներ միջակ յերկտասարդության ներգրավելու խնդրում:

Բացերի թվում, վորոնք անհրաժեշտ է վերացնել, մենք նշում ենք հոսունությունը, «մեռյալ հոգիների» առկայությունը, չքավոր յերկտասարդության թույլ ներգրավումը Միության մեջ և Միության մարտական լողունգի՝ արտադրության մեջ աշխատող բանվոր յերկտասարդության 100-ը կոմյերիտմիութենական կազմակերպության մեջ ներգրավելու դանդաղ իրականացումը:

Այժմ հենց այս հարցերի լուծմամբ է զբաղված կոմյերիտմիությունը:

§ 20. ՄԱՆԿԱԿԱՆ ԿՈՄՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ

Վերևում մենք արդեն ասացինք, որ մանկական շարժման խնդիրը Միությունը լայն կերպով դրեց իր V համագումարում։ Պետք է ասել, որ մանկական կոմմունիստական շարժում ստեղծելու փորձեր առաջ էլ կային։ 1919, 20, 21 թվականներին մի շարք տեղերում գոյություն ունեին «Պատկոմ»*) խմբեր՝ Տուլայում մինչև իսկ կազմակերպված եր «մանկական կոմմունիստական կուսակցություն» իր թերթով, բայց այս բոլորը մի ինչ որ փորձ եր, առանց միասնական և հաստատուն սկզբունքների, և դրված չեր մանուկների մեջ մասսայական լայն աշխատանք տանելու խնդիրը։ Ինչն սակայն կոմկերիսմիությունական կազմակերպությանը առաջ քաշել մանկական կոմմունիստական շարժման հարցը։ Նախ և առաջ իր հերթափոխի հոգսը։ Մեր յերկրում սոցիալիստական հեղափոխությունն իր անզուսպ վազքով դեպի առաջ ներգրավում եր բնակչության նոր և նոր շերտեր։ Հասարակական-քաղաքական կյանքը, պրոլետարիատի աշխատանքն ու պայքարը հեղափոխության հետևանքով հասկանալի և մատչելի դարձավ յերրորդ սերնդին։ Մեր խորհրդային աշխատանքային դպրոցը չկարողացավ և մինչև հիմա էլ չի կարողանում ընդգրկել մանուկների ամբողջ աճող սերունդը և ոգտագործել իր պատերի մեջ մանուկների վողջ ակտիվությունը։ Յեվ բացի այս պետք է հիշել, որ մենք դեռ ևս ապրում ենք դասակարգային հասարակության մեջ, վորտեղ պայքար է գնում դաստիարակության և առաջին հերթին՝ պայքար մանուկների համար։

Հաշվի առնելով այս դրությունը, կոմկերիսմիությունը, արդեն հենվելով յեղած փորձի փշրանքների վրա, առաջ բերեց մանկական կոմմունիստական մասսայական լայն շարժման գաղափարը, նախակոմկերիսմիութենական կազմակերպությունը, վորը իրեն նպատակ պետք է դներ դաստիարակել քաղաքական և կուլտուրական գիտակցության ավելի բարձր մակարդակի վրա կանգնած ապագա կոմկերիստականին։ Ժամանակ հարկավորվեց, վորպեսզի մանկական կոմմունիստական շարժումը ձևակերպվի վորոշակի, համաչափ շրջանակների մեջ։ Շարժումը մի շարք զանազան ձևեր անցավ մինչև վոր ամբողջ ԽՍՀՄ համար միասնական սկզբունքներ ստեղծեց։

*) Պատանի կոմմունիստների մանկական խմբեր։

Այսպես, որինակ՝ Ուկրաինայում մանուկների կազմակերպությունները, ժխտելով բուրժուական մանկական շարժման (բոյ-սկաուտների) մեթոդների ընդորինակումը, ընկնում եյին այլ ծայրահեղության մեջ՝ ընդորինակում եյին հասակավորների կազմակերպությունների ձևերը (բջիջներ, կոմիտեներ), մանկական հեղհեղուկների մանուկները դառնալու հեղհեղական կուրս եյին վերցնում։ Անդրկովկասում, պատանի կոմմունիստների կազմակերպությունները ցածրից վերև, բջիջից մինչև հանրապետական մասշտաբով կենտրոնական խորհուրդը, ընտրության սկզբունքի վրա եյին հիմնվում։ Մի ժամանակ այսպիսի գեմոկրատիզմը իրեն լավ եր զգում գլխավորապես հրամանատարության կողքին։

ՌՍՖՍՀ մանկական շարժումը, կազմակերպչական շինարարության տեսակետից, մեկից անցավ ֆաբրիկաներին և հիմնարկներին կից պիոներ-ջոկատներ հիմնելու, ոգտագործելով և հարմարեցնելով բուրժուական մանկական շարժման առաջ կողմերը։

Մի քանի տեղերում, սկզբներում մինչև իսկ այն եր ստացվում, որ նոր ցուցանակի տակ ապրում եյին սկաուտիզմի հին կյանքով կազմակերպություններ։

Բայց չնայած զանազանակերպ ձևերին, հենց սկզբից շարժումը զարգանում եր կոմկերիսմիության ղեկավարության տակ։ Արդեն կոմկերիսմիության VI համագումարի սկզբին, պիոներական մասսայական շարժումը ձևակերպվել, միասնական խմբեր եր կազմել և հակայական քայլերով առաջ գնացել։ Աշխատելով 10 տարեկան և ավելի հասակ ունեցողների հետ, պիոներական շարժումը շատ շուտով (1925 թ.) պետք է դներ ավելի փոքր հասակ ունեցողների ընդգրկման հարցը, վորի հետևանքով յերեան յեկան հոկտեմբերիկները։

Պիոներական կազմակերպության աճումը ցույց է տալիս հետևյալ աղյուսակը։

Տարի յեվ ամսաթիվ	Ընդամենը պիոներ	Ընդամենը հոկտեմբերիկ	Ընդամենը ջոկատներ
Ա.ո 1/X—22 թ. . .	4.000	—	—
Ա.ո 1/VI—23 թ. . .	75.000	—	3.000
Ա.ո 1/I—24 թ. . .	161.349	100.325	19.814
Ա.ո 1/I—25 թ. . .	1.000.032	221.548	37.499
Ա.կ 1/I—26 թ. . .	1.557.515	268.137	45.123
Ա.ո 1/I—27 թ. . .	1.739.977	278.099	45.759
Ա.ո 1/VII—27 թ. .	1.718.944		

Ըստ վորում անհրաժեշտ է նշել, վոր ԽՍՀՄ առ 1-ն հունվարի 1927 թ. պիոներների 1.739.977 հոգու ընդհանուր թվից 709.910 հոգի կամ 40,8% ընկնում է քաղաքներին, իսկ՝ 1.030.067 կամ 59,2%՝ գյուղերին: Սա մեծ նվաճում է, վոր հնարավոր է դարձել միայն շնորհիվ կոմկերիտմիության ջանքերի և մանկական շարժմանը կուսակցության կողմից ցույց տրված աջակցության:

Մանկական շարժման այսպիսի հսկայական ծավալման հետ միասին, զգալիորեն փոփոխվում է նաև մանկական կազմակերպությունների սոցիալական կազմը:

1924 թ. հունվարի 1-ին ըստ սոցիալական կազմի կազմակերպությունը իրենից ներկայացնում էր այսպիսի պատկեր.

№№ ըստ կարգի	Երջանիների անուններ	Պիոներների թիվը	Սոցիալական ծագումը %%-ով				
			Բանվորների երեխաներ	Գյուղացիների երեխաներ	Ծառայողների երեխաներ	Այլք	Ընդամ.
1	2	3	4	5	6	7	8
1	Արդյունաբերական . . .	27.721	33,0	6,2	10,1	0,7	100,0
2	Հողագործական . . .	33.212	49,2	26,1	18,0	6,7	100,0
3	Ուկրաինա	50.060	71,6	14,3	14,1	—	100,0
4	Հարավ-Արևելք . . .	7.427	68,7	12,7	17,9	0·7	100,0
5	Կովկաս	16.860	41,8	41,7	16,5	—	100,0
6	Ամոնամ մարզեր և հանր..	6.766	37,2	42,8	19,1	0,9	100,0
7	Սիբիր	10·471	85,9	5,6	8,4	—	100;0
8	Կիրգիզ. հանրապետ. . .	2.679	75,6	6,6	17,8	—	100,0
9	Հեռավոր Արևելք . . .	3.786	60,8	5,2	30,9	3,1	100,0
10	Մինչև Անիա	2.365	—	—	—	—	100,0
	Ընդամենը	161.347	62,9	19,1	15,5	2,5	100,0

Առ 1-ն հուլիսի 1926 թ. բանվորների երեխաները կազմում էին 27,7%, գյուղացիներինը՝ 49.8%, ծառայողների՝ 15,6% և այլք՝ 7,2%: Իսկ առ 1-ն հուլիսի 1927 թ. բանվորների երեխաներ՝ 29,5%, գյուղացիներինը՝ 48,8%, ծառայողներինը՝ 13,5%, այլք՝ 8,2%: Հետևաբար պիոներ կազմակերպության գլխավոր աճումը վերջին տարիներում կատարվում էր գյուղի հաշվին: Սա ապացույց է այն բանի, թե ինչպիսի հսկայական տեղաշարժություններ են կատարվել վերջին տարիներում, դեպի գյուղը ուշադրությունը ուժեղացնելու գործում:

Ինչ վերաբերում է պիոներ կազմակերպության ըստ սեռի կազմի, այստեղ զարգացման պատկերը հետևյալն է.

Տարի յեվ ամսաթիվ	Ընդամենը պիոներ	Սրանցից	
		Տղա	Աղջիկ
Առ 1/I—25 թ.	1.000.032	587.482	412.550
%%-ով	100,0	58,7	41,3
Առ 1/I—26 թ.	1.557.515	946.869	610.546
%%-ով	100,0	60,8	39,2
Առ 1/I—27 թ.	1.739.977	1.037.026	702.951
%%-ով	100,0	59,6	40,4

Կարելի յե ասել, վոր պիոներական կազմակերպության գործն ըստ սեռի ավելի բարենպաստ է, քան կոմյերիտմիության:

Մանկական ջոկատների կոլվարների կազմը վկայում է, վոր կոմյերիտմիությունը հանդիսանում է պիոներական շարժման գործնական ղեկավարը: Պիոներների կենսարոնական Բյուրոյի 1927 թ, կատարած քաղվածական հետազոտման համաձայն կոլվարների ընդհանուր թվից 84,1% կոմյերիտմիության անդամներ են, 4,2%՝ կուս. անդամ, 11,7%՝ թեկնածուներ. կուսակցության անդամների և թեկնածուների մեծամասը նույնպես կոմյերիտական հասակի յեն:

Մանկական շարժման խոշորագույն հարցը կոլվարի խնդիրն է: Ջոկատի ղեկավարը պետք է լինի մանկական հասակի առանձնահատկությունները լավ իմացող մարդ, վոր պետք է ունենա բավականաչափ ընդհանուր կուլտուրական և քաղաքական պատրաստականություն: Միայն այս պայմաններում աշխատանքի ձևերը և մեթոդները կհարմարվեն մանուկների պահանջներին և կարիքներին:

Ղեկավարի խնդրի հետ կապված է նաև պիոներական ամբողջ աշխատանքի սիստեմի ստեղծումը, վորը նրանց պիոներ կազմակերպության մեջ գտնված ժամանակաշրջանում փորձերի և գիտելիքների վորոշ շրջան և տալիս: Այս սիստեմը պետք է կապակցվի դպրոցի և կոմյերիտմիության աշխատանքների հետ:

Ունեցած հարուստ փորձերի հիման վրա, այդ սիստեմի մշակմամբ և հենց այժմ զբաղված մանկական կոմմունիստական շարժումը:

§ 21. ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՓԼԸՔՓԿՈՒՄԸ ԵՎ ՏԻՎԼՈՒԹՅՈՒՆԸ ԶԱՐԻՄԸ

§ 18-ում մենք դիտեցինք կոմյերիտմիութենական կազմակերպությունների աշխատանքների ընդհանուր դրությունը վերջերի շրջանում և ցույց տվինք, որ Համառուսական V համագումարից սկսած, սկսվում է Միության քաղաքական ակտիվության աճումը։ Այժմ տեսնենք, թե ինչումն էր կայանում քաղաքական ակտիվության աճումը։ Նախ և առաջ անհրաժեշտ է նշել Միության մասնակցությունը կուսակցական կյանքում և այն փաստը, որ կոմյերիտմիութենական կազմակերպությունները շատ սերտ մոտեցան կուսակցությանը։ 1923 թ. վերջին և 1924 թ. սկզբին կուսակցական դիսկուսիան, վորտեղ ծավալվեց տրոցկիզմը հանդես եկավ կուսակցության և կկ Լենինյան ղեկավարության դեմ, նոր տնտեսական քաղաքականության պայմաններում միության նական ղեկավարության և ողջ կոմյերիտմիության առաջին մեծ քաղաքական սուդտումը տեղավ։ Կուսակցության ներսի դիսկուսիան պարզորոշ ցույց տվեց կոմյերիտմիության ջահելներին, թե վորոնք են բոլշևիզմի հիմնական սկզբունքները, դրեց ամբողջ լայնությամբ բոլշևիկյան կուսակցության պատմության և անցյալում Տրոցկու հետ ունեցած տարաձայնությունների խորը ուսումնասիրության անհրաժեշտությունը։ Դիսկուսիան մոտիկից դիպավ կոմյերիտմիությանը նաև այն պատճառով, վոր այդ դիսկուսիայի վիճելի հարցերից մեկն էլ կուսակցության «սերունդների» խնդիրն էր։ Տրոցկիստական ոպոզիցիան յերիտասարդությանը հակադրում էր բոլշևիկական գվարդիայի հին կադրերին և կարծում էր, վոր այդ հարցով էր ազդեցության տակ կդցի յերիտասարդությունը։ Կուսակցական դիսկուսիայի սկզբին կոմյերիտմիությունում անորոշություններ կային՝ պետք է արդյոք կոմյերիտմիությունը կուսակցական վիճելի հարցերում ձեռ «չեզոք», թե՞ վճռականորեն պետք է դուրս գա, հիմնական բոլշևիկյան կադրերի հետ միասին, կուսակցության ներսում առաջացած մանր բուրժուական թեքումների դեմ։ 1924 թ. հունվար ամսում դումարված կոմյերիտմիության կկ պլենումը վճռականապես դեմ արտահայտվեց առանձին ընկերների պաշտպանած չեզոքության թեորիայի տեսակետին, միաձայն (բացի 2 հոգուց) բանաձև ընդունելով՝ վորով ամբողջովին և լիովին պաշտպանում էին ՀԿ(բ)ԿԿ գիծը և դատապարտում կուսոպոզիցիայի յելույթը։

Միությունը ֆրակցիաներին և խմբավորումներին վճռականապես դեմ արտահայտվեց, կողմնակից եր միասնականության, դեմ արտահայտվեց կուսոպոզիցիայի կողմից հին բոլշևիկյան գվարդիայի դեմ հարուցած մեղադրանքներին և կոչ արեց իր բոլոր անդամներին՝ կուսակցության կկ ղեկավարության պայքարել կուսակցության ներսում յեղած մանր բուրժուական թեքումների դեմ։

Ինչ վերաբերում է, այսպես կոչված՝ «չեզոքության թեորիային», կուսակցության XIII համագումարը և նրա հետևից նաև ՌԼԿՅԵՄ Համամիութենական VI համագումարը անվերապահորեն դատապարտեցին այդ թեորիան։ Կոմյերիտական ջահելները լենինիզմից յեղած բոլոր թեքումների դեմ կուսակցության ղեկավարության մղած անհաշտ կռվում հակայական բոլշևիկական դասալարակություն կատանան։

Բանվոր և գյուղացի յերիտասարդության քաղաքական ակտիվությունը, յերկրի տնտեսական աճման պայմաններում Միության արագ աճումը համառ կերպով պահանջում էին կոմյերիտական շարժման քաղաքական խնդիրների ճշգրտումը այս ժամանակամիջոցում, կուսակցական դիսկուսիան վորոշ չափով նախապատրաստեց։ 1924 թ. հունվար ամսում Լենինի մահը և Լենինյան հակայական կոչը դեպի կուսակցության, ավելի սուր կերպով դրեցին կոմյերիտմիության հերթական խնդիրների հարցը։ Կոմյերիտմիության կկ հունվարի պլենումը հաշվի առնելով կուսակցական դիսկուսիայի հանրագումարները, քննեց Միության հերթական խնդիրների հարցը, ընդունեց թեզիսները և փոխանցեց դրանց քննությունը կազմակերպության անդամների լայն մասսաների շրջաններում։

Թեզիսները Միության գլխավոր և հիմնական խնդիրն էին համարում՝ կոմերիտականից բոլշևիկ-Լենինյան դաստիարակել կուսակցության յեվ վաղջ յերկրի հասարակական-քաղաքական կյանքում միության անդամների ակտիվ, գործնական մասնակցության յեվ կուսակցության պատմության ու Լենինիզմի ելության ուսումնասիրության հիման վրա։

Թեզիսները, բացի այս հիմնական կետից, դնում էին մի շարք հարցեր, ինչպես, օրինակ՝ Միության մեջ կուսակցական աղդեցության ուժեղացումը, կուսակցության հետ կապի ամրապնդումը, աշխատանքը գյուղում ընդարձակելու և ուժեղացնելու մասին Միության շարքային անդամների ինքնագործունեությունը բարձրացնելու և բանվոր յերիտասարդության շրջանից նոր ակտիվի առաջ քաշման մասին։

Այս բոլոր խնդիրների նկատմամբ միութենական դիսկուսիան անցավ Լենինյան այն դիրքերի վրով, որ Միությունը բռնել էր կուսակցական դիսկուսիայի ժամանակաշրջանում, և ուժեղացրեց կուսակցական տրամադրությունները կոմյերիմմիության շրջանում: Միության մասը բուրժուական տարրերի կողմից կուսակցական ոպոզիցիայի լոզունգները միութենական դիսկուսիա փոխադրելու մասնակի փորձերին (Հարավ-Արևելք) և հակակուսակցական տրամադրությունների մասնակի արտահայտություններին (կուսակցությունից անկախ լինել և այլն) ամենավճռական հակահարված եր տրվել: Իսկ միութենական դիսկուսիայի պրոցեսում, ամբողջ լայնությամբ կանգնեց դյուրում տարվող աշխատանքի հարցը, որի նկատմամբ դրանից հետո ուշադրությունը զգալիորեն ուժեղացավ: Իսկ ինչ վերաբերում է, կուսակցական և միութենական դիսկուսիաների ընդհանուր արդյունքին, կարելի չե արտահայտել այս կերպ. նախ և առաջ ամրապնդվեց Միության և կուսակցության կապը, այնուհետև ուժեղացավ կոմյերիտականների ուժեղ ձգտումը դեպի կուսակցական շարքերը, աճեց ամբողջ կազմակերպության քաղաքական նշանակությունը:

1924 թ. կայացած կոմյերիմիության համամիութենական VI համագումարը ավելի ընդգծեց վերևում բերված բոլոր հարցերը թե ՀԿ (Բ) ԿԿԿ քաղաքական զեկուցման և թե կոմյերիմիության հաշվետվության առթիվ ընդունած բանաձևում: VI համագումարը վորոշեց Միությունը վերանվանել Լենինյան, դրանով իսկ պատմության առաջ մեծ պատասխանատվություն վերցնելով, թե այդ կոչումը պատվով կարդարացվի:

VI համագումարից հետո՝ սկսվեց յերկրի հասարակական—քաղաքական կյանքում կոմյերիմիության ավելի ուժեղ մասնակցության շրջանը:

Մեր անտեսության զարգացման մեջ վերականգման շրջանից վերակառուցողական շրջան անցնելը մեր կուսակցության մեջ առաջ բերեց մի շարք տատանումներ և թեքումներ լենինիզմից: Կուսակցության XIV համագումարի սկզբին (1925 թ. դեկտեմբերին) կազմվեց և ձևակերպվեց այսպես կոչված՝ Լենինգրադի ոպոզիցիան, Զինովյևի և Կամենևի գլխավորությամբ, որը թերահավատ եր վերաբերվում դեպի մեր յերկրում սոցիալիզմի հաղթական շինարարության հնարավորությունը, մեղադրելով կուսակցությանը պրոլետարիատի շահերի պաշտպանության հեռանալու համար և այլն: Յեվ այստեղ հարկավոր է նշել այնպիսի մի փաստ՝ ամեն մի կուսակցական ոպոզիցիա փորձ է անում օգտագործել կոմյերիմիութենական կազմակերպությունը կուսակցության կենտրոնական կոմիտեի դեմ պայքարելու ժամանակ: Ամեն մի կուսակցական ոպոզիցիա ձգտում է դրավել յերիտասարդությունը:

Բայց միշտ էլ նման փորձերը հակահարված են ստացել: Փոխանակ Միությունը կուսակցության բաժանելու (դեպի ինչ տանում են վերջի վերջո ամեն անգամ ոպոզիցիայի փորձերը) դուրս է գալիս, վոր կոմյերիմիությունը ավելի սերտորեն կապվում է կուսակցության հետ և յերես է դարձնում նրանցից, վորոնք նման փորձեր են անում: Այդպես յեղավ Տրոցկու յելույթի ժամանակ, այդպես յեղավ Կամենևի և Զինովյևի գլխավորությամբ Լենինգրադի ոպոզիցիայի յելույթի ժամանակ, այդպես յեղավ վերջին XIV և XV կուսհամագումարների մեջև յեղած ժամանակաշրջանում կազմակերպված վերջին միացյալ օպոզիցիայի յելույթի ժամանակ:

Պարզ է, վոր կուսակցական ոպոզիցիան ամեն անգամ այս կամ այն հեռքը թողնում է կոմյերիմիության վրա, բայց և այնպես, վերջ ի վերջո այս բոլորը հանգում են կոմյերիմիության կուսակցական վոգու ամրապնդման: Հակակուսակցական թեքումները կոմյերիմիութենական աշխատանքներում վորոշ չափով բեկվում են, ոպոզիցիայի ազդեցության տակ ընկած ընկերների կողմից սխալ առաջարկները են մերժվում:

Այդպես եր 1923 թ. դիսկուսիայի ժամանակ, այդպես եր XIV կուսհամագումարի դիսկուսիայի ժամանակ, յերբ Լենինգրադի կոմյերիմիության ակտիվը առաջ եր քաշում գյուղական. յերիտասարդության պատգամավորական ժողովների գաղափարը, ամրացնելով կոմյերիմիության կուլակային թեքման մեջ: Կոմյերիմիության VII համագումարում կոմյերիմիության ոպոզիցիայի լիդերները (Տարասով, Ռոգով, Կաստալևով և ուրիշ) դուրս յեկան պաշտպանելու իրենց տեսակետները, բայց ի պաշտպանություն վոչ մի ձայն չտացան. Միությունը իր համագումարում բացարձակ մեծամասնությամբ յերես դարձրեց ոպոզիցիայի ներկայացուցիչների հերյուրանքներից:

Բայց Լենինյան Միության կազմակերպման համար կուսակցական ոպոզիցիան առանձնապես ուժեղ աշխատանք տարավ XV կուսակցական համագումարի նախորյակին (1927 թ. դեկ-

տեմբերին)։ Տրոցկիստական ոպոզիցիան, վորը այս անգամ միացավ Լենինգրադի ոպոզիցիայի հետ, Միության մեջ կազմալուծիչ ավելի լայն աշխատանք ծավալեց։ XV կուսհամագումարի նախորյակին տրոցկիստական ոպոզիցիան կոմկերիմմիությունում, դուրս գնալով իր հակալենինյան պլատֆորմով, յերիտասարդական շարժման խնդիրների նկատմամբ։ Այդ պլատֆորմի եյությունը բնորոշվում է տրոցկիստների հիմնական տեսակետով, թե ՀԱՄԼԿՅԵՄ ապրում է մանրբուրժուական վերածնման պրոցեսը։

Այնպես, ինչպես վոր տրոցկիստները կուսակցության մասին ասում եյին, թե նա (կուսակցությունը) վերապրում է «տերմիդորը», ճիշտ նույն ձևով յերիտասարդ տրոցկիստներն եյին խոսում կոմկերիմմիության մասին։ Իրենց պլատֆորմայով տրոցկիստները կոմկերիմմիությանը վերագրում եյին այն, իբր թե նրանք սխալ գիծ են տանում դյուղում, իբր թե հանձնել են բանվոր յերիտասարդության հոկտեմբերյան նվաճումները, և հարձակվում եյին կոմկերիմմիության նկատմամբ յեղած կուսղեկավարության վրա։

Յերիտասարդական շարժման հարցերի նկատմամբ յեղած տրոցկիստական պլատֆորմայի առեղծման և անլեգալ (գաղտնի) տարածման փաստը, անհրաժեշտ և գնահատել իբրև ֆրակցիայի այնպիսի ձևակերպում, վորը միտումներ ուներ զարգացնելու և դառնալու տրոցկիստական տեսակետի յերիտասարդության մեջ։ Տրոցկիստական ոպոզիցիան, կոմկերիմմիությունական շարժման մեջ առեղծեց իրեն գաղտնի կենտրոնները, սկսած կկ-ից և վերջացնելով առորդաս բջիջներով։ Այստեղ անհրաժեշտ է հիշեցնել, վոր Մոսկվայում հայտնաբերված եր յերիտասարդ տրոցկիստների անլեգալ կենտրոն, Ուրալում՝ յերիտասարդ տրոցկիստների մարզային կոմիտե, Հայաստանում կազմակերպվել եր յերիտասարդության տրոցկիստական միություն։ Կոմկերիմմիության մեջ տրոցկիստների անլեգալ առանձին բջիջները ուղղակի վեր եյին ածվում հակահեղափոխական կազմակերպությունների։

Բայց չնայած տրոցկիստական ոպոզիցիայի կողմից հայտնաբերված բոլոր ենթրպիայի և նրանց կողմից կոմկերիմմության համար մղած պայքարում գործ դրած ակտիվության՝ նրանց վոլշ աշխատանքը վերջացավ լիակատար ապալմամբ։ Ոպոզիցիային հաջողվեց իրեն շուրջը համախմբել գլխավորապես վոչ պրոլետարական միջավայրից յեղած և ամենից քիչ կայուն կոմկերիտականների աննշան խմբակները միայն։

Կուսակցական XV համագումարի նախորյակին, հերկուսակցական դիսկուսիայի հետ միաժամանակ, կոմկերիմմիության կկ. պլենումում հայտարարեց կոմկերիմմիութենական կազմակերպության ներսում։ Կուսակցության ընթացիկ քաղաքականության հիմնական հարցերի նկատմամբ դիսկուսիան անցավ մեծ վոգևորությամբ, հայտնաբերվեց կոմկերիմմիութենական մասսաների մեծ ակտիվություն և յերիտասարդական շարժման մեջ վերջացավ յերիտասարդ տրոցկիստների լիակատար պարտությամբ։ Կոմկերիմմիության վողջ կազմի 99% կուսակցության, Լենինյան կոմկերիմմիության կողմն եյին, հակառակ՝ մենշևիկական խմբակի վերածված տրոցկիստական ոպոզիցիայի։

Բայց պետք է նշել, վոր տրոցկիստական ոպոզիցիայի հանդեպ գործունեությունը յերիտասարդության բոլշևիկյան դաստիարակության գործին մեծ վտանգ եր սպառնում։

Ոպոզիցիայի գործունեությունը հակախորհրդային ուժերի կապանքներն եր քանդում, նրանց նոր հույսեր ներշնչելով կուսակցության և պրոլետարական դիկտատուրայի անանկության մասին։ Պրոլետարիատին թշնամի դասակարգերը յերիտասարդության համար մղած իրենց պայքարում, որյեկտիվորեն ոժանդակություն ստացան ոպոզիցիայից։ Այստեղ անհրաժեշտ է նշել նաև այն փաստը, վոր չնայած տրոցկիզմի դեմ պայքարը կոմկերիմմությունից շատ ուժ ու յեռանդ խլեց և անկասկած շեղում եր նրան առորյա գործնական աշխատանքներից, ոպոզիցիայի դեմ պայքարի արդյունքն այն յեղավ, վոր «նեպի շրջանի» կոմկերիմմությունական սերունդը մարտական մկրտություն ստացավ և լենինիզմի համար մղած պայքարում կոփվեց։ Հետևաբար, մենք տեսնում ենք, վոր կոմկերիմմության քաղաքական ակտիվության շրջանը հարուստ և բովանդակությամբ։ Ստացվեց իր ժամանակի համար անխուսափելի թեքում դեպի քաղաքական ակտիվությունը։

Կոմկերիմմութենական ակտիվը մասնակցելով կուսակցական քաղաքական կյանքին՝ աճում եր, բավարարվում այս կյանքով, բայց Միության շարքերը նոր մտնող յերիտասարդության լայն մասսաները պահանջում եյին և՛ կուլտ-քաղաքական աշխատանքների խորություն և՛ բազմակողմանի մոտեցում դեպի աճող սերնդի պահանջները։

Այստեղ հենց առաջացավ վորոշ անջատում կոմյերիտականների մասսաների պահանջների և կոմյերիմոլոթենական աշխատանքների բովանդակության միջև։ Սկսվում է պայքար աշխատանքների նոր մեթոդների համար։

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ՆՈՐ ՈՒՂԻՆԵՐՈՎ

§ 22. ՄԻՈՒԹՅԱՆ ԸՄԲԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ

Միության աճման ճգնաժամը յերևան յեկավ XIV կուսհամագումարի սկզբին (1925 թ. դեկտեմբեր)։ Յերիտասարդության մասին XIV կուսհամագումարում մեջ տարված աշխատանքների մասին դեկուցողը (Ն. Ի. Բուխարին) պետք է հայտարարեր. «Այժմ կոմյերիմոլոթյունն ապրում է աճման վորոշ ճգնաժամ. ճգնաժամը ընդհանուր առմամբ կայանում է նրանում, վոր կոմյերիմոլոթենական կազմակերպությունների աշխատանքի բովանդակությունը և այս աշխատանքի մեթոդները այժմ արդեն գտնվում են վորոշ չափով հակասության մեջ այն պահանջների հետ, վորոնք տնտեսական աճման հիման վրա առաջ են գալիս յերիտասարդական շարքերում։ Այժմ շատ հաճախ հին ձևի աշխատանքի և բովանդակությունը և մեթոդները մեխանիկորեն փոխադրվում են այժմյան ժամանակները, լրիվ չափով հաշվի չի առնվում այն նորը, այն առանձնահատուկը, այն յուրահատուկը, այն գլխավորը, վոր առաջ է գալիս հատկապես այժմ տնտեսական աճման հետ միասին... Պահանջներն ընդարձակվում են և առաջին հերթին՝ նյութական գծով։ Յերիտասարդությունը, ճիշտ այնպես, ինչպես և հասակավոր բանվորները ցանկանում են ավելի լավ ապրել, շատ վաստակել, ավելի լավ հագնվել, ունենալ ավելի հատուկ և կայուն տեղ ֆաբրիկայի արտադրական պրոցեսում, ցանկանում և խառնվել արտադրական պրոցեսի ընթացքին, լինել լավ աշխատավոր, վորակյալ աշխատավոր, այսինքն գիտենալ իր գործը, հասկանալ նրան և ունենալ արհեստակցական կրթություն, լինել լավ բանվոր պրոլետարիատի դիկտատուրայի որով և ընդարձակել իրենց տնտեսական պահանջները»։

Միության կկ XIV համագումարին կոմյերիամիության գործունեության մասին արված զեկուցագրում այսպես էր բնորոշում աշխատանքի բացերը և դժվարությունները.

«1. Դեռ ամբողջովին իրագործված չէ ՀԱՄԼԿՅԵՄ VI համագումարի վորոշումը՝ 100%-ով Միության մեջ ներգրավելու բանվոր յերիտասարդությունը։ Միջին ընդգրկումը առ 1-ն ապրիլի 1925 թվի—50% է, մինչդեռ ձեռնարկություններում բարձրանում է մինչև 57,1%, մանրերում՝ 88,9% և խոշորներում նվազում մինչև 35,8%, ամենաթույլ ընդգրկումը տեքստիլ արդյունաբերություններում՝ 32,6%։

Տրանսպորտում ընդգրկումն առ 1-ն ապրիլի 25 թ. հասնում է 55,3%-ի։

Թվերն առ վերջին որերս շատ քիչ են փոփոխվել, վորովհետև արդյունաբերության մեջ վերջին ժամանակներս ընդգրկված և յերիտասարդության նոր շերտերի մի զգալի քանակություն, իսկ Միության աճումն ամառվա ընթացքում այնքան էլ մեծ չէր։ Այսպիսով, VI համագումարի լոզունգը, «բանվոր յերիտասարդությունը 100%-ով դեպի Միություն» դեռ ամբողջովին իրագործված չէ։

2. Միության ֆաբրիկա-գործարանային բջիջների մասսայական անտեսական և կուլտուր-լուսավորական աշխատանքը թույլ է դրված, անբավարար և նրանց զգայունությունը դեպի բանվոր յերիտասարդության պահանջները։ Կան վորոշ հակասություններ կոմյերիամիութենական աշխատանքի գոյության ուղեցող ձևերի, մեթոդների և բովանդակության մեջ մի կողմից և յերիտասարդության կուլտուր-տնտեսական աճող պահանջների մեջ մյուս կողմից։

Մասամբ սրանով և բացատրվում բանվոր յերիտասարդության նկատմամբ մանր-բուրժուական ազդեցությունների ուժեղացումը (հարբեցողություն, սրիկայություն, սեռական սանձարձակություն), վորոնց աճումը նկատվում է վերջին ժամանակներում։

3. Միությունը դեռ չկարողացավ ամրապնդել իր աճումը։ Միության դեռ վոչ բոլոր անդամները ունեն վորոշ աշխատանք Միության մեջ, վոչ միշտ բավական լրիվ բավարարում են Միության անդամների պահանջները։

Միջին հաշվով ֆաբրիկա-գործարանային բջիջներում գործնական աշխատանքների մեջ ընդգրկված են կՅԵՄ անդամների

մոտ 60%-ը։ Կան առանձին դեպքեր, վորտեղ ընդգրկված է միայն 18—20%։ Աշխատանքով Միության անդամների անբավարար ընդգրկումը և նրանց պահանջների թույլ բավարարումն առանձնապես աչքի ընկան Միության անդամների վերահաշվառման ժամանակ Միությունից հեռանալու դեպքերում։ Առանձին կազմակերպություններում կան այսպիսի փաստեր՝ Տուլա—700 հոգի, Կոստրոմա՝ 733 հ,, Սմոլենսկ՝ 679 հ,, Բրյանսկ՝ 834 հ., Սարատով՝ 1465 հ., Մոսկվա՝ 1600 հ. և այլն։

Դյատկովի ֆաբրիկայի (Բրյանսկ) բջիջում, բջիջի 170 անդամներից 50 հոգին կոլլեկտիվ դիմում են տվել հեռանալու մասին, պատճառաբանելով՝ «Միության մեջ մենք անելու բան չունենք». այս փաստը յեզակի չէ։ 1925 թ. հունվարի 1-ից մինչև սեպտեմբերի 1-ը Միությունից հեռացել են անձնական ցանկությամբ և մեխանիկորեն դուրս են ճնշացել ընդամենը՝ 75.908 հոգի։

4. Կարգապահության թուլացումը նկատվում է, ինչպես ֆաբրիկա-գործարանային բջիջներում, այնպես էլ գյուղական բջիջներում։

5. Միության գյուղական կազմակերպությունները դեռ թույլ են ըմբռնել կուսակցության գիծը գյուղացիության նկատմամբ և դեռ վատ են սովորել իրենց առօրյա գործնական աշխատանքներում այդ գիծը ճիշտ անցկացնելը։

6. Չնայած քաղուսուցման գործում ունեցած նվաճումներին, Միության դաստիարակչական աշխատանքը հետ է մնում նրա շարքերի թվական աճումից։ Իրականում կոմյերիտականների քաղաքական գրագիտությունը ցածր մակարդակի վրա է գտնվում, առանձնապես գյուղում։ Ֆաղանգրագիտությունը վերջիններիս մեջ հասնում է 80%-ի։ Բացակայում է պատրաստված պրոպագանդիստների անհրաժեշտ կադրը։

7. Միության ակտիվի սեռական պատրաստականության անբավարար լինելը, նրա քաղգրագիտության ցածր մակարդակը (մանավանդ գյուղական բաստրակների և չքավորների մասի), կուսակցական անբավարար միջնաշերտը գյուղական ակտիվի կազմում (գյուղ-բջիջների բյուրոներում միայն 11,7% կուսակցության անդամ և թեկնածու կա, գյուղբջիջների քարտուղարների մեջ ՌԿԿ անդամներ և թեկնածուներ են 25—30%, գավառական ակտիվի կուսակազմը 31% է)։

8. Միությունը ընդհանուր բավարար չափով չի ընդգրկել իր պատրաստության տակ բատրակ յերիտասարդությանը։ Բատրակների

ընդհանուր թվից մոտ 12%-ն է ներգրավված Միության մեջ։ Միության անդամների ընդհանուր թվի նկատմամբ, առ 1-ն սեպտեմբերի 1925 թ. բաժանկները կազմում են 7,8%։ Միությունը թույլ է դրել բաժանկների անտեսական շահերի պաշտպանության մեջ մանակցելու գործը. այս մասի աշխատանքները ընդգրկված է մոտավորապես 40—50%։

Նմանապես վատ են դրված կուլտուր-լուսավորական աշխատանքները բաժանկների մեջ և նրանց ներգրավումը հասարակական աշխատանքներում։ Բաժանկ յերիտասարդության Միության ակտիվը դանդաղ է առաջ քաշվում (շրջկոմներում բաժանկները 5,6% են, գյուղական բջիջների բյուրոներում—8,2%, գավկոմներում—1%)։

9. Դեռ անբավարար է կուսակցական կորիզը Միության մեջ (առ 1-ն սեպտեմբերի 1925 թ. 8,9%, իսկ գյուղում միայն 4,8%)։ Կուսակցության անդամ կոմյերիտականների ներգրավումը կուսակցական կյանքում թույլ է, անբավարար է նրանց կուսակցական դաստիարակությունը։ Նկատվում է նաև կուսակցական-կոմյերիտականների կորվելը Միությունից, վորով թուլանում է կոմյերիմիության կուսակցական կորիզը։

10. Թույլ է հաճախ անշնորհք է կուսակցական ղեկավարությունը և ազդեցությունը Միության սաորին կազմակերպություններում (բջիջներում), մանավանդ գյուղում։

11. Միության գյուղացիական մասի աճումը գյուղական բջիջներում կուսակցական ղեկավարության անբավարարության, դաստիարակչական աշխատանքների թուլության դեպքում առաջ է բերում Միության մեջ գյուղացիական տրամադրությունների աճում, Միության գյուղացիական մասի նախանձ դեպի բանվորական մասը, վերջիններիս տնտեսական և կուլտուրական ավելի լավ ապահովության պատճառով, հակամարտություն բանվորական և գյուղական ակտիվի միջև և այլն։

12. Պիոներական շարժման հիմնական թերությունները հետևյալներն են.

ա) պիոներշարժման պատրաստված ղեկավարների ադրի բացակայությունը.

բ) դեռ բավականաչափ լավ դրված չե դաստիարակչական աշխատանքը, չկա կապ նրա և դպրոցի աշխատանքների միջև, շատ անգամ նրա մեջ գերիշխողը արտաքին կողմն է (թմբուկ, փողկապ, շքերթ և այլն)։ Այստեղից առաջ է գալիս պիոներների

ծանրաբեռնումը, վորը վատ է անդրադառնում նրանց առողջության վրա.

գ) պիոներշարժումը լրիվ չի ընդգրկում մանուկների աճող ակտիվությունը, վորն ապացուցվում է ժամանակ առ ժամանակ առաջ յեկող մանկական կազմակերպություններով (պատանի նատուրալիստներ և այլն), նմանապես պիոներների՝ կազմակերպությունից հեռանալով.

դ) կուսակցական և կոմյերիտական սաորին կազմակերպությունների կողմից պիոներ շարժմանը ցույց տրված անբավարար ղեկավարությունը»։

Հետևաբար, մենք կարող ենք ասել, վոր հիմնականը, ինչով քնորոշվում է «աճման ճգնաժամը», կայանում է նրանում, վոր՝ կոմյերիմիության մեջ մտնող աճող սերնդի պահանջների և այս պահանջների բավարարման մեջ կա յուրահատուկ մի «մկրատ»։ Բացի այդ առկա եյին կարգապահության թուլությունը և կոմյերիմիութենական կազմակերպությունների հոսունության աճումը։

XIV կուսհամագումարը կոմյերիմիության աշխատանքի դրության անալիզից յելնելով ե, վոր յերիտասարդության մեջ տարվող աշխատանքների մասին բանաձևում մացրեց հետևյալ հիմնական կետը՝ «առաջին տեղը անհրաժեշտ է դնել անտեսական աճման հետ կապված՝ մասսաների նոր պահանջների և կոմյերիտմիության աշխատանքների մեթոդների, ձևերի և բովանդակության միջև յեղած անհամապատասխանությունը. աշխատանքը այս պահանջներին հարմարեցնելը, այսպիսով, դառնում է ընթացիկ բեկման շրջանի կոմյերիտական շարժման կենտրոնական պրոբլեմը»։

Անհրաժեշտ եր կոմյերիմիության աշխատանքը փոխադրել ավելի բարձր աստիճան, արմատապես փոխել ղեկավարության սիստեմը։

Այս խնդիրների լուծմանն եր հենց նվիրված XIV կուսհամագումարից անմիջապես հետո գումարված լենինյան կոմյերիտմիության համամիութենական VII համագումարը։

§ 23. ՆՈՐ ՈՒՂԻՆԵՐԻ ՎՐԱ ՊՆՈՒՄԸ

Կոմյերիմիության Համամիութենական VII համագումարից հենց սկսվեց պայքարը նոր մեթոդների համար։ VII համագու-



մարից առաջ խնդիր ծառացավ կոնկրետացնել, բաց անել XIV կուսհամագումարի կողմից կոմյերիմիությունական շարժմանը տված հիմնական պատվիրանը։ Ինքնըստինքյան հասկանալի չի, որ Միությունը միանգամից չէր կարող սպառող պատասխան տալ, թե ինչպես անցնել դեպի աշխատանքի նոր ձևերը, քանի որ անհրաժեշտ էր փորձառություն, պրակտիկա, իսկ VII համագումարի սկզբին այդ փորձառությունը պակասում էր։

Բայց և այնպես VII համագումարը մենք պետք է նշենք իբրև այնպիսի համագումար, որից հետո վճռական շրջադարձ է սկսվում դեպի նորոգ աշխատանքի ուղիների վորոնումը։

Համագումարը ամբողջ շարժման առաջ հիմնական խնդիր դրեց—կարողանալ կապել Միության քաղաքական, ինաերնացիոնալ-հեղափոխական խնդիրները թե բանվոր և թե գյուղացի յերիտասարդության մասանների կուլտուրական և անհետևական առօրյա պահանջների հետ։ Այստեղից գործնականորեն առաջ էր գալիս բանվոր պատանեկության պրոֆտեխնիկական կրթության շինարարության, գիտական-տեխնիկական և հանրակրթական գիտելիքների տարածման, յերիտասարդությունը ձեռնարկությունների տնտեսական և արհեստակցական կյանքի մեջ քաշելու լայն աշխատանքի ծավալումը։

Այստեղից բղխում էր «քաղաքականության» և «կուլտուրականության» ճիշտ կապակցության խնդիրը իբրև ամբողջ աշխատանքի հիմնաքարը։ Ինքնըստինքյան հասկանալի չի, որ կոմյերիմիությունական յերիտասարդության կենցաղի բարելավման հարցերը, յերիտասարդության մեջ յեղած բացասական յերևույթների դեմ պայքարը, պետք է, որ ավելի մեծ տեղ գրավեին, քան այդ մինչև այժմ էր։

Իբրև յերկրորդ խնդիր՝ դրվում էր կոմյերիմիության ներսում դեմոկրատիայի, իբրև կոմյերիական լայն մասսաների ինքնագործունեության զարգացման, կոմյերիմիության ակտիվը անդամների մասսայի հետ ավելի սերտ կապելու ձևի ու մեթոդի զարգացման պրոբլեմը։ Շարժման նոր աշխատավորների առաջ բացումը, աշխատանքի մեջ կամակորության սկզբունքի լայն տարածումը—այս բոլորը պետք է վոր սոսնձային գործնական բեռնում կոմյերիմիությունական կազմակերպությունների կյանքում։

Գյուղական աշխատանքների նկատմամբ համագումարը հարցն այնպես դրեց, որ անհրաժեշտ է ընդհանուր անհետևական դրության բարելավման կողմն ուղղված բատրակ, չքավոր և միջակ

յերիտասարդության շարքերը կապել գյուղում Միության ունեցած քաղաքական խնդիրների հետ։ Համագումարն ասաց, որ միայն գյուղական յերիտասարդության գյուղատնտեսական կերթության, չքավոր յերիտասարդությանը նրա տնտեսությունը բարձրացնելու գործում ոգնության կազմակերպելու, գյուղացիական տնտեսությունը կոոպերացնելու աշխատանքն ուժեղացնելու հիման վրա—միայն կոնկրետ գործնական աշխատանք ծավալելու հիման վրա—միայն այդ ճանապարհով գնալով՝ կոմյերիմիության բջիջները կարող են աշխուժացնել իրենց աշխատանքները գյուղում և չքավոր-միջակ գյուղացիության մասսաների հեղինակություն գրավել։ Ինչպես յեղավ արդյունքն աշխատանքի նոր մեթոդների համար մղած պայքարի, ինչ տեղաշարժեր կատարվեցին կազմակերպության մեջ։

Կոմյերիմիության կկ-ն VIII համագումարի սկզբին հրատարակեց „Опыт работы комсомола за время с VII с'езда ВЛКСМ“ ժողովածուն։

Ստիպված ենք ցավել, որ գիրքը հրատարակվեց փոքր տիրաժով (2000) և թողվեց՝ չնայած աշխատանքների նոր մեթոդներին, կոմյերիմիության ակտիվի պրոտֆելի մեջ։ Մենք այդ գնահատելի գրքից վերցնում ենք աշխատանքի մի շարք նոր մեթոդների նկարագրությունը։

Նախ և առաջ Դնեպրոպետրովսկու կազմակերպության փորձերի մասին, որը աշխատանքի նոր մեթոդների կոփելու գործում նախաձեռնողներից մեկն է յեղել։

Դնեպրոպետրովսկի շրջկոմը կազմակերպության մեջ կոմյերիմիության ամսորյակի հիմնական նպատակները։

Շրջկոմի կողմից մանրազնին կատարված հետազոտությունը բջիջների աշխատանքների մասին ցույց տվեց, որ մեծ մասամբ բջիջներում (առանձնապես խոշոր) կոմյերիտականների մոտ 40%-ը չունեն բեռնավորում, իսկ բեռնավորվածներից 20—30% ինչպես հարկն է չեն կատարում իրենց պարտականությունները։ Մոտավորապես կազմակերպությունների կեսը մասնված է անդրադրության, սահմանափակվելով միայն ժողովների գնալով և անդամավճարներ մուծելով, բայց չի կատարում Միության հիմնական պահանջը—իր կազմակերպության մեջ ակտիվ աշխատել։ Նման դրությունը ծանր հետևանքներով է հղի։ Անգործությունն առաջ է բերում ձևական վերաբերմունք դեպի Միության տոմսը, «մեռյալ հոգիներ» կոմյերիմիության մեջ։

Կոմերիտմիութենական բջիջի ամսօրյակը պետք է առաջացներ ամբողջ կազմակերպության ուժերի լարումը՝ վողջ կոմերիտմիութենական մասսան ակտիվ աշխատանքի ներգրավելու համար:

Ամսօրյակի յերկրորդ նպատակը կայանում եր սոուգման մեջ, թե իրականում ինչ է կատարել բջիջը կոմյերգրամիութեյան և կուսակցութեյան ղեկավարող օրգանների դիրեկտիվների հիման վրա, կոմյերիտմիութենական մասսանների լայն քննադատութեյան առաջ դնելով բջիջի աշխատանքները: Աշխատանքի մեջ դեռևս չընդգրկված կոմյերիտականների աշխատանքի ներգրավելու իրրև հիմնական միջոց շրջկոմը ծրագրեց կոնկրետ հանձնարարութեյունների մշակում, վորը պետք է կատարեյին առանձին կոմյերիտականները կամ նրանց խմբակները:

Ահա այդպիսի հանձնարարութեյունների օրինակները.

1. Հաշվի առնել զործարանամասի (ձեռնարկութեյան) անգրագետ և կիսագրագետ վողջ յերիտասարդութեյունը և ապահովել նրանց լիկկայան հաճախելը:

2. Յերիտասարդ բանվորների խմբակը ներգրավել կոմյերիտմիութեյան մեջ:

3. Կազմակերպել թատրոնի կոլեկտիվ հաճախում:

4. Յերիտասարդութեյան և բանվորների խմբակները ներգրավել ակումբին կից խմբակները (շախմատային, դամա, յերաժշտական, հրացանաձիգ և այլն):

5. Աշխատել անխափ վողջ կոմյերիտականներին (կամ բաժնի բանվորներին) բաժանորդագրվել զանազան թերթերի:

6. Կազմակերպել մի վորևե արտադրական բաժնի, գործարանամասի դիտումն և այլն:

7. Բանվորական խմբակներում լիկվիդացիայի յենթարկել կոոպերացիայի փայավճարների պարտքերը:

8. Յենթաշեֆ գյուղում կամ գյուղի հետ կապված բանվորների շրջանում կազմակերպել գյուղացիական փոխառութեյան պարտատոմսերի տարածումը:

9. Հանձնաբարել մի խմբակի ինտերնացիոնալական 5 կոպ. հավաքումը 1928 թ. համար, հանձնարարելով բջիջում հավաքել 100%-ով:

10. Կազմակերպել գործարանամասում (ձեռնարկութեյունում) պայքար հայհոյանքների և կանանց վերաբերմամբ տարկաւերական վարվեցողութեյուն ունենալու դեմ (դրցութեյուն «ամենալավ» հայհոյողի և ճորտատերի պատի թերթում, նախաձեռնող խմբակները հայհոյանքների դեմ պայքարելու համար) և այլն:

Ամեն մի բջիջում պետք է մշակվեն իրենց հանձնարարութեյունները, անպայմանորեն հարմարացնելով տեղական պայմաններին և կոմյերիտմիութեյան մասսայի մակարդակին, բայց այդ պետք է կատարվի այն հաշվով, վորպեսզի աշխատանքում ընդգրկվեն բոլորը, նույն իսկ ամենահետամնաց և անդարդացած կոմյերիտականները: Միաժամանակ շրջկոմը առաջարկեց բջիջներին կատարել բոլոր ծանրաբեռնվածների մասսայական սոուգում և տալ նրանց նոր կոնկրետ հանձնարարութեյուններ:

Վոչ ծանրաբեռնվածներին հանձնարարութեյուններ տալու ժամանակ անհրաժեշտ է ի նկատի ունենալ ընկերոջ հակումները, հետաքրքրութեյունը և այս կամ այն աշխատանքը կատարելու ցանկութեյունը:

Հանձնարարությունների ստեմը

«Ամսօրյակը» սթափեցրեց կոմյերիտական բջիջները: Շրջկոմի կոչը կոմյերիմութեյան մասսայի մեջ ջերմ արձագանք գտավ: Ամսօրյակին նվիրված ժողովներում մեծ յեռանդով քննվում եյին հետևյալ հարցերը՝

Ինչու՞ շատ կոմյերիտականներ չեն աշխատում բջիջներում: Վռերաեզից են հանդես գալիս «մեռած հոգիները» և ինչպես նրանց ներգրավել աշխատանքի: Ինչու՞ կան մեծահասակներ, վորոնց չի կարելի հանձնել կուսակցութեյանը: Ի՞նչ կերպ վողջ կոմյերիտմիութեյան մասսան ներգրավել աշխատանքում: Ի՞նչ կերպ բարելավել հսկողութեյունը և ոգնութեյունը կոմյերիտականին աշխատանքի մեջ: Ինչու՞ կոմյերիտականները իր ժամանակին չեն կատարում արված հանձնարարութեյունները: Ի՞նչպես պայքարել թափթփվածութեյան դեմ: Ի՞նչ կերպ աշխատանքը հետաքրքրական դարձնել: Ի՞նչ կերպ համատեղել պարտադրութեյունը կամավորութեյան հետ: Ի՞նչ կերպ աշակերտութեյունը ներգրավել աշխատանքի, բայց վոչ ի վնաս ուսման և այլն:

«Ամսօրյակի» ժամանակ շատ բջիջներ անցան հանձնարարութեյունների սիստեմին:

Այսպես, օրինակ՝ Դոմենենոյ բջիջում (Կայդակովի շրջան) կազմակերպվեց մի քանի խմբակ, վորոնք բջիջի բյուրոյից մի շարք կոնկրետ հանձնարարութեյուններ ստացան:

Առաջին խմբակին՝ 6 հոգուց բաղկացած, տրված եր հանձնարարութեյուն, ծանոթացնել բանվորներին արտադրական խորհրդակցութեյան վորոշումներին:

Յերկրորդ խմբակին հանձնարարված եր կազմակերպել հիմնարկութեյունում ռացիոնալացման անկյուն։

Յերրորդ խմբակը (3 հոգի) սաացավ հանձնարարութեյուն՝ կազմակերպել վարպետների և բանվորների խորհրդակցութեյուն, արտադրական աշխատանքներում յեղած բացերի և նրանց վերացման միջոցների մասին։

Զորրորդ խմբակին հանձնարարված եր՝ բանվորութեյան մեջ տարածել գրականութեյուն, լրագրեր, ամսաթերթեր։

Հինգերորդ խմբակին տրվեց հանձնարարութեյուն՝ սատուգել կոոպերատիվ մարմիններում աշխատելու ուղարկված կոմյերիտականների աշխատանքը և կազմակերպել բանվորների ներգրավումը կենտ-բանկոոպում։

Տվյալ բջիջին տրված հանձնարարութեյունների սխատեմի մեկ ամսվա ռեալ արդյունքը հետևյալն է՝ կենտբանկոոպում ներգրաված և 40 բանվոր, ՄՈՊՐ-ում՝ 100 հոգի, Պաջը-Ավիաքիմում 70 հոգի։

Առաջ բջիջում սատնում եյին 9 որինակ թերթ։ Թերթերի տարածման աշխատանքների համար կոմյերիտականներից առանձին խմբակ կազմակերպելուց հետո, բաժանորդագրութեյունը հասավ մինչև 78։

Բջիջում 203 հոգի յե, սրանցից 107 հոգի ներգրավված են զանազան հանձնարարութեյուններ կատարելու, հանձնարարութեյուններ կատարողների թվում 7 հոգին նախկին «մեռյալ հոգիներ» եյին, վորոնց առաջ ցանկանում եյին կոմյերիտմիութեյունից վտարել։

Ֆաբգործուսի (Զևչելովի շրջան) բջիջում հանձնարարութեյունները կոմյերիտականների մեջ բաժանված եր այս կերպ՝ բջիջի գործնական աշխատանքների պիոգրամման կազմելը հանձնարարված եր 3 կոմյերիտականի։

Տաս հոգի լուսո են ընծայում բջիջի գործնական աշխատանքի պատի լրագիրը։

Կուլտհնգյակը, կարմիր անկյունում գնում է զեկուցումներ՝ ռազմականացման, արտադրողականութեյան ռացիոնալացման, քաղկոնրդի աշխատանքների մասին։

Ինքնալլեգիային հանձնարարված է ամեն շաբաթ լուսո ընծայել բջիջի ամսորյակի բյուլլետեններ։

Տաս հոգուց բաղկացած մի խմբակին հանձնարարված է «Комсомольская Правда» և «Комсомолец Украины» թերթերի տարածումը և բաժանորդագրումը։

Կոմյերիտականների մեկ խմբակ զատված է գործարանային արտադրական բացերի պարզաբանման համար։

10 հոգի ծանրաբեռնված են կենտբանկոոպի աշխատանքներով։

10 հոգուց բաղկացած մի խմբակին հանձնարարել են կազմակերպել ռացիոնալացման անկյուն և այնտեղ մշտական աշխատանք տանել։

7 հոգու ծանրաբեռնել են կոլլեկտիվ կերպով կինո հաճախելու գործը կազմակերպելու աշխատանքներով։

3 հոգու հանձնարարված է կազմակերպել պատանի թղթակիցների խմբակ։

7 հոգի հավաքում են ինտերնացիոնալական 5 կոլլեկտիվ և թղթակցում են Գերժանիայի կոմյերիտմիութեյան բջիջներին։

5 հոգու հանձնարարված է կազմակերպել կարմիր բանակի յերեկո և այլն։

Հանձնարարութեյունների մի մասը կոմյերիտականներն արդեն կատարել են։ Կազմակերպված է ռացիոնալացման անկյունը։ Անց է կացված կարմիր բանակի յերեկոն։ Աշխատանքի պրոցեսում պարզվեց, վոր հարց ու փորձի միջոցով արտադրութեյան բացերի հաշվառումը ցանկալի արդյունքներ չի տալիս։ Վորոշեցին գուժարել կոմյերիտականների և յերիտասարդների խորհրդակցութեյուններ վորակավորման մասին։ Հրավիրեցին ձուլարանին, կաթսագործներին և պղնձագործներին։ Լուսո տեսավ բջիջի գործնական աշխատանքի պատի լրագիրը։ Կազմված են բջիջի ամսորյակի գործնութեյան 2 բյուլլետեն։ Բաժանորդագրվել են «Комсомольскаа Правда»-ին 42 հոգի և «Комсомолец Украины»—9 հոգի։

Կազմված և բջիջի գործնական աշխատանքի պիոգրամման։ Կազմակերպված և շաբաթային տուրնիր։ Նրանում մասնակցում են 35 հոգի։

Ներգրավված և կոոպերացիայում 18 հոգի։ Յենթաշեֆ գյուղում 4 կոմյերիտական կազմակերպեցին հրգեհաշեջ մեքենայի վերանորոգումը, կարգի բերին գրադարանը, ներգրավեցին կոմյերիտմիութեյան մեջ 13 հոգի, կազմակերպեցին տեղեկատու սեղան խրճիթ-ընթերցարանում և այլն։

Տարածեցին 250 ռուբլու գյուղացիական փոխառութեյան պարտատոմսեր։

Հանձնարարություններ սիսեմ «ամսօրյակի» ժամանակ սահմանված եր նաև մի քանի գյուղական բջիջներում։ Որինակ, Սալոնյանակի բջիջը կոմյերիտականներին բաշխեց հետևյալ պարտավորությունները.

Ինչ կատարել	Ում ե հանձնարարված
Կազմակերպել 30 տներում ցանքսի նյութերի գումար։	Ընկ. ընկ. Գլադկով Մ., Ուզլաբենկո Մարիային, Վոլոշենկո Յակովին։
Գյուղում հասարակական ուժերով տնկել 200-ից վոչ պակաս պեկորատիվ ծառեր։	Պետրենկո, Կարպ, Սպիվաչենկո։
Շրջանի կազմակերպության ուժերով կազմակերպել պեկորատիվ այգու արնկումը։	Բոնդարենկո։
25 ծխերում կազմակերպել պայքար պահեստներից վնասատուների դեմ	Բելոկոկև և Յերեմենկո։
Բաղարակներից խմբակ կազմակերպել մաշակաբի և կոմինդերի գործի ուսումնասիրության համար, աղջիկների մեջ —կար ու ձևի խմբակներ։	Ռոյզեման, Սիչևոյ, Տիշչենկո Ա., Սլեսարենկո Բ., Պողչայնոյ Իվ.
Տարածել 100 դիրք կոոպերատիվ բովանդակության։	Պոտաբեմցու, Գոլուբչենկո, Նիկիտենկո, Բաբենկո Տ.։

Վոչ պակաս հետաքրքիր ե Բաումանսկու շրջանում (Մոսկվա) կատարած փորձը «թե ինչպես ըեռնավորել բոլոր կոմյերիտականներին նրանց հետաքրքրող աշխատանքներով» խնդրի լուծման ասպարեզում։ «Պրովոդնիկ» գործարանի բջիջի բյուրոն մանրամասն քննեց այն հարցը, թե «բջիջում ինչպիսի աշխատանք կարելի յե հանձնարարել կոմյերիտականին»։ Յեղրակացությունները պարտականությունների սուույդ թվարկման հետ միասին ապագրեցին և բաժանեցին բջիջի անդամներին, առաջարկելով քննել նրանք գործարանամասերում, վորպեսզի պարզվի, թե ով ինչով և հետաքրքրվում բջիջում։ Բյուրոյի կողմից նշանակված յեղակը զրույցներ ունեցավ բոլոր կոմյերիտականների հետ, թե «ինչպիսի աշխատանքներում կոմյերիտականը կցանկանար փորձնել իր ուժերը և յեռանդը»։ Այնուհետև հրավիրեցին բջիջի դործունեության այս կամ այն բնագավառում աշխատել ցանկացող ուղանների խորհրդակցություն, վորտեղ նրանց բացատրեցին, թե ինչպես պետք ե կատարել իրենց պարտականությունները։ Այս

կերպ բջիջին հաջողվեց ընդգրկել գործնական աշխատանքներում համարյա թե բոլոր կոմյերիտականներին։

Այնուհետև անհրաժեշտ ե նշել «արտադրական նախաձեռնության կազմակերպիչներին», վորոնք աճում են մի շարք բջիջներում։

Այս մասին նույնպես մենք կբերենք լավ և տեղին գործերի մի շարք նկարագրություններ։

Ուշադրություն «մանր խնդիրներին»

Լավ արդյունքի հասան «Կրասնայա Զարյա» (Մոսկվա) ֆաբրիկայի կոմյերիտականները, սկսելով վոչ մեծ կոնկրետ գործից։ Ֆաբրիկայում, բանվորների և բանվորուհիների շրջանում չափազանց շատ խոսակցություններ եյին լինում արտադրության մասին բացերի մասին։

Դրանց մասին խոսում եյին ամենուրեք, մեքենայի մոտ կանգնած, ճաշարանում՝ ճաշելու ժամանակ, տանը։ Այդ խոսակցությունները մեծ մասամբ վերջանում եյին բամբասանքներով։ «Այստեղ—իրր—վատ ե, այնտեղ լավ չե... բայց և այնպես դարձյալ բաներ հավաք չարժե աղմուկ բարձրացնել»։ Յեվ դրանով եյին աշխատանքները։ «Դատարկ բանները» չդայնացնում եյին բանվորներին և բանվորուհիներին։ Պատճառ եյին դառնում բանվորների հաճախակի անբավականությունների և հայհոյանքների վորպեսզի պործարանի վարչության հասցեին։ Կոմյերիտականներն ականջ չեյին կախում բանվորներին մինչև վոր այս «մանր խընդիրները» տապալեցին բջիջի մի շարք լավ ձեռնարկումներ։ Արտադրական կյանքում մասնակցելու իր աշխատանքը բջիջն ըսկսեց՝ աշխատանքից բացակայելու դեմ, արտադրած վատ ապրանքի (բրակ) դեմ, աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու համար պայքարելուց։ Անցկացրին արտադրական մրցություն։

Այս բոլորը խոշոր գործեր եյին, «մանր խնդիրներով» ժամանակ չկար զբաղվելու։

Իրրև մրցության հետևանք ֆաբրիկայում բարձրացավ աշխատանքի արտադրողականությունը, պակասեցին աշխատանքին բացակայելու դեպքերը, բայց շուտով ամեն ինչ ընթացավ առաջվա կարգով։ Արտադրության բացերը, թեպետ յեվ անհետացան, բայց հարուցին կոմյերիտականների նախաձեռնությունը։

Բջիջի բյուրոյի նախաում, յերբ զրված եր մրցութեյան արդյունքների ամրապնդման խնդիրը, բոլորը յեկան մի յեզրակացութեյան՝ «հարկավոր է սկսել մանր խնդիրներից», նրանց աչքաթող անել չի կարելի, մեր ամբողջ աշխատանքը ջուրը կընկնի»։

Գործարանամասերում հավաքեցին ակտիվը, իսկ հետո՝ յերիտասարդութեյանը։ Ճաշի ընդմիջումի ժամանակ գործարանամասի կոլեկտիվների կազմակերպիչները բանվորների հետ զրույցներ ունեցան արտադրութեյան «մանր խնդիրների» շուրջը։

Շատ կարևոր և գնահատելի առաջարկութեյուններ հավաքեցին։ Ընարեցին գործարանամասերի յեղակներ՝ արտադրութեյան բացերի մասին յեղած բոլոր նկատողութեյունները հավաքելու համար։ Կոմյերիտմիութենական բջիջը պատերազմ հայտարարեց «մանր խնդիրների»։ Տղերքը կազմեցին արտադրութեյան բացերի ցուցակ ըստ գործարանամասերի, և բաց թողին պատի լրագրի համուկ բյուլետեն, հետևյալ լոզունգներով՝

«Բացերը, թեկուզ և փոքր, չպետք է թագցնել, չի կարելի քողարկել, այլ հարկավոր է ի հայտ բերել, խփել դրանց և խփել նրանց, ով վոր այս «մանր խնդիրների» վրա ուշադրութեյուն չի դարձնում»։

Կարդում ենք պատի լրագրում՝

Ահա այն մանր խնդիրները, վորոնք խանգարում են աշխատելու։

Մանվածքային բաժնում հում նյութը մշակվում է յերկու խումբ մեքենաներով, ըստ վորում՝ յերկրորդ խումբը հետ է մնում առաջինից, և ստացվում է մեքենաների համաչափության խանգարում։ Անցնում է մեկ ամիս, մանվածքի մի մասը վերջնականապես մշակված չէ և ավյալ ամսվա արտադրածի մեջ չի մտնում։

Առաջին խմբի բանվորուհիները փաստորեն ավելի շատ են արտադրել բայց քիչ են ստացել միայն այն բանի համար, վոր հարևան մեքենայի վրայի գործը հետ է մնացել։

Թվում է, վոր դատարկ բան է, չէ՞ վոր յեկող ամսվա աշխատավարձի մեջ այդ արտադրածը կմտնի, բայց և այնպես բանվորուհիները անհանգստանում են։ Վոչ վոք բանվորուհիներին չբացատրեց, թե ինչու յե այդպես ստացվում, հետո։ Կարողների բաժնում, շնորհիվ վատ թելերի, մեքենաներն այնքան հաճախակի յեն կանգնում, վոր վարպետները հրաժարվում են նորոգել իսկ բանվորուհու հոգին թող դուրս գա։ Նա կորցնում է իր աշխատավարձը մեքենաների կանգնելու պատճառով։

Ձերեկը բաժնում բազանեքի պես շոգ է, իսկ գիշերային հերթափոխը դողում է ցրտից։ Անհրաժեշտ է գիշերը վառել, իսկ այս մասին վոչ վոք չի մտածում։

Մի մանր խնդիր ևս. հենքի բաժնում առաջ մանվածքի մի տեսակի նորմամբ վորոշ գնահատութեյուն եր սահմանված։ Այժմ մանվածքը ավելի վատ է, իսկ գնահատութեյունը նույնն է. բանվորուհիները հրաժարվում են այս վատ ձառութեյամբ աշխատել, կռվում են ընդունողի հետ, կարծելով, թե նա վատ մանվածք տալով ճիշտ չի վարվում։ Վոչ վոք բանվորուհիներին չբացատրեց, թե ինչու բաժինը վատ տեսակի մանվածք է մտնում։

Հաճախակի չնչին մի բան, օրինակ՝ բաժնի անսարք պատուհանը ուժեղ կերպով անդրադառնում է բանվորուհու վրա. նա հիվանդանում է, ջղայնանում—ընկնում է աշխատանքի արտադրողականութեյունը։

Նախշման բաժնում, բոլոր ժամանակ, բայց և դուրը ապրանքի փոխադրութեյան պատճառով, բանվորուհիները դողում են ցրտից։ Վոչ վոք չի մտածում վերացնելու այդ բացը»։

Այդ որը ամբողջ ֆաբրիկան սկսեց խոսել կոմյերիմիութենական պատի լրագրի մասին։ Ճաշի ընդմիջումի ժամանակ բջիջի սենյակը մեկը մյուսի հետևից գալիս եյին բանվորուհիները և պատում իրենց գործարանամասի արտադրական բացերի մասին։ Ինդրում եյին տեղավորել իրենց առաջարկութեյունները պատի լրագրի մյուս համարում։ Սթափվեցին ֆաբկոմը և գործարանի վարչութեյունը։ Կուսբջիջը հավանութեյուն տավ կոմյերիտականների նախաձեռնութեյանը։ Բանվորուհիների բոլոր առաջարկները հանձնված եյին արտադրական խորհրդակցական քննութեյան։ Նրանց մեծ մասն ընդունվեց խորհրդակցութեյան կողմից և կիրառվեց կյանքում գործարանի վարչութեյան միջոցով։ Կոմյերիտմիութենական բջիջը, շնորհիվ այս գործի, բանվորուհիների մեջ հեղինակություն ձեռք բերեց։ Պակասեց խոսակցութեյունը բանվորուհիների շրջանում ֆաբկոմի դեմ, իրենց ցույց տված անուշադիր վերաբերմունքի մասին։ Բարձրացավ աշխատանքի արտադրողականութեյունը։ Ահա թե ինչու կարևոր է, վորպեսզի մեր ամեն մի ֆաբրիկա-գործարանային բջիջ ուշադիր վերաբերմունք ցույց տա դեմ արտադրութեյան մանր թերութեյունները, իր ժամանակին նրանց դեմ պայքարելու համար կազմակերպելով բանվորների և բանվոր յերիտասարդութեյան մասսաները։»

Արտադրական անվանակոչ

Իր արտադրութեյան բարելավման ասպարեզում աշխատելու դեղեցիկ օրինակ տալիս են Լենինգրադի Յեգորովի անվան գործարանի կոմյերիտականները։

Յերբ անցավ յերիտասարդ լավագույն բանվորների մրցութեյունների ալիքը, „Комсомольская Правда“-ն ի լ գումարե-

լով Լենինգրադի և Մոսկվայի կոմկերիտականների փորձը, բջիջների առաջ հարց դրեց՝ «մրցութ յունը անցկացրիք, իսկ հետո՞ Ինչպե՞ս եք մտածում ամրապնդել արտադրական մրցութ յան հաղթողութ յունները, ինչպե՞ս պետք է հետագայում պայքարեք արտադրութ յան ռացիոնալացման համար»։

Այս հարցը մի քանի ամիս շարունակ հուզում էր Յեգորովի անվան վագոնակառույց գործարանի կերիտասարդութ յանը։ Այս մասին տաք-տաք վիճաբանում էին՝ կոլլեկտիվում, ռայկոմում, և յեգորովցիները վիճաբանութ յան հետևանքով մի փայլուն գաղափար հղացան։

«Ախար մեր գործարանը կապված է տասնյակ գործարանների հետ, որոնք մեզ մատակարարում են հումք, զանազան տեսակի յերկաթներ, անտառանյութ. ախար, մատակարարված հումքից և կախված արտադրանքի վորակը, նրա արժեքը խաչաձանքի արտադրողականութ յունը։ Արդեք կապվենք այդ գործարանների կոմկերիտականների հետ, նրանց հաղորդենք հումքի վորակի մասին և ընդհանուր ուժերով վերացնենք նրա պակասութ յունները։»

Այսպես վճռեցին յեգորովցիները։ Կոմկերիտականների անվանակոչի մասին լուրը արագ տարածվեց ամբողջ գործարանում, ալեկոծեց գործարանի բոլոր բանվորներին։

Սեպտեմբերի վերջին, Յեգորովի անվան գործարանի կոմկերիտականները բաց նամակ գրեցին Ռիկովի, Ջերժինսկու, Ֆրունզեյի անվան „Красный Октябрь“, „Красное Сормово“, „Ленинская Кузница“, „Серп и Молот“ գործարանների և Նիժնի-Նովգորոդի, Յարոսլավլի և Գոմելի նահանգական վայտամթերման մարմինների կոմկերիտականներին։ Կարդանք այդ հետաքրքիր նամակը (դեղված է „Комсомольская Правда“ թերթում)։

Թանգագին ընկերներ

Մենք ընկ. Յեգորովի անվան վագոնակառույց գործարանի կոմկերիտականներս, թվով 600 հոգի նախաձեռնութ յուն ենք հանձն առնում արտադրողականն անվանակոչ կատարելու ձեզ, մեր արտադրութ յան համար հումնյութ պատրաստողներիդ հետ։

Ինչպես դուք, այնպես էլ մենք ներկա մոմենտում մեծ նշանակութ յուն ենք տալիս մեր սոցիալիստական շինարարութ յան գործին, որը անհնարին է առանց բանվորական, նաև՛ն թվում և կոմկերիտական մասսայի մասնակցութ յան։ Մեր արտադրութ յունը մեկուսացած չէ։ Նա սերտորեն կապված է մեր

քանի այլ արտադրութ յունների հետ։ Որինակ՝ վորպեսզի կատարենք մեկ վագոն կամ սայլակ, մենք դրսից ստանում ենք յերկաթ, պողպատ և վայտեղեն։ Ուստի մեր արտադրութ յունը բարելավելու, եժանացնելու համար անհրաժեշտ է հումք պատրաստող արտադրութ յան բարելավումը։ Միայն այս միջոցով հնարավոր է ստանալ լավ արդյունք։

Հուսով ենք, վոր մեր սերտ կապը ձեզ, մեր հումքը պատրաստողներիդ հետ, կօգնի մեզ բոլորիս լուծել այս խնդիրը։

Մեզ, կոմկերիտականներիս, ձեռնարկութ յան անկուսակցական լայն մասսայի միջավայրում աշխատողներիս վրա պարտականութ յուն է ընկնում՝ որքան դառնալ արտադրութ յան բոլոր բացերի վերացման գործում, այն բացերի, նաև դառնալ արտադրութ յան բոլոր բացերի վերացման գործում, այն բացերի, վորոնք առաջ են գալիս դեպի աշխատանքը ցույց տված անբարեխիղճ վերաբերմունքից։

Հայտնի յե, վոր մեր արտադրութ յուններում վատ արտադրած ապրանքը (բրակ, խոտան) լինում է բանվորի անփութ ութ յան պատճառով։

Այդ վատ արտադրած ապրանքը թանգացնում է ապրանքի ինքնարժեքը, առաջացնում է մեծ վերադիր ծախսեր։ Մեր գործարանում այդ վատ արտադրած ապրանքը (բրակ) վերացնելու և վերադիր ծախսերը իջեցնելու նպատակով մենք վորոշ բան արդեն արել ենք.

1) Ամբողջ գործարանում յերկտասարյ ամենալավ արտադրողի մութ յուն անցկացրինք, վորը տվեց մի շարք դրական արդյունքներ (յերկտասարութ յան աշխատանքից բացակայելու դեպքերը իջեցրեց 75 տոկոսով, իջեցրեց բանվորի պատճառով վատ արտադրած ապրանքի (բրակ) տոկոսը, ուժեղացրեց խնայողական վերաբերմունքը դեպի նյութեղենը և գործիքները)։

2) Արտադրողական խորհրդակցութ յունների աշխատանքներում յերկտասարդութ յան ակտիվութ յունը բարձրացնելու նպատակով անցկացրինք կատարութ յան ակտիվութ յունը բարձրացնելու նպատակով անցկացրինք կատարդ

Յերկաթը ստանում ենք զանազան տեսակի թիթեղ, կլոր, շերտավոր և այլն, վորը հաճախ հետևյալ պահանջներն է ունենում.— պողպատայնություն, վոր թույլ չի տալիս նյութը դողդղ. մամլումի անհարթություններ, վոր մշակման ժամանակ յերբեմն 20%-ի հասնող խոտան է տալիս. շերտավոր յերկաթի անփույթ մամլում, վոր մանրամասների մշակման միջոցին մինչև 35% ավելացնում է վերադիր ծախսերը։ Թերթ-յերկաթը միատեսակ բաղադրություն չունի, և պողպատայնոտ է, վոր մշակման ժամանակ մինչև 200% վերադիր ծախս է տալիս։ Օրինակ, մի թերթ անխոտան յերկաթ առնդլուն վճարվում է 60 կոպեկ, իսկ խոտան-յերկաթին—2 ռուբլի։

Ն.-Նովգորոդի և Դոմնելի անտառանյութ մթերող ձեռնարկություններից՝ ստանում ենք կաղնե տախտակ, վորը ճեղքվածքներ, կոշտեր և այլ պակասություններ է ունենում։ Մշակելիս ստանում ենք մինչև 15% խոտան։ Ստանում ենք անիվների համար հեցեր, վորոնք ճեղքվածքներ ու այլ արատներ են ունենում, վորոնք նույնպես մեծ վերադիր ծախսեր են պահանջում։ Այդ շինվածքները մեզանում անցնում են չորանոցով և ընկնում են փայտամշակման գործարանների վրա։ Յեվ վերջիվերջո դրանք գնում են իբրև արտադրության փչանորդ։

Այս ամբողջը ընդհանուր առմամբ շատ է խանգարում արտադրության ռացիոնալացման աշխատանքը։ Ինչպես վերևում ասացինք, մենք այս հարցերի նկատմամբ մեզ մոտ գործարանում քիչ թե շատ աշխատանք տարել ենք և պահանջում ենք, վորպեսզի դուք էլ ձեզ մոտ գործարաններում յերկաթյան և գործարանի վարչության առաջ դնեք հետևյալ խնդիրները՝

Ընկ. Զերժինսկու անվան, ընկ. Ռիկովի անվան, „Красный Октябрь“, ընկ. Ֆրունզեյի անվան գործարանները, վորոնք մեզ մատակարարում են յերկաթ և պողպատ,—վերացնել յերկաթի պողպատայնությունը. կլոր և շերտավոր յերկաթի մամլումի անհարթությունները, թիթեղ յերկաթի խառնաշերտությունը և ճաքերը։

Դոմնելի, Նովգորոդի, Յարոսլավլի նահ. անտառանյութ մթերող գործարանները, վորոնք մեզ մատակարարում են տախտակ, կաղնե տախտակ, հեցեր,—վերացնել ճեղքերը, կոշտեր ու այլ արատներ ունեցող նյութեղենի տեսակավորման անհրաժեշտությունը։

Առաջադրած հարցերի պատասխանը սպասում ենք կարճ ժամանակամիջոցում այս թերթերի էջերում։

Կոմբարեվնեերով ընկ. Յեգորովի անվ. գործարանի կոմյերիտականներ»։

Լինինգրադ։

Բոլոր գործարաններում տարածվեց յեգորովցիների կոչը։

Արտադրական անվանակոչի մասին յեգորովցիների ձայնը լավեց կարելյան անտառներում, անցկացավ Ուրալի գործարանները և արձագանքեց կարմիր մայրաքաղաքի գործարաններում. կոմյերիտական բջիջներն սկսեցին խոսել։

Իսկ խոսքերին գործն էլ հետևեց։

Առաջինը յեգորովցիների կոչին պատասխանեցին „Кр. Гвоздильщик“ գործարանը՝

«Յեգորովի անվան գործարանի համար „Кр. Гвоздильщик“-ում պատրաստվող գնդերիթների վորակը բարձրացնելու համար,—գրում էին կոմյերիտականները,—այս գնդերիթները չափելու համար մացրած և մետրական սիստեմ։ Այս սիստեմի կիրառումը կվերացնի գնդերիթների ունեցած բացերը։ Գնդերիթների գլխիկների պոկվելու պատճառը Ուրալի և հարավի գործարաններից մեր գործարանի ստացած վատ նյութն է»։

Արձագանք տվին նաև նովգորոդցիները։

«Սիրելի ընկերներ.

Նովգորոդի շրջանի անտառանյութերի մթերման գործարանին ուղղած նամակում գրած ձեր առաջարկությունը անտառային նյութերի ռացիոնալացման վերաբերմամբ, մեր կողմից ընդունված է ի գիտություն, ձեռք են առնում միջոցներ»։

Յեգորովցիների նամակին պատասխաններ ուղարկեցին նաև ընկ. Ֆրունզեյի անվան, „Кр. Октябрь“, „Серп и Молот“ և այլ գործարանների կոմյերիտականները։

— Ապրեն կոմյերիտականները! Ամբողջ Ա. Ս. Հ. Մ.-ով մեկ ծավալեցին գործը,—ասում էին հասակավոր բանվոր—յեգորովցիները։

Յեվ վոչ միայն խոսում էին, այլ և իրանք էլ անվանակոչի ամենայեռանդուն մասնակից դարձան։

Արտադրական խորհրդակցությունն իր ներկայացուցիչներն և ավել անվանակոչի գործարանամասային և ընդհանուր-գործարանային հանձնաժողովներին։

Վարպետները, տեխնիկները, ինժիներները կոմյերիտականներին ոգնեցին պարզելու խոտանի պատճառները և բջիջի հետ միասին «հայտագիր» գրեցին գործարաններին։

Ներկայումս Յեգորովի անվան գործարանի ներկարար արհատանոցի կոմյերիտականները պատրաստվում են Բեռեզնի անվան ֆաբրիկայի հետ անվանակոչ ունենալու։ Անվանակոչի պատճառն այն է, վոր այս ֆաբրիկայից ստացված ներկելու վրձինները անբավարար վորակի յեն։ Փականագործական գործարանները նամսակի յերիտասարդությունը պատրաստվում է անվանակոչ ունենալու „Пневматик“ գործարանի հետ։ Այս գործարանամասի յերիտասարդությունը մեղադրում է „Пневматик“ գործարանին, վոր այնտեղից ստացված մուրճերը վատ վորակի յեն։

Յեգորովցի—կոմյերիտականների փորձը լայն արձագանք գտավ ամբողջ Ա.Ս.Հ.Մ.-ի շատ գործարաններում, որինակ, ներկա մոմենտում արտադրական անվանակոչով ընդգրկված են բոլոր տեքստիլ ձեռնարկությունները։

Գնահատելով յեգորովցիների փորձը, ՀԱՄԼԿՅԵՄ Մոսկվա-Նարվյան ռայոնական կոմիտեն վորոշեց.

«Արտադրական անվանակոչը ընդունել ձեռնարկություններում արտադրանքների վորակը բարձրացնելու լավագույն ձևը։

Անհրաժեշտ համարել, վոր արտադրական անվանակոչի և արտադրական խորհրդակցության միջև սերտ կոնտակտ լինի։

Արտադրական անվանակոչն անցկացնելու ժամանակ անհրաժեշտ է, վոր ՀԱՄԼԿՅԵՄ լուրջ ուշադրություն դարձնի արտադրանքի վատ վորակի պատճառների վրա, վորոնք ծագում են ներքին անուշադրությունից, չարաբաստությունից և այլն։

Ենդրել ՀԱՄԼԿՅԵՄ Լենն. մարզային բյուրոյին ուղղելու համապատասխան դիմում ՀԱՄԼԿՅԵՄ մարզային և շրջանային անվանակոչված կոմիտեներին՝ կոմկերիմիության անդամներին հորդորելու ավելի լուրջ ուշադրություն դարձնել արտադրական անվանակոչին»։

Կոմկերիմիության մեջ աճում են և ամրապնդվում բանվորական մասսաների արտադրական նախաձեռնության կազմակերպիչները, վորոնք վոչ թե խոսքերով, այլ գործով ոգնում են կոլտնտեսությանը՝ շարժվելու առաջ դեպի նորանոր հաղթանակներ սոցիալիստական արդյունաբերության շինարարության ճանապարհին։

Աշխատանքը նոր ձևով սկսում և պատվաստվել վոչ միայն քաղաքային, այլ և գյուղական բջիջներում։

Ահա օրինակ, ինչպես արդյունքների յե հասել Վասիլևսկի ռայոնի Պավլովոյի բջիջը Ուկրայինայում։

1927 թ. ընթացքում նա կատարել է հետևյալը.

1. Կազմակերպված և գյուղատնտեսական արտադրական խորհրդակցություն։

2. Մշակված և հողային հասարակության գյուղատնտեսության վերակառուցման և կոոպերացման պլանը։

3. Պատրաստված են յերկու ցուցադրական հողամասեր հանքային պարարտանյութերով։

4. Կազմակերպված և վնասատուների դեմ պայքարելու համար մեկ արշավախումբ։

5. Պայքար և տարված յերկարաքիթ վնասատուների դեմ 7 ծխերում։

6. Կազմակերպված և 36 տնտեսությունների միջոցով նըրանց հողամասերը մաքրելու աշխատանքը հնձից հետո։

7. Ցանելու համար 50 ծխերում կազմակերպված և գարնան սերմացուների գործ։

8. Աշնանը զրված և 1015 փ. սերմացու։

9. Կապ և սահմանված 4 կոմյերիտական-տնտեսատերերի և գյուղատնտեսի միջև։

10. Կազմակերպված և մեքենա-տրակտորային ընկերություն։

11. Ոգտագործված և $7^1/_2$ դեսյատին հողամաս չքավորներին զրված սերմացուով վարկավորելու նպատակով ֆոնդ կազմակերպելու համար։

12. Ոգնել են 8 չքավոր տնտեսությունների հավաքելու և կալսելու բերքը։

13. Կազմակերպված և գյուղացիներից 6 խումբ գյուղատնտեսական ինվենտարի գնման համար։

14. Գյուղատնտեսական վարկային ընկերության մեջ են քաշված 82 նոր անդամ, վորոնցից 14 հոգի ի հաշիվ չքավորական ֆոնդի։

15. Ծածկված և գյուղատնտեսական ընկերության 48 անդամների վնասների պարտքը։

16. Սպառկոոպերացիայի մեջ են քաշված 61 մարդ, նրանցից 31-ը կին։

17. Ծածկված և 58 մարդու վնասների պարտքը սպառկոոպերացիային։

18. Կազմակերպված և խրճիթ-ընթերցարանին կից կոոպերատիվ խմբակ։

19. Դիտված և կոոպերացիայի աշխատանքների բացերը և ձեռք են առնված միջոցներ նրանց վերացման համար։

20. Կազմակերպված և պղպեղնակության պատ միջոցների մասնակիցը վարկային ընկերության մեջ։

21. Տարածված և կոոպերատիվ բովանդակության 125 գրքույկ։

22. 28 տնտեսություններում ստուգված է, թե ինչպես են գործադրվում գյուղացիների ստացած վարկերը գյուղատնտեսությունը բարելավելու համար։

23. Կազմակերպված և կար ու ձևի խմբակ։

24. Կատարված և մի եքսկուրսիա դեպի ցուցադրական այգի։

25. Տարածված և «Будущая Смена» թերթից 73 և «Комсомолец Украины» 8 օրինակ։

26. Գարնանը «անտառի օրը» տնկված և առանձին տնտեսություններում մինչև 400 ծառ։

27. Պիոներների ուժերով 13 բուն և շինված սարյակների համար։

Ահա ձեզ մի ուրիշ օրինակ, թե ինչպես կոմկերիտմիությունն գյուղական բջիջը կարողացել է իր աշխատանքով միացնել չքավորին և միջակին կուլակի դեմ։

Ռոսլավլևկայի կոմկերիտականները Հեռավոր Արևելքում կարողացել են կոոպերացիայի և մեքենատրակտորային ընկերության միջոցով միացնել գյուղխորհրդի շուրջը չքավոր և միջակ գյուղացիությանը ընդդեմ տեղական կուլակների և նրանց պարագլուխ խանութպան Արխիպի։

Իրենց սեփական կոոպերատիվը գյուղում չունեյին, իսկ մինչև մոտակա գյուղը, ուր կա կոոպերատիվ, 50 վերստ է։

Ռոսլավլևկայի գյուղացիները ապրանքներ գնում եյին իրենց գյուղի մանրավաճից, նրա ճորտն եյին դառնում, սակայն ուրիշ ճար չկար։

Ամբողջ Ռոսլավլեվկային ապրանք մատակարարողը կոնտրաբանդիստ վասկան եր կուլակ խանութպան Արխիպի հետ միասին։

Այդ «գյուղացիների գրպանները մաքրագործելու համար կազմված հարգելի տրեստը» գործում եր մեծ թափով։

Վասկան կոնտրաբանդ ապրանք գնողն եր, իսկ խանութպանի վրա ավելի թեթև աշխատանք եր ծանրանում—վոչնչացնել կոնտրաբանդային կնիքները, դարսել ապրանքները դարակների վրա և գնալ բարեկամաբար զրուցել հարևանների հետ այն մասին, վոր «ուղղակի արտասահմանից ստացված ապրանքների նոր ասորտիմենտ ունի իր խանութում»...

Գումարվոր Թաշկինակների և ինչ-վոր շքեղ կտորի համբավը գեղջկուհիներն արագորեն տարածում եյին մի խրճիթից մյուսը։

Կոմկերիտականները գյուղխորհրդի անդամների հետ միասին գյուղխորհրդի նիստերից մեկում վորոշեցին վերջ դնել Արխիպի թագավորությանն։

Բջիջը եր լավագույն տղաներին հանձնարարել գյուղացիների հետ զրույցներ ունենալ կոոպերացիայի նշանակության և իրենց գյուղում կոոպերատիվ ունենալու անհրաժեշտության մասին։

Գյուղացիների ժողովը հավանություն տվեց գյուղխորհրդի առաջարկությանը Ռոսլավլեվկայում կոոպերատիվ ունենալու մասին։

Անդամակցական վճարները հավաքվեց 54 ռուբլի։

Արխիպը ծիծաղում եր և ներողամտաբար բացատրում եր գյուղացիներին «54 ռուբլով խանութ չես բաց անի»։

— Նա խանութ չպետք է լինի, այլ կոոպերատիվ,—մոայլ դեմքով առարկում եյին գյուղացիները։

Արխիպը ծիծաղից թուլանում եր և թափահարում ձեռքը, իսկ նրա ընկերը վասկան առատորեն հյուրասիրում եր գյուղացիներին կոնտրաբանդ ծխախոտով։

Կոմկերիտականները վարկ ստացան բանկից կոոպերատիվի համար, և մի շաբաթ անց Արխիպի խանութի դիմաց, կոմկերիտական Ռոշչենկոյի տան մոտ ապրանքներով յերկու սայլ կանգնեցին։ Իսկ տան պատուհանի տակ աչքի յեր ընկնում ցուցանակը հետևյալ մակագրությամբ. «Ռոսլավլեվկայի կոոպերատիվ—«Զքավորների բարեկամը»։

Այժմ կուլակ Արխիպը այլևս չի ծիծաղում։ Նրա խանութը տկլորվում է, իսկ կոոպերատիվը աճում յեվ ամրանում։

Աշնանը գյուղխորհրդի ֆինանսա-հարկային սեկցիայի անդամ–կոմկերիտականները մեծ աշխատանք տարան կուլակների թագցրած գյուղմիասհարկի յենթակա օբյեկտները հայտնաբերելու համար։ Մի քանի հարուստ գյուղացի դատի հանձնվեցին։

Կոմկերիտականներն իջեցնել տվին գյուղի թուլ տնտեսությունների հարկը, գյուղմիասհարկի կանոնները չքավորությանը բացատրելու գործը դրին որինակելի հիմքերի վրա, գյուղացիների հետ զրույցներ կազմակերպեցին հարկը ժամանակից շուտ մուծելու մասին։ Հետևանքն այն յեղավ, վոր Ռոսլավլեվկայի գյուղխորհուրդը շնորհիվ կոմկերիտականների գրավեց առաջնակարգ տեղերից մեկը իր շրջանում՝ գյուղմիասհարկը կառավարության նշանակված ժամկետին վճարելու գործում։

1927 թ. սկզբում բջիջը վորոշեց կազմակերպել չքավորների մեքենատրակտորային ընկերություն։ Ամառը շատ եյին նեղվում չքավորները առանց մեքենայի։ Պետք եր հաճարը ծեծել—դե գնա մեքենայի համար կուլակին գլուխ խոնարհիր։ Պետք եր հացահատիկը քամու տալ—վերջին կոպեկներովդ յեռապատիկ թանգ վճարիր հենց նույն խանութպան Արխիպին քամհարիցդ օգտվելու համար։

Գյուղխորհուրդը և չքավորների ժողովը պաշտպանեցին բջջի նախաձեռնությունը—«առանց մեքենայի հեռու չես գնա»։

Մեքենատրակտորային այդ ընկերությունը կոմկերիտականներն անվանեցին «Զքավորի ձայն»։ Ընկերությունը վար-

կով ստացավ մեկ տրակտոր, քամող և ծեծող մեքենաներ։ Նա արագ կերպով զարգանում է և ներկայումս միացնում է վոչ միայն Ռոսլավլևկայի չքավորությունը, այլ և հարևան գյուղերից բավականին թվով սակավազոր անտեսություններ»։

Մենք այլևս մեջբերումներ չենք անի կոմկերիամիության VIII համագումարի առթիվ հրատարակված գրքույկից. կասենք միայն, վոր աշխատանքի նոր մեթոդներն աճում են վոչ միայն արտադրական և գյուղատնտեսական աշխատանքների բնագավառում, այլ և խելացի զվարճություններ կազմակերպելու գործում։

Այստեղ պետք է նշել Ստալինոյի շրջանի յերիտասկցիայի աշխատանքի փորձը։ Այդտեղ կոմկերիտականները յերիտասարդության պահանջները կարողացան լավ հաշվի առնել և նրա վրա հիմնել իրենց աշխատանքը։ Դնեպրոպետրովսկի ԼԿՅԵՄ շրջկոմը անց և կացրել կուլտուրական զվարճությունների համար ակումբային կազմակերպիչների կարճատև դասընթացներ, վորոնց տված արդյունքը լավ եր։

Ինչ վերաբերում է ընդհանրապես աշխատանքի նոր մեթոդների զարգացմանը, վոր հիմնված է Միության անդամների ինքնագործնեության և մասսաների շահերի ու պահանջների հաշվառման վրա, պետք է ասել վոր կոմկերիամիության կազմակերպությունները տակավին վատ են հաշվի առնում այն։ Դեռևս վոչ բոլոր կազմակերպություններն են հավաքում աշխատանքի փորձը, վոչ բոլորն են գնում կյանքի հետ զուգնթաց։

Կան մի շարք կազմակերպություններ, վորոնք մեխանիկորեն ընդգրկում են մյուս կազմակերպությունների փորձը, առանց լավ քննելու այն և, իհարկե, նրանք այդ նոր մեթոդներով ձեռք են բերում չնչին արդյունքներ։

Մենք սխալ արած կլինենք, յեթե ասեյինք, վոր նոր մեթոդներն արդեն իշխում են կոմկերիտական ամբողջ աշխատանքներում։ Ընդհակառակը, մենք կամենում ենք մատնանշել վոր տակավին շատ կոնսերվատիզմ գոյություն ունի աշխատանքների նոր մեթոդներն իրոք տիրապետող հանդիսանան։

§ 24. ՀԵՌԱՆԿԱՐ ԹՐԹՐՆԵԿՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ

Իր տասնամյա հոբելյանին կոմկերիամիության կազմակերպությունը ընդգրկում է 2.100.000 անդամ։ I համագումարում ներկայացրած 22.000-ից, ինչպես տեսնում ենք, մեծ տարբերություն է անցած։ Կոմկերիտմիությունը աճել է 100 անգամ։

Այդ յերկու միլիոնանոց բանակից՝

1) 100.000 կոմկերիտականներ գյուղխորհրդի և գործկոմների անդամներ են։

2) 50.000-ը պրոֆմիությենական ընտրովի ժարտիններում են աշխատում, իսկ կերիտասարդության ամբողջ ակտիվը, վոր գործում է ֆաբրիկա-գործարանային և տեղական կոմիտեներում և այլն՝ կազմում է 130.000 հոգի։

3) 30.000 կոմկերիտական աշխատում են կոոպերատիվ մարմիններում։

4) 25.000 կոմկերիտականներ գործում են գյուղացիական փոխադարձ ոգնության ընկերությունների վարչություններում։

Սույն գրքույկին կցած աղյուսակներում բերված են ավելի մանրամասն տվյալներ խորհրդային շինարարության մեջ յերիտասարդության ունեցած մասնակցության և կարմիր Բանակի ու կարմիր Նավատորմի շինարարության մեջ կոմկերիամիության նական շարժման ձեռք բերած նշանակության վերաբերյալ։ Յեվ ուշադիր ընթերցողն այդ թվերից կհասկանա և կգնահատի կոմկերիամիության ընդհանուր դերը սոցիալիստական շինարարության մեջ։

Լենինյան կոմկերիամիությունն արդեն դարձել և մեր կուսակցության հզոր ոգնականը, ռեզերվը, վորտեղից կուսակցությունը վերցրել է և վերցնում է իր նոր ուժերը։

Անհամեմատելի պետք է վճռականապես ընդգծել, վոր չնայելով իր հսկայական նվաճումներին կոմկերիամիության կազմակերպությունների աշխատանքներում տակավին շատ բացեր և դժվարություններ կան։

Այդ բացերի մեջ արժե առանձնապես ընդգծել, վոր դանդաղ են իրագործվում կոմկերիամիության VI համագումարի դիրեկտիվները՝ կազմակերպության շարքերը ներգրավելու արտադրության մեջ զբաղված յերիտասարդ բանվորների 100 տոկոսը։

Յերկրորդը, վոր նույնպես անհրաժեշտ է նշել, այն փաստն է, վոր աշխատանքի նոր մեթոդները, վորոնց մասին խոսեցինք վերևում, դեռ ևս չեն տարածվել ըստ ամենայնի ֆաբրիկա-գործարանային և գյուղական բջիջների ամբողջ ցանցում. վոր նոր մեթոդների համար մղվող պայքարը, վոր սկսել է կոմկերիամիությունը, դեռ բոլորովին չի վերջացրել և տակավին մեծ ճիգեր պետք է գործադրել, վորպեսզի կարելի լինի հաջողություն ձեռք բերել։

Աշխատանքի նոր մեթոդների տարածումը ներկայումս խոշոր չափով կախված է կոմյերիտմիության ակտիվի խնդրից և նրա վարակավորման բարձրացումից։

Կոմյերիտմիության ակտիվը — կազմակերպության առանցքն է։ Նա կուսակցության ազդեցության հաղորդիչն է կոմյերիտմիությանը, նա կազմակերպում է անդամների մասսայի ստեղծագործական ինքնագործունեությունը։ Լավ ակտիվիստը պետք է մշտապես և սերտ կապված լինի յերիտասարդության մասսաների հետ, արագ կերպով կարողանա ըմբռնել յերիտասարդության արտադրությունները և նրանցից համապատասխան յեզրակացություններ անի կազմակերպության առօրյա աշխատանքների համար։ Կոմյերիտմիության ակտիվիստը պետք է լինի կայուն և գործունյա իր աշխատանքների մեջ, նա պետք է կարողանա ոգտվել ժամանակից, լինել ճշտապահ, աշխատել ըստ ծրագրի, պետք է կարողանա ոգտվել գրքից և կենդանի փորձից։ Ակտիվիստը թե իր և թե Միության անդամների մեջ պետք է զարգացնի կամքի ուժ, համառություն և ինքնակարգապահություն։ Ակտիվիստը պետք է օրինակ դառնա մասսայի համար կռվելու թափթփվածության և անկազմակերպության դեմ անձնական կյանքում։ Մի խոսքով ակտիվիստը պետք է լինի այնպիսի կոմյերիտական, որի աշխատանքով, կյանքով ու գործունեությամբ Միության անդամների մասսանները սովորում են լինել լենինյան կոմյերիտմիության լավ անդամներ։

Այնինչ կոմյերիտմիության վերջին տարվա աշխատանքը կոմյերիտական ակտիվում մի շարք խոցեր բաց արեց։ Սոչիի, Սմոլենսկի և Սամարայի գործերը ցույց տվին, որ կոմյերիտականն ակտիվն ընդունակ է վոսկրացման, մասսաներից կտրվելու, քայքայման, անհատական կյանքում ցոփ ճանապարհի վրա կանգնելու։ Համամիութենական կոմյերիտական վերջին VIII համագումարը ցույց տվեց, որ կոմյերիտմիութենական ղեկավար ակտիվի շրջանում դեռ ևս հիմա էլ կարող են անկզբունքային վեճեր, «գլոցներ» լինել։

Այս հարցում ընկ. Ստալինն իր յելույթի մեջ ասել է.

«Դուք, ի հարկե, չեք ժխտի, որ ամենուրեք կոմյերիտմիության մեջ բոլորովին հայտնված տարբեր գոյություն ունեն, որոնց դեմ անհրաժեշտ է բացարձակապես անխնա պայքար մղել։ Սակայն կազմվածքներին թողնենք մի կողմ։ Վերցնենք կոմյերիտմիության

ներսում մի խոշոր անձանց շուրջը ծագած անկզբունք խմբակային պայքարի վերջին փաստը, պայքարի, որը բանավորում է կոմյերիտական մթնոլորտը։ Ինչով բացատրել այն, որ կոմյերիտմիության մեջ «Կոսիրեվցիներ» յեվ «Սոբոլեվցիներ» ինչքան ասեք կան, իսկ մարքսիստներին նրազով պետք է տան գալ (ծափահարություններ)։ Այս փաստը վոչ այլ ինչ է ցույց տալիս, բայց յերբ այն, որ կոմյերիտմիության վերնախավերի մի խոշոր ոդակներում բյուրոկրատական վոսկրացման պրոցեսս է կատարվում»։

